

# ԽՈՒՄՀԱՐ

## I

*Արևածաղիկները նայում են պայծա՞ռ, պայծառ: Լուռ կանգնել են ու միասին նայում են: Թաքուն մի բան, արգելված մի բան անելիս էին եղել, ծերունու ոտնածայնի վրա շտկվել էին, նայում են ու լռում: Երեխաների խմբի պես: Եթե մեղուն լեզու ունի և կարողանում է իրենց բաների մասին իրար իմաց տալ ու հասկանալ, եթե կռունկը երան է կապում ու իր կառավար թագուհուն զգում առջևը, եթե զամբիկն արածում ու արածելու հետ բարկանում է հեռացող քուռակի վրա և քուռակը հասկանում է՝ ուրեմն այս երկնքի տակ աստծու ամեն արարած ունի մարդկային իր լեզուն: Անտառն ինչպես է առաջ գնում. թփերն առջևն է գցում, թփերը գնում են, ինքը գնում է թփերի ետևից: Կապուտլեռ սարի մերկ լանջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում ձորի անտառին: Է՛, կկանչի, կկանչի ու կչորանա, քանի որ մարդն ու անասունը շատացել են, անտառի դեմը փակում են:*

Պատմվածքը կարծես ստացվում է, հավանական է՝ լավ պատմվածք է լինելու: Ինչ որ է, այս վերջին պարբերությունն ինձ դուր է գալիս: Եվ իրար արժեն իմ հոգնությունը, պատմվածքը, ժխախտոի թանկ տուփը՝ որ ես դատարկել եմ: Գիհի ծառն ուրեմն ձորի անտառին կանչում է վերև՝ իր մոտ, որ միասին առաջ գնան մինչև՝...

Ես գնացի վկացվելու, և լիաբուռ վարձատրություն էին սառը ջուրը, օճառը, կոշտ սրբիչը և, երբ վկացարանից դուրս եկա, պիրկ կրծքերով աղջիկը. նա հագել էր, առանց կրծկալի, նավաստու շերտավոր շապիկ և գալիս էր վկացվելու. կարճատեսի աչքերը կկոցելով՝ նա ինձ ճանաչեց ու թեթևակի ժպտաց ոչ այն է ինձ համար, ոչ այն է առողջ բարի լուսաբացի. մտերիմ ենք թե մտերիմ չենք՝ նույն միջանց-քի սենյակներից մեկում նա ինձ համար, այնուամենայնիվ, կա, ես իր համար, այնուամենայնիվ, կամ:

Տաբատս կարված է ճիշտ իմ վրայով, և ոտքերս ուժեղ են: Կաշվե լայն գոտին պահանջում է ճարմանդն ագուցել վերջին անցքերում,– բայց պատմվածքը լավ է ստացվում: Մեկ շաբաթվա ընդմիջումը հետո ուժերս տեղը կբերի: Կոպտորեն գեղեցիկ սվիտերը տաք ու անկաշկանդ է: Մինչև ծննդաբերություն Յասմիկը կարողացավ, այնուամենայնիվ, գործել վերջացնել և նրա մատնախաղերը մի քիչ էլ կոշտացան: Տաքուս փող՝ կա, եթե այսօր թոշակը չտան՝ այսօրվա ու վաղվա ապրուստի փող կա:

Էլդար Գուրամիշվիլին սիբիրյան խինկալի էր եռացրել, խանութից բերել էր նաև երկու շիշ արածան: Էլդարը հիմա չի գրում, բայց շուտով անպայման կսկսի աշխատել, և դա երևում է իմ նկատմամբ նրա խանդոտ հոգածությունից:

– Ծերուկդ ի՞նչ է անում:

– Այգում պտտվելով մտածում է, որ շները կռվում են՝ սամիթի մարզը տրորվում է:

– Ես գիշեր է՞ղ է մտածել:

– Ո՛չ. միևնույն է ճորտեր է ծնելու, Թոմոյենց Ավետիքի սերունդն իզուր է ամուսնանում:

– Դառը բիծա է:

– Իր շահը գիտի: Ուրիշներին՝ հետո. նախ՝ իրեն:

– ճորտատիրությունը հարյուր տարի է վերացվել է, նրանք էդ ո՞ւմ են կարողանում ճորտանալ:

– Որբևայրի կանանց, անհայր երեխաներին, ամբողջ գյուղի հոգսին:

– Չը՛մ,– նա ժպտաց:– Քո պապի անունն Ավետի՞ք է եղել:

– Չամարյա թե:

– Կե՛ր, կե՛ր:

Կարագով ու կարմիր պղպեղով՝ խինկալին հեշտ էր ուտվում, դժվար չէր ուտվում: Մենք հացով, Չեմինգուեյի մման, սրբեցինք հալված կարագն ու կերանք, ափսեները մաքրվեցին, բացեցինք շշերի բերանը և երկու շնչով խնեցինք սառը արածանը, և այդ յուրոտ սառնությունը անչափ հաճելի էր ամբողջ գիշեր ծխելուց հետո:

– 150 թե 151-ի աղջկա անունն ի՞նչ է:

– Ո՞րը, դազա՞խը թե կարճատեսը:

– Կարճատեսը:

– Դազախը գեղեցկուհի է,– ասաց նա:

– Որպեսզի մոնղոլական սիբիրախտը չչոքի ուղտի մման իր ծաղկած Կիլիկիայի դռանը՝ նկարիչ-բանաստեղծ-օրենսդիր-գորավար Սմբատ Գունդստաբլ սպարապետը ձիավոր իր շքախումբը դեսպանության վարգեց Դարբանդով–Չաշտարխանով–Դազախստանով–Ջահանդամդարասիով Մե՛ծ Մանգու Խանի ոտքը՝ «իմ Կիլիկիան քեզ ապավեն դաշնակից»:

– Էդ ի՞նչ Կիլիկիա է:

– Էդ՝ Մեծ Մանգուն չգիտի ինչ Կիլիկիա է, դու գիտես. մի երեք-չորս հարյուր տարի էլ ենտեղ ենք դիմացել:

– Դետո՞, Մեծ Մանգուի դիմակը նայեց և ձեր Սմբատը չհասկացավ՝ նա իրեն նայում է թե չի նայում, այո՞, ցցին նստեցնելու նշան տվեց և ձեր բանաստեղծը չհասկացավ՝ ինքը նրան դուր է եկել թե դուր չի եկել, այո՞:

– Այո, բայց դուր էր եկել, և Մեծ Մանգուն նշան էր տվել հյուրի համար քուռակ մորթել, հյուրին աղջիկ նվիրել:

Վերելակն զբաղված էր, մենք կոճկվելով արագ իջանք, արագ նայեցինք նամակների սեղանը, Զասմիկի նամակը նա գտավ ու ինձ տվեց,– «Մեր շունիկն, աստված, լավ շունիկ է, լարվում կարմրում, գազից ազատվում ու ժըպտում է»,– և դուրս եկանք: Կրպակից մենք լրագրեր առանք և տաքսու սպասեցինք: Չոր ցուրտ էր, արածանը մեր մեջ դեռ չէր տաքացել:

– Դարավային անապատում՝ մի բարձր պատվանդան, պատվանդանին՝ մի մեծ պոմիդոր, «փառք քեզ, պոմիդոր, քրիստոնյայի պայծառ հավատով դու քեզ դնում ես աշխարհի զոհասեղանին»:

Դա ինձ դուր եկավ. ես տեսա այդ կարմիր փայլուն լուիկը:– Եդ ի՞նչ է,– հարցրի ես:

– Մեզանում պարապ բաներին հուշասյուն չեն կանգնեցնում, ուրեմն անելու են բարձր մի պատվանդան Չոմալի պետության համար, գնալու են Սահարա, խոյացնելու են կատաղած արևի մեջ իմ բարձր պատվանդանը՝ գլխին պոմիդոր, մի կարմիր պոմիդոր, Սովյալ երկրով մեկ թող լույս տա:

Նա միշտ անլուրջ է, և ես սիրում եմ նրա անլրջությունը. նկարչի ու քանդակագործի իր շնորհքով նա կարող էր իրենց Քութայիսում տաշտշել օրական մի հարզևոր հանգուցյալի մահարձան և պինդ քարից իր համար միջնաբերդ կոփել Թիֆլիս քաղաքի կենտրոնում – ունեցած փողը գրպանի ռուբլիանոցն է, ունեցած հագուստը վրայի միակ տաբատն է: Չախորդ նկարչի մասին նրա սցենարը այն է պիտի հռչակվեր՝ պարզակելով առայժմ վեց հազար ռուբլի՝ նա խեթեց իրեն ու բեմադրողին. «Մենք, իհարկե, պիտանի հաջողակ ենք և ձեռ ենք առնում անպիտան ձախողակներին»: Աչքը նրա դեմքին՝ նրա չբեր կինը մի աննշմար ծամածռության է սպասում, որ թողնի հեռանա իր դժբախտությունը գրկած, այդ տանը տեղ ազատի պտղավոր մեկի համար, ով այդ տունը կլցներ երեխաների փափուկ լացերով, անհամ ծփածղներով ու թաց շավարիկներով՝ կյանքով. Էլդարը հարբում թե խումհար մռայլությամբ որոշում է այլևս բերանը խմիչք չառնել՝ կինն այդ է մտածում, Էլդարը թաղվել է յոգի գրականության մեջ՝ կինն աչքի պոչով հետևում

է, թե չգտա՞վ դեռ ամուսինը պտղավորման ու անպտղության մասին որևէ խոսք այդ գրքերում. կինը հիմա ընկերուհիների, գործատեղի աղջիկների, թատերասրահների կանանց բազմությունների մեջ փնտրում է գտնելու այն լավին, ում հետ ամուսինը ուրախ ու թեթև կլիներ, և չբեր դժբախտի իր հեռվից ինքը պայծառ արտասուքով կնայեր այդ կնոջը, ամուսնուն, երեխային:– Էլդար, իմ տղայի ծննդյան խնջույքին ասացի ես, գուցե, այնուամենայնիվ, բաժանվես:– Իհարկե, հեզմեց նա, մինչև հիմա էնքան մարդու ենք ուրախացրել, որ մի հոգու արդեն կարող ենք վշտացնել:

Տաքսի մեքենայի մեր հերթը հասավ, և այդ ժամանակ հանրակացարանից դուրս նետվեց բարձրահասակ Վիկտոր Մակարովը: Նա դուրս եկավ ճիշտ ժամանակին և ձեռքը բարձրացնելով մեզ խնդրեց սպասել ճիշտ այն պահին, երբ մեքենայի դուռը բացել էինք, բայց մենք կարող էինք նրա խնդիրը նաև հասկացած չլինել: Նրա գեղեցիկ վիթխարի հասակը հանդիսավոր դանդաղություն է պահանջում, Վիկտորն այնինչ վազվզեցնում ու խոնարհում է հպարտ այդ հասակը, առայժմ որ՝ խոնարհում է:

– Մի քիչ չվազեցնե՞նք:

– Քշիր, ետևներիցս թող մի քիչ վազի:

– Ձեր ընկերն է, անհարմար չի՞,– կասկածեց վարորդը:

– Իր ետևից մենք շատ ենք վազելու, քշիր:

Նա սիբիրցի է: Բաց ափի մի հարվածով նրա պապը ժամանակին՝ մի չափալախով, միանգամից՝ գյուղապետին սպանել է, և հիմա նա սիբիրցի է: Մեռելն աստծու հաջողությամբ գյուղապետ է եղել, և դա ուրեմն կարելի է համարել հեղափոխություն և այդ մասին չլռել – տեղեկացնել հեզմանքի ու լրջության չափավոր միասնությամբ՝ մեծ իմաստ չդնելով պապի չափալախի մեջ, բայց և թույլ չտալով պապին համարել սոսկ մարդասպան: Յեղափոխությունը հեղափոխություն, բայց հարկավոր է փոխադրվել երկրի եվրոպական մաս, ճշգրիտը՝ Մոսկվա: Մի չափալախով դա չի լինի, միայն չափալախով՝ չի լինի, շղթայակիր քայլի նման ծանր աշխատանք է հարկավոր տարիներով ետ կծկելու այն ճանապարհը, որ պապն անցել է միանգամից մի երթով: Քաղաքի մոտերքում գերանակապ խրճիթ առնելու փող արդեն կա, որը կբավականացներ փայատիրական մի բնակարանի՝ քաղաքում, բայց այդ դեպքում ինչի համար է պետությունը և ում համար է կառուցում և ում գաղափարաբաններն ենք մենք:

Պիտի որ նա հասկանալիս լիներ, որ մենք իրեն վազեցնելու համար

կանգնեցրինք մեքենան, բայց կանգ չառավ ու ձեռքը թափ չտվեց – ռուբլիանոցի մի բարալիկ շերտով չպետք է նվազեցնել կոոպերատիվի փողը: Լրագրերը նայելով Էլդարը հարցրեց.

– Վազո՞ւմ է:

– Վազում է: Սկսեց ժպտալ:

Նա եկավ, վիթխարի հասակը կռացրեց, լայն թիկունքը ժպտալով տեղավորեց մեքենայի նեղվածքում, և տրոլեյբուսին հասած պառավի նման դեռ ժպտում էր:

– Ուշ նկատեցինք, ազնիվ խոսք,– ասացի ես:

– Երեքով վճարելը հեշտ կլինի,– նրա փոխարեն ասաց Էլդարը:– Գնացինք, շեֆ, քշիր Կինոյի տուն:

Վարորդը լրացուցիչ տեղեկության սպասեց:

– Կինոյի տուն, շեֆ,– ասացի ես,– Վաքսբերգ ֆիրմայի Կինոտուն:

– Դու չգիտես ինչ է Կինոյի տո՞ւնը, դու չես ճանաչում Վաքսբերգի՞ն: Ջո, նա չգիտի ինչ է Կինոյի տունը:

– Նա ոչինչ էլ չգիտի, Էլ:

– Նա մոսկվացի է և չգիտի ինչ է Կինոյի տունը, Ջո:

– Նա սխալ է մոսկվացի, Էլ, նրա փոխարեն մոսկվացի էր լինելու Մայկը:

– Կատակում են,– բացատրեց Մակարովը:– Պրեսնյայի կողմից Վառովսկու սկիզբը:

– Կոնյա՞կ թե վիսկի, Էլ:

– Կոնյակդ վերցրե՞լ ես:

– Միշտ է հետս, Էլ, կոնյա՞կ թե վիսկի:

– Վողկա,– լրագրի վրայից ասաց նա:

Մորեխ հասկացությունը նշում է ոչ թե կենսաբանական կարգ, այլ ապրելակերպ, վիճակ: Այդ անվանումը դարեր առաջ տրվել է ահեղ այն պարսերին, որոնք նախրային միասնությունն են շատ թե քիչ միմյանց ազգակից տարբեր մորեխատեսակների և որոնք ժամանակ առ ժամանակ տեղաշարժվում են դեպի հեռավոր երկրներ: Նախրային բառի գոյությունն այստեղ չափազանցության տպավորություն է տալիս, բայց եթե նկատի ունենանք մի պարսի թեկուզ միայն կշիռը (երկրագնդի բնակչության մեկ քառորդի կշիռ) և ախորժակը (մորեխի մի տոննան խժռում է կանաչի տասը տոննա զանգված, ծխախոտի քսան հազար թուփը Չարավային Ամերիկայում մորեխի պարսը խժռել է ընդամենը քսան վայրկյանում, 1962-ին Մարոկկոյում մորեխը հիմա օրում ոչնչացրեց յոթ հազար տոննա նարինջ. դա Ֆրանսիայի չափ մի երկրի տարեկան սպառումն է), այս անտակ ախորժակի ու կռիվ հաշվառումով՝ մորեխի համար ճիշտ անվանում է դառնում ոչ թե պարսը, այլ միայն նախիրը:

1915 թ. քսանյոթամյա գիտնական Բ. Պ. Ուվարովը Հյուսիսային Կովկասում հետազոտեց ու տվեց մորեխի նախրացման, նախրագոյացման խնդրի հանճարեղ բացատրությունը, ինչը որ հաստատվեց նաև Արևադարձում արված հետազոտումներով: Պարզվեց, որ մորեխն ապրում է երկու՝ մենակեցային և նախրային, կենսաձևերի մեջ և այդ կենսաձևերը արտաքինով, ներքին կառուցվածքով ու բազմացման կերպերով բոլորովին նման չեն միմյանց: Մենակեցային վիճակի մորեխը, եթե միջավայրն այսպես ասած նախրային հոսանուտ, քոչի նախրային կախարդանք չունի, հակված չէ մերձենալու իր նմանին, խմբի անդամ, խմբի մաս, խումբ դառնալու և այդ դեպքում նա պահպանում է, անհատական երանգների փոքր տարբերություններով, իր ցեղի գունաձևային, ներքին կառուցվածքի ու բազմացման եղանակի բոլոր հատկությունները: Նախրային վիճակի մորեխն արդեն ընդհակառակը. սրանք խիտ խմբերով հավաքվում, բեղիկներով, ոտքերով ու մարմնով անընդհատ քավում են միմյանց, և այդ շփումները նրանց բոլորին դնում է բարձր այսպես կոչված շարժիչայնության մեջ, զրգռում քոչի բնագոր: Ձեր աչքի առջև մենակեցային վիճակի մորեխը վերածում է նախրայինի – գույնի ցեղային, տեղային և անհատական երանգները վերանում են, մորեխը մգանում, նարնջասև գույն է առնում, ծոծրակի մոտ մեջքը կորվում է, թևերը երկարում են, մուգ գույնի շնորհիվ ջերմությունը հինգ-ութ աստիճանով բարձրանում է, և այդ ժամանակ նախիրը պատրաստ է պոկվելու: Մորեխը երկինք է բարձրանում քամու հակառակ ուղղությամբ և երբ արդեն վեց հարյուր – հազար մետր բարձրության է գլուխը շրջում ու իրեն տալիս է քամուն:

Մի անգամ կեսօրվա մոտերքը, պատմել է Վ. Վիլյամսը՝ տանգանիկյան Ամանիի գյուղական փորձադաշտերի այն ժամանակվա միջատաբանը, հեռախոսով մեզ զգուշացրին, թե մոտենում է «արաբացվոց աղետը»: «Հիմա կերևա, թե ինչի համար են միջատաբանները», Վիլյամսին է դիմել փորձադաշտերի սարսափած վարիչը: Նա դեռ չէր պատկերացնում, որ եթե Ամանիում միջատաբանների նույնիսկ համաշխարհային բանակը լիներ՝ դարձյալ ոչ մի տերև չէր փրկվի մեծ անապատի այդ փթթուն այգուց: Ժամ չբաշած արևելքը մթնեց: Ծավալվելով ու ծանրանալով՝ ահեղ ամպը բռնեց երկինքը: Արևը խավարեց: Առաջին մորեխները կարկուտի պես խփվեցին այգու տերևներին, կարկտահարեցին թիթեղյա կտուրները: Պղտոր հողմը պտտվում էր գյուղի վրա, թևերի խշշոցից մարդիկ խլացել էին: Ճայթունով ջարդվեցին առաջին ճյուղերը: Գետինը խլթփլթում էր, բայց արևելքը դեռ սև էր – նախրի վերջը դեռ չէր երևում: Դրանից հետո ինը ժամ սև մորեխը ամբողջ երկնքով մեկ պիտի խշշալով հոսեր ու թափվեր Ամանիի վրա: Հաջորդ օրը, ծաղկած երկրից մեռյալ անապատ թողնելով, նախիրը հեռացավ...

– Նայիր, – ասացի ես, – կարդա: Ես լավ չհասկացա՝ մորեխը տեսակ է թե վիճակ:

– Մորեխը սնունդ է, – ասաց Մակարովը: – Մորեխի ալյուրով արաբներն իրենց ձիերին կերակրում էին:

– Կարդա, – ասաց Էլդարը: – Գիշատիչը ռումբ է կուլ տվել:

– «Դարի ամուսնությունը», է՞ս: Իսկ մենք իշի ականջում քնած ենք

եղել ու չենք իմացել, որ մեր տակով դրդալի երկրաշարժ է անցնում:

– Օնասիսն, այո, ժակլին Քենեդիին կնության է ամել,– ասաց Վիկտոր Մակարովը:

Էլդարը հեզնեց.– Կնության է ամել... Չափարը մարդուկնիկ իրար օգնելով կարկատել, մարգերում պոմիդորի սածիլ են տնկել, ջրել ու դռանը հիմա հոգնած նստած են:

– Մի՛ կարծիր, Էլդար,– Մակարովն ուժեղ, գեղեցիկ պարանոցը ետ թեքեց,– դու մի կարծիր, թե գիշատիչը ռումբ է կուլ տվել: Դա փոխշահավետ ամուսնությունն է:

– Վաթսուն-վաթսունհինգ տարեկան մարդ է, վաղը սատկելու է, նրան կին չէր պետք, միզամանը բերող-տանող պառավ էր պետք:

Մակարովը ժպտաց:– Մի՛ անհանգստացիր, նրանք իրենց այնպես են խնամում, ինչպես ոչ մի կին իր երեխային: Իրենց մարմինը նրանք սիրում են: Գիտե՞ս ինչ է ուտում վաթսուն տարեկան այդ տղամարդը:

– Ի՞նչ է ուտում:

– Գուցե մորեխի ալո՞ւր,– ասացի ես:

Մակարովը նորից ժպտաց:– Չծնված գառ, փորի երեք ամսվա գառ:

– Կարող էր ավելի խոր գնալ ու որձի ձվարան ուտել, դա շատ հատուկ համուհոտ կունենար:

– Իսկ մենք յուլա ենք գնում սխտորակոխ երշիկով ու ապխտած կանանցով:– Մակարովին դա մի քիչ դիպչում էր:– Իսկ մենք, փոխանակ փորի նուրբ գառ ուտելու, գառան նուրբ մեր գոյությունը տալիս ենք ուրիշներին:– Այդպես էլ դիպչում էր:– Արիստոտել Օնասիսն ո՞վ է,– հարցրի ես:

– Արմենի հարցն ահա ամեն ինչ իր տեղն է գցում,– ջահել, ուժեղ պարանոցը ետ թեքեց Մակարովը:– Օնասիսն անհայտ պետություն էր՝ ժակլին Քենեդիի հետ ամուսնությամբ հիմա դարձավ հայտնի պետություն: Ծովահեն չէր, բայց անհայտության պատճառով ծովահեն էր թվում: Այդ կինը նրան դարձրեց հայտնի ու վստահելի, քի՞չ է:

Իր այսպես կոչված ամենաթափանցությամբ հանդերձ «ազատ» մամուլին առայժմ չի հաջողվում քիթը Արիստոտել Օնասիսի և ժակլին Քենեդիի ամուսնական առագաստ կոխել և կորզել «դարի այդ ամուսնության» մանրամասները: Շշուկներն այն մասին, թե Միացյալ Նահանգների սպանված նախագահի կինը՝ երկու երեխայի մայրը՝ դեմ չէ ամուսնության գնալու ոչ անհայտ, բայց և բավարար չափով չլուսաբանված Օնասիսին, ում տարիքը ենթադրվում է քառասունհինգ-ութսուն, կարողությունը՝ հարյուր հիսունվեց-հարյուր յոթանասուն միլիարդ դոլլար, գործը՝ մանր խաբեություններից մինչև ծովային տորմիլների, նավթաբեր հողերի

ու նավաշինարանների տիրություն,- շշուկներն, այո, հաստատվեցին ու վերաճեցին բուրժուական մամուլին հատուկ աղմուկի, բայց այդքանը միայն: Նորապսակները փակվել են Օնասիսի միջերկրածովյան կղզիներից մեկում, և մամուլն ու հեռուստատեսությունը մայրցամաքի ասիերին ստիպված են իրենց հետաքրքրասիրությունը բավարարել մոտավոր ենթադրություններով: Մի բան միայն անկասկած է – քսաներորդ դարի Ջևար չի առևանգել Նոր աշխարհի «կանանց թագուհուն», և որ ամուսնության ու իրավադրամային վավերացման բանակցությունները մինչև համաձայնության գալը ամիսներ են տևել,- բայց արդյո՞ք անկասկած է, արդյո՞ք չի առևանգել: Ըստ պայմանագրի՝ ամուսնալուծության դեպքում Օնասիսի տիրակալությունը պարտավոր է տիկին Քենեդի-Օնասիսին միանվագ հատկացնել հիսուն միլիոն դոլլար՝ եթե ընտանեկան դաշինքը լուծվի առաջին հինգ տարվա ընթացքում, քառասունհինգ միլիոն՝ ամուսնական համատեղ կյանքի երկրորդ հնգամյակում՝ լուծարվելիս: Պայմանագիրը քաղաքավար մտերմությամբ այդ գումարի մեջ չի ներառնում արժեքը այն զարդերի, որ նվիրել է անհայտ տիրույթների արքան տիկին էքս-մախագահին: Մամուլն այդ զարդերը գնահատում է առաջմ 700.000 դոլլար: Իսկ ի՞նչ է բերում ժակլինը իր նոր տնտեսությանը: Ինչպես հայտնի է, Ամերիկայի Միացյալ Նահանգների մախագահի պրեզիդենտական աշխատավարձը ի վիճակի չէր բավարարելու Սպիտակ տան տիրուհու՝ «գեղեցկության երեկվա թագուհու» զուգահեռները, և նրա ներդիրը օնասիսյան զանձանակ հազիվ թե նկատելի մի բան լինի, բայց մի՞թե կարելի է նշանակություն տալ դրամական ներդիրին այն դեպքում, երբ խոսքը գնում է ժակլինի բերած բարոյական վիթխարի կապիտալին, երբ դա փաստորեն ամուսնություն է զոհված Ջոն Քենեդիի բարի անվան հետ և օնասիսյան կեղտոտ տիրակալությունը այդպիսով սրբազործելու փորձ: Բայց թե կկարողանա՞ մաքրել անդրօվկիանոսյան հարսը Օնասիսի ավզյան ախոռները, թե՞ ընդհակառակը՝ ավզյան ախոռները կկեղտոտեն նրան նույնպես:

Այդպես ուրեմն:

Կվարտետի տղերքին տարել էին Սպիտակ տուն: Տղերքի Եկմալյանն ու Կոմիտասը նրանց դուր էր եկել – տարել Սպիտակ տունը ցույց էին տվել: Տղերքը լռել ու նայել էին Քենեդիի աշխատասենյակի կողմը, և օգնականը հասկացել էր, որ տղերքը կուզենային նրան տեսած լինել: Ասում է հոգնած, աչքերը կարմիր ու ցրված էր: Տղերքն, այո, նրան տեսել էին: Աշխատասենյակից ծխելով նա դուրս էր եկել ու տղերքի մոտ եկել կանգնել: Չեսոո հիշել, ժպտացել ու տղերքի ողջությունը հարցրել էր: Բայց, ասում է, բարձրահասակ էր ու շատ աշխատած կամ շուտ էր հոգնում: Չեսոո մոռացել ու տղերքի օքեյ առողջությունը նորից էր հարցրել:

– Չազա՞րն է շատ, թե միլիոնը,- ասացի ես:- Չեմ կատակում. միլիարդները չպատկերացրի, իսկ 700.000-ը տպավորվեց:

– 700.000-ը միլիոնից շատ է, բայց ամենաշատը հարյուր ռուբլին է,



եթե մանավանդ երեքնոցներով է:

Խեղճ Պողոս Յավրուճյանը սիրիական անապատների նավթամուղից նամակներ էր գրում որբևայրի ժակլիմին (դժբախտը դժբախտին կհասկանա), թե իր խնայողություններն ու աշխատավարձը կբավականացնեն նրա երեխաների ապրուստ-ուսումին, տեսնեն չի բավականացնում՝ ինքը կաշխատի երկու հերթ, հայերն իրեն կօգնեն, ժակլիմը կհետևի միայն տան գործերին ու երեխաների կրթվելուն, իրենց ընտանիքը հայի բախտավոր ընտանիք կլինի... և նամակները գնացին պտուղեցին, եկան ընկան հայ մամուլի բերանը՝ «է, քեզի վայե՞լ է, Պողոս ախպար»: Հասմիկը կարծում էր ժակլիմը երբեք չի ամուսնանա: Սևուլիկ, փոքր-մոքր Հասմիկը աղջնակ ժամանակ իրեն ապագայի մեջ տեսել է ոսկի ճոխ մագերով դերասանուհի, բարձր ու հպարտ,– Հասմիկը կարծում էր ժակլիմը սև գրանիտե մահարձանի նման երբեք այլ բովանդակություն չի առնի – կմնա միշտ այդպես սևազգեստ, սլացիկ, փակ և ամուսնու սպանության բոլոր վարկածներն ու ենթադրությունները մերժած:

- Թիզուկեսն ուրեմն խփեց ու էդ էլ տակը քաշեց:
- Ես չնկատեցի, մամուլն արդեն հասակը չափե՞լ է:
- Էդքան ստորը կարո՞ղ էր բարձրահասակ լինել:

Իր բաժին 35 կ. ափի մեջ՝ Մակարովը ձեռքը ետ պարզեց:– Հունաստանը փոքր երկիր է, աներևույթ թագավորություն Օնասիսն ստեղծել է ստիպված,– ասաց:

– Քանի Վրաստանը մեծ ու հարուստ է՝ կապիտալը քեզ պահիր, Վիկտոր Ալեքսեևիչ:– Էլ դարը ռուբլիանոցը դրեց վարորդի կողքին և ետ հրեց Վիկտորի ձեռքը:– Դարագիյե դրուզյա, պրիյեժայտե Գրուզիա:– Սա նրա այն պահերի խոսքն է, երբ նրա ներսում, լուծի պես, նրա հոգու մեջ ինչ-որ բան է խառնվում:– Սորեխը սարսափելի էր, Արմեն:

- Անցյալ է,– ասաց Վիկտորը,– մորեխից վաղուց է չեն խոսում:
- Բայց որտե՞ղ է շաղախվում նրա նախիրը, ո՞ր է նետվելու:
- Պայուսակը մոռացար, շեֆ,– կանչեց վարորդը:

## II

Հանդերձարանի մոտ փափուկ սապոգները հանում էր՝ որ տուֆլի հագնի ուսումնական մասի տիկին վարիչը: Նա շտկվեց և որպեսզի մենք իրեն կռացած դարձյալ չտեսնենք՝ շտապեցրեց.

– Ընկեր Անդրկովկասի հետ ուշանում ենք, իսկ նկարը հետաքրքիր է:

– Այստեղ միայն Անդրկովկասը չէ, Ռախսա Վասիլևնա:

– Այո՞: Ռուսերենի մեջ բավական առաջադիմել եք, Մնացական-յան:– Նա անցողակի նայեց Մակարովին:

– Ռուսերեն ձեզ հետ խոսելու համար եմ սովորում, Ռախսա Վասիլևնա, գոնե խոսելու:

Նրա համար Մակարովն ասես ներկա չէր, ներկա էին միայն Մնացականյանն ու Գուրամիշվիլին, Մակարովի համար նա ասես ներկա չէր: Բայց նրանք շատ լավ էլ զգուն էին միմյանց ներկայություն, և նա գիտեր, որ Մակարովը լավը չի, և Մակարովն էլ գիտեր, որ նա ջահել չի: Մակարովն այդ ժամանակ հանձնեց կոպիտ ոչխարենի կիսամուշտակը և երկար ձեռները կախ՝ սպասեց մեզ:

– Վիկտորի պապն ահա մի չափալախով գյուղապետ է սպանել, իսկ դուք բերել մեզ պատկերներ եք ցույց տալիս:

Նա անցողակի նայեց նրա բարձր հասակին և ոչ այն է բարևեց, ոչ այն է ինձ հարցրեց «այսինքն»: Անհարմար վիճակն ահա իրենք էին ստեղծել, բայց ես էի վերացնելու այդ վիճակը:

– Լավ չէ, Ռախսա Վասիլևնա,– ասացի ես,– ոմանք հրեն փորի գառ են ուտում – մեր կերած երշիկը մենք իրար քթերից հանում ենք:

Դահլիճի, մեր հարմարավետ, փափուկ, տնական դահլիճի լույսերն արդեն հանգրեղ էին: Մենք գնացինք զգուշորեն վստահ, մթի մեջ ժպտալով: Ես գտա իմ շարքը, իմ աթոռը, մի քիչ հեռու կիսախավարից, թվաց՝ նախատինքով, ինձ էին նայում մեկի հարազատ աչքերը, ասես գիտեին, ասես տեսել էին, որ ես հանդերձարանի մոտ կոտրատվել եմ ուսմասվարուհու առջև:

– Բու՛ր,– կիսախավարի մեջ ես ճակատս մոտեցրի նրա աչքերին, և նա գլուխը շրջեց:

– Նա՞ղըր սամ,– արմունկս սեղմեց Մաքսուդ Ռասուլովը:– Ինչպե՞ս ես:

Ես բազուկս լարեցի՝ այսինքն թե լավ եմ:

– Սեղանին նամակ ու ծանրոցի տեղեկանք ունեիր, վերցրի՞ր,– շշմ-ջաց նա: Ես գլխով արեցի:

**Կառլո Պոնտին ցուցադրում է**

**ԳԻՇԵՐԸ**

**Ժաննա Մորո**

**Մոնիկա Վիտի**

## Մարչելո Մաստրոյանի

Կինոնկարը նվաճել է Վենետիկի, Կաննի, Սան-Պաուլոյի, Բարսելոնի, Մեխիկոյի, Լոս-Անջելեսի, Ալժիրի, Ստոկհոլմի, Պրագայի կինոփառատոնային Մեծ Ոսկի մրցանակները

### Միքելանջելո Անտոնիոնի

#### ԳԻՇԵՐԸ

Ատոմային սնկի նման մի շինություն, քաղաքում նրանք ուր էլ վարեին մեքենան, տեսադաշտից չէր ելնում. ատոմային սնկի նման շինությունը նրանց հայացքի մեջ քաղաքի վրա կախված էր անընդհատ: Կինը թախծում էր, կնոջ աչքերը թախծոտ էին, կնոջ կամակոր բերանը թախծոտ էր – ամուսինը անմասն էր կնոջ թախծին ու ատոմային սնկին, որովհետև գրող էր և թղթի վրա նկարագրել էր հարյուր այդպիսի թախիծ և ատոմային ռումբ: Կինը ժաննա Մորոն էր, տղամարդը՝ Մարչելո Մաստրոյանին: Նրանք գնում էին տեսնելու իրենց բանաստեղծ ընկերոջը, շատ տաղանդավոր բանաստեղծ ընկերոջը, որ մեռնում էր Սպիտակ հիվանդանոցի մաքրամաքուր անկողնում, մաքուր լվացած ծաղիկների մոտ, լայն լուսամուտով սպիտակ սենյակում, որտեղից երևում էր հեռվի լուռ օդում համրորեն կանգնած ատոմային սնկի նման շինությունը:

Նրանց բանաստեղծ ընկերը արդեն մեռած մարդ էր, շատ տաղանդավոր այդ բանաստեղծի մարմնական մահը մի երկու օրվա հարց էր, նրա մեջ ամեն ինչ մեռած էր, նա հիմա մի քիչ բարկանում էր ջղային կյանքի վրա,– եկավ, խլացնող աղմուկ թափելով մոտեցավ, հեռացավ ուղղաթիռը,– և հրաժեշտ էր տալիս այս տխուր օրերի մեջ դեռ քայլող, դեռ սիրող, դեռ ձանձրացող ծանոթներին: Մեռած շուրթերը նա վերջին անգամ հպեց ժաննայի դեռ տաք ձեռքին, և պայթյունով հրաշք կատարվեց. հանգած բերանը շարունակեց ժայթքել խոսքեր վաղեմի առաջին սիրո մասին, միակ կայուն սիրո մասին, տաք, կրքոտ, չբավարարված սիրո մասին, և շրթունքներն սկսեցին լափել այդ ձեռքը, իսկ ատոմային սնկի նման շինությունը հեռվի լուռ օդում սֆինքսորեն մտածում էր կամ մտածել էր տալիս: Կինը,– և տեղն էր անպատեհ, և ամուսինն էր ներկա, և կիրքն էր կասկածելի,– ձեռքը հանեց նրա մեռած ձեռքերի միջից, տենդոտ շրթունքների ու լպրծուն խոսքերի միջից հանեց ձեռքը և հեկեկանքը դեռ զսպելով դուրս գնաց մահվան ու ջղայնության այդ սենյակից:

Մարչելոն իր տաղանդավոր ընկերոջը և իր կնոջ տաղանդավոր ընկե-

րոջը, ում բանաստեղծությունը այս կյանքում հավիտյան պիտի խոսի այդ շատ տաղանդավոր մարդու մասին, ցանկացավ այրականորեն հանդարտ նավարկություն դեպի Չգոյի խաղաղ ջրերը, ժպտաց իր շատ տաղանդավոր գրչակցին և դուրս եկավ: Դուրս եկավ գրպաններում փնտրելու ծխախոտը և հրահանը՝ երկար միջանցքը անհամար հիվանդասենյակներով սպասում էր դարանակալ լռության մեջ: Դարանակալ լռությամբ շաղախվում էր խորհրդավորությունը: Հիվանդասենյակներից մեկի դռան մեջ, այո, սովորական դռան մեջ, կանգնած էր, կիսամերկ, էգ վագրի և ֆրանկախտի հայացքով մի կին: Կինը սիրալիիր պարոնից խնդրեց, ոչ թե արու խնդրող վագրի պես և ոչ թե որպես ֆրանկախտ, այլ բոլորովին մարդկայնորեն բոլորովին սովորական մի բան խնդրեց – խնդրեց վառել ծխախոտը, և ծխախոտը մատների մեջ, ոչ թե որպես էգ վագր, տարավ դեպի շրթունքները:

Մարչելոն վառեց լուցկին, վառվող լուցկին մոտեցրեց խորհրդավորությանը՝ որ հիմա էր ծխախոտի ծայրը, գեղեցիկ մեծ բերանը, զգայուն ռունգները և արվության կարոտի մեջ կատաղած ու խեղճացած էգ վագրի աչքերը, – և կինը փչեց-հանգցրեց լուցկին, նայեց այդ քնեած տղամարդու աչքերին, բռնեց նրա պարանոցը, և ուսերը, և թիկունքը, և միանգամից փուլ գալով սահեց այդ տղամարդու հասակն ի վար, գրկեց այդ տղամարդու ծնկները և սեղմեց աղավաղված գեղեցիկ դեմքը նրա ածուկներին:

Դա հիվանդանոցի միջանցք էր, և Մարչելոն ոտքի հանեց այդ հիվանդ կնոջը՝ որ ներս, հիվանդասենյակ տանի այդ հիվանդ կնոջը: Եվ կիսամերկ կինը կտրուկ չխկոցով փակեց դուռը իրենց ետևից և դանդաղ ետ-ետ գնաց սպիտակ պատին քսվելով: Սպիտակ պատին կպած, մարմինը սպիտակ պատին քսելով, ձեռքերը սպիտակ պատին քսելով ետ-ետ արեց փառահեղ մարմնի միջի այդ հիվանդ հոգին և իր ետևից տարավ դեպի սպիտակ, հիվանդագին սպիտակ անկողին այդ կախարդված տղամարդուն: Եվ միանգամից նետեց քնազգեստը և միանգամից երկարեց ոտից գլուխ հոյակապ մերկությունը սպիտակ սավանին: Եվ սպասեց. սպասեց թե ինչ է կատարվելու այդ քնեած տղամարդու մեջ: Եվ հեծկլտոցով զավթեց այդ տղամարդուն և վագրուհու կաղկանձյունով գալարվեց: Նա վիշապօծ էր ուզում, նա ֆուգասային ռունքի պայթյուն էր աղաչում, նա ածխացնող էլեկտրահոսք էր տենչում, իսկ դա միայն տղամարդ էր, ընդամենը տղամարդ էր, բայց դուռը ջարդելով ներս ընկան հիվանդապահ կաթոլիկուհիները, նրա ամոթը ծածկեցին, ձեռները ոլորեցին և նրա փափուկ այտերը վառեցին, նրա ուսերը վառեցին չոր ապտակներով՝ խեղդելու համար վագրախտի հրդեհը կնոջ հոյակապ այդ մարմնի մեջ: Շփոթված Մարչելոն դուրս եկավ, – «Եվ ի՞նչ են ասում, և ո՞ւմ են հարկավոր մեր գրած տողերի շարան-

ները» – մեծ հիվանդանոցն էր, հիսուն, հարյուր, հինգ հարյուր, հազար հինգ հարյուր հիվանդասենյակներով սպիտակ հիվանդանոցն էր, դրսի անկյունում պատին կպած ժաննան՝ որ լաց էր լինում այս հիվանդ աշխարհի համար, և հեռվի լուռ օդում՝ ատոմային սնկի նման շինությունը:

...Ճաղատ, կնճռոտ, ծեր, աղավաղված գրողներն այնինչ կարծում էին աշխարհի մասին իրենք բան են ասում և գրավաճառանոցում ներողամիտ ժպիտով էին լսում ընթերցողներին, որոնք այնքան էլ ընթերցող չէին, այլ ուզում էին կենդանի գրող տեսնել և ներողամիտ ժպիտով ուզում էին հասկացնել գրողներին, թե ժամանակի բովանդակությունն իրենց մեջ է, այնինչ նրանց գրվածքներում իրենց մասին ոչինչ չկա. համարյա թե ոչինչ չկա և դա գրողների անձնական մեղքը չէ – այդ երևույթի մեջ դրսևորվում է այն ճշմարտությունը, թե վեպն ու պատմվածքը անցած ժամանակների ծնունդ էին նույն անցած ժամանակների համար, և գիրքը հիմա վերապորուկ է... կամ՝ ապրելու համար պիտի կերպավորվի...

Յետո, Մարչելոյին արթնացրեց աղախինը, և նրա արթնանալու հետ՝ լուսամուտից ներս էր ընկնում ատոմային սնկի նման շինությունը. աղախինը, ներեցեք, չէր արթնացնի. քանի որ նա հագիվ արդեն ննջում էր, բայց զանգահարել է տիկինը: Ժաննան ասաց թե... Ժաննայի ձայնն աշխույժ էր... Ժաննան ասում էր թե ինքը քաղաքի ծայրին է, քաղաքի ծայրին, խարկված պարապուտում, ինքը գտել է հետաքրքիր, շատ հետաքրքիր մի բան: Քաղաքի ծայրին, բաց դաշտում, բանվորական թաղի տղաներն արձակում էին իրենց շինած հրթիռները՝ որ ուղիղ գծով խրվում էին վեր մինչև ութ հարյուր մետր, և անցողակի նայում էին հարուստների քաղաքից այդ պարապուտ ընկած տիկնոջը՝ որ ցույց էր տալիս թե ինքը չգիտի ինչ է ուզում, բայց շատ լավ հայտնի էր թե ինչ էր ուզում: Եվ Մարչելոն թանձր վարագույրներով զովացրած մեծ սենյակում թափթփեց բաճկոնը, փողկապը, շապիկը, տաբատը՝ որովհետև բազկաթռի մեջ տրտմելով նիրհել էր շորերը հագին: Նա ազուցեց նոր փողկապ նոր շապիկի, ցորնաթուխ, թարմ աղախինը փոշու մի կետ էր փնտրում նրա հագուստին՝ որ վերցնի, և այդ տղամարդու մեջ արթնացող-չարթնացող որևէ ցանկության էր սպասում՝ որ քարոզրտի տիրոջ նրա ծանրությամբ իր գավառական շնորհները, և Մարչելոն անգիտանում էր:

Խարկված պարապուտի եզրին հեռախոսախցի մոտ ժաննան սպասում էր: Դա քաղաքի աղբանոցը չէր, բայց ժաննայի ներկայությունն այդտեղ տարօրինակ էր: Բանվորական արվարձանի դեռահասները պատի ետևից խմբով դուրս եկան, առանց բացատրության կամ միայն իրենց հասկանալի ցլիկային լուռ բացատրությամբ եկան կանգ առան, թելիկ մազավորը կի-

սաթև շապիկը նետեց և պատրաստ էր, խոյի քթավորը կեպին ունքին քաշեց, – և ժաննայի սիրտը կանգ առավ: Նրանք՝ բարալիկ մերկն ու գանգուր խոյը, այդպես կանգնած էին, և նրանց ատելությունը երկաթե վարագույրի միջով էլ կանցներ: Բարալիկը սամբոյով խոյին գետնեց, բայց խոյը քար էր: Դեռահասները ժաննային չէին նայում և դա քաղաքի աղբանոցը չէր, բայց դա կարծես թե կռիվ էր անսովոր մի բանի համար, որ հարուստների քաղաքը մոռացմամբ գցել էր պարապուտ: Խոյը բարալիկ մերկին գետնեց, կրծքին ծնկեց ու ապտակեց՝ մեկ: Հարուստների քաղաքում մեկի ապտակն այդպես մյուսի կաշվի տակ չի մտնում: Երկու: Հարուստների քաղաքում մեկն այդպես մյուսի բուկը չի քաշում ածուկների նեղվածք ու չի խցկում իր զգվելի հոտը նրա ռունգների մեջ: Երեք: Հարուստների քաղաքում իրար նայում են, նույնիսկ տեսնում են, նույնիսկ ատում ու սիրում են, բայց որ մեկի տաքությունն այդպես մինչև տակը խառնվի մյուսի ջերմությանը... «Բավական է, – ծղրտաց ժաննան, – բավական է», բայց դա նրանց բանվորական արվարձանի լեզուն չէր, իրենց բավականը միայն իրենք գիտեին: «Բավական է, սպանում ես, – ծղրտաց ժաննան, – բավական է»: Հաղթած խոյը ելավ, հպարտ գլուխն էգին դարձրեց ու, փսիհնքախառն արյան բարակ գիծը մի ռունգի տակ, եկավ: Դա դժվար արյուն էր, նրանից դա դժվար էին հանել: Ժաննան ետ-ետ արեց: Իսկ հաղթած հպարտ խոյը գալիս էր: Դա հաճելի ու սարսափելի էր: Ժաննան նահանջեց, ժաննայի քայլերը խառնվեցին, ժաննան շուռ եկավ ու վազեց, քաղաքային նրա բարձրակրունկները ծեծում էին արդեն քաղաքի ասֆալտը, բայց բարձրագլուխ խոյի տազնապը նրա դեմքից դեռ չէր սրբվում:

Ուղիղ գծերի չորությամբ բետոնը երկինք էր միտում և հարկ առ հարկ ու տուփ առ տուփ բացում մեռյալ պատուհաններ դեպի բետոնե կտուրներն ու ատոմային սունկը, բետոնե փողոցը չորս հատ քառակուսի ծակ էր տվել չորս հատիկ խուզած ծառի՝ որ կենսահյութեր քաշեն ասֆալտի տակերից, և հուսահատիչ էր: «Ի՞նչ է պատահել, ժաննա: – Ինչո՞ւ ուշացար, Մարչելո. բանվորների տղաները հրթիռներ էին արձակում, հրթիռներն իրենք էին սարքել, հրթիռները բարձրանում էին ութ հարյուր... Օ՛յ, քեզ համար ոչինչ էլ հետաքրքիր չէ»: Նրանք մի վայրկյան նայեցին իրարու, և նրանք կուշտ էին քնից, հացից, ուրախությունից, ալարում էին ատել միմյանց և մորմոքում էին անառիթ թախիծի մեջ: Նրանք հիմա գնալու էին, անցողակի, խմելու քնաբեր դեղի մահացու բաժին՝ լքելու համար բետոնե շենքերի մեռյալ պատուհանները, կապերի անկենդանությունը և բամբակի պես կոկորդ խցված թախիծը, բայց գնացին մի-մի գավաթ սառույցով վիսկի ըմպելու ռեստորանի կարմիր-թուխ սրահում, ուր նեգրը կոր առ կոր մերկացնում էր մասայի ցեղի նեգրուհուն:

Նեգրուհու միայն գեղեցիկ մեծ բերանը բավական էր յուրաքանչյուր աղջկա դարձնելու այնպիսին, ում մասին Հասմիկն ասում է, թե երբ նա տրամվայ էր բարձրանում, իրենց մեջ տղամարդիկ դող ու խախտվածությամբ էին զգում, տղամարդիկ նայում ու շփոթված գլուխները շրջում էին, և նույնիսկ կանայք էին զգում նրա իզուրությունը: Նեգրուհու գեղրային պինդ գավակը կթեքեր, իրեն կդարձներ կաթուղի կարողնալի հայացքը, բայց կարողնալն այդտեղ չէր – այդտեղ միայն ժամնան ու Մարչելոն էին ողորկ ցածր սեղանի մոտ վիսկիի երկու գավաթի դեմ: Նեգրը թվում էր նույնքան հզոր, բայց աղջկա մերկանալու հետ նեգրը փոքրացավ, վերջում հատակից շորեր հավաքող, գինի բերող մանկավիհի չափ էր: Բացվեց նաև պորտի փոսը: Նվազը կարմիր-սև կիսախավարի մեջ փափուկ անկողին էր փռում: Մնաց կրծկալի կարմիր ժապավենը: (Մասայի կանայք, ասում է, դժվար են պտղավորվում և միշտ այդպես պինդ են): Կրծկալի ժապավենը նրա փորի վրայով սահեց դանդաղ, քանի որ կնոջ նրա մագնիսը պահում էր, ստինքները թրթռացին ու այդպես էբենոսի պես մնացին: Նեգրուհին ինքն այլևս հանելու բան չուներ, մյուս ժապավենն արդեն տղամարդիկ էին պոկելու, բայց հարուստների քաղաքում կա՞ր արդյոք այդ տղամարդը: Ժամնան նայեց Մարչելոյին, Մարչելոն նայեց ժամնային և երկուսն էլ շփոթվեցին ու հասկացան, որ հարուստների իրենց քաղաքը վայրենիների երկրից քերմություն ու թրթիռ է ներմուծում և իրենք դեռ ապրում են:

Նրանք գնացին ներկա լինելու Հարուստի աղջկա ծննդյան հրավերքին: Ջարմանքի կես բացականչության չափ շատ էին Հարուստի միլիոնները, մնացած ամեն ինչն այնտեղ սովորական էր: Միլիարդատիրոջ աղջիկը պատահմամբ դեռ չէր խմել քնաբեր դեղի մահացու իր բաժինը կամ արդեն խմել էր և հիմա չկար այս կյանքում, Միլանում, մեկ միլիարդ լիր արժեքող մենատանը, ազդերը երևացնող-չերևացնող շրջագգեստի մեջ, այլ՝ ժամանակներում որևէ տեղ էր և միամտորեն բացում ու պարկեշտորեն ծածկում էր ծնկները: Եվ Մարչելոյի հետ նայում էր ինքն իր ծնկներին ու աղջնակի պես չէր հասկանում թե ինչ կա նայելու: Մարչելոյի անամոք թախիծը հավեց նրա ծնկներին, շոյեց նրա ծնկածալերը և փակեց ծնկածալերից վեր. և թեպետ դա անհույս ձեռնարկումն էր, Մարչելոն տխուր չէր. Մարչելոն աշխուժացել էր՝ քանի որ գտել էր թախիծի ակունքը: Հարուստի աղջիկը Մոնիկա Վիտին էր:

Ժամնայի սպանիչ թախիծը հիմա-հիմա դառնալու էր սովորական լրբություն անձրևի տակ ավտոմեքենայի մեջ դատարկ ծառուղում, նրա սրված դեմքը հիմա կաղապարվելու էր տղամարդկային չոր ու զգայուն ափերով, նրա շրթունքների կամակոր գծագրությունը հիմա-հիմա ծռնռվելու էր տղամարդկային շնչի տաքությունից, նրա կոպերը հիմա իջնելու էին՝ մի

երկու թուղթով ծածկելու նրա աչքերի հավիտենական թախիծը,– Ոչ,–  
ասաց նա,– պետք չի, ես գիտեմ դա ինչ է, պետք չի, զնանք մոտենեք:

Հարուստները զվարճանում էին. անձրև էր. անձրևը վարար էր. վարար  
տաք անձրևը չէր հովացնում դեռ Ներոնի ժամանակներից փտող այդ գի-  
նով մարմինների այրումը, և սրսփուն գիշերվա անձրևի տակ նրանք հենց  
հագուստներով էլ լողում էին ավազանի սառը ջրի մեջ: Միլիարդատիրոջ  
աղջիկն ուզում էր հասկանալ թե Մարչելոյի ներկայությունից իր մեջ այդ  
ինչ է հորանջում ու արթնանում՝ նրան ուղարկեցին քնելու. աղջնակ ժա-  
մանակ նրա նյարդերի գաղտնարաններում ավտովթարից մի բան ծովել էր  
և հասունացման հետ առաջացել սխալ թե ճիշտ հունով. քնատությունը  
վերածում էր սեռական թե բանաստեղծական ջղագրգռության՝ ան-  
հանգստացնելով տան ծառայողներին և մորը, ինչպես նաև հորը. Մար-  
չելոն հասկանում էր թե ինչ է հորանջում նրա մեջ, Մարչելոն ցանկանում էր  
այս խելագար դարում մի կես ժամով երջանկացնել նրան՝ հանկարծ տե-  
սավ, որ ժամնայի դեմ է կանգնած:

Ժամնան ուզում էր ասել Մարչելոյին թե ինքը նրանից սրտի թրթիռով  
սպասել ու սպասել է, և նա ինքն էլ խոստացել էր, մեծ, անհայտ, սպանիչ  
մի սեր, իսկ նա՝ սովորական, իսկ նա՝ կիսամեռած, իսկ կյանքը՝ ծանծրալի,  
իսկ թախիծը՝ անհասկանալի, իսկ տազնապը՝ անընդհատ... բայց Մար-  
չելոն բացատի փոսում խառնեց ու տրորեց նրա խոսքերը, իր թախիծը,  
նրա կամակորոթությունը, նրա մարմինը, իրենց հագուստները, նրա կա-  
րոտները, իր հկքը, նրա ոտքերը, ուսերը, վիզը, և պահանջեց ու աղաչեց  
նրա շրթունքները, շրթունքները, շրթունքները: Ոչ, ոչ, ոչ – դիմադրում էր  
կինը, չէր ուզում, ատում էր կինը, բայց Մարչելոն ևս մի անգամ գտել էր  
քաղաքակրթության լաբիրինթոսներում իր առնականությունը,– հունցեց  
նրա մերժումն էլ նրա կարոտների ու իր հետ: ... Բացատի փոսն առաջացել  
էր այսպես. Հարուստի մենատան բետոնե բակերը լույսերի տակ կանաչեց-  
նելու համար երկրի ծածկույթն այդտեղ կտրել ու ճուճք առ ճուճք տարել  
էին, և հողը մերկացել էր՝ ինչպես մաշկը քաշելուց նյարդն է մերկանում:  
Նրանք գալարվեցին ու անշարժացան ահա այդ փոսի մեջ:

Հեռվի տնակը կանգնած էր անշարժ, ցողունները կանգնած էին անշարժ,  
անտառը կարծես ծառերի բանակ էր, բայց ծառերը կանգնած էին անջատ,  
անտառի եզր ելած կաղնին անտառի հետ կապ չունեք, զանգուր բոխին  
կանգնած էր անջատ, բոլոր ծառերը կանգնած էին անջատ առ անջատ,  
ամեն ինչ կանգնած էր ինքն իր համար, ոչ մեկը ոչ ոքի հետ չունեք ոչ մի  
կապվածություն:



Ահա թե ինչ. նրանք պիտի ծնեին հինգ-հինգ երեխա, պիտի լինեին հանքախորշում մզակած բաճկոնով հանքափոր, սարում կարկուտի տակ կթվոր, գետով փայտ առաքող, մանկամսուրի հավաքարար – կուրծքները սմբեր երեխաների բերանում, կոնքները մաշվեր խոտի բեռան տակ, պորտներն ընկներ գերանդվի զոռից, դեմքները կնճռոտվեր հարյուր կողմի վրա ժպտալուց, որպեսզի անձրևից քաշվեին կրակի մոտ ծածկի տակ և կրակը տաքացներ սառած ոսկրածուծները:

Դահլիճի լույսերը վառվեցին, և Եվա Օզերովան խղճուկ մեկն էր: Եվ խեղճուկրակ էին դահլիճի բոլոր աղջիկներն ու բոլոր կանայք և ամաչում էին նայել միմյանց: Եվ ես ցանկացա լինել խառնակիչ լրագրող, Հայաստանը՝ Իտալիա, Երևանը՝ Յոնո... թե չէ մեկին հազիվ գտած, դեռ չգտած՝ պարզվում է, որ քենուդ ընկերուհին է կամ ընկերոջդ ազգակա-  
նուհին:

– Նե՞ջայդի,– հարցրեց Մաքսուդը. նա միայն ինձ հետ է թուրքերեն բառեր փոխանակում,– հո՞նց էր,– թարգմանեց հայերենի:

– Փահ, փահ, փահ,– ինչպես որ մերկ նեգրուհու դեմ հին գյուղացին ծափ կտար՝ հիացա ես,– բայց ինձ ծանոթ էր, Մաքս. մեր Բակունցն այս նույնն արել է սրանից քառասուն-հիսուն տարի առաջ:

– Ձեր Բակունցն ի՞նչ է արել: Ի միջի այլոց, Ստեփան Ջորյանն ինձ ավելի է դուր գալիս:

– Քաղաքացի մի կին մի գյուղացու աչքն է մտնում, հետո քաղաքացի այդ կնոջը գյուղացին տեսնում է իր կնոջ մեջ: Հնով յուր է գնում:

– Դա այստեղ կեղև էր:

– Իսկ միջո՞ւկը որն էր:

– Քննարկումից հետո գնա՞նք գարեջրի:

– Գարեջուր չեմ սիրում:

– Չեխական գարեջուր է, խեցգետին էլ է լինում:

– Ես մի կոնյակ ունեմ, քննարկումից հետո գնանք ճաշարան:

– Կոնյակը պահենք մի լավ օրվա:

– Ովքե՞ր ենք գարեջրի գնալու:

– Մնացականյան, գանձապահը քեզ է սպասում, ասում է շենքից դուրս եմ գալիս:

– Շնորհակալություն, Գերման:

– Էլդարը, դու, ես, Վիկտոր Իգնատևը, չնայած չարժե Էլդարի հետ խմել:

– Աղջիկներից չվերցնե՞նք հետներս:

– Ուզում ես՝ Եվային բեր, բայց կարիք չկա:

– Տեսնենք:

Անզավակության հարկ իզուր եք գանձել, որովհետև իմ կինը չբեր է, ժպտալով ասացի ես Վալենտինա Սերգենային: Ձեր կինը չբեր չի, Արմենակ Սինյոնովիչ, դուք երկու երեխա ունեք, ժպտալով ասաց Վալենտինա Սերգենան: Անզավակության հարկ իզուր եք գանձել, որովհետև իմ կինը չբեր չի և ես երկու երեխա ունեմ, ժպտալով ասացի ես: Անզավակության հարկ իզուր չեմ գանձել, որովհետև ձեր երեխաների գոյությունը հաստատող տեղեկանք չկա, ժպտալով ասաց Վալենտինա Սերգենան: Իսկ դուք որտեղի՞ց գիտեք, որ ես երկու երեխա ունեմ, ժպտալով ասացի ես: Իսկ ես անցած տարվա տեղեկանքից գիտեմ, ժպտալով ասաց Վալենտինա Սերգենան: Իսկ դուք վերցրեք և տեղեկանքի տարեթիվը ժպտալով փոխեք: Իսկ դա կլինի կեղծիք: Այդ դեպքում ձեր գեղեցիկ ձեռքը տվեք, բռնեմ ձեր գեղեցիկ ձեռքը և տարեթիվը փոխեմ ձեր գեղեցիկ ձեռքով: Կեղծիքը այդպիսով արած կլինենք միասին, ժպտալով ասաց Վալենտինա Սերգենան: Եվ մեզ միասին կփակեն նույն բանտախցում, ժպտալով ասացի ես: Եդ՝ կատակ, լրջորեն ասաց նա և խոստացավ, տեղեկանքն ստանալուց հետո, վերադարձնել հին գանձումները նույնպես: Նա լիքն ու դեռ կոկ էր, սակայն չէր նկատվում համբավով կախարդող դերասանուհիների ու կաթնահունց ուսանողուհիների շատության մեջ: Նա միայն բաշխում էր աշխատավարձերը և լռիկ ժպիտով ուտում էր սերուցք ու փշոտ վարունգ գրասենյակի անկյունում: Իսկ հեռու Ծմակուտ գյուղում Խորեն խեղճ հորեղբոր ջղային կնիկը թողել, անիծելով գնացել է գյուղից, ասում է փեշերը շարժելով գնում ու անիծում էր, Խորեն խեղճ հորեղբայրը յոթ ամիս է ահա կնիկ չունի: Ասել են՝ «ախչի, կարգին մարդ է, ինչո՞ւ ես գնում», ասել է՝ «ի՛, հողեն դրա գլուխը, մենակ էդ գիտի» և անիծելով թողել հեռացել է Ծմակուտ գյուղից:

– Պալոնսկին սկսել է, Մնացականյան:

– Հորեղբորս համար Մոսկվայի կենտրոնից կյանքի համապատասխան ընկերուհի եմ ջոկում, Ռախսա Վասիլևնա:

– Ինչպե՞ս համապատասխան, դասընթացների վարչությունը գուցե կարողանա օգնել:

– Գյուղին հարմար լիքը լինի, կռվարար չլինի, հորեղբայրս գիշերով ոչխարից փախչի՝ հորեղբորս ասի «եկա՞ր»:

Ուսումնական մասի տիկին պետը մի պահ մտածեց ու տեսավ, որ ես իրեն եմ նկարագրել: Ուսումնական մասի տիկին պետը կռվարար

ժպիտով ասաց.

– Ի՞նչ է նշանակում ոչխարից փախչել:

– Ոչխարից փախչի՝ նշանակում է ոչխարը փարախում թողնի, ընկերոջը ոչխարի մոտ քնած թողնի, գիշերով հանդից գա տուն ուրեմն և գիշերով էլ ուրեմն ետ գնա:

– Դա գեղեցիկ է, դա քո սցենարի մեջ կա՞:

– Այո, գրել եմ, որպեսզի ջնջել տաք:

– Ուրեմն իզուր ես գրել:

– Ասացի՝ գուցե ոմանց դուր գա և այդ ոմանք պաշտպանեն:

– Այդ ոմանք չեն պաշտպանի, համոզված եղեք:

– Ասացի՝ քանի դեռ կին եմ, գուցե թե ջնջել չտան:

– Ռուսերենի մեջ բավական առաջադիմել էս:

– Շնորհակալ եմ օգնության համար:

– Ռուսերեն հիմա ձեզ մի բան կասեմ, տեսնեն ռուսերեն լա՞վ եք հասկանում. Պալոնսկին քննարկումն սկսել է, դուք դասից ուշացել եք հինգ րոպե:

– Լսում եմ, ընկեր փոխգնդապետ:

### III

– Բարեկամներս,– ծափ զարկեց Պալոնսկին,– քննարկում ենք. ինչպե՞ս էր Միքելանջելո Անտոնիոնին: Աշխույժ:

Նկարն առաջնակարգ ոսկերչի աշխատանք էր, Պալոնսկին շողում էր: Նկարը բոլորին ու այնքան էր դուր եկել, որ չէր կարելի ասել զովեստի առաջին պատահած խոսքը, երկրորդ խոսքն էլ չէր կարելի ասել, կարելի էր լռել գոնե այնքան ժամանակ, ինչքան ժամանակում հավատացյալը մոնը փակցնում, վառում, խաչքարը համբուրում է:

– Ուզում եմք իմանալ, Միքելանջելո Անտոնիոնին ունի՞ զոքանջ:

Էլլար Գուրամիշվիլին ծոցատետրում սև թանաքով դիմագծեր էր ճանկրտում, սևեռված, կարծես հարցն անցողակի ինքը չէր նետել, նա Պալոնսկու դիմանկարի վզին թիթեռնիկ-վզկապ էր հարմարեցնում:

«Տնաշեն, թողնեիր, գոնե մի քիչ հիանայինք», թաքուն ասացի ես:

Պալոնսկու թիթեռնիկը կապելով, թիթեռնիկին պուտեր դնելով՝ ինքն իր համար նա մրթմրթաց. «Յորդ հասակին է, լսիր, տասներկու թվի ծնունդ է, հիսունհինգ-վաթսուն տարեկան մարդ է – չի ամաչել՝ կինոխցիկը ձեռին վեց-յոթ ամիս պտտվել է տկլոր կանանց ետևից քու էդ Անտոնիոնին»:

– Բարեկամներս, խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և

տղամարդու պես կանգնել հարցի թիկունքին: Ձոքանչ, հետո՞: Հարցն ո՞վ տվեց:

Իրենց հետ բերելով Պալոնսկու ակնոցավոր հայացքը, բոլորը շրջվեցին դեպի Գուրամիշվիլին, և բոլորի համար նա դարձյալ չընկալված տաղանդի ինչ-որ կեցվածք ու պուշկինյան ժամանակների վրացի էր: Փոքրուց հարբեցող, ջղային, փնթի, կոպերը կարմիր՝ նա ճանկռտում էր ծոցատետրի մեջ դեմքեր և չկրկնեց հարցը:

– Ասում է,– հավվելով պարզաբանեց Տանյան,– Անտոնիոնին ունի՞ զոքանչ, այսինքն...

Պալոնսկին պսպղաց: Նրա հաշվիչ մեքենան ուներ այդ խնդրի լուծման տվյալները:– Օ՛ բարեկամներս,– նրա հաշվիչ մեքենան սկսեց աշխատել.– հարցը գալիս է անափ ռեալիզմի տեսությունից: Հավաքված է վիթխարի փորձ այդ տեսության դեմ ու կողմ, իսկ ես ահա ունեմ իմ պատասխանը. իրերի և իրադարձությունների կյանքային քառսի միջից արվեստագետն ընտրում է իրեն անհրաժեշտ իրերն ու իրադրությունները: Անտոնիոնին հիանալի էր ընտրել: Դեպքերի կազմակերպման տվյալ ընթացքում զոքանչներն ավելորդ էին:

– Մենք այդ հասկանում ենք: Մենք չհասկացանք միայն մի բան. Անտոնիոնին զոքանչ ունե՞ր:

– Ձոքանչների մասին, Մնացականյան, այստեղ խոսելն Անտոնիոնին համարել է ավելորդ:

– Քանի որ զոքանչների ծնկները գեղեցիկ՞ չեն:

– Թեկուզ:

– Այդպես կարելի է,– փնջոցով ոտքի կանգնեց Սերաֆիմ Գերմանը,– ավելորդ համարել քենիներին էլ, երեխաների փալաս-փուլուսն էլ, խոհանոցն էլ, լրագրերն էլ, Վիետնամի պատերազմն էլ, լյարդի ցավն էլ և առհասարակ այն ամենը, ինչերից ստեղծվում է ճշմարիտ մթնոլորտը: Դա գեղեցիկ է, բայց ազնիվ չէ, Գեորգի Կոնստանտինովիչ:

– Բարեկամներս: Իտալական նեոռեալիզմը նշանավորվեց գործողությունների ծավալմամբ փալաս-փուլուսային մթնոլորտում. եթե կա արվեստի զարգացում, իսկ ես կարծում եմ կա, ապա իտալական նոր կինոն պարտավոր էր ազատվել փալաս-փուլուսային այդ մթնոլորտից՝ զոքանչներից, խոհանոցներից ու մակարոնից:

– Իհարկե պարտավոր էր,– կարծես թե հաստատեց Իգնատևը:– Անտոնիոնին ահա ազատվել է, և ես շատ ուզեցի ապրել նրա կինոնկարի մեջ և ոչ թե, հասկանում ես, Դոբրոյուբովի փողոցի 9/11 այդ հանրակացարանում:

Այդպես, նշանավոր էին դառնում Վիկտոր Իգնատևը, Գուրամիշվիլին, այդ երկրաբան Գերմանը, երևանցի Մնացականովը՝ որ իրեն համառորեն կնքել է Մնացականյան, այնտեղ ահա ձեռք է բարձրացրել ու հիմա շատ կարևոր բաներ է կակազելու մի քիչ ռուսերեն, մի քիչ կիրգիզերեն՝ Մուրզա Օկուևը, իսկ գեղեցկուհին մեկ է և փեսացուները՝ հազար, իսկ կյանքը մեկ անգամ է տրվում և պետք է միայն որպես հաղթող ապրել, պապն այնինչ ձկնորս է եղել գետանավի վրա, հայրը երկաթուղային բանվոր է հարյուր երեսուն հազար վերստանոց զծի մի աննշան կիսակայարանում, իսկ Մոսկվայում դափնիներ կան, ճաշկերույթներ կան, աղջիկների շքեղություն կա... և մի ծխախոտ վերցնելով անուշադրությամբ ուրիշի տուփից և հրահանը վառելով, բայց դեռ չնոտեցնելով ծխախոտին, ելավ, բարձրահասակ ու թիկնեղ կանգնեց Վիկտոր Մակարովը և նայեց մոխրակապույտ աչքերի լուրջ հայացքով.

– Ինչ որ ասացին տղաները՝ Վիտյա Իգնատևը, Գերմանը, Մնացականովը, դե, Գուրամիշվիլին՝ այդ բոլորը շատ հասկանալի ու սիրելի էր, և պետք է ասել, որ ես անձամբ նրանց հետ համաձայն եմ, այսինքն չեմ առարկում: Անտոնիոնին մերժել է մի իրականություն, որի մեջ ապրել կուզենար, ինչպես ինքն արտահայտվեց, սովետական երկրի քաղաքացի Վիկտոր Իգնատևը: Այդպե՞ս արտահայտվեցիր, Վիտյա, սխալ չեմ լսել: Շնորհակալություն: Վիկտոր Իգնատևը իհարկե չէր ցանկանա ապրել բուրժուական այդ իրականության մեջ, Վիկտոր Իգնատևը դա կատակի կարգով ասաց, և մենք այդ կատակի ետևում պարտավոր ենք նկատել այն, որ արևմտյան արվեստագետ Միքելանջելո Անտոնիոնին, լինելով հանդերձ տաղանդավոր կինոգործիչ, վրիպել է. մերժելին ներկայացրել է գեղեցիկ, և մերժելին, այդպիսով, դարձել է ցանկալի: Իմ առարկությունը, սակայն, ուրիշ բանի դեմ է:– Եվ Վիկտոր Մակարովն սպասեց՝ որ Պալոնսկին հարցնի, որ դասարանը հարցնի՝ ինչի՞ դեմ է քո առարկությունը, Վիկտոր Մակարով, և ինչի՞ համար է քո առարկությունը:

Պալոնսկին, ի վերջո, հարցրեց.

– Ինչի՞ դեմ է ձեր առարկությունը.

Եվ Վիկտոր Մակարովը շարունակեց.

– Ես ահա թե ինչ կուզենայի ավելացնել իմ ընկերների՝ Վիկտորի, Գերմանի, Մնացականյանի, Էլզարի ասածին: Եվ, կարծում եմ, նրանք համաձայն կլինեն ինձ հետ:

– Այո, բայց զազը գնում է, հրահանս մի փչացրու:

Դասարանի ծիծաղը նրան չշփոթեցրեց:– Ոչինչ,– ասաց նա,– պետք

է արժանին հատուցել՝ ոչինչ, սուր էր: Բայց, Մնացականյան, խնդրում եմ լսել, գուցե համաձայն լինես, իսկ եթե համաձայն չես լինի՝ ես սիրով կլսեմ քո ընկերական առարկությունները: Ահա, Գեորգի Կոնստանտինովիչ: Թե ինչ միջոցներով կստեղծի իր նկարը Միքելանջելո Անտոնիոնին՝ իր գործն է: Մեզ՝ մեր երկրի արվեստագետներին, հուզում է ուրիշ խնդիր. հոսանքներից ու ենթահոսանքներից անկախ, կա հուսադրող արվեստ և կա հուսալքող այսպես կոչված արվեստ: Մենք կոմունիզմ ենք կառուցում, և ես անձամբ կողմնակից եմ ոգեշնչող արվեստի: Սա՝ ի գիտություն բոլորիս: Գեորգի Կոնստանտինովիչ, ահա, ինչի՞ մասին էր Անտոնիոնիի նկարը:

– Մարդը մենակ է, Մակարով:

– Մարդը մենա՞կ է: Իսկ ինչպե՞ս է կառուցվում Եմիսեյի էլեկտրակայանը, Գեորգի Կոնստանտինովիչ, մենա՞կ մարդն է կառուցում:

– Կապիտալի աշխարհում մարդը մենակ է, Մակարով:

– Ներեցեք, իսկ կապիտալի աշխարհում ինչպե՞ս եղավ հեղափոխությունը:

– Մարդիկ փորձեցին հասկանալ միմյանց, Վիտյա:

– Իմ հայրանունը Ալեքսեյ է: Եվ հասկացա՞մ միմյանց, ձեր տպավորությամբ, Գեորգի Կոնստանտինովիչ:

– Իմ տպավորությամբ, այո, հասկացան, Վիկտոր Ալեքսեևիչ:

– Ահա, շնորհակալություն, Գեորգի Կոնստանտինովիչ: Իսկ ինչպե՞ս կազմակերպվեց ֆաշիստական վիթխարի բանակը, իսկ ինչպե՞ս են ծնվում երեխաները, ինչպե՞ս են առաջանում ռազմական միավորումները:

– Ասենք թե, շահերի ընդհանրությամբ են առաջանում ռազմական միավորումները, կազմակերպվում բանակները, ծնվում երեխաները, Վիկտոր Ալեքսեևիչ, հետո՞:

– Այդ նշանակո՞ւմ է, Գեորգի Կոնստանտինովիչ, որ մարդիկ միմյանց հասկանում են:

– Նշանակում է:

– Իսկ ո՞ւր մնաց ձեր Անտոնիոնիի «մարդը մենակ է», Գեորգի Կոնստանտինովիչ:

– Այո, բարի... բարի: Իսկ ինչպե՞ս են, Մակարով, կազմալուծվում բանակները, ընտանիքները, ազգերը, պետությունները:

– Բայց կազմալուծվելուց առաջ կազմակերպվո՞ւմ են, ընկեր Պալոնսկի:

– Այո՛, իհարկե:

Վիկտոր Մակարովը պատասխանեց արդեն նստած տեղից.

– Իսկ մենք սկզբում պայմանավորվեցինք, և մեզանից առաջ մեր մեծերն են պայմանավորվել, որ մենք կողմնակից ենք պայքարի տանող արվեստի, ճի՞շտ է, Գեորգի Կոնստանտինովիչ:

– Չկեղծելով իրականությունը:

– Իսկ եթե,– մոխրակապույտ հայացքը Պալոնսկու աչքերին՝ դանդաղ ելավ Վիկտոր Ալեքսեևիչ Մակարովը,– իսկ եթե, Գեորգի Կոնստանտինովիչ, պետության, ազգի, հայրենիքի շահը պահանջում է տվյալ պահին փոքր-ինչ կեղծել իրականությունը:

– Ազգերից ու հայրենիքներից վեր՝ տեր ճշմարտությունը,– սովորեցրեց Պալոնսկին.– Մահաթմա Գանդին ասում է՝ «Ճշմարտությունն աստվածն է, աստվածը ճշմարտությունն է»:

– Դե, Մահաթմա Գանդին,– կարծես թե ճնշվեց Մակարովը:

– Գեղեցիկ է ասում, չէ՞,– շողաց Պալոնսկին:– Ճշմարիտն աստված է, աստված ճշմարիտ է:

– Փղի վրայի զանգուլակներ են,– մրթմրթաց Մակարովը:

– Այո՞,– շողաց Պալոնսկին:– Ես կվերափոխեի այսպես. արվեստի աստվածը ճշմարտությունն է և արվեստի ճշմարտությունն աստվածանուն է: Կամ՝ ճշմարիտ արվեստն աստվածանուն է:– Պալոնսկին ինքը լռեց ու սպասեց թե մենք էլ, ինչպես տաճարում աստծու ոտքերի տակ, կպապանձվենք ու կհիանանք, Մակարովը սակայն այլ կարծիքի էր.

– Բարձր ճշմարտություն է:

– Շատ բարձր՝ ազգերից ու հայրենիքներից վեր,– ասաց Պալոնսկին, և Էլդարը նրա ծաղրանկարին բերանի դեմ ամպերի թե բամբակի վրա գրեց «շա՛տ բարձր»:

– Այնքան բարձր՝ որ ձեռքս չի հասնում ու աչքս էլ չի տեսնում, Գեորգի Կոնստանտինովիչ:

– Հարկավոր է ուրեմն ձգտել:

– Այո՞:

– Եթե ձեզ հասանելի չէ, չնայած ձեր վեպն ասում է հասանելի է, հավատացեք նրանց, ովքեր տեսնում են վերին ճշմարտությունը, Վիկտոր Ալեքսեևիչ:

– Դառնանք վասալի վասալ՞:

Պալոնսկին չպատասխանեց, կարծում էր ավարտել է ինքը և ավարտել է նազելիորեն ճշգրիտ, Էլդարն այնինչ նրա ծաղրանկարի գլխին ցնցուղ էր դրել:

– Թողնենք ձեր էդ հնդկա-հրեական աստվածությունները, Գեորգի

Կոնստանտինոպոլիչ, ձեռքս իսկապես չի հասնում:

– Ինչպես թե «ձեր էդ հնդկա-հրեական»:

– Ձեր էդ բարձր ճշմարտություններից ներքև, շատ ներքև, անմիջապես իմ գլխին, Գեորգի Կոնստանտինոպոլիչ, իմ հայրենիքն է, ես նրա զավակն եմ ու գիտեմ, որ նրա համար կզոհեմ բոլորին ու ամեն ինչ, արվեստի ձեր ասած ճշմարտությունը նույնպես, ընկեր Պալոնսկի, դա նույնպես:

Պալոնսկին երդվեց.

– Հայրենիքը բոլորինս է և բոլորս ենք նրա զինվորները, Վիկտոր Ալեքսեևիչ, ձեզ ինչո՞ւ եք այդպես մենակության դատապարտում:

– Գուցե թե, գուցե թե,– անցողիկ քրթմնջաց Մակարովը և վառեց ծխախոտը: (Այսօրվա համար այսքանը բավական է: Մոսկվայում նա ապրելու իրավունք ունի դեռ մեկ տարի: «Վերելք» վեպից խնայողական դրամարկը գնաց մի քիչ փող: Կարծիքներն սցենարի մասին առայժմ բացասական չեն: Հարկավոր է ամսագրի խմբագրություն գնալ և, քանի դեռ չի տպագրվել, կարդալ վեպի գրախոսությունը: Գրախոսն, ասացին, շատ է գովում, հարկավոր է խուզել այդ գովեստը, գործին դա կխանգարի: 370-րդ կիսակայարանի հորը հացի և օղու փող է պետք, գովեստ չի պետք. այդ գովեստից հարկավոր է վերցնել մի երկու բուռ, տալ Օրսկի բանտապետին, որպեսզի նա հարգի Վիկտոր Մակարովին և բանտից շուտ արձակի Տոլիկ Մակարովին, այդ կիսահիմար, անճար գող, անխելք, մարդու սրտի քար դարձած ծրիակեր լակոտին):

– Ես Մակարովին, ոչ էլ ձեզ, Գեորգի Կոնստանտինոպոլիչ, լավ չհասկացա,– այնտեղ ասում էր Անատոլի Յունգվալդ-Չուսևը: Թող ասի, թող գեղեցկություններ դուրս տա: Որոշ բաների տիրանալու համար պետք է կուլ տալ որոշ բաներ:

Բոլորն սպասեցին թե ինչ կասի Յունգվալդ-Չուսևը, որովհետև Յունգվալդ-Չուսևը ուղղամիտ և ցինիկ է: Եվ բոլորի ուշադրության միջով շքերթի գնաց Անատոլի Յունգվալդ-Չուսևի անամոթաբար ուղղամիտ խոսքը:– Փորձենք հասկանալ, քննադատելուց առաջ, Միքելանջելո Անտոնիոնիին, նա պատահական մեկը չէ, նա Անտոնիոնին է: Անտոնիոնին ասել է իր այս կինոնկարով. սեռական յուրաքանչյուր մերձեցում բռնաբարության փաստ է: Այստեղ ի՞նչ կա առարկելու:– Եվ նա կանգ առավ ու նայեց իր զարմացած գեղեցիկ աչքերով: Դա լռություն չէր, նա մտածելու համար չէր լռել, նա աղջիկներին իրենով հիանալու ժամանակ էր տվել:– Անտոնիոնին վերցնում է կապերից ամենաբնա-



կանն ու նախնականը և արձանագրում, թե ամսվա մեջ մեկ անգամ պատահող մերկ նյարդերի շփման այդ բույսերին անգամ մարդիկ չեն հաղորդակցվում, այլ յուրաքանչյուրը մնում է իր կեղևի մեջ: Սիրո կապն ահա եթե կապ չէ, ինչպե՞ս կարելի է միավորում կոչել զինվորների սովորական գումարը:

– Յուրագվալդն ուրեմն ամիսը մի անգամ շփվում է մերկ նյարդերով:

– Ի՞նչ է, Մնացականյան, համաձայն չես:

– Հիմա, Գեորգի Կոնստանտինովիչ: Թռչունների խմբին սրանք ի՞նչ էին ասում, Սաքսուդ:

– Երան, թռչունների խումբը երանն է՝ ստայա:

«Իսկ յուրաքանչյուրն իր բնում, իր ճահճում, իր համար առանձին ապրող թռչուններն ինչպե՞ս են չվելուց առաջ երան դառնում», ես մտքիս մեջ դասավորեցի ասելիքս և կանգնեցի թարգմանելու:

– Յուրաքանչյուրն իր բնում, իր ճահճում, իր համար առանձին ապրող թռչուններն ինչպե՞ս են երան դառնում...– չու, չվել բառի ռուսերենը ես չգտա,– ինչպե՞ս են երան դառնում տեղները փոխելուց առաջ:

– Ուզում ես ասել չուի ժամանակ:

– Չուի ժամանակ, շնորհակալություն:

– Չուի համար կազմված երանը,– դանդաղ բացատրեց Յուրագվալդ-Ջուսևը,– միավորների գումար է: Յուրաքանչյուր միավոր վախենում է անհայտությունից: Յուրաքանչյուր միավոր ցանկանում է անհայտ սարսափի դեմ հզոր լինել: Եվ առաջանում է թույլ միավորների հզոր երանը: Բայց դա միավորների գումար է, այլ ոչ թե միավորում, քանի որ երանի յուրաքանչյուր թռչուն փակված է ինքն իր մեջ: Ճի՞շտ է:

– Ասենք թե:

– Եվ բացի այդ նրանք թռչուն են, ճի՞շտ է:

– Դու էլ պակաս թռչուն չես:

– Երանը հասնելու է Եգիպտոս, քեզ համար եմ բացատրում, քայքայվելու է քո երանը, մնալու են առանձին թռչուններ իրենց առանձին ճահիճների մոտ իրենց բների մեջ, ճի՞շտ է:

– Ճիշտ է, Ջուսև:– Ես նստեցի:– Շնորհակալություն:– Ես հարմարվեցի նստած տեղս:– Լիովին համաձայն եմ ձեզ հետ:– Սակայն Ջուսևի տրամաբանության մեջ ես ինչ-որ սխալ էի զգում, իսկ թե ինչ սխալ... Ինձ դուր չէր գալիս նրա խոսքի այդ բացատրող շեշտը: Ես գիտեի, որ պատասխան ունեմ, բայց պատասխանը հիմա էր հարկավոր: Երանը ինձ մի լավ բան դեռ հուշում էր: Ես լսում էի երանի ղողանջը աշնան մաքուր երկնքում, և կարծես թե մորս ձայնն էլ լսեցի: Ես լա-

վագույն օրինակ էի գտել, այդ օրինակն իմ ձեռքին՝ ես չպետք է սխալվեի: Ուրեմն ինձ մի տեղ խաբոււմ էին:– Կա, ասում ես, սարսափ անհայտից, Ջուսև,– մտամոլոր ասացի ես:

– Այո, կա սարսափ անհայտից:

– Համաձայն եմ,– կանգնեցի ես:– Թույլ միավորները սարսափի առջև խմբվում են...

– Թե ինչու ես քեզ չարչարում,– լսեցի էլդար Գուրամիշվիլու փնթփնթոցը: Էլդարը ծոցատետրում սև թանաքով դեմքեր էր խազնգում. Ջուսևը, իմ Մնացականյանիս նման մի բան, Գեորգի Պալոնսկին բերանով բամբակ էր ժայթքում, բամբակին գրած էր...

– Թույլ միավորներն, այո, սարսափի առջև գունարվում են և... Ոչխարը գալիս է ոչխարի մոտ, ոչխարները գալիս են ոչխարների մոտ, ոչխարները հոտ են դառնում և այդ հոտը իր սարսափի՝ գայլի հախից գալիս է, հոտը գայլի հերն ուղղակի անիծում է: Այդպե՞ս ասացիր, Ջուսև:

– Կներեք, ինքն Անդրկովկասից է եկել, այդ պատճառով էլ ոչխարի մասին շատ գիտի, իսկ ես ոչխարի բնավորությունը չգիտեմ: Բայց պիտի որ հենց գայլի հախից գալու համար հոտ դառնային ոչխարները: Իսկ որ գայլին ոչինչ անել չեն կարողանում՝ այդ արդեն այլ հարց է:

Ես նրա ծաղրին ուշադրություն չէի դարձնում, ես հիմա ժպտալով հղկում էի հիմնական միտքը. երամից պոկված թռչունը տեղ չի հասնում. երամն առաջնորդ չի ունենում. երամին առաջնորդում է մի բան, որ առանձին ոչ մի թռչուն չունի, այլապես տեղ կհասնեին առանց երամ կապելու...

– Ջուսև, դառնանք մեր հիմնական օրինակին:

– Դարձյա՞լ հավերին:

– Ինչ արած, ոչխարի քո մորթուց դու շուտ ես դուրս եկել: Բայց Մոսկվայի վրայով թռչունների... ստա՞յա, ստա՞դա... հո թռչում է: Ոչխարը դու չգիտես, բայց թռչունների ստադան հո լավ գիտես...

Ջուսևը ժպտում էր, մյուսները ծիծաղում էին: Ստադան նախիրը, հոտն է, իմ սխալի վրա ոչ մի ռուս չէր ծիծաղում, ծիծաղում էին մյուսներից նրանք, ովքեր սովորել էին թռչունին երամ ասել, ոչխարին՝ հոտ: Նրանց համար դա հիմա շատ կարևոր էր: Ես տեղս վեր ընկա և նույն պահին էլ վեր թռա.

– Աստծու մարդիկ, օգնեցեք այս մոսկվացուն հասկացնելու, որ չուի ժամանակ առանձին թռչուններ գոյություն չունեն, այլ գոյություն ունի միայն երամը:

– Նախիրը:

– Ջուսև, հետաքրքիր կլիներ քեզ տեսնել հայերեն խոսելիս:

– Հայերենը, ափսոս, դեռ միջազգային լեզու չէ:

– Լավ, դու չե՞ս հասկանում թե ինչ են ուզում ասած լինել:

– Ուզում ես ասած լինել, թե գոյություն չունի Անտոնիոնի, այլ գոյություն ունի թռչունների երամ, որ Մոսկվայի վրայով թռչում է:

– Մի քիչ սխալ ես հասկացել, ականջդ տուր՝ ճիշտը քեզ ասեմ:

– Մնացականյան, արդեն խանգարում ես:

– Արդե՞ն, Գեորգի Կոնստանտինովիչ:

Թռչուններից յուրաքանչյուրն ունի իր թևերը: Յուրաքանչյուր թռչուն կարող էր թևահարել իր թևերը և չվել ցրտերից առաջ Եգիպտոս: Յուրաքանչյուր թռչուն չի կարող չվել Եգիպտոս, որովհետև Եգիպտոսի տեղը չգիտի: Եգիպտոսի տեղը գիտի միայն երամը: Երամը մի մարմին է, այդ մարմինն ունի Եգիպտոսը գտնելու բնազդը: Եգիպտոսը գտնելու բնազդը չունի երամի մեջ մտած ոչ մի թռչուն: Այդ բնազդը միայն երամին է: Երամը ցրվեց՝ բնազդը չքացավ, շաղված թռչունները մեկ առ մեկ վար թափվեցին երկնքից Սև ծովում, Սիբիր, Սկանդինավիա, Բուդապեշտ, Կուրսկ, Աստրախան, Պաղեստին: Չուի ժամանակ թռչունն իրեն տալիս է երամին, թռչունն իրեն կորցնում է երամի մեջ, թռչունն ինքը չքանում է, դառնում է երամ:

Յունգվալդը, սակայն, այնտեղ հղկված դարձվածքներից պարիսպ էր քաշում, նրան լսում էին բոլորը, որ եկել էին Տաջիկստանի հովիվների միջից, Օդեսայից, Մոլդավիայի գյուղերից, Յոշկար-Օլայից, Բաքվից... Մուրգա Օկուևը վերջնականապես պարզել էր, որ սեքս բառը նշանակում է մի տեսակ զգացում և, ժպիտը զսպած, ռուսերեն ու իրենց լեզվով գրում էր ծոցատետրի մեջ:

– Ո՞վ է Դոն ժուանը. մեզանից յուրաքանչյուրը, ով ապաստան է փնտրում կանանց հոգու հոգում և չի գտնում ու հեռանում է,– ասում էր Ջուսևը:– Ո՞վ է Դոն Կիխոտը: Ո՞վ է Համլետը: Ո՞վ են ես: Ինչո՞ւ Վիկտոր Մակարովը չփորձեց հասկանալ Պալոնսկուն: Ինչո՞ւ են քանդվում կամուրջները: Ինչո՞ւ են գժտվում հայրերն ու որդիները: Ինչո՞ւ են բաժանվում ամուսինները: Ինչո՞ւ են քայքայվում պետությունները, կազմալուծվում բանակները, փոխվում աստվածները...– Անատոլի Ջուսևն այսպես պատ կանգնեցրեց, պատին աշտարակ դրեց, ինքը կանգնեց աշտարակին ու շեփորեց.

– Ծուրդուրդո՞ւ:

– Է՞դ ինչ էր, է՞դ ինչ էր, Մնացականյան:

Բանից պարզվեց, որ ծուղրուղուել է Մնացականյանը, իսկ Ջուսեն ասել էր իր աշտարակի բարձրությունից.— Դե քայքայվում են, որովհետև կա միայն համադրում, այլ ոչ թե միակցում,— և դա շատ է դուր եկել բոլորին, ինչքան որ աղջիկներին շատ դուր եկավ Ջուսեի շռայլ-մարտական մյուս խոսքը.— Իսկ եթե հիմա թխկացնեն դնչիդ:

– Մի՞թե, Ջուսե: Բայց չէ՞ որ դա միակցում կլինի:

– Մնացականյան, համաձայն չես Ջուսեի ասածին:

– Համաձայն եմ:

– Իսկ ինչո՞ւ ես բողոքում:

– Որովհետև հիմարություն է դուրս տալիս:

– Եթե հիմարություն է, ինչո՞ւ ես համաձայն:

– Որպեսզի իրեն մենակ թողնեն իր հիմարության մեջ:

– Ուրեմն համաձայն չես: Իսկ նկարն ինչպե՞ս ես բացատրում:

– Նկարը չեմ բացատրում, առանց բացատրելու նկարը մերժում եմ:

– Ինչո՞ւ:

– Ձոքանչների բացակայության պատճառով:

– Ի՞նչ եք,— ժպտալով բարկացավ նա,— ինչ եք ամբողջ Կովկասով կպել զոքանչներին:

– Ոչ թե զոքանչներին:

– Հապա՞:

– Ամբողջ կյանքին: Երբ հետախույզ ծակիչը մղվում է երկրի մեջ՝ ծակիչը կույր է, գնում է կավի, որձաքարի, քարածուխի, ստորգետնյա դատարկության միջով և հասնում է կամ չի հասնում ուզված ոսկուն...— Ես դարձյալ թաղվում էի լեզվի չիմացության խավարի մեջ, գտնում էի չէի գտնում խարխափել բառի ռուսերենը, և լավ եղավ, որ էլդար Գուրամիշվիլին հարցրել էր Անատոլի Յունգվալդ-Ջուսեին՝ փողկապը նա միայն վզից կախո՞ւմ է, թե՞ մի ուրիշ բանի էլ է փոխարինում նրա պինդ փողկապը: Աղմուկից օգտվելով՝ ես լռեցի, իսկ այդ ժամանակ էլդարը ճանկռտելով նկարում ու կիսաձայն գրգռում էր Ջուսեին:

– Քութախի պատմական թանգարանում, Ջուսե, թանգարանի մուտքի մոտ, Ջուսե, զբոսաշրջիկներին առաջինը դիմավորում է քարե վիթխարի ֆալլուսը: Երեք հազար հարյուր տարեկան է, Ջուսե: Զբոսաշրջիկներին ասում են ջրի աստված ծուկն է, բայց դա ծուկ չի, ֆալլուս է, Յունգվալդ, սովորական, կարևոր, անհրաժեշտ ֆալլուս է, Յունգվալդ:

– Ֆալլուսն ի՞նչն է,— մատիտն ու ծոցատետրը ձեռքին՝ ամաչելով հետաքրքրվեց Մուրգա Օկուկը:

– Ինչ որ մտածում ես:

– Բարեկամներս,– ծափ զարկեց Պալոնսկին,– որպեսզի դառնանք Անտոնիոնի կամ չդառնանք Անտոնիոնի...

Մի պահ լռություն էր, հետո ծիծաղի միջից մենք տեսանք, որ դուռը բացվել է ու իր կայուն ժպիտով դասարանին է նայում վարիչ, կինոդրամատուրգիայում մրցանակների քառակի թե եռակի դափնեկիր Պետանվտանգության պաշտոնաթող գնդապետ Իվան Միխայլովիչ Վաքսբերգը: Նա նայեց և արդեն ամեն ինչ գիտեր: Նա չասաց «բանն արդեն հասցրել եք ֆալլուսին», բայց գիտեր: Մի շաբաթ նա քաղաքում չէր – մեր Վիլնյուսում, Լենինգրադում, Սվերդլովսկում կամ գուցե Երևանում էր, և այդ քաղաքներից մեկում մեզանից մեկի համար հիմա ուզում են բարի կարծիք ու փող կտրել: Որտե՞ղ, որի՞ս համար – միայն Վաքսբերգը գիտի և սրտի թրթռով արդեն կռահել է սկսում մեզանից նա, ում համար հիմա փող են տպում, բայց Վաքսբերգն ինքն այդ մասին չի ասի, քանի որ դա Վաքսբերգի շնորհքը չի, այլ սցենարի, միայն սցենարի, և ապա՝ դա կլիներ լավություն տալ և լավություն ակնկալել, այսինքն՝ առևտուր ուսանողուհու և ղեկավարի միջև, այսինքն՝ փորի գառ լափել, ինչը որ վատ է, շատ վատ է, որովհետև մենք Արիստոտել Օնասիս չենք և ոչ էլ, փառք աստծու, ցնդել ենք մեր որոշ վաստակավորների նման, ովքեր խակ պարմանուհիներ են առևանգում և փոխարենը նվիրում կինոապագա:

#### IV

– Ի՞նչ է պատահել, պարոնայք ընկերներ,– և Իվան Վաքսբերգը դանդաղ ներս եկավ՝ մարդու ակամա համակելով վստահությամբ ու հավատով:

Նա սցենարները գրել է միշտ մեկի համակալությամբ: Այդ նկարները ժամանակին վատ նկարներ չեն եղել: Թեհրանյան Ստալին-Ռուզվելտ-Չերչիլ բարեհաջող խորհրդակցությունը և այդպիսով երկրորդ համաշխարհային հետագա ամբողջ ընթացքը մեր անտեղյակ գլուխները բոլորում են նրա՝ Չեկայի փառաբանված գնդապետ Իվան Վաքսբերգի անվան շուրջը: Այդ այդպե՞ս է, թե՞ Չեկային նա հարաբերվել է արկածային սյուժեներ կորզելու չափով միայն – չգիտենք: Եվ դժվար է հասկանալ դափնին տվել են նրա՞ն, համակալի՞ն, թե՞ երկուսին միասին: Նա լսում է մեր այդ շշուկները – նա չի լսում այդ շշուկները: Նա չի ժխտում այդ շշուկները – նա չի հաստատում այդ շշուկները: Նա միայն ժպտում ու տնավարի հարցնում է.

– Գործներդ ո՞նց է գնում: Գուրամիշվիլի, քո՞նը: Ախ, էս ինչ բախտ էր, ախ, էս ինչ տաղանդներ հավաքվեցին էս անգամ: Դիմանո՞ւմ ենք, Վիկտոր Ալեքսեևիչ:

Միջահասակ, պինդ լիքը, զուսպ անփույթ՝ նա Պալոնսկուն բան չասաց – Պալոնսկին ինքը հասկացավ, որ դասարանի սանձերը շատ էր թուլացրել: Ժպտուն, թարմ ու աշխույժ՝ նա ամուսնացած-բաժանված Իզա Վիտաուտեի համար հատուկ որևէ ցույց չարեց – Իզան բոլորի հետ ինքը տեսավ, որ նա վերադարձել է գործուղումից: Անցողիկ մի ակնարկով նա արձանագրեց Լակերբայի, Կալխան Մուխտարովի ու Սաշա Բեզռոդնու բացակայությունը և կարող էր սեղանի ճշտությամբ ասել, թե ութ միլիոնանոց քաղաքում նրանք հիմա որտեղ են պորտվեյն խմում: Նա հավվելու չափ ուրախացավ Գուրամիշվիլու սցենարով՝ միաժամանակ նկատելով թե նկարիչների բանակը մեզանում միայն ձախորդներից չի կազմված և արվեստի նպատակը միայն ձախողակներ պատկերելը չէ. «է՛, անժայր երկրի կեսը ներկել են, կեսը ներկում են – նշանակո՞ւմ է աշխատում են՝ նշանակում է»: Մի քիչ քամահրանքով, ինչպես ծերունիների վրա կշարանան, նա բարկացավ ու դասարանին զայրանալու դրդեց ամերիկյան ոչ անհայտ գրող Ջոն Սթայնբեքի դեմ այն բանի համար, որ վերջինս, լինելով հանդերձ ամենամարդասիրական ջոկատներից մեկի ոչ վատ ներկայացուցիչներից, Վիետնամի անպաշտպան երկնքից կրակել էր, պայմանականորեն իհարկե, այդ խաղաղասեր ժողովրդի՝ կանանց, ծերերի ու երեխաների վրա և դեռ հայտարարել լրագրերի համար, թե վիետնամցիներն իրենց շահը չեն հասկանում և իբր վիետնամցիների շահը հասկանում ու վիետնամցիների համար կռվում են ամերիկացիները: Հանուն հայրենիքի կարելի է իհարկե կրակել, հայրենիքի գործունեությունը կարելի ու պետք է պաշտպանել, բայց նայած ինչ հայրենիքի, Մակարով, նայած ինչ հայրենիքի – սա կարևոր հանգամանք է: Դասարանը պարտավոր էր, որպես արվեստի երիտասարդ աշխատողներ, բողոքի մի հեռագրով դատապարտել ցնդած բիծու հոգեվարքային զառանցանքը՝ նշելով որ մենք երիտասարդ տարիների արդարամիտ ու մարդասեր Սթայնբեքի կողմն ենք, հեռագիրը փողոցն անցընել հանձնել գրողների միությունն, այնտեղից նրանք կուղարկեն համապատասխան մարմինների,– իսկ հիմա դասաժամը վերջացել է, ընդմիջմանը հարկավոր է խմել մի ըմպանակ սուրճ մի կտոր թխվածքով և մի բաժակ նրգահյութ, բայց դա կարելի է կես ժամ հետո էլ անել, ասաց նա, հիմա մեզ հավաքենք, անգործությունից բուղա ենք կտրել:

– Դուք ինչ տաղանդներ եք, ինչ տաղանդներ եք,– ժպտալով մրմն-  
ջաց նա: Այժմ իրեն, իսկ հետո նա կհամոզի ֆինանսների մինիստրին,  
թե դասընթացների յուրաքանչյուր հավաքը երկրի կինոարդյունաբե-  
րությանը տալիս է երեսուն տաղանդավոր մասնագետ, որոնք կուսակ-  
ցության գաղափարները ժողովրդի գիտակցություն են մղում, և կաս-  
կածամիտ մինիստրի ժլատ մտերից կպոկի չորս միլիոն ռուբլի և իրա-  
վաբանների, լրագրողների, բանաստեղծների ու գյուղական ուսուցիչ-  
ների միջից կջոկի թարմ տղաների նոր խումբ:

– Դե լավ, ձեր Անտոնիոնին ու Կյերկեգորն իրենց տեղը,– ժպտաց  
նա,– թե՞ դրանք տարբեր բաներ են՝ երիտասարդ ավտորս լավ չի հաս-  
կանում: Այո, բայց կինոն կինո է, և ռազմահայրենասիրական թեման  
միշտ է խրախուսելի: Չնոռանանք նաև առնվազն հարյուրմիլիոնանոց  
հանդիսատեսին – նա հիսուն միլիոն ռուբլի փող է տալիս, ճի՞շտ է, և  
կինոհետաքրքրություն, կինոխարդավանք է պահանջում՝ կին, մոլո-  
րություն, ցատկ, թռիչք, խիզախում, հաղթանակ: Եվ որտե՞ղ է գրած,  
սիրելի իմ տաղանդներ, թե Ռուսաստանը պետք է կինոներմուծող լինի  
և ոչ թե արտահանող, Ռուսաստանն այդ երբվանից՞ դարձավ ուրիշ-  
ների մշակույթով ապրող: Ամերիկացիներից գնել ենք յոթանասունհինգ  
կինոնկար, ամերիկացիներին վաճառել ենք տասնչորս միավոր, սա  
ի՞նչ է, խաղը նրանք շահում են վաթսունմեկ միավորի առավելությամբ,  
սա ի՞նչ է, սրանից հետո մենք իրավո՞ւնք ունենք մեզ համարելու  
նրանց մրցակիցը – պատասխանը ձեզ են թողնում: Նյութական վնասը  
դեռ մի կողմ, ես խոսում եմ գաղափարական կորուստների մասին:  
Նրանց կինոնկարները մեր հասարակարգի հիմքերը խարխլող գաղա-  
փարներ չեն բերել, ճիշտ է, բայց մի՞թե այդ է կարևոր – կարևորն այն է,  
որ մեր մասին նրանց պատկերացումը, մեր կյանքի մասին նրանց  
պատկերացման հիմքերը խարխլող սովետական վաթսունմեկ կինո-  
նկար պակաս է մտել Ամերիկա: Ինչո՞ւ: Նվիրվածություն, ծովափ, աղ-  
ջիկներ, մոլորություն, խիզախում, կամք, հաղթանակ – ո՞ւր են: Յորի-  
նաբանելու կո՞չ են անում. ամենևին: Պետանվտանգության ար-  
խիվների թեկուզ ձեռնմխելի մասը մի քանի անգամ կգերազանցի ձեր  
երևակայությունը, վստահեցնում են, և խորհուրդներով օգնող ընկեր-  
ներ այնտեղ ձեզ համար կճարվեն, մեզանում բոլորն են տաղանդի  
ծառաները, միայն թե համոզված լինեն, որ տաղանդն աշխատում է  
իրենց՝ ժողովրդի համար: Պատերազմը չի վերջացել, պառնասյան ձեր  
բարձրությունից թող չթվա, թե երկրայիններիս աշխարհում խաղաղու-  
թյուն է, ձեր տաք, մաքուր բնակարանները, ձեր երեխաները, մոս-

կովյան ու տեղի ձեր կանայք ձեզ թող չշփոթեցնեն, և ոչ էլ հանդիսատեսն է հոգնել արկած տեսնելուց, հանդիսատեսի հնարավորություններն անսահման են: Նայած ինչ հանդիսատես, ճիշտ է, բայց տոմսի արժեքը նույն ռուբլին է...

Նա ինձ թվում էր մերթ քան վոր դասակարգի առաջնորդ էռնեստ Թելման, մերթ՝ Թելմանի դերակատար, որ նկարահանման հրապարակից ելել է, ծխում ու անվայելուչ կատակներ է անում խմբի բանվորների հետ: Ես արմուճկով հրեցի Մաքսուդին, բայց նա շատ լավ էլ լսում էր ու գիտեր Վաքսբերգի ուզածը. ես սխալվել էի. միայն քաղաքավարությամբ՝ ակնոցի տակ աչքերը փախցնելով նա ցույց տվեց թե նրա խոսքն իր համար էլ անորոշ է կամ գոնե՝ ինքը հասկանում է իմ շփոթմունքը: Քիչ հետո, հայացքը Վաքսբերգից չկտրելով, Ռասուլովը շոշափեց վիճակը գնահատելու իմ ընդունակությունը. «Ինչո՞ւ չի կարելի մտածել մեր սովետական վեստեռն ունենալու մասին», շշմջաց նա: «Ինչի՞ է պետք»: Նա թույլ ժպտաց ու ետ քաշվեց. ես չէի հասկացել, որ ինքն ինձ ոսկի է ցույց տալիս: Ընկերոջն այդպես անգետ թողնելը քիչ հետո նրան վատ թվաց, և ուսն ուսիս խփելով նա ասաց՝ «պետք է»:

– Կինոն արդյունաբերություն է, սիրելի բանաստեղծներ, մենք կինոյի բանվորներն ենք: Գործարանն իրեն չի արդարացնում՝ փակում են գործարանը: Սա սպիտակ թղթի առաջ բանաստեղծական մեր ինքնագլխությունը չէ, սա միլիոնանոց դահլիճ է, ուր չի կարելի մտնել քո անձնական հարբուխով ու բանաստեղծի մանրէներ փռշտալ – նկարը դիտում են միլիոններ, գիրքը հազարներ են կարդում: Ժողովրդական սնունդ է հարկավոր – պոմիդորի պես, այո, կարմիր ու շատ: Մեզ նվիրում ենք ժողովրդի հոգեկան սնունդը դառնալու գործին՝ բարի լինենք խուզելու բանաստեղծի մեր խոպոպները, թեկուզ այդ խոպոպները մեզ շատ են զարդարում: Կարծեն ծառն էլ պակաս գեղեցիկ չի, բայց սղոցարան է մտնում ճյուղերից ազատված մերկ գեղեցկությամբ...

Ինձ թվում էր՝ նա այդքան լայն ու հեռվից շուրջկալ է արել և իմ սցենարը ծուղակ է քշում, բայց մեկ էլ թվում էր՝ ինքն է կուշտ բացառությամբ գալիս դեպի մեր սրամտությունը: Թե՞ մրցանակների փառքից նա չէր հագեցել, գրում էր մի նոր նկար, ուր շտանդարտենֆյուրեր Յերման Բեխերը, իրականում՝ սովետական հետախույզ Վասիլի Իվանովը, իրականում՝ ինքը Իվան Վաքսբերգը, գիտեր, որ ինքը կասկածվում է, իրեն հիմա լրտեսում են և ի լուր ձայնագրող նրանց սարքերի վարիչ Իվան Միխայլովիչ Վաքսբերգը հիմա բարձրաձայնում էր նրա խոսքի տարբերակներից մեկը: Մակարովը լսում էր: Մուրգա Օկուևը



նրա արագախոսությունից բառեր էր բռնում, բառեր էր պահում, այդ բառերը նա հետո պիտի կապի-կապկապի, կիրգիզական ինչ-որ իմաստ ստանա և գյուղացու զգուշավորությամբ ծեծի իմ դուռը՝ թե Վաքսբերգն արդյո՞ք այդ է ասել, դա արդյոք վա՞տ է թե լավ, թե՞ ոչ վատ է ոչ լավ, այլ էնպես իր համար կա: Գուրամիշվիլին չէր նկարում: Վիկտոր Իգնատևի ձեռքը եթե Իգայի ծնկին չէր՝ ուրեմն նա էլ ուշադիր էր լսում, եթե ծնկին էր՝ նրա համար ուրեմն մահու չափ հետաքրքիր էր, ինչպես էլեկտրափոխակերպչի դռան վրայի կայծակնահար ՄԱՅԱՑՈՒ է գանգը մեր երեխա ժամանակ, խցկվել, այնուամենայնիվ, Վաքսբերգի՝ արտակարգ գնդապետի ու սովորական գրակերի, լիազոր տնօրենի ու բուլդոզիստի հայտնի թաքուն մի տեղ սովորական շարքայինի խանդի աշխարհ: («Գրականությունը: Գրականությունն այնտեղ է, ուր առաջներում ես չեմ եղել»): Շանթարգելի գյուղը Վիկտոր Իգնատևի նմաններն են արել: Նրա ձեռքը եթե Իգայի ծնկին էր՝ Վաքսբերգն ուրեմն նկատել էր: Տեսել էր ոչ թե կռամալով ու նայելով նստարանների տակով (նրա նկարների հետախույզները տեսնում են չնայելով), այլ հասկացել էր Իգայի պաղած ու գունատված աչքերից: Բայց նրա խոսքը չէր մատնում թե նկատել է: Թե՞ մի քանի ամիս հետո կզգացվի նկատել էր թե չէր նկատել կամ երբեք էլ չի զգացվի, քանի որ Վաքսբերգի իսկականը գտնվում է իր ներսի ներսում և չի կարելի պսպղան ամեն խայծի համար գլուխը հանել:

– «Երախ»... «Ռեխ»... «Երախ», հը՞... «Ռեխ» ամերիկյան նկարը միայն ԱՄՆ-ի ու Կանադայի կինոդահլիճներից պոկել է 125.000.000 դոլլար: Կրկնում են՝ հարյուր քսանհինգ միլիոն դոլլար է քաշել միայն Նահանգների ու Կանադայի կինոսրահներից «Երախ» նկարը: Ավելացրեք,– նրա ձայնը բարձրացավ ու զնգաց.– 500.000, կրկնում են՝ հինգ հարյուր հազար վերնաշապկի դաջվել է նկարի շնածկան երախը և այդքան վերնաշապկը մի ժամվա մեջ վաճառվել ու հայտնվել է դեռահասների հագին: Հազա՞ք,– ժպտաց նա:– Ավելացրեք. ծախվել է 1.500.000 բաժակ՝ նկարի աղջկա պատկերով և 300.000 սկավառակ նկարի երաժշտությամբ: Սա կողոպո՞ւտ է – անշուշտ: Սրանից մենք սովորելու բան ունե՞նք – բավական:

Հիմա ճիշտ ժամանակն էր 125.000.000 դոլլարի վստահորեն բաց բարձունքից քամահրելու իմ սցենարի անկիրթ, քաշվող, գյուղացի գոյությունը, որը կասկածելով խնդրում էր թե մեր տան պատասխանատվությունը գուցե մեզ տայիք, հա՞,– բայց նա այդ բանը չարեց, այսօր նա հարցերը վճռում էր խոշոր մասշտաբներով: Ողորկ, աղեղնաձև,

մեծ, նախագահող քսան-երեսուն հոգու համար նախատեսված սեղանի ետևը մենակ՝ նա, թվում է, իրենց ռուսական մատրյոնա փայտե տիկնիկ էր դրել ու մեկը մյուսի միջից տիկնիկներ էր հանում, բայց ոչ թե մեծից փոքր, փոքրից ավելի փոքր, այլ փոքրից մեծ, մեծից ավելի մեծ, հիմա՝ իր չափսի և իրենից էլ մեծ տիկնիկներ էր հանում մեկը մյուսի միջից ու շարուն ողորկ, աղեղնաձև, նախագահող քսան-երեսուն պատվավորի համար նախատեսված սեղանին:

– Դուլլարը դուլլար,– ասացին,– մանավանդ հինգ հարյուրը կամ, եղտեղ ինչքա՞ն էր, ասենք հինգ հազարը, դե ինչքան շատ՝ էնքան լավ, կարելի է հանգիստ նստել, ծախսել ու մի պատմվածք գրել, որի համար քեզ վճարելու են մի հիսունհինգ-ուսունինը ռուբլի կամ չեն տպելու. բայց ափսոս չեն, մի երկու ռուբլի վաստակելու համար կարելի է ծախսել այդ հազարները կամ դուք էդտեղ ինչքա՞ն ասացիք:– Չայնը Վիկտոր Իգնատևի խուլ բամբյունն էր, ծաղրի տեսակը նրանն էր, Վաքսբերգը նրա կողմն էր նայում, բայց Իգնատևի թիկունքը չէր շարժվում, նա պինդ նստած էր Իգայի կողքին և ելնելու նշան չէր ցույց տալիս:– Բայց այդ ինչպե՞ս է պատահում, Իվան Միխայլովիչ, որ տղայի կարմիր փուչիկը չար տղաները ծակում են, կարմիր փուչիկը մեռնում է՝ և մենք լաց ենք լինում, իսկ ուրիշ նկարներում զինվորներ են սպանվում, կապիտաններ ու մայորներ են զոհվում և անգամ գեներալ է խփվում...

Վաքսբերգը մատը բերանին դրեց ու նայեց դռներին, հետո հասկացրեց չպատասխանել ու բարձրաձայն ասաց.– Խոսքն այդ մասին չէ,– և դարձյալ հասկացրեց չպատասխանել: Մենք լուռ էինք, ինքը մեզ հետ լուռ էր ու նայում էր դռներին, մի լինելիքի առջև ինքն իբր նրցանակակիր գնդապետ չէր, այլ մեզ հավասար մեզնից մեկը: Վիկտոր Իգնատևն ընդոստ ելավ տեղից, նրա բաճկոնի կոճակը թռավ, և Վաքսբերգը հասցրեց լուռ հուսահատվել ու տարածել ձեռքերը: Կոճակը գլորվում էր, Վաքսբերգը ձեռքերն այդպես տարածել էր և այդ ժամանակ դռները բացվեցին և պաշտոնաթող գնդապետների մի մեծ շարան կարգով, լուռ, հավասարապես երկուական քայլով իրարից հետո... Ես ծափահարեցի, չզիտեմ ինչու ծափահարեցի, և Վաքսբերգը շանթահարեց: Գնացին շարվեցին նախագահող քսան-երեսուն պատվավորի համար նախատեսված սեղանի ետևը:

Նրանք այդպես կանգնած էին, հատակին նստարանների տակ Վիկտոր Իգնատևը կոճակը փնտրում ու մրթմրթում էր, բայց նրանք չէին ժպտում,– նրանք այդպես կանգնած էին՝ մինչև որ մենք հասկացանք իրենց առջև ոտքի ելնել: Հիմա մենք իրենց, իրենք մեզ էին նայում: Եվ

Վիկտոր Իգնատևն այդ ժամանակ կոճակը նստարանների տակ գտավ:– Վո՛տ անա: Խոսքը կարմիր փուչիկի մասին է,– դեռ նստարանների տակ՝ մրթմրթաց նա,– այսինքն արվեստի մարդկայնության մասին, Իվան Միխայլովիչ:– Նստարանների տակից նա դուրս եկավ, բաճկոնի վրա փնտրեց կտրված կոճակի տեղը, ակնոցը շտկելով հայացքը բարձրացրեց ու զարմացավ:– Չը՞,– հարցրեց նա և այդ պահին շատ նմանվեց գնդապետների պատկերացրած պայմանական բանաստեղծի:– Բայց սա կինո է՞, Իվան Միխայլովիչ:– Կենտրոնի գնդապետը նստեց, հետո նստեցին նրա աջ և ձախ թևերի երկուական գնդապետները, իսկ փոխգնդապետները այդպես դեռ մի քիչ կանգնած էին նրանց երկու կողմում մինչև սեղանի ծայրերը, հետո մենք էլ էինք նստած, և կանգնած էր միայն Վիկտոր Իգնատևը:

Այնպիսի շշուկով, որը լսելու համար շունչդ պահում ես, Վաքսբերգը հայտնեց, թե չմոռանալով հանդերձ մեր նախորդների փորձը, համարում ենք, որ մենք արկածահետախուզային կինո չենք ունեցել և այդ կինոն, որը ինքնին հայրենասիրական գործ է, սկսվում է տաղանդավոր կինոերիտասարդության և փորձառու աշխատողների այս հանդիպմամբ այսօրվանից: Սա երկուստեք օգտակար հանդիպում է, գնահատեց ինքը՝ որպեսզի այլ գնահատողներ ու գնահատումներ չլինեն. հայրենիքի զինվորները մեզ կօգնեն կերտելու արվեստի իրենց, ինչպես բանաստեղծն է ասել, անձեռակերտ հուշարձանները: Այդքանով նա վերջացրեց, մի պահ կարծես շփոթված էր, ապա կռացավ ամենածայրինի ականջին բան ասելու և ականջը տվեց լսելու նրա ասածը, և մի թույլ այդպես ականջը նրա բերանի մոտ՝ նա բոլորիս ու ոչ մեկիս էր նայում, հետո ժպտաց ու եկավ նստելու մեր մեջ: Նրանց առջև՝ նա մեզնից մեկն էր և մեր մեջ էր նստելու:

Նա ինձ աչքով արեց և ընտրեց իմ կողքի աթոռը: Նրանից ծերունու հոտ չէր գալիս: «Չանրապետությունդ սահմանի գլխին է, սահմանապահների մասին ինչո՞ւ չես մի լավ սցենար գրում», և ուսը սեղմեց ուսիս: Նրա ուսը պինդ էր, առավոտները երևի նա սառը ցնցուղի տակ էր մտնում և կոշտ սրբիչով սրբվում էր: Նա ու Մաքսուղը իմ դեմով իրար աչքով արեցին, հետո նա ինձ ասաց. «Կատակ եմ անում, քո սցենարից առաջնակարգ նկար է դուրս գալու», և նա ու Մաքսուղը դարձյալ իրար նայեցին: «Չգիտես նրանց մեջ ովքեր կան,– հիացավ նա,– լսիր»: Սակայն նրանք չէին խոսում, նրանք միայն նայում էին և թույլ էին տալիս նայել իրենց: Հայացքները երբեմն կախում էին: Իմ նկարիչ ընկերները մի երկու անգամ ինձ նստեցրել են նկարելու, և ես

ինձ մերկ բնորդուհի, իմ ներսում քոսի նման ինչ-որ վիրավորվածությու-  
նում եմ զգացել: Նրանք հիմա մեզ հարգում էին թե նրանց համար  
մենք կոճակը կորցրած տարօրինակ բանաստեղծներ էինք՝ բանն այդ  
չէ. մենք նրանց նայում էինք, և մեր հայացքների տակ քրտնելով՝ նրանք  
իրենց գուցե մերկ բնորդուհի էին զգում: Ես թղթին սկսեցի գրել «Իվան  
Միխայլովիչ, այս հանդիպման համար դուք իրենց հոնորար տալո՞ւ  
եք», գրելու ժամանակ ես նրանց տեսնում էի Վալենտինա Սերգեևնա-  
յից տասնական ռուբլի ստանալիս և զգում էի ծերունու նրանց լուռ  
վիրավորվածությունը կամ, ով գիտի, շփոթված ժպիտն այն բանի հա-  
մար, որ իրենք հոնորար են ստանում ցնդած բանաստեղծների դրա-  
մարկդից: Ես գրածս հրեցի Վաքսբերգի առջևը, և նա մռայլվեց ու թուղ-  
թը բռան մեջ ճմռթեց: «Ես ու դու իրենց պետք չենք, դուրս գանք»,  
ասաց նա:

## V

– Ինչո՞ւ դուրս եկանք,– ինչպես դպրոցական խուլիգանը ընկերոջը՝  
հարցրի ես:

– Զժխե՞նք:

Նա ինքը ծխող էր–ծխող չէր: Շրթունքների մեջ ծխախտը պահելու  
և վառելու ձևից, այնուամենայնիվ, չէիր հասկանա, որ ծխող չէ: Ներսի  
լռությանը նա մի պահ ականջ դրեց, կարծես ուզում էր ետ գնալ, բայց  
ձեռքը թափ տվեց, և մենք ճեմասրահներով քայլեցինք:

– Էդ՝ պայուսակիդ մեջ կոնյակ է,– ասաց նա:

– Այո, գնա՞նք խմենք մի-մի բաժակ:

– Ձեր կոնյակը հրաշք է՝ եթե արդեն չեն փչացնում:

Ես կարծեցի նա համաձայն է և մենք հիմա բազկաթոռ ու անկյուն  
ենք փնտրում հիսունական գրամ խմելու, բայց նա հառաչեց.

– Այո՞, տարիքն իրենն անում է:

Կարմիր բանակի ծննդյան տարեդարձի թե ստալինգրադյան հաղ-  
թանակի տոնակատարությունից առաջ ճեմասրահները զարդարել էին  
քողտիկ-թաքստոցներով, հրանոթների ու մարտերի լուսանկարներով:  
Կեչու գերանակապ պատի դեմ նա կանգ առավ մի լուսանկարի առջև,  
ուր երիտասարդ, գրեթե պատանի զինվորը կիսից բռնած բարձրացրել  
էր սկավառակավոր ավտոմատը և բաց գրոհի էր կոչում: Կինոնկար-  
ներում վայրկենական այդպիսի կեցվածքից հետո կուրծքները բռնում  
ու ընկնում են, և ռազմի որոտը հեռանում, տեղ է բացում ջութակի հա-  
մար: Վաքսբերգը քնծիծաղեց ու ետ քաշվեց. ինքն այդպես չէր կռվել:–

Այո՞, – հառաչեց, – վերջացավ:

– Բայց կինոներում հազար անգամ սկսվելու է:

Նա սուր նայեց ինձ ու քնծիծաղեց:

– Դուք ինձ ինչո՞ւ դուրս բերիք, – ասացի ես:

– Դու նրանց համար ժամանակ չունես, քո ժամանակը նրանց համար չէ: – Նա ինձ թևանցուկ արեց: – Քո սցենարը մենք եթե կարողանանք ավարտել՝ դասընթացներն իրենց գոյությունը արդարացրած կլինեն:

– Իմ սցենարը ես վերջացրել եմ, չե՞ք կարդացել:

– Չես վերջացրել, – ասաց նա:

– Իսկ ես կարծում էի, Իվան Միխայլովիչ, դուք հիմա Երևանից եք գալիս և իմ պայմանագրի փողը բերել եք:

– Անլուրջ ես, – ասաց նա: – Գնդապետների խմբին կինոպատվիրակության տեղ ես դնում ու ծափ ես տալիս, խակ սցենարդ տալիս ու վռազ փող ես ուզում – անլուրջ ես, – ասաց նա: – Չգիտեմ լուրջ ես թե անլուրջ: Ոչ, սիրելի Մնացականյան, հիմա ես Երևանից չեմ գալիս, այլ կարևոր մի խորհրդակցությունից, ուր մեծ, համապետական, համաշխարհային նշանակություն տրվեց աճող սերունդը ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործին: Ռազմահայրենասիրությունը պիտի բորբոքվի: Այսինքն... բացատրե՞մ: Չախորդ նկարիչներ, անհոգ թափառողներ, գյուղական խորիմաստ ապուշություն ու չգիտեմ ուրիշ ինչ Կյերկեգոր... – նա ձեռքը թափ տվեց ու ինձ կանգնեցրեց տանկային շարասյան լուսանկարի դեմ: – Բայց ես հանձն եմ առնում քո սցենարի պաշտպանությունն ու պատասխանատվությունը գիտե՞ս ինչու...

– Վաղվա խորհրդակցությունը խրախուսելու է արդեն գյուղական խորիմաստ ապուշությունը և ոչ թե ռազմահայրենասիրությունը, այո՞:

– Ոչ, – ասաց նա: – Ես քո տաղանդի երկրպագուն եմ:

– Մի մեծ խոզ ունեինք, Իվան Միխայլովիչ, Մատինյանը հորս ասավ եղ մերունը դու ո՞նց ես մորթելու – ասավ փորի տակը քորելու եմ, ուրախ պառկելու է՝ դանակը խփելու եմ: Դուք ինձ քորում եք, Իվան Միխայլովիչ:

– Դու չկայիր՝ ես հանգիստ ապրում էի, – ասաց նա: – Դու խոզ չես, դու տաղանդ ես:

– Դուք եք տաղանդ, Իվան Միխայլովիչ, տաղանդն ինքներդ եք:

Նա ծիծաղեց.

– Այսինքն՝ հայիոյանքի՞ իմաստով: – Չեռքերը նա դրեց ուսերիս, լրջորեն նայեց և ուսերս ճնշեց: – Դու տաղանդ ես:

– Բայց չեմ կարողանում մի սցենար գրել:

– Կարողանում ես,– ասաց նա,– գրել վերջացրել ես, ուղղակի՝ չես ուզում շտկումներ անել:

– Չեմ ուզում, չեմ անելու, Իվան Միխայլովիչ:

– Տաղանդն ահա հենց դա է,– ասաց նա,– այդ համոզված չկամությունն է տաղանդը, թե չէ՝ դու ուրիշ բան ես պատկերացնում ու վիրավորում ես քո պաշտպանին ու երկրպագուին:

Թեթևակի կռամալով՝ նա պարտիզանական քողտիկի դմից նայեց ու ներս մտավ: «Այստեղ բազկաթոռներ կան», եկավ նրա ձայնը: «Բաժակներ չկա՞ն», հարցրի ես: Ներսը մութ էր, ինքը չէր երևում: Դեմքիս շրթներիկ հոտ շնչեցին, ես դռան միջից ետ քաշվեցի, և մետաքսի մազերը դեմքիս խփելով մի աղջիկ ելավ: Այս անգամ ինձ կոպտորեն մի կողմ հրեցին, և քողտիկից դուրս եկավ տղան: Դուրս եկավ ու նայեց անամոթ թշնամանքով:

– Արի նստիր խոսենք,– կանչեց Վաքսբերգը:

Ես բազկաթոռը գտա, տեղավորվեցի, շրթներիկ ծանր հոտ էր գալիս, գտա թե որտեղ է նստած ինքը, մի քիչ սպասեցի իր խոսքին, ինքը սակայն չէր խոսում, և ես ասացի.

– Ձեզ ազատեք ինձանից, Իվան Միխայլովիչ, ես շտկումներ չեմ անելու, ինձ հեռացրեք:

– Տաղանդն աշխատանքն է, իսկ դու չես ուզում աշխատել,– ասաց նա: Խավար լույսի մեջ նա հիմա մեռյալ դիմակի նման էր:

– Ձեր պահանջած աշխատանքը ես չեմ անելու, Իվան Միխայլովիչ: Դուք ուզում եք կյանքը սցենարի միջից հանել, փոխարենը հազար անգամ եղած-նկարված կեղծիք խցկել ու կեղծիքը հարթել խնամքոտ աշխատանքով – դե գնա ու փնտրիր կեղծիքը: Յեռացրեք՝ ազատվեք, Իվան Միխայլովիչ:

– Ուշ է,– ասաց նա,– մենք քեզ վրա փող ենք ծախսել, ուշ է:

– Եդ՝ ձեր փողերը չեք ծախսել, Իվան Միխայլովիչ, էդ փողերն իմ հորից էիք վերցրել: Փողը ձեզ ո՞րտեղից, դուք հո մաքսանենոզ չեք կամ դրանք հո կեղծ փողեր չէին – ինձնից ու իմ հորից էիք վերցրել էդ փողերը, մինչև գրակեր դառնալս գործարանում ու գյուղում ես բավական փող էի աշխատել:

Նա ծիծաղեց, բայց ոչ թե մեր հայերիս նման, այլ՝

– Խա՛, վայո զնայեշ, քեզ հետ վիճելն անհնար է: Ոչ, սիրելի ընկեր Մնացականյան, կինոդեկավարությունը քեզանով հետաքրքրվում է, մենք՝ ես ու իմ ղեկավարությունը մեզ չենք զրկի քեզանից, դու ոմն Գու-

րամիշվիլի չես:

– Նրա սցենարն ինձ դուր է գալիս,– ասացի ես:

Իր կիսախավարի մեջ մարմինը համոզչորեն ծանր՝ նա փորագրելու պես դանդաղ ասաց «ինձ նույնպես», միայն այդքանը, բայց կարծես ասել էր «պիտի ե՛ս հավանեմ, քո հավանելը ոչինչ չի նշանակում»:

– Այդ դեպքում, Իվան Միխայլովիչ, թույլ տվեք ձեր գեղարվեստական խորհրդին ուրիշ հայտ ներկայացնեմ:

– Ի՞նչ:

– Բաժակ չկա, չխմե՞նք հենց բկից:

– Գլուխս տարար քո կոնյակով,– ասաց նա,– բեր:

Կաղնեկարմիր շիշը նա պահեց ու հիացավ:– Վարպետ Մարգարը կա՞,– հարցրեց, գլուխը դանդաղ ետ գցեց ու այդպես մի քիչ մնաց, հետո շիշը դանդաղ տարավ ու վերևից բերանը ծորացրեց մեղրի ծանրությամբ:

– Պարսկաստան ջուրն այդպե՞ս էիք խմում, թե՞ վիսկի էիք խմում, ջուր չէիք խմում:– Նա չպատասխանեց, որովհետև կոնյակը բերանում էր և նա կուլ չէր տալիս, այլ մի տեսակ ծամում էր: Ես շիշը բերանիս տարա և առա աղացած տաք որձաքարի հո՞տ ասեմ թե համ՝ երբ սեպը խրում ես, սպիտակ շոգ արևի մեջ կայծերը չեն երևում, բայց խրձերով շաղ են անցնում և դու առնում ես որձաքարի հոտը թե համը:

– Տուր,– ասաց նա:

Ես կաղնեկարմիր շիշը մեկնեցի. երկուսով մենք միայն բկի պարու--նակությունն էինք խմել:– Ոչ,– ասաց նա,– հայտդ,– և ոտքը ոտքին դրեց ու աչքերը փակեց:– Հրաշք կոնյակ է,– շշմջաց նա,– է՛ն արևոտ շոգ այգիները, է՛ն կարճիկ որթերը՝ Ուրարտուի ժամանակներից, է՛ն հին առուն...

– Հայտս: Հերուտղա ուրեմն ջաղացից գալիս էին, օդում տաք մեկտարի հոտ կար, մեղվի խուլ ձայնը ձորով մեկ արահետի վրա կախված էր ու ծանրանում էր, ծանրանում էր, այո՞... Տղան ինը-տասնմեկ տարեկան էր, հոր հագին քուրթ էր, հոր աչքերը չռված էին, քուրթից այդ արևի մեջ ոչխարի ծանր հոտ էր գալիս, հոր դողերոցքը բռնել էր, և տղային ճնշում էին հոր դողերոցքը, ոչխարի ծանր հոտը, այդ ծանր արևն ու ձիու բեռը: Հայրը կտրիճ մարդ էր, բայց դողերոցքը հիմա նրան բռնել էր: Մարդ էին սպանել, սպանվածները արևի տակ մի քանի օր այդպես մնացել էին, և իր ջաղացում հայրն ասել էր. «Դրանց (այսինքն սպանողներին, Իվան Միխայլովիչ) ասեք է՛նպես չանեն, որ քուրթը հա-

գիցս հանեն, հա»: Տղան ձին քաշելով, հայրը բեռան կապից բռնած նրանք դուրս եկան ոլորան, Ծմակուտը մի ընկալե երևաց ու կորավ, և այդ ժամանակ ծառի տակից երեքը վեր կացան ու կանգնեցին ճանապարհին: Ծառի տակ նստած էին եղել, վեր կացան ու սպասեցին: Այո՞: Հորն ու որդուն նրանք ճանապարհից հանեցին ու տարան: Մեղվի խուլ գվկոցը կանգնած էր, հայրը ետ դեպի ձին նայեց,– ձին ախր բեռան տակ թողել էին ճանապարհին,– և հորը լուռ հրեցին: Շոգ արևի մեջ նրանցից մեկը խանջալը քաշեց, և հայրը զարթնեց ու ցատկեց բանջարկուտ: Մյուսը կրակեց, բարձր ցողունները հրացանի ծայրով ետ տալով մտավ բանջարկուտ ու մի անգամ էլ կրակեց, հետո զգույժ՝ որպեսզի բարձր բանջարները երեսը չկծեն, դուրս եկավ բանջարկուտից: Տղային չսպանեցին, դուրս բերին արահետ ու ձեռքով ասացին գնա:

– Մոռացա ասեն,– լրացրի ես,– Ծմակուտ ճահիճ ու դողերոցքի մոծակ չկա, հայրը գնացել էր դաշտի թուրքերում ձիով կալ անելու – դողերոցքն ու այդ մի բեռ հացը՝ որ հիմա ջաղացից տանում էին, դաշտի նրանց գյուղերից էր բերել:

– Այո,– ասաց նա,– կինոնկարդ համարյա թե տեսա, բայց անցյալն արի չփորփրենք: Մենք այսօրվա պատասխանատուն ենք և եթե, սիրելիս, այս կարողանանք այսպես պահել՝ մարդասիրական մեր պարտքը կատարած կլինենք: Հեղեղն ահա պապենական հին գերեզմանները փորփրեց, և դու լավ գիտես, թե քիչ էր մնում ինչ պատահի – հին ժամտախտը ամբողջ երկրով մեկ ահա-ահա բռնկվում էր:

– Չփորփրենք,– ասացի ես,– չփորփրենք: Գերմանական ֆաշիզմի դեմ չգրենք:

Բազկաթռի մեջ նա ընդոստ վրա նստեց.

– Ո՛չ, գրենք:

– Մեր ջարդերի դեմ չգրենք, ֆաշիզմի դեմ գրենք – ի՞նչ է դուրս գալիս:

– Ինչ է դուրս գալի՞ս: Դուրս է գալիս, որ պանթուրքիզմի հարցը միայն տեղական նացիոնալիզմի հարց էր կամ կարողացավ միայն տեղական դրսևորում ունենալ, ֆաշիզմն այնինչ ահա-ահա դառնում էր համաշխարհային ժամտախտ: Այո՞: Ես ահա՝ գրող Իվան Վաքսբերգս, գրում եմ ֆաշիզմի դեմ, աշխարհի որ անկյունում ուզում է լինի՝ դիտողը նայում է ու գիտի խոսքը ինչ հրեշի մասին է, այո՞, դու ահա՝ Արմենակ Մնացականյանդ, գրում ես պանթուրքիզմի դեմ, իսկ հանդիսականը չի հասկանում խոսքն ինչ հիմարության դեմ ու ինչ գոհի մասին է: Նկատեցի՞ր տարբերությունը:



– Ձոհերի,– ասացի ես,– զոհերի:

– Ձոհերի:

– Երկու միլիոն զոհերի, մի ամբողջ ժողովրդի:

– Այո, մի ամբողջ ժողովրդի... բայց միևնույն է, աշխարհը տեղյակ չի, չգիտի: Իսկ ֆաշիզմի մասին՝ գիտի: Այդ պատճառով էլ դու՝ Արմեն Մնացականյանը, գրիչդ թաթախում ու գրում ես ֆաշիզմի դեմ հայ ժողովրդի պայքարի մասին: Գերմանական ֆաշիզմը ձեր հայերից, չէ՞, մի երեք հարյուր հազար զինվորի կյանք է խլել, թուրքերի ջարդած երկու միլիոնից քիչ է, բայց փոքր թիվ չի: Պատերազմից առաջ ինչքա՞ն էր ձեր հանրապետության բնակչությունը:

– Մեկուկես միլիոն:

– Ահա, մեկուկեսից՝ երեք հարյուր հազար զինվոր: Այդպիսի զորք եթե դուք Քենալի դեմ ունենայիք,– դժվարությամբ՝ նա վիզը տակ տվեց,– կհաղթեիք: Բայց չունեցաք: Թեկուզ՝ գրողի տարած այդ ճակատագրի դեմ երեք հարյուր հազար չէ – միլիոնանոց բանակներ շարժիր ու թեկուզ հաղթիր՝ վերջում պարզվում է, որ միևնույն է՝ հաղթել ես հոգուտ թշնամու: Իսկ ռուսական սովետական բանակի շարքերում ունեցաք վեցհարյուրհազարանոց բանակ և հաղթեցիք, քանի որ ռուսական սովետական բանակը պիտի հաղթեր: Գրիր խնդրեմ այդ մասին, հայտը ներկայացրու և գրիր, ես կօգնեմ՝ ինչպես որ դուք օգնեցիք երեք հարյուր հազար զոհով: Մեզ համար դրանք,– դարձյալ դժվարությամբ՝ նա վիզը տակ տվեց,– թանկ զոհեր են:– Նա ժպտաց:– Բա էն պարսկահայերը... Պարսկաստանի հայերը... որ մեր բանակի համար միջոցներ էին հավաքում... կոշիկ, գուլպա, իրենց վրայի զարդերը, հագուստը, փող... Գրիր, ես քեզ օգնում եմ, գրիր:

Նա բերանը կոնյակի մի ունյա առավ: Նա պայծառացավ ու հարցրեց.

– Վարպետ Մարգարը կա՞, ողջ-առո՞ղջ է:

– Գրե՞մ վարպետ Մարգարի մասին:

– Գրիր, ի՞նչ ես գրելու:

– Էնտեղ կռիվների մեջ է, ուզում են հինգ ժամում հինգ տարեկան կոնյակ սարքեն՝ չի թողնում, կռվում է:

– Սա քանի՞ տարեկան է:

– Ինձանից մեծ է, երեսունհինգ-քառասուն:

Շշի բերանը նա խցեց ու ասաց «ոչ»:

– Ոչ,– ասաց նա:– Գրում ես պատերազմի մասին:

– Գրեմ,– ասացի ես:– Գրե՞մ մրջյունների մասին:

Անսպասելիությամբ նա մկան ձեռն հանեց.

– Մո՞լլտ:

– Չգիտեմ, գուցե մոլլտ, գուցե... մի խոսքով դժվար է, բայց կուզե՜նայի գրել:

– Ապա, ապա:

– Պարզվում է, որ այդ սրիկաներն այնքան էլ մրջյուն չեն, համարյա թե մարդիկ են, պատերազմներ են անում, պարտվում են, հաղթում են, գերիներ են տանում, բանեցնում են...

– Քառասունվեցի մորեխը Պարսկաստանում ես տեսա, ալիքը խփվել էրևանում թափվել էր,– ասաց նա:

– Ես մրջյունների մասին եմ պատմում, Իվան Միխայլովիչ: Գերի են տանում, բանեցնում են, իսկ գերին դու մի ասա այնքան էլ մրջյուն չի, համարյա թե մարդ է – կարոտում ու ուզում է փախչել, կարոտում ու փախչում՝ զգվեցնում է, կարծես միևնույն չի թե որտեղ է պարկեր շալակելու: Եվ բռնում ու զինվորները վիզը կրծում են, մկրատը գցում ու կտրում են վիզը:

– Պահակներ՞րը,– ծիծաղեց նա:

– Գերի բանվորի վիզը՝ պահակ զինվորները: Լավ չի աշխատում, կարոտում ու փախչում է, կարոտում ու փախչում է սրիկան: Ինչի՞ն է կարոտում – իր հաստագլուխ եղբայրներին, իրենց նեղ փողոցներին, ջրի իրենց արահետին՝ որ գնում, իջնում, բարձրանում, ոլորվում, մասրենու արմատի տակով անցնում... Եվ որպեսզի մյուս անգամ այդ գերիները շատ էլ գլուխ չտանեն իրենց կարոտով, ոչ թե կենդանի մրջյուններ, այլ նրանց ձվերն են ավարում հաղթողները: Գալիս այստեղ ձվերից բանվոր են ծնվում ու աշխատում են ու հավիտյան էլ չեն հասկանում, որ գերի են, որ զինվոր էին ծնվելու, որ ուրիշ տեղ է իրենց հայրենիքը:

Նա ժպտաց ու ունքը կեռեց՝ և արդեն պատասխանը ուներ, բայց լուռ մնաց այնքան ժամանակ, ինչքանում իբր թե կզգար, կհասկանար, թեր ու դեմ կողմերը կկշռեր ու կհայտներ պատասխանը:

– Չը՞,– ասաց նա և ունքը քորեց,– Լաֆոնտենի ժամանակները չե՞ն անցել, հը՞:

Նա աշխուժորեն նայում ու ունքը քորում էր և այդ պահին շատ էր մման ինչ-որ կենդանու: Նա մերժելու էր, բայց դեռ անհարմար էր զգում: «Իսկ արջը՝ սրիկան,– ասաց նա,– մռուքը խրում ու խժռում է բանվոր ու զինվոր, գերի ու տեր, չի էլ մտածում, թե մռուքի տակ ինչ

անարդարություններ են կատարվել»:

– Չընդունեցիք:

– Չընդունեցի,– մռայլվեց նա:– Ուրիշ պատմություն գտիր, բայց, սիրելիս, քեզ թող չթվա, թե մենք ահա սիոնի աղքատ ենք, դու՛ արծաթավոր իշխան, ելել ու վանքի բակում շռայլում ես ոսկիների: Ես այդպիսի պատմություններ հարյուրներով գիտեմ:

– Է, գիտեք՝ գրեք, Իվան Միխայլովիչ, չեք գրում ու նեղանում եք, որ ձեզ սիոնի աղքատի տեղ են դնում:

– Եթե չեմ գրում՝ ուրեմն չպետք է գրել:

– Իսկ դուք ինչպե՞ս եք որոշում, Իվան Միխայլովիչ, պետք է թե չպետք է գրել – գնում նստում եք մինիստր Ռոմանովի դեմ և պատմում եք և նա ասում է ոչ, և դուք դարձյալ պատմում եք և նա ասում է ո՞չ:

– Յոզեֆեցրի,– ծերացավ նա:– Կոնյակդ քթերիցս հանեցիր: Ոչ, սիրելի Արմենակ Սիմոնովիչ, իմ Ռոմանովը ես եմ, ես ինձ եմ պատմում և իմ ոչը ես եմ ասում: Ծեր մարդ եմ, մոտս հաշված փամփուշտներ են մնացել, ես չպետք է ամեն պարապ բանի վրա կրակեմ:

– Ես էլ կուզենայի, բայց պարապն ու լիքը այնքան էլ լավ չեն ջրկում, Իվան Միխայլովիչ, մանավանդ՝ հեռվից:

Նա դրսին ականջ դրեց ու հարցրեց.

– Եվա՞:

– Ես եմ, այո, Իվան Միխայլովիչ:

– Էդ՝ ծերունո՞ւս եք հսկում թե սարսափելի ես կովկասցուն:

– Ոչ ձեզ, ոչ էլ նրան, Իվան Միխայլովիչ, լուսանկարներին նայում եմ:

Կոնյակը նա պայուսակի մեջ դրեց ու փակեց: Մենք վեր կացանք դուրս գալու, նա մեջքս ձեռքիս հետ գրկեց ու բարեկամաբար սեղմեց և ելքի մեջ ինձ իրենից առաջ թողեց: Եվ Օզերովային իմ մասին ասաց «տրուդնիյ մայլչիկ» և դա հնչեց «տաղանդավոր տղա է», և նույնիսկ չթաքցրեց՝ ասաց, որ արդեն մի ժամ է իր կյանքը ես ուտում եմ... և այդ բոլորի արանքներում մեղմ ժողովրդավարության այնպիսի հով էր խաղում:

– Էնտեղ ինչո՞վ վերջացավ, Եվա,– հետաքրքրվեց նա,– թե՞ չի վերջացել՝ շարունակվում է:

– Ձեր ուզածի պես, Իվան Միխայլովիչ: Տղաներից մի երկու հոգի ցանկություն հայտնեցին՝ Մակարովն ու Մաքսուդը, մյուսները կարծես չէին ցանկանում, բայց կարծես ցանկանում էին:

– Մաքսուղը կարող է,– մի տեսակ՝ հաշվեց նա,– Վիկտորը կարող է: Նրանք ահա երկրորդ սցենարը կստեղծեն, իսկ մեր Մնացականյանը...

– Մաքսուղի շունչը թեթև է, նա կարող է,– համաձայնեցի ես:

– Բանը շունչը չի, սիրելիս,– վիճեց նա,– բանը, քեզ ասեմ, կինոն աշխարհի մեջ տեսնելու կարողությունն է: Մաքսուղը ոչ գյուղատնտեսության, ոչ էլ ազգային հարցեր է ուզում լուծել կինոյով, Մաքսուղը կինո է անում:

– Ես կլուծեմ թե չեմ լուծի՝ դա այլ հարց է, Իվան Միխայլովիչ, խոսքը իմ խղճի, իմ վերաբերմունքի, իմ մասին է խոսքը:

– Պատմիր,– ասաց նա:– Եվան մեզ դատավոր, պատմիր:

Ձեռքը արագորեն տանելով՝ սև թանձր վարագույրը նա ետ քաշեց, և այնտեղ չէին համբուրվում և դա պարտիզանների հին քողտիկ չէր – ռենտգենի սարքավորում էր, բուժքույրն ու բժշկուհին նստած էին, նրանցից մեկը ծխում էր: Կարծես թե ինքը չէր բերել տվել, այլ գտավ այդպես պատահականորեն՝ Վաքսբերգը ուրախացավ ու զարմացավ: «Այսքան մեծ սիրալիրություն: Չօգտվե՞նք մեր բժիշկների ծառայությունից»: Այդ ծնեռվա մեջ չէր կարելի տաղանդներին Մոսկվա մեծ քաղաքում դեսուդեն քշել՝ թե գնացեք ձեր առողջությունը հաստատող վկայականներ բերեք զանազան հիվանդանոցներից – դա այստեղ՝ արձակ, մաքուր ճեմարահում էր կազմակերպվելու: Նա գրել տվեց Եվայի ազգանունը-անունը-հայրանունը, իմ ազգանունը-անունը-տարիքը, ապա՝ իրենը: Նա հիսունյոթ տարեկան էր: «Չես խղճում ու ծերունուս հետ վիճում ես», ասաց նա:

Ինքն ու ես դուրս եկանք, վարագույրը նա քաշեց և ասաց. «Եվա Նիկոլաննային թույլ տանք ազատ հանվել» և ինձ արմունկեց՝ գլխով ցույց տալով վարագույրի ետևը, ուր շրշում ու ցածրիկ մնչալով հանվում էր Եվա Օգերովան: Ես հիշեցի Անտոնիոնիի նեգրուհուն՝ երբ կրծկալը սահելու հետ ստինքները թրթռացին ու մնացին կանգնած:

– Ինչպե՞ս է, կինդ շո՞ւտ-շուտ է գրում, դու պատասխանա՞նում ես: Սանձերդ այստեղ պինդ բռնիր, պատասխանատու տարիք է: Պատմիր,– ասաց նա:– Եվա Նիկոլաննա, լսո՞ւմ ես, պատմում է,– և որ այնտեղ ռենտգենի ետևում մերկ աղջկան դնում էր անհարմար վիճակի մեջ՝ ինձ աչքով արեց:– Դու իմ և քո Մնացականյանի դատավորն ես:– Նա ծիծաղը չկարողացավ զսպել.– Թեկուզ մի քիչ դժվար է մերկ դատավոր պատկերացնելը:

Ղարաբաղը ես լսելով գիտեմ: Չետո՝ նրանց միրգը համեղ է, հետո՝ նրանց լոբին ընկույզի համ ունի, հետո՝ ժողովուրդն է խաղաղ, իմաստուն – ամեն ինչ գիտի ու ձեն չի հանում: Գյուղի անունը դնենք Արևիկ: Չասկի անունը դնենք կարմրահատ: Բակերում կարպետներին որ փռում են՝ լույսը կուրացնում է: Մորեխ է թե մրիկ, եկեին է թե չորեխ՝ նա կա, հազար տարի է այստեղ է, Արևիկի ամենաբնիկ տոհմն ինքն է – արմատը խրել ու հազար տարվա խորքից գյուղի համար կյանք է հանում: Ուրիշ տեսակներ խփում ու հեկտարից քառասուն ցենտներ հատիկ են տալիս – նա միշտ քսան է կամ էնքան է ինչքան որ է, քանի որ Արևիկում չեն հաշվում թե ինչքան է – է՛սքան է: Կամ՝ Արևիկում հեկտարանոց հող կա՞, որպեսզի հաշվեին, թե կարմրահատը հեկտարից ինչքան է տալիս: Կարպետի, աղջկա գոգնոցի, սինու, մաճկալի ափի, ղարաբաղցիք օփի, հոփի են ասում – մաճկալի մի հոփի չափ՝ կարմրահատի արտերը շաղ են եկել կաղնուտ արևային լանջերին, աղջկա գոգնոցի պես կտորը կտորին բեր՝ որ մի նախշուն օրավար լինի: Ուրիշ տեսակներ գնում խփում ոսկի մեղալ են բերում – սրա բույրը ծածանվում է միայն Արևիկի վրա: Աշխարհը լիությունից տրաքում է՝ սրանք նույն կիսաքաղցն են, աշխարհը սովից է ուռչում՝ սրանք նույն կիսաքաղցն են: Չիմա... վաթսուներկ թվականն է, վաթսուներկ թվականի աշունը:

– Չազար ինը հարյո՞ւր վաթսուներկ:

– Այո, Լենկթեմուրից անցել է, թուրքերից ու մորեխից անցել է, հազար ինը հարյուր վաթսուներկ թվականի աշունն է, երեկ:

– Սրան լսո՞ւմ ես, Եվա Նիկոլաննա, «թուրքերից ու մորեխից անցել է», քսաներորդ դարից չի անցնելու:

«Շնչիր,– ասացին վարագույրի ետևում,– ավելի խոր... ավելի: Պահիր»:

– Դուք եղ ինչի՞ց իմացաք, Իվան Միխայլովիչ, որ վաթսուներկ թվականի աշունից չի անցնելու, վաթսուներկուսի գարնանը կարմրահատից մնացած է լինելու մի կճում ձավար:

– Քո պատմածից,– ասաց նա:– Քո պատմածների մեջ մի բան միշտ վերանում է, քո պատմածից հասկացա:

– Թե՞ կարմրահատը էլեկտրաղաց քշելու գործողությունը դուք եք դեկավարել:

– Տեղյակ չեմ,– ասաց նա:– Դու պատմում ես՝ ես լսում:

– Եվ չեք ցավում, որ Արևիկի կարմրահատը ոչնչացել է:

– Ես ու դու ողջ լինենք:

Մերկ՝ մենք կանգնած էինք իրար կողքի և երկուսս էլ ողջ էինք և դեռ

երկար էինք ողջ լինելու, բայց այնտեղ՝ արդեն տարիների հեռվում, մոբիլիզացված ավտոշարասյունը եկել կանգ էր առել, ջոկատայինները, ինչպես կարգն է, կարևոր կետերում ցցվել ու անթաթ սպասել էին, և կարմրահատը քսանհինգ թուփերում մինչև վերջին պարկն ու տակի աղբը բարձրել էր մեքենաներին: Հետո Բաքվից կարգադրել էին սերմացու ետ տալ, բայց կարմրահատն արդեն խառնված-աղացված-կերված էր եղել:

Գլուխը մոտեցնելով բժշկուհու գլխին՝ նա ասաց.

– Ես անպետքի մեջ տեսնեմք էդ ինչ որդեր են շարժվում:

Բժշկուհին նրան ինչ-որ բացատրություններ արեց, իրար մեջ խոսելով նրանք միասին ու մեկումեջ նայում էին, և անտազնապ իմ մարմինը նրանց հայացքի տակ իր համար հանգիստ սպասում էր: Ռենտգենի ետևից ես դուրս եկա և Վաքսբերգի ու բժշկուհու աչքերում տեսա այն փոքրիկ ուրախությունը, որ ուրիշի իմ առողջ մարմինն էր ներշնչել նրանց: Ծխախոտ վառելով՝ բժշկուհին մի անգամ էլ ետ նայեց, բայց ես արդեն հագել էի իմ անկաշկանդ, և կոշտ և փափուկ սվիտերը:

– Բժշկուհին թաքցնում է, բայց մեջդ սատանա կար, – ասաց Վաքսբերգը: – Սատանա՞ էր թե կամակոր մի փոքրիկ այժ՝ լավ չերևաց, քչիր թող չքվի:

Մենք դուրս եկանք արձակ, մաքուր ճեմասրահ, ապակիներից դեմը խոշոր փաթիլներով թատերական ձյուն էր գալիս:

– Արդեն արված է շատ բան, ես քո օժտվածության երկրպագուն եմ, հանդիսատեսը պահանջում է իրենը. կին կամ աղջիկ մուծիր սցենար, անցողիկ կապ կամ սիրո գիծ: Ինչպե՞ս է ապրում սերունդդ:

– Իվան Միխայլովիչ, ես չեմ կարող կին կամ աղջիկ մուծել սցենար, անցողիկ կապ կամ սիրո գիծ: Հովիվների մեջ կանանց բացակայությունը սցենարի նպատակներից մեկն է:

– Ի՞նչ նպատակ:

– Նրանք սարերից իջնում են նաև այն պատճառով, որ սարերում կանայք չկան:

– Քեզ հետ միասին մենք կարծում ենք, Մնացականյան, որ նրանք սարերից չեն իջնում: Մի քիչ աղմուկ է լինում, բայց նրանք իրենց գործը շատ են սիրում և շարունակում են ոչխար արածեցնել մաքուր հովերի մեջ սառն աղբյուրների մոտ: Մի՞թե վատ է աղբյուրների մոտ, հը՞...

– Իսկ ինչպե՞ս եղավ, Իվան Միխայլովիչ, որ մեր գյուղատնտեսու-

թյունն սկսեց արդյունաբերությունից ետ մնալ:

– Ես ու դու կարծում ենք, Մնացականյան, որ մեր գյուղատնտեսությունը ետ չի մնացել: Պատերազմի ժամանակ ամերիկյան օգնությունն ու նրանց հետ մեր առևտրական համաձայնագիրը մեզ տվել են սպառված մթերքի հինգ տոկոսը: Մնացած իննսունհինգ տոկոսը մեզ տվել է մեր գյուղատնտեսությունը այն դեպքում, երբ մեզմից խլված էին Ուկրաինան, Բելոռուսիան, Կուբանը, ամբողջ Կենտրոնական սևահողայինը: Պա՞րզ է: Նրանք սարից չեն իջնում, նկարդ գնում է Կանն, բերում է կես կիլոգրամ ոսկի քեզ, մեկ միլիոն դոլլար պետությանը, և կինդ ու կանայք սկսում են պտտվել իրենց Մնացականյանի շուրջը, և իմ ղեկավարությունն էլ ինձնից քո առիթով գոհ է մնում, դժգոհ չի մնում: Հասկացիր, որ քեզ նման ուրիշ տղաներ էլ կան, նրանք էլ են ուզում դասընթացներ ընկնել:

Հազար ինը հարյուր քառասունմեկից մինչև հազար ինը հարյուր քառասունութ թվականը ես կերել եմ ձմռանը կարտոլ, ամռանը՝ խոտ, մեկ ամիս՝ տավարի կոշտ քուսպ, երկու շաբաթ՝ ոսպի քուսպ, մեկ անգամ՝ ամերիկյան ձվափոշու ձվածեղ – ամերիկյան օգնությունը եղել է մեր ծախսերի կես տոկոսի կես տոկոսը: Հանդում քաղցից ուշաթափ եղավ ամենալավ հնձվոր Վանին, – բայց ես ինչի՞ց բռնեմ և այս մարդուն ինչպե՞ս պատասխանեմ...

– Իվան Սիխայլովիչ, նրանք սարից իջան, դարձան բանվոր, տեղամասի պետ, դասընթացների վարիչ, դափնեկիր, առաջավոր: Ես ինչպե՞ս ասեմ, թե նրանք չեն իջել սարից:

– Իսկ դու նրանց շա՞տ ես սիրում:

– Ես նրանցից մեկն եմ:

– Այդ դեպքում, թանկագին Մնացականյան, մի գնա Կանն, այլ գնա նրանց մեջ հովիվ:

Իմ ծնոտը դողաց: Ես ասեցի այդ մարդուն ու նրա տրամաբանությունը, ես չթաքցրի իմ թշնամանքը.

– Իսկ դուք դարձեք իմ հեղինակակիցը և դուք գնացեք Կանն, ստացեք ձեր կես կիլոգրամ ոսկին:

Վաքսբերզը ծիծաղեց և, ձեռքը իմ ուսին, իջավ երկրորդ հարկ: Մարմարն ու ուղեգորգերը մեր կոշիկների տակ հաճելի էին, աղջիկների փափուկ նայվածքը հաճելի էր, և ես տեսա, որ ինձ դուր է գալիս նաև այդ զրույցը:

– Արվեստը, Արմենակ, կեղծիքի թեկուզ փոքր քանակություն, այնուամենայնիվ, պարունակո՞ւմ է, ի՞նչ ես կարծում:

– Ես վերցրել եմ իրական դեպք իրական անուններով, նրանցից մեկն իմ հորեղբայրն է, որպեսզի կեղծիքն իջեցնեմ նվազագույնի:

– Թանկագին Մնացականյան, որպեսզի դիտողը հասկանա, որ քո հովիվները սարերը թողնում են կին չլինելու պատճառով, այդ դիտողին մի կես տարի թույլ չես տալիս հանդիպելու իր կնոջը, և ուրիշ կանանց նույնպես իհարկե, և ուրիշ կանանց նույնպես, դիտողիդ ուրեմն մի կես տարի կերցնում ես, ինչպես արևելյան առակի որձ ավանակին, ընկույզ ու շոկոլադ մի մութ սենյակում և արձակում ես նկարդ նայելու, և տաքությունը գլուխը տված նա նկարիդ մեջ կոնք, զիստ ու կուրծք է փնտրում, եղա՞վ, և դիտողդ հասկանում է, որ քո հովիվները սարերը թողնում են կին չլինելու պատճառով: Լա՞վ է:

– Ախ այդպե՛ս:– Ես դուրս եկա նրա ձեռքի տակից, կանգնեցի նրա դեմ, ձեռքերս գրպանեցի և պաշտպանեցի իմ տեսակետը:– Իսկ եթե ես շոգ եմ դնում, առողջ տղամարդիկ, հնձի համաչափ շեշտ, և կողքից անցնում է քաղաքաբնակ կես-բաց կես-փակ գեղեցկուհին՝ չի՞ դառնում հասկանալի, որ նրանք լեռները թողնում են կնոջ պակասության պատճառով:

Նա անձայն ժպտաց: Նա տխուր ժպտաց և թափահարեց գլուխը:

– Հոյակապ է,– հետո ասաց նա,– հոյակապ է. քաղաքաբնակ փափուկ դերասաններին տանում ես խոտհարք՝ թե սրանք պինդ-պինդ գյուղացի են, բոլոր թանգարանների գերանդիները հավաքում ես նրանց ձեռքը՝ թե սրանք հնձվոր են, էդ խեղճ զգվածներից պահանջում ես կրակոտ նայվածք քաղաքաբնակ գեղեցկուհուն, և այսպիսով, ուրեմն, կեղծիքդ չքանում է: Լավ է,– ասաց նա,– շատ լավ է,– հայերեն ասաց նա:– Սիրելիս, քսան-քսանվեց թվականներին ծնված սերունդը ջարդվել է պատերազմում, քսանվեց-երեսունվեց թվականներին ծնված սերունդը մեծացել է ստամոքսի խոցով, հաջորդ սերունդը քաղաքում ասպիրանտ է, դու էդ որտեղի՞ց ես քառասուն առողջ տղամարդ գտնում՝ որ հունձ կազմակերպես՝ որ զարմացնես Վաքսբերգին:

Իմ պատասխանը դուրս թռավ ինձանից անկախ.

– Կգնանք ու կնկարենք իմ հոր սարերում իմ հոր գյուղացիներին:

Այս անգամ նա չժպտաց. նայեց խայթոցով. և ձեռքը Եվայի ուսին նա ասաց դեռ ինձ.

– Ի՛նչ ես գլուխ ցավեցնում, քո հոր գյուղը Քուրդիստանի լեռներում է ինչ է, ինչ ես էկզոտիկա բանեցնում:

Նա Օզբրովայի ձեռքից վերցրեց լուցկու տուփի չափ մի խաղալիք, բացեց... թերթեց, և դա խաղալիք չէր, Ղուրանն էր: Եվան անզլիական



կոպիտ հրահանը փոխել էր Ղուրանի հետ, Ղուրանը արծաթե շղթայով կախելու էր օձիքի էբենոսե կոճակից: Նա ահա հագել էր եղջերվի շրջած կաշվից բաճկոնակ և փեշ, և նրա կոնքերը, նրա կուրծքը, նրա ուսերը ջերմության ոչ մի ալիք չէին առկայծում դաբաղած սեկի տակից:

– Կմտածեմ, Իվան Միխայլովիչ, շնորհակալություն,— ասացի ես և անկամ ետ քաշվեցի:

## VI

Այս ահա մոմլաթե բազմոցն է, լինուլեումն հատակն է, յուղաներկե պատերն են, այս ահա Եվա Օգերովայի սեկե հասակն է, ոտքերի դասական գծագրությունը՝ թույլ փայլող կապրոնի ու երկարաճիտք կոշիկների մեջ, այս ահա նեոնային լամպերն են՝ որ դեմքերը արծնապատում են սառը սպիտակ լույսով. սրանք իմ սև փայլուն կոշիկներն են, այնտեղ ահա հազար ինը հարյուր քառասունմեկ քվանտոնի ծնված տղաներն ու ավելի երիտասարդ աղջիկները մոսկովյան ժարգոնի հղկված դարձվածքներով վերլուծում են ֆաշիզմի առաջացման հոգեբանափիլիսոփայական հիմքերը, այնտեղ Արմեն Վառլամովը կանացի համաչափ մի կերպարանքի բացատրում է թե ինքը մորուքը պահում է հայ մեծ եղեռնի տարելիցի կապակցությամբ և որ թուրքերը 1915-ին սպանել են երկու և կես միլիոն հայ,— Ահա թե ինչ սրիկաներ են թուրքերը,— հպարտությամբ շեշտում է նա. Վաքսբերգից բաժանմեկ ու դանդաղ ինձ մոտեցավ Եվա Օգերովան, ծխախոտ խնդրեց, ծունկը ծնկին սպասեց՝ որ վառեն ծխախոտը, «Անտոնիոնին քեզ դո՞ւր եկավ» հարցրեց, «Այո» ասացի ես, «Նա բացահայտում է կյանքը շարժող նախնական բնագոյները» ճշգրիտ ու սառը արձանագրեց նա, և այդ պահին իմ փայլուն կոշիկի մեջ սուր ծակծկոցով նվազ իմ կրունկը:

*Որպեսզի քաթանե կոշիկները չթրջվեն ու սեղմեն ոտքերս, ես հազա հորս գործած տրեխները, լուսնի ու սառույցների միջով, շների սառը հաչոցների ուղեկցությամբ Վանաձորից գնացի կայարան, վազեցի ապրանքատար գնացքի կողքից, հենակոծիչի արանքներում ուստոստալով առաջ թողեցի բոլոր վագոնները, թռա և ծնկներով ու մատներով կառչեցի վերջին վագոնից: Ափերս փակչել էին թաց բռնակին, և ինձ թվաց թե դա լավ էր, այլապես ոտքիս համար տեղ փնտրելիս ես պիտի պոկվեի բռնակից: Գլխարկս ընկնում էր, ծնկներս քերծվել էին, բայց արյուն չէր գալիս, որովհետև ցուրտ էր: «Գնում եմ Շուլավեր,— խաբեցի ես ուղեկցորդին,—*

տատս մեռել է»: Նա ինձ քուրքի տակ առավ, այդ քնքշանքից ես իմ ներսում մի քիչ հուզվեցի, բայց այդպես էլ չասացի թե իջնելու եմ երեք կայարան հետո, որպեսզի ուզելիք փողը նա ակնկալի Շուլավերի մոտերքը: Իմ կայարանն անցնելուց հետո, երբ ընթացքը դեռ չէր արագացել, ես դուրս ցատկեցի նրա քուրքից ու վագոնից: Այդպես, ամեն ինչ լավ գնաց. և Դսեղ գյուղի շենքից չվախենալը, և ծյունոտ քամին, և մեռելներից չվախենալը. լուսադեմին ես ետ տարա մեր տաք կիսամուկ տան դուռը և ասացի ժպտալով.– Եկել եմ:– Արմո ջա՞ն,– անկողնում վրա նստեց հայրս: Փող չկար, և նրանք այլուր գտան, հաց թխեցին, կապեցին մեջքիս՝ երկու շաբաթվա ուտելիք իրենց ուսանող որդուն: Վերադարձը նույնպես հաջող էր, միակ վատը եղել էր այն, որ վագոնից ցատկելիս կրունկս ջարդել էր սառույցը, թրջվել և ճանապարհին ցրտահարվել: Հացը շալակած վերադառնալիս կրունկս սկսեց ցավել: Ես կարծեցի հոգնել ու թմրել է, նստեցի ծյունների մեջ, հանեցի տրեխս, գուլպաս և տորթեցի: Տաքանալու հետ՝ ցավը ուռավ կրունկիս մեջ, թայտաց և փափուկ ալիքներով խփեց սրունքիս: Մի պահ ես վախեցա ու կակազեցի՝ վայ մամա ջա՞ն, բայց ես ոչ ոքից օգնություն չէի ակնկալում: Ես ծյունով շփեցի ցավող տեղը, թմրեցրի, հագա գուլպան, տրեխը, և երբ գլուխս բարձրացրի ոտքիս վրայից՝ ծյունների մեջ մի մոլորված շուն էր պყգել ու նայում էր ինձ:– Բասա՞ր,– մտերմորեն ասացի ես, դանդաղ մի քիչ ետ քաշվելով նա չվերցրեց իմ մտերմությունը, որովհետև գայլ էր:– Դու էիր պակաս, քոտոտ,– քրթմնջացի ես: Այդտեղից մինչև Դսեղ նա եկավ իմ կողքից:– Ի՞նչ ես ուզում, անասուն,– կանգնելով ճչացի ես, ինքն էլ կանգնեց... բայց հետո ես այդ գայլից շնորհակալ էի, քանի որ Այգետակից մինչև Դսեղ ցրտատար ոտքս չցավեց:

Մոնլաթե բազմոցից ելնելիս ես մի քիչ հենվեցի Եվա Օգերովայի ծնկին.– Կարգին ծնկներ ունես, Եվա,– և ինձ թվաց թե արդեն ասացի ամեն ինչ, ու կարմրեցի:– Այո՞,– նա ձեռքն ինձ մեկնեց, որպեսզի, ինչպես ընդունված է, օգնեմ ելնելու և մի քիչ ժպտաց-չժպտաց:

– Ճաշակից զուրկ չես, բայց թե ինչու ես գյուղի մասին գրում...

– Ինչի՞ց իմացար, որ ճաշակից զուրկ չեմ:

– Հոտ քաշեցի,– ասաց նա մեզից հետո եկած սերնդի արտահայտություններից մեկը:

– Կինոնկարների՞ց էլ հոտ ես քաշում:

– Քո սցենարը կարծես թե լավն էր լինելու, բայց ինձ դուր չի գալիս:

Հետո ես տեսա, որ մենք քայլում ենք դեպի ճաշարան և ես քայլում եմ այն օրվա պես կաղալով: Ոչ. այն օրը ես չէի կաղում, ես չէի քայլում, ես գնում էի իմ ճանապարհը: Ես չէի ասում թե ես գնում եմ իմ ճանա-

պարհը: Ես գյուղում էի, հետո ես Վանաձոր էի:

- Օտար ի՞նչ լեզու գիտես:
- Ոչ մի, Եվա, ոչ մի օտար լեզու:
- Ռուսերենդ էլ մի բան չի:
- Թե չէ հանկարծ կտեսնեիր, որ քեզ սեր եմ բացատրվել:
- Սերը չեն բացատրվում:
- Իսկ դու որտեղի՞ց գիտես, կինոնկարների՞ց:
- Օ՛ր,– ասաց նա,– կովկասցի եռանդուն երիտասարդ է հայտնվել:
- Եվ չի հասկանում, որ գրանիտը չի եփվում:
- Հավվում,– ուղղեց նա:
- Միևնույն է, ես ձեր բառերի հոտը չեմ զգում:
- Բույրը,– ուղղեց նա:
- Ահա, գիտեմ որ հոտը բույրը չի, բայց սխալ եմ խոսում և սխալիս հոտը չեմ զգում:

Արմեն Վառլամովը գտել էր Լեոնիդ Գինգբուրգին մոտենալու պահը, հիմա նրա հետ քայլում ու զրուցում էր. անցնելիս հայերեն ասաց բարձր-բարձր.– Պիտի ամայումե՞ս:– Իբր կինոյի տունը երկինքներում է, ինքն իբր թե արմատից պոկվելու չափ ձգվել է վեր, և իբր թե երբեմն վերադառնում է իր նախահիմքին:– Ամայումիր, արժե,– Գինգբուրգի հետ խոսելով ստատիկայի դինամիզմը վերարժարժվող թեմայի շուրջ, հեռվից խորհուրդ տվեց նա:

- Տեսնյե՛նք, տեսնյե՛նք,– ասացի ես:
- Ասում են շատ տաղանդավոր է,– ասաց Եվան:– Երևի տաղանդավոր է, որովհետև էքսցենտորիկ է:
- Նորաձևությունների ամսագրերը հիմա խորհուրդ են տալիս էքսցենտորիկ լինել, այո:
- Ամայումիր ի՞նչ է:
- Ամայումե՞լ... Չգիտեմ:
- Նա քեզ խորհուրդ է տալիս ինձ համբուրե՞լ:
- Ոչ, նա Լաս-Վեգասից ջերմ ողջույններ է ուղարկում Հայաստան, որպեսզի Հայաստանն ուրախանա:
- Նա քեզ խորհուրդ տվեց ինձ համբուրել: Ձերոնք իտալացիների մնան են:
- Նա մերոնք չի, ձերոնք է, վաղուց ձերոնք է:
- Մորուքն, ասում է, ձեզանում ինչ-որ կռիվներ են եղել՝ այդ առիթով է պահում:
- Իր մորուքը նա քեզ համար է պահում, նա ձերոնք է:

Ափսեհի վրայից մեզ նայեց, նրան կարծես թե ժպտաց, նրա կողքին իմ գոյությունը կարծես ընդունեց-չընդունեց մի տղամարդ: Երբ նրա սեղանի մոտից անցնում էինք՝ բարձրահասակ ու պինդ կանգնեց, գոլեց Ղուրանիկը, հայտնեց թե ժամը ութին... Բայց Եվան նրան բան ասաց, և սեղանների ու գլուխների վրայով նրանք սկսեցին նայել հեռավոր անկյունում մեկին – սեկե բաճկոնով Գեորգի Կարասլավովին, որ ոսկի փարթամ մազերով մի աղջկա հետ ճաշում էր:

Իմ նախընտրած սեղանն ազատ էր: Ճաշացանկն աչքի անցընելով ես թղթի վրայից նայում էի նրանց, Եվան տղամարդուն լսում էր աչքերը դեռ հեռավոր անկյունին, ես ուզում էի խամդել և չէի կարողանում: Ես ահա ունեմ իմ նախընտրած սեղանը, ոչխարի միս չեմ սիրում, այլ սիրում եմ սնկով սուկի. մուգ-սև, արծաթած, թուխ, դարչնագույն, մաքուր ոսկի և կանեփագունած մազերից ես սիրում եմ խամրած կանեփագույնը և ուղիղ սանրվածքը. չեմ սիրում վիթխարի կանանց՝ նրանք ծիծաղելիորեն սարսափելի են, կարճ ու լիքը կանանց, բարձրահասակ ու կառուցիկ կանանց, բարակ մեջքով ու ծանր կոնքերով կանանց, չեմ սիրում աղջիկներին, այլ սիրում եմ ինձնից մի քիչ փոքր կանանց. չեմ սիրում նիհարներին, չեմ սիրում գիրուկներին: Իմ կյանքն ահա առատ հնարավորություն է ընձեռել, ոչ թե ուրիշի կյանքը, այլ իմ կյանքը և ոչ գրքերում, այլ կինոյի տանը, ահա հնարավորություն է տալիս չհավանելու և հավանելու, խոտանելու և ընտրելու:

– Այդ անասունն ո՞վ էր,– ես ճաշացանկը տվեցի իրեն:– Ընտրիր:

– Այդ անասունը, Օսվալդը:– Նա ուրախացավ.– Ես՝ սառը թառափ:

Սպիտակ գինի: Աղ դրած սունկ: Ուրիշ ոչինչ:

– Մոտս կոնյակ կա, կոնյակ ենք խմելու:

– Չկնո՞վ:

– Ես կոնյակ եմ խմելու, կինս է ուղարկել:

– Այդ դեպքում՝ սպիտակ գինով ու աղ դրած սնկով երկու բաժին թառափ, հետո, ուրեմն, սնկով սուկի՝ երկու լրիվ բաժին, վարունգի թթու, մի շիշ հանքային, վերջում, ուրեմն, հարյուրական կոնյակ նարնջի հյութով:

– Մոտիս շիշը լիքն է:

– Լավ: Կանաց-կանաց կխմենք մինչև ութը: Ութին Բերգման է լի-նելու, Օսվալդը քեզ հրավիրեց:

– Օսվալդն ո՞վ է:

– Օսվալդը իմ ամուսինն է: Մինիստրությունում է աշխատում, քեզ ճանաչում է, քո սցենարը նա հավանում է:

– Ղուրանդ նա՞ գովեց:

– Նա: Կոնսերվատորիայի կատարողական բաժին է ավարտել, գրականագետ չէ, մինիստրությունում ուղղակի մի փոքրիկ պաշտոն ունի, բայց ճաշակը կատարյալ է:

– Լիցքային վարժություններ անո՞ւմ է քո Օսվալդը:

– Անում է, ինչո՞ւ:

– Դու ինքդ էլ ես անում, ես գիտեմ:

– Անում եմ, ինչո՞ւ:

– Ես էլ եմ անում, պետք է մեր թանկագին առողջությունը պահպանենք:

– Ես ձեզ կծանոթացնեմ, ապագայում գուցե քեզ որևէ բանում օգնի:

– Ինձ թվում է ես եմ օգնելու նրան որևէ բանում:

– Կարող է պատահել,– ասաց նա,– կարող է պատահել:

– Չգիտեմ, Եվա, երբ որևէ մեկի օգնությամբ որևէ բան եմ անում տհաճությունն ինձ թունավորում է:

– Համենայն դեպս, դու Երևանում ես, նա՝ Մոսկվայում, իսկ քո սցենարը քեզ դեռ շատ է չարչարելու: Կանչե՞մ Օսվալդին:

– Ոչ, մի կանչիր Օսվալդին: Մի նեղացիր, Եվա, ես օգնությամբ ոչինչ չեմ անում, զոմե ցանկանում եմ օգնությամբ չանել ոչինչ, մի նեղացիր: Երևանից քեզ համար մի զույգ տրեխ եմ բերելու՝ Ղուրանիդ հետ վզիցդ կախես:

– Օսվալդը բերել է: Կարելի՞ է ծխախոտ: Օսվալդը վրացական տրեխ է բերել: Ուրիշ մի երկու բան էլ կա. սուզդալյան մի փոքրիկ զանգ ու փայտանկար խաչելություն՝ գուցե տասներեքերորդ դարի: Մեկ էլ...– մատուցողն աղանդերը բերում էր, և երկուսս էլ ժպտացինք,– մի փոքրիկ կճուճ ձեր Գոշավանքից:

Մատուցողն աղանդերը դասավորեց ու հարցրեց՝ սնկով սուկին հիմա՞ բերի, թե՞ երկար ենք նստելու: Կոնյակ լցնելիս ես անդրադարձա, որ Գոշավանքի անունը նա տվել է: «Ոչ, ես միայն մեր կոնյակն եմ խմում»,– այդ ժամանակ ես անդրադարձա, որ Գոշավանքի մասին նա բան է ասել:

– Կճո՞ւճ ասացիր:

– Կճուճ՝ Գոշավանքից: Պողոսջանը գմբեթի պատից հանեց ու տվեց ամեն մեկիս մի հատ: Այնտեղ հիմա միևնույն է չեն երգում ու չեն աղոթում: Ի՞նչ է նշանակում կերագիզվել:

Ես չհասկացա:

– Սևանն անցնում ես,– բացատրեց նա,– ուլորաններով իջնում՝ Հա-  
ղարծին ռեստորանն է, թարմ իշխանի խորոված են տալիս, կերագիզ-  
կեր:

– Ընկերուհիներո՞վ էիք:

– Ըհը, աղջիկներով, «կերագիզկեր, ձեր Մոսկվայում չես գտնի»:

– Էդպե՞ս էին ասում, թե՛ «կերագիզկեր՝ որ ուժ ունենաս հալից չընկ-  
նես»:

Նա քամահրեց:

– Տղերքը ձեզ... հայիոյել են,– ասացի ես:

– Կերագիզկեր՝ հայիոյա՞նք է: Չէր երևում,– ասաց նա.– տասն  
օրում մեզանից մի ռուբլի փող չծախսեցինք. դեռ Իռկայի... դեռ խեղճ  
Պողոսջանի երկու հատ հիսուննոցն ու մեկ հատ հարյուրնոցը Իռկայի  
պայուսակում մնացին: Ծանոթանալու առաջին գիշերը դրեց ու մոռա-  
ցավ հանի:– Նա ինձ մի տեսակ ուսումնասիրեց, կարծես չուզեց հարց-  
նել, հետո, այնուամենայնիվ, չկարողացավ չհարցնել.– Ձեր կանայք  
բռնակա՞լ են:

– Բռնակա՞լ: Ինչու, ես հպատակի՞ մման եմ:

– Խեղճ Պողոսջանը վախեցել էր կինը գիշերը գրպաններն ստուգի,  
իմ կարծիքով Իռկայի պայուսակում դրա համար էր դրել ու մոռացել էր  
հանի իր երկու հիսուննոցն ու մեկ հարյուրնոցը:

– Բայց գիշերը նա տո՞ւն գնաց՝ որ կինը կարողանար գրպաններն  
ստուգել:

– Չեմ հիշում,– ասաց նա:– Սևանա լճում լողացել պառկել էինք՝  
եկան ասացին դեվուշկի: Այնպես՝ տնավարի, այնպես՝ առանց դե-  
սուդենի՝ «դեվուշկի, ինչ եք էդպես պարապ շուռումուռ գալիս, պաշլի»:

– Դուք իհարկե չէիք ուզում, դուք հենց էնպես պառկել էիք:

– Մենք մեզ համար պառկել էինք, իրենք թող չգային:

– Դուք ոչ թե իրենց համար էիք պառկել, այլ ձեզ համար պառկել  
թխանում էիք, իրենք թող չգային:

– Անկեղձ՝ պառկել էինք և գիտեինք, որ իրենք կգան, բայց արևն  
ափսոս էր: Ու այդպես էլ եղավ, իրենք եկան ու էլ արև չտեսանք: Պարզ  
լճում գիշերը, ճիշտ է, մի անգամ լողացանք, բայց արև չտեսանք, այդ-  
պես էլ թաց մնացինք:

Նա ամերիկյան մի երկու կինոնկար էր թարգմանել, Օսվալդն ուզ-  
բեկական մի կինոնկարի նոր դիալոգ էր հարմարեցրել ու խոտանն  
այդպիսով փրկել Ռոմանովի քամահրոտ արգելքից – այդ փողերով  
նրանք հիմա-հիմա ճապոնիա էին թռչելու, բայց վերջին րոպեին նրանց

տեղերն ինքնաթիռի մեջ զբաղեցրել էին անհայտ մի հզորի, ասեմք թե Ռոմանովի ազգականները, և նրանք կապած ճամպուրակներն առել գնացել էին Տաշքենդ՝ երկրաշարժը նայելու: Նայել-կերել-խմել-զբոսնել էին, ինքնիրեն կազմվել էր աղջիկների նրանց խումբը, Մոսկվա դառնալու տոմս չէր եղել, մտածել էին ուր թռչեն - ուր չթռչեն, միակ տոմսով Օսվալդին ուղարկել էին Մոսկվա, օդանավակայանում իրենք մտածել էին որ կողմ գնան, ինչ անեն, հետո այդպես առանց որոշելու թռել էին Զայաստան:

– Սևանն անցնում իջնում ես՝ Զաղարծին ռեստորանն է: Իշխանի այնքան խորոված կերա, որ թվում էր իմ կյանքում էլ բան չեմ ուտի, ամոթ էր, ասացի Աերոֆլոտում տոմսավաճառ եմ աշխատում, կինոյի մասին բան չասացի: Բայց Դիլիջանն անցնում ձախ ես թեքվում, հետո նորից ձախ ու անտառ ես թեքվում՝ հանքային ջրի աղբյուր կա, բաժակուկես խմում ես՝ ու սոված ես: Իռկան՝ ժռած խաչու: Նրանք մեզ տանում էին Գոշավանքը նայելու, չէ՞ ամհարմար է միայն ուտել ու ուտել, իսկ Իռկան վիթխարի է, գիտե՞ս, Անիտ էկբերգի չափերի, ծխում է՝ որ քաղցը զսպի: Մինչև Պարզ լճի խորովածանոց՝ ուզած-չուզած հաց-պանիր ու երշիկ գտան: Թե՞ իշխանի կշտացրածը շուտ է անցնում:

– Չգիտեմ,– ասացի ես,– չեմ փորձել:

– Սևանի արևայրուքն օրինակ շուտ է անցնում:

– Գրողը քեզ տանի,– ասացի ես:– Ես էլ կարծում եմ քեզանից թաքուն հայրենիք ունեմ, գրողը քեզ տանի:

– Ինչո՞ւ,– ասաց նա,– ինչո՞ւ: Գիշտ է, փոքր է, բայց երկիր է, տասն օրում չես տեսնի: Մյուս կողմի վրա՝ ասում է ժայռափոր մի քաղաք կա, ժայռերն ասում է ծակել բնակարան են դարձրել: Ճանապարհին, ասում է, բարձր սարերում երեխաները կարմրախայտ են հանում մաքուր ջրերից, իսկ չոբաններն ասում է շատ հյուրասեր են, առանց չոբանխորովածի քեզ բաց չեն թողնում: Մինչև չուտես՝ բաց չեն թողնում: Չոբան-խորովածն ի՞նչ է,– հարցրեց նա:

Իմ պատասխանին նա չսպասեց. լսելն այլ է, տեսնելն՝ այլ:

– Պետք է գնալ, տեսնել,– ասաց նա:

– Ի՞նչը տեսնել՝ խորովածը թե ժայռափոր գյուղը:

– Եվ մեկը, և մյուսը,– ասաց նա,– չէ՞ որ նայել-տեսնելը հետաքրքիր է:

– Գրողը քեզ տանի, Եվա Նիկոլաննա, գրողը քեզ ու քո Վաքսբերգին տանի – իմ հոր գյուղն իսկապես Քուրդիստանի լեռներում չի:

– Միջնադարյան մտածողություն է,– ասաց նա:– Եթե կարծում ես

Քուրդիստանի լեռներում թաքուն որևէ բան դեռ մնացել է՝ սխալ ես կարծում: Իտալացի գիտնականներն ահա կարողանում են սաղմին սեռային ուղղություն տալ – դու՛ «Քուրդիստանի լեռներ»:

– Ես կարծում էի, Եվա Նիկոլաննա, ու դեռ չեմ ուզում հավատալ, չնայած բերեց ու իմ աչքերի դեմով, իմ քթի տակով՝ անցըրեց վիթխարի էգի իր գոյությունը: Գիտե՞ս, իմ Աշխարհբեկ հորեղբոր տան ետևը նստած զրուցում էինք՝ քո Իռկայի չափերի մեկը կանաչ խոշոր ակնոցը դեմքին, ծամոնը բերանում, փողքերը մինչև ծնկները քշտած, թևքերը քշտած, ուսապարկը մեջքին, տաբատը վրան կիպ, երկրաբանի թե լեռնագնացի մուրճը ձեռքին, փափուկ մարզակոշիկներով եկավ տվեց լուռ անցավ: Իր համար մենք կայի՞նք-չկայի՞նք, մեզ տեսա՞վ-չտեսա՞վ, մարդ էի՞նք-չէի՞նք, էդ գյուղը, էդ տունը, էդ ճանապարհը մերն էի՞նք-չէի՞նք – տիրակալուհու պես եկավ անցավ: Իսկ ես կարծում էի գոնե մի ամսով ազատվել եմ քեզանից ու Վաքսբերգից: Գյուղի վրայով խելագար գերծայնայիններ են թռչում, երկինքն արդեն նրանցն է, չնայած մեր գյուղացիները դեռ հույս ունեն, թե իրենց Արմենը քաղաք Մոսկվայում կգնա Անաստաս Միկոյանի մոտ, Միկոյանը կկարգադրի, և գերծայնայինները մի քիչ են կողմով կքշեն: Մի քիչ են կողմը, գիտե՞ս, Դարպասն է, լավ ժողովուրդ են, վատ ժողովուրդ չեն, բայց դե ի՞նչ անես, Ծնակուտից թանկ չեն, համ էլ դե ճակատագիր է՝ վերին կարգադրությանը են դեմը թռչում: Բայց վերջացած պատմություն է: Գալիս լուռ անցնում են, հետո աղմուկը գալիս փոթորկի պես գյուղը տափանում է: Խլացած կանգնում ես ու քեզ թվում է գյուղը քո տակից տարել են: «Էէէէ, էստեղ ձերոնք են, էդ ինչ եք անում»: Չետո չգիտեմ ինչ է լինում՝ օդը տրաքում ու տները ցնցվում են: Երկնքում ծխի բարակ ակոսներ են մնում, դրանք հետո բացվում-բացվում-բացվում-լայնանում՝ երկինքը բռնում են, արևի լույսը պղտորվում է, կարծես ծերունի ու տեսողությանդ վրա կասկածելիս լինես: Մեր Խոն նամակ է գրել զինված ուժերի մինիստրին, թե պիշիտ վամ հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ Ղազարյանն առ այն, որ ինքնաթիռների տրաքոցից տանս պատը ճաք է տվել, սվաղը պոկվել ու տեղաշորի վրա շուռ է եկել, տանիքը փախել է, ես քո հին զինվորն ու երկրորդ կարգի հաշմանդամ եմ, «հիմի ի՞նչ ես ասում, մի բան կարգադրի՝ մի բան անեն»: Գյուղացիներն ասում են՝ հիմի ինքը կարալ չէ՞ր կարկատի, որ էդ պարապ բանը Մոսկվա է հասցնում: Ես կարծում էի գերծայնայինների տակ, այնուամենայնիվ, քեզանից թաքուն հայրենիք ունեն, գրողը քեզ տանի, Եվա, գնացել ավիրել եկել ես:



Նա գլխով ափսես ցույց տվեց:– Կեր, կեր,– ասաց նա,– եղած-չեղած մի գյուղ ես տվել ու մի ամբողջ Մոսկվա շահել, կեր, կեր:

Ես խնդրեցի.

– Թող բոլորն ինձ խաբեն, բայց դու մի խաբիր, հա՞:

– Ներողություն: Կեր,– ասաց նա,– նիհարել ես:

## VII

Ծնոտս հենած ձեռքիս, խաղաղ այրվող ծխախոտը ճակատիս մոտ՝ ես մտածում էի: Իմ ճակատը գեղեցիկ էր, իմ աչքերը մտածում էին, իմ մատները գունատ էին, իմ ծխախոտի թմրանյութը քամված էր, կնգուղածն սպիտակ անձեռոցիկը իմ ափսեի ձախ կողմում հանգիստ կանգնած էր, Օսվալդ Օզերովը մոտերքում մի տեղ ինձ հարգում էր չափավորապես, ես իր նկատմամբ առանց հարգանքի չեմ, մենք երկուսս էլ բարեկիրթ ենք այնքան, ինչքան մաքուր է այս ափսեն, այս անձեռոցիկը, չժանգոտող պողպատից բութ դանակը,– քունքս շփելով ես մտածում եմ: Պատերազմից հետո ծնված տղաների խումբը եկավ, անկաշկանդ ու չափավոր անփույթ տեղավորվեց հարևան սեղանի չորս կողմերի կաշվե չորս հատ բազկաթռռին, պատվիրեց որոշակիորեն չորս հատ հարյուր գրամ լեհական օղի, երկու շիշ հանքային ջուր, մտով ու լոբիով չորս բաժին սառը խորտիկ և սուրճով պաղպաղակ: Եվ շարունակեց պարզ բառերի բարդ համակցումը.

– Պատերազմները բնական են նույնքան, ինչքան աշխարհն ինքը: Անցյալի հետ կապի մեջ լինելու ցանկությունը բերում է պատմության ուսումնասիրում, իսկ պատերազմները պատմության դասերի յուրացման հետևանք են: Ես գալիս եմ իմ նախնիներից, և այսօրվա իմ ընթացքը թելադրված է իմ նախնիներից:

Մաքուր սփռոցին, իր սառնության մեջ հանդարտ՝ կեցած էր սպիտակ գինին, դանդաղ ալիք էր տալիս թառափի բուրմունքը, կամացուկ այրվում էր աշորա հացի ուժը, միամիտ պայծառությամբ ինքնամատուցվում էր սպիտակ հացը, վայրի կատվի պես դարանել էր մանանեխը, ոչինչ բանի վրա դանդաղ սպառվում էր տրապիզոնի արևային թութունը և վայրկյան առ վայրկյան թուլանում էր այդ կնոջ հոսանուտը, մարում ու պառավում էր հրճվանքով լեցուն նրա մարմինը, ինչպես ժամանակն է հեռանում, ինչպես հոգնում է արյունը,– և իմ խոհուն ճակատի տակ բջիջներ էին լողում տեղից տեղ, լուր էին տանում, լուր էին բերում, հանգույցներ էին անում, քանդում էին եղած կապերը:

Իմ երեխաների մայրը սիրուն բառերով նամակ չի ուղարկել ինձ՝

ծանրոց է ուղարկել. տղայիս համար բրդե հագուստ չի առել՝ ինձ համար ապխտել, ապխտած սուկի է դրկել, խշխշան ընկույզ և հուրհրան կոնյակ. այդ ապուխտը անցած աշնան ամբողջ փափուկ արևը, փշատի բուրունով ներծծված արևը, արարատյան պղպեղի կատաղությունը, նախճավանյան հազարամյա աղի համը հավաքել էր իր մեջ. այդ ընկույզը օձաշատ ցամաք լանջերի քարոտ արևը ծծել էր իր մեջ. այդ կոնյակը կայծակ ու արև կերած կաղնու հյութերը տակառի պատերից ներքաշել էր իր մեջ երեսունհինգ տարի, հազար ինը հարյուր երեսուններկու թվականի ամռանից մինչև հիմա դանդաղ ներծծել էր կաղնու կայծակնաբույրն ու արևահամը. այդ խաղողագործը հետո խփվել էր Կերչ քաղաքի մոտ, կոնյակի այդ վարպետին ամեն ամիս, ամեն շաբաթ, ամեն օր, ամեն վայրկյան համոզում են սղոցել կաղնին, թեփ սարքել, թեփը լցնել խաղողի հյութի մեջ և մի թուպեում հյութը դարձնել կոնյակ, կոնյակի այդ վարպետը հոգնել է երեսունհինգ տարի նրանց խելացիությունը մերժելուց և իր հավատավոր անխելքությունը պաշտպանելուց, հենց որ մի անգամ էլ ասեն կաղնին սղոցենք՝ նա համաձայնելու է, այս մի շիշը նրա վերջին կոնյակներից է. արեգակը ամռանից ամառ թուլանում է, հին օրերի կայծակները մեռել էին այդ կաղնու և այդ կոնյակի մեջ,– իմ քներակը հիմա իմ ուղեղին էր տանում երկրի ընտիր հյութերի քանվածքը: Ստվերի փափկությամբ գայլն ու լակոտները սահեցին լանջով, մտան ձոր, ես պապանձվեցի ու փակեցի մեր քոթոթի բերանը, գայլերը ելան բոխուտից, եկան բղավեցրին մեր մոզուն, ստվերների պես հավաքված՝ մի ակնթարթում լափեցին արյունը, բղավոցը, փորոտիքը, կաշին, մսերը: Ապա նկատեցին ինձ ու նայեցին ալարելով և ցրված հեռացան՝ տանելով իրենց հետ պոչն ու կճղակները:

– Դա լուրջ հարց է, Եվա,– ասացի ես՝ մատների ծայրով շփելով քներակս, ինչպես Ավետիք Իսահակյանի լուսանկարն է.– դրա պարզաբանումը պահանջում է, ըստ երևույթին, մի մեծ հողվածաշար: Արվեստը կյանք է վերցնում և լուծում կյանքի՞ խնդիրներ, թե՞ կյանք է վերցնում և լուծում արվեստի իր խնդիրները. քանդակագործը վերցնում է կավ և լուծում է կավի՞ առաջադրանքը, թե՞ կավ նյութով լուծում է իր առաջադրանքը: Եթե կյանք է վերցնում և լուծում կյանքի խնդիրները, ապա ո՞ւր մնաց արվեստագետ անհատը: Իսկ եթե կյանք է վերցնում և լուծում արվեստի իր խնդիրները՝ այդ դեպքում ուր մնաց նյութի զարգացման ինքնուրույն ընթացքը: Նշանակում է՝ կյանք չի վերցրել, այլ խաբել է, թե ահա կյանք եմ վերցնում, բայց ձեռնածուի ճարպկու-

թյամբ փոխել ու կյանքին շատ նման մի ուրիշ բան է բարձրացրել – կրկեսային ծանրություն:

Ինքը իր մեջ խաղաղ թայրտուն էր աշորա հացի վայրի ուժը, դանդաղ նարմրում էին սեղանի լամպը, Եվա Օգերովայի պարանոցը, հայացքի ջերմությունը, սառը սպիտակ գինին: Այդ լռության մեջ ես թաքուն ուրախանում էի տեսաբան արվեստագետի իմ կարողություններով: Բայց ինձնից խելոքը տղաների խումբն էր, որ ծնվել էր պատերազմից հետո. այդ խումբն այնտեղ նստած սեղանի չորս կողմը չորս բազկաթռռի, ասաց որոշակիորեն.

– Պետք է ոչնչացնել մուրացիկներին, քանի որ մենք գայրանում ենք նրանց ողորմալիս և գայրանում ենք նրանց չողորմալիս:

– Եթե այդ հարցը ես ինձ համար վճռեմ, Եվա...

Նա աչքերով հարցրեց. ո՞ր հարցը:

– Արվեստն ինքնանպատակ է թե կյանքի համար:

– Ասա,– պատահաբաղը ձեռքին՝ նա սպասեց:

Սակայն պատերազմից հետո ծնված տղաները դարձյալ փայլուն էին խոսում. առանց կրքի, հանգիստ, ոչ թե վեճի պես, նրանք Նիցշե էին ցիտում, մի պահ ականջ էին պահում մտքին, հետո, կարծես թե մի քայլ ետ գնալով և առաջ գալով, հանգիստ կտրտում էին միտքը՝ ինչպես դիահերձն է կտրտում դիակը:

– Հասարակական-քաղաքական գործունեության ասպարեզը չարժե այն բանին, որ նրանով զբաղվեն մեծ խելքերը. այդ ուղորտը եղել է ու կմնա չնչին մարդուկների ասպարեզը. և թող հողս ցնդի այդ մեքենան, քանի որ կյանքն ընթանում է իր տրամաբանությամբ, իսկ պետական այդ մեքենան երբեմն կարողանում է միայն մի քիչ խանգարել և կարծում է կյանքին տրամաբանություն ու ընթացք տալիս է ինքը,– ասաց խումբը և մի քիչ, հարձակումից առաջ, լռեց՝ ծամելով իր բաժին լոբին ու սառը միսը:

Այդ պահին ես տեսա Խոր բացատը տապի մեջ, մի երկար մերուն՝ ծիծ ուտող խոճկորների կույտով, երեք տղա՝ որ հաճարենու բնին փորագրում էին ԱՐՄԻԿ, ՍԱՄՍՈՆ, ՌԱԶՄԻԿ, 1947. գրեցինք մի ամպամած օր,– տառերը գեղեցիկ էին ոլորվում, թվերը՝ ավելի գեղեցիկ, միայն օ տառի կորը դանակի տակից փախչում էր. իսկ մերունը ելավ, խոճկորներից մի երկուսը ծծերից կախ՝ մտավ անտառ: «Օ-ն թող ես գրեմ, օ-ն թող ես գրեմ»:

– Դու Նիցշե ուսումնասիրե՞լ ես:

– Ոչ, ես Թունանյան եմ ուսումնասիրել:

– Ես կատակ չեմ անում: Ես Նիցշեն այստեղից-այնտեղից գիտեմ, ուրիշների գրքերի քաղվածքներից, իսկ նրանք ահա ցանկացած տեղը հիշում են ու քննադատում: Ահավոր սերունդ է, աղջիկներն էլ, տղաներն էլ:

– Սովորական գրակերներ են. ճիշտ մեր նման, Եվա, սովորական թղթակերներ են: Դու կոնյակը շատ գեղեցիկ ես խմում, դու կոնյակ խմել գիտես, կոնյակը քեզ համար օղի չի, Եվա:

– Լավ կոնյակ է, բայց սառույցով վիսկի ես ավելի եմ սիրում:

– Վիսկի՞ որտեղից եք գտնում:

Նա գլխով ասաց՝ դե, և ապա խոստացավ նվիրել ինձ լիտրանոց ռուսական օղի՝ նրանցից, նշանավորներից:

– Դասերից հետո փախչում ես հանրակացարան:

– Էստեղ ի՞նչ կա:

– Աստված... մարդկանց հետ կխոսես, կշփվես, կժամոթանաս:

– Գործ ունեմ, զբաղված եմ:

– Ի՞նչ ես գրում:

– Մեր գյուղացի մի ծերունի՝ կնոջ մահից հետո հաց չի կերել և տասնհինգ օր հետո ինքը իրեն մահացրել է:

– Որ ի՞նչ:

– Որ՝ հավատարմություն, որ՝ կենդանական սեր, որ՝ հին գյուղի մարդ-աստված:

– Զենց դրա համար էլ ասում եմ. մարդկանց հետ չես շփվում և գրում ես հին գյուղի եղած-չեղած ծերունիների մասին:

– Էդ ի՞նչ գործն է: Զետո՞ թոշակս չի բավականացնում:

– Մի բաժակ սրճի համար ինչ փող է պետք:

– Խոսքե՛ր, խոսքեր, խոսքեր, խոսքեր:

– Դե գրույց էլ, ֆիլմեր էլ, ծանոթություններ էլ: Վաքսբերզը գիտե՞ս քեզ ինչու չի հեռացնում – վախենում է քո ընկեր-համակիրներից: Զգուշանում է:

– Շնորհակալ եմ: Բայց ես ինչքան իմ ջրնկեր-հակակիրներից, էդքան էլ իմ ընկեր-համակիրներից եմ վախենում: Կարծում եմ քեզ հասկացան, խոսքը բերանիցդ խլում ու դեպի հիմարություն եմ քշում: Ինչը քեզ համար թանկ էր՝ էժանացնում, հասարակացնում, ծամած ծամոն եմ դարձնում ու թքում:

– Ութին գալո՞ւ ես Բերգմանի:

– Ոչ, չեմ գալու:

– Ուրիշ անգամ չի լինի, ինչո՞ւ:

– Կլինի,– ասացի ես:– Ուրիշ անգամ էլ կլինի, մի ուրիշ անգամ էլ, մի ուրիշ էլ: Մենք կպահանջենք՝ ու կարո՞ղ են չտալ: Բայց ոչ մի անգամ ես չեմ նայի, որպեսզի չտեսնեմ, թե ինչպես են ոչինչ չստեղծող անարժանները փառավորապես լափում հանճարի միտքն ու սիրտը:

– Դե նա ստեղծել է՝ որ նայենք: Ի՞նչ անենք, չնայե՞նք:

– Իսկ մենք իրեն ի՞նչ ենք տվել:

– Այդպես հո պահածո կդառնաս:

– Կդառնայի, բայց չեմ դառնա, դու չես թողնի:

– Ինչո՞ւ կդառնայիր:

– Իմ խղճուկ անհատականությունը փրկելու համար:

– Որպեսզի փրկեիր քո անհատականությունը: Հասկացա,– ասաց նա:– Լո՞ւրջ խոսեմ: Այո՞, լո՞ւրջ խոսեմ:

– Լուրջ խոսիր, որովհետև ես լրջորեն եմ պատասխանելու:

– Կարելի՞ է մի ծխախոտ:– Նա ձեռքը տուփին մեկնեց, բայց ես թեթևակի խփեցի և ձեռքը նա ժպտալով ետ քաշեց. նա ինձ թույլ տվեց իրեն՝ կնոջը, ծխելն արգելել:– Քո անհատականությունը դու քեզնից չես ստեղծել, քո անհատականությունը դու մարդկանցից վերցրել-վերջացրել ես և արդեն ուզում ես նրանցից թաքցնել – առուփախը դա՞ է, թե՞ որ Բերզմանին ոչինչ, ճիշտ է, չես տվել, բայց ուզում ես նրանից վերցնել:

– Իմ անհատականությունը,– ասացի ես,– ես վերցրել եմ բոլորովին այլ մարդկանցից, մարդու բոլորովին այլ տեսակից, այն տեսակից, որ եթե չէր աշխատել՝ հացից ամաչում էր, եթե իր մտածածը չէր՝ ասում էր «ասում եմ, ասվել է», եթե գործից, ընկերությունից, թշնամությունից անտղամարդ էր ելել՝ իրեն արժանի չէր համարում կնոջ ծոցը մտնել. կնոջ վայելքին արժանանալու գործ անելուց հետո էր կին տեսնելու և վերնակի տակ կնոջ կոնքին խփելու էր որպես իր հպարտ կրծքին: Եվ՝ բոլորովին այլ մարդիկ, մարդու բոլորովին մի այլ տեսակ, այն տեսակը, որ պահանջում ու խժռում է և պահանջելուց ու խժռելուց բացի ոչինչ չի անում, որ ամեն մի հաշիշամուլ փսլնքոտի իրավունք է տալիս դանակը ձեռքին կնոջից պարզև պահանջելու, ինձ քաշքշում, մանրացնում, իմ անհատականությունը կեղտոտում է, իսկ ես չեմ ուզում տալ, ինչպես որ ինքը չի ինձ որևէ լավ բան տվել, ես թաքցնում եմ և թաքցնելու եմ – սա առուփա՞խ է: Իսկ նա խուզարկում ու գտնում է: Գտնում, էժանացնում, կեղտոտում ու դեն է գցում – դա իմ կյանքի պաշարն էր, բայց իրեն մի օր պետք եղավ:

Իր պայուսակից նա ծխախոտ հանեց, բայց ես դարձյալ խլեցի տուփը:

– Իսկական մեծ գողության մասին քեզ հիմա մի պատմություն կպատմեն,– ասացի ես:– Քառասունվեց կամ քառասունյոթ թվի ծնեռն է, երեխան ուրեմն տասնմեկ-տասներկու տարեկան է: Տասնմեկ-տասներկու տարեկան տղան տուն չի մտնում, քանի որ խոտ չի բերել: Հերը կոլխոզի գործով սարերի ձմեռանոց էր գնում, հոր հետ դուրս էր եկել արև-սառնամանիք սարերը, լեռան գլխից հերը սարի էս երեսին ձների տակ ցույց էր տվել թե իրենց խոտը որը կլինի ու կացինն արմունկին գլխավերել էր դեպի ձմեռանոց, և նիհար, փշաքաղված տղան սառնամանիք արևի միջով իջել, կանգնել-նայել, իջել, կանգնել-նայել, ծղրտացել ու սառույց դառնալուց առաջ...

– Տղան՝ ո՞վ,– հարցրեց նա:

– Տղան: Ծնակուտեցի տասնմեկ-տասներկու տարեկան տղան: Պատերազմի ժամանակվա հայ գյուղի տղաները՝ Թաթոյան Ջավենը, Քառյան Ջավենը, Մաթևոսյան Հայկը, Հովհաննիսյան Նորիկը, Լավրիկը, Վալոդը, Սամվելը, Հրայրը...

Նա ժպտաց ու կոնյակը կում արավ. այսինքն թե գիտի ում մասին է խոսքը:– Հետո՞,– ասաց նա:

– Շավվարդ գրպան չունի: Հերն էնքան էր նիհար, ինչքան ինքը, սարի գլխից ոչ թե հերը գնաց, այլ ցուրտ քամին սեղմեց ու քչեց հորը դեպի ձմեռանոց: Կոլխոզի էլբրուս ցուլը դուռը փշրել է, իսկ նրանք եթե տավարած են, ուրեմն միայն էդ են, դուռը վարպետն է սարքելու, իրենք չեն կարող տախտակ տախտակի գցել, և հերը չարացած էր ինչքան տղայի նիհարության, այնքան էլ նրանց անճար տավարության վրա: Թևը պարանի կապի մեջ՝ տղան ձեռները խցկել է շավվարի տակ աճուկների արանքը ու իջնում է: Ձների երեսը սառցակալած է, թաթի տեղով մեկ կոտրում ու խորը գնում է: Քաշելիս՝ ծնկից մինչև կոճը կեղևը քերում է: Գիտակցությունը սառչում է, նա այնինչ դեռ պիտի ջրի ձների տակ որն է մրջնաթումբ, որը՝ խոտ և կույտի վրայից ձյունը դեռ պիտի ետ տա: Տղան ծղրտացել ու փախել է, և հիմա դռանը կանգնած է ու տուն չի մտնում, որովհետև խոտ չի բերել: Եկել իրենց դռանն է կանգնել՝ որպեսզի չմտածեն թե ձորն է ընկել ու գելը կերել է, բայց տուն չի մտնում՝ որովհետև արժանի չէ վառարանի մոտ կանգնելու: Մայրն իր գործերով ներսուդուրս է անում ու անտեսում է, քույրիկն ապակու սառույցը քերել ու ծակից նայում է, ախպերը ջրի վազեց դուռն ուժեղ թրխկացնելով, գոռգոռալով ու դույլը շխկշխկացնելով, որ-

պեսզի իր աղմուկի մեջ սառնամանիքը խլացնի: Հերը եկավ, գոմի սրահում խոտի շալակը թևերից հանեց, լուռ նայեց ու անցավ, ու բացվող դռան լույսի մեջ՝ հոր թիկունքից գոլորշի էր բարձրանում: Երեխաներն էլ, հերնուններն էլ գիտեին, որ նա իրեն պատժի է կանգնեցրել, ու լռում էին, որովհետև եթե ներս տանեին՝ նա կնվաստանար, կոչնչանար, ծիծու կդառնար – իր կարգած պատիժը նա պիտի քաշեր: Բայց կյանքն իրենն արեց. նա գոմի սրահ մտավ թիկունքը հոր շալակով տաքացնելու՝ խոտն արդեն սառել էր, և նա մտավ գոմ, կովի մոտ ծնկեց ու ձեռները խցկեց էրաթաթի-լանջի արանքը: Էրաթաթն առջևի ոտքն է: Եթե տաքանար ու այդպես հանկարծ քներ՝ նշանակում է իրեն աներեսաբար արժանի էր համարում ջերմության ու կյանքի, եթե հիմա սուսուփուս դուրս գար կանգներ դրսում՝ խաբած կլիներ, թե իմ պատիժը ես քաշում եմ, – և տղան առաջին անգամ ուզում է մեռնել. ոչ թե էնպես՝ մեռներ, դագաղում լիներ, լացուկոծ, ծնողների վրա հոգսուհոգեհաց դառնար, այլ՝ չքանար, վերանար, չլիներ, չլիներ:

Շոյելու, գզվելու, դեմքը-դեմքիս և կուրծքը-կրծքիս կանգնելու պես՝ նա ինձ նայում էր, ես արդեն հավատում էի, թե ինքն էլ իր կյանքում ունի այդքան խոր վիրավորված մի աղջնակ... Բայց չեղավ, նա կամ ուրիշ կյանքով էր ապրել, կամ չուզեց գոմն ու գոմահոտը բերել այս խոսակցություն, քանի որ նրանք այսինչ մտադրությից չէին գալիս, այլ իրենց համար հենց էնպես եղել էին ու արդեն չկային: Նա ասաց.

– Հետո գոմից դուրս է գալու քո տղան ու Պալոնսկու դասին գոռոգոռա թե մարդը մեռակ չէ:

– Ո՛ւր էր թե մեռակ լիներ, ուր էր թե թողնեին մեռակ մնար. հանրակացարան, կայարանի դահլիճ, խաչմերուկի այգի է և ոչ թե տուն – ով ինչ պահանջով ու ինչ իրավունքով ասես ներս չի խցկվում:

– Բայց դու՛ պատմեցիր, քո տղան ասա մեռակ է:

– Իմ տղան լաց է լինում, որովհետև կովի համար խոտ չի բերել, բայց նրա շալկ, միամիտ, անվարձ, մայրական ջերմությամբ տաքանում է: Կովը վիզը ծալել, գլուխը դրել է իր ու նրա ուսին և միասին քնում են: Եթե նիհար, թիկունքը լայն հորը չխղճար, եթե կարմրած խոշոր ականջներով ախպերիկի համար լացը չգար՝ իմ տղան կգնար մեռնելու: Կգնար կմեռներ, և հոր ծնկները կծավվեին, հերը կասեր «վայ քու տունը քանդվի, զավակ, ինչ իմ տունը քանդեցիր»: Հոր համար՝ իմ տղան չի մեռնում: Եվ մոր համար: Եվ եղբոր համար: Եվ քույրիկի համար, որ իր կարծիքով մայրիկից թաքուն քերել, ապակու վրա ծակ է արել, դրսում հիմա մութ է, ծակից սարսափելի մի աչք է նայում՝ իր

աչքը, բայց քույրիկն ուզում է եղբորն այդ ծակով դրսում տեսնել և ամեն անգամ հանդիպում է սարսափելի այդ աչքին: Քրոջ չարչարանքի ու վախի մասին մայրը գիտի ու քթի տակ ուրախանում է: Իմ տղան մենակ չէ, նրանք բոլորն իմ տղայի մեջ են: Չերը գիտի, որ տղան տաք գոմում է, ու հանգիստ է: Տղան գիտի, որ հերը հանգիստ է, և եթե թուր հիմա մեխից իջեցնի, վիզը գցի ու կախվի՝ հորն ստորաբար խաբած, հոր արդար գլխին թաքուն խփած կլինի – «քու տունը քանդվի, տղա, ինչ իմ տունը քանդեցիր»:

Նա ժպտում էր, բայց մեր արանքում կարծես իրոք ապակի կար: Ես ծնկով խփեցի իր ծնկին, և նա աչքերը թարթեց ու ասաց դարձյալ նույն ժպիտով.

– Անտոնիոնին մի խոսքով քեզ չի համոզել:

– Քեզ պինդ է համոզել,– ասացի ես:

– Ինձ համոզել է:

– Ի՞նչ է համոզել:

– Նկարն ապացուցում է, որ մարդը մենակ է:

– Իմ կյանքը ես ըստ Անտոնիոնիի՞ եմ քննելու,– ասացի ես:– Դու քո կյանքը քննում ես ըստ Անտոնիոնիի՞:

Մեր արանքում թափանցիկ ինչ-որ ապակի, անկենդան ինչ-որ շերտ կար,– խոսելուց առաջ աչքերը նա ճպճպացրեց, բայց փառն աչքերի վրայից չանցավ:– Կյանքերն իրոք տարբեր են լինում,– ասաց նա:

– Չգիտեմ,– ասացի ես:– Մեր գյուղում էդպես չէր, Անտոնիոնիենց գյուղում գուցե էդպես է:

Նա զգուշորեն ասաց.

– Իրենցը գյուղ չի:

– Իրենցն ասպիրանտուրա է,– ասացի ես:

Քաղաքավարությամբ՝ նա իրեն ու ինձ միացրեց.

– Իտալիայի իրականությունը ես ու դու լավ չգիտենք:

– Դու նաև քեզ չգիտես:

Դանակ-պատառաքաղը նա ցած դրեց ու ասաց.

– Իվան Իլյիչը մենակ է մեռնում:– Ապա.– Մահվան անկողնում Իվան Իլյիչը մենակ է:– Ապա.– Նա մեռնում է, իսկ նրանք գնում են պարահանդեսի: Լքված, մենակ, անգոր՝ նա միայն կարող է լաց լինել, իսկ դռների ետևում նրանք ուրախ ծիծաղելով դիմակներ են փորձում, պարահանդեսային հագուստների մեջ են մտնում, իրար մշտում ու հրճվանքից ճչում են: Իսկ Իվան Իլյիչը մեռնում է:

– Ջհանդամը թե չի մեռնում:



– Նա ահա մեռնում է, իսկ դու Տոլստոյի միջնորդությունից հետո էլ չես ցավակցում:

– Հագիվ դագաղ են խցկել, ու իրենց ուրախությունը թողած գան հետն իրենք է՞լ դագաղ մտնեն,– ասացի ես:– Ինքն ո՞վ էր – սիրված ցեղապե՞տ էր, սիրված հա՞յր էր, չոբանի գերեզմանի վրա չոբանաշները գնում ոռնում–նվում մեռնում են, Իվան Իլյիչը սիրված չոբա՞ն էր, սիրված ամուսի՞ն էր, շռայլ սիրեկա՞ն էր՝ որ սիրուհիները մազները շաղտալով գային ծվատեին ու սպանեին իրենց, մարդկանց ինքն ի՞նչ էր տվել, մարդկանց մեջ իրենից ի՞նչ էր մնացել՝ որ մահվան անկողնում հիմա ետ իրեն չէին տալիս, որ հետը տաներ:

Պորտվեյնի հոտով՝ մեկը քսվեց ականջիս: «Ես անպտուղ կինոյի տանն ինչ ես ապացուցում, ում ես ապացուցում»: Կալխան Մուխտարովը՝ հարբած, տխուր...

– Նստիր, մի բաժակ կոնյակ լցնեն,– ասացի ես:

Նա ձեռքը թափ տվեց:– Ոչ, ես գնում եմ, ես էստեղ գործ չունենմ, ես Ալմա-Աթա էլ գործ չունենմ... Գնում եմ բաժանվեմ ու գնամ: Եթե հետս կգա՝ թող գա, իրա հերն էլ անիծած:

Եվան նրա ետևից ժպտաց.

– Առաջին օրից ասում է գնալու եմ:

– Կինո առաջին անգամ գիտե՞ս քանի տարեկանում է տեսել՝ քսան:

– Հիմա,– ասաց նա,– դու քո կնոջը սիրո՞ւմ ես:

– Դու քո ամուսնո՞ւն:

– Ուրիշ բանի համար եմ հարցնում, դու քո կնոջը սիրո՞ւմ ես:

– Ես իմ կնոջը սիրում եմ: Սիրում եմ հիմա՝ այս րոպեիս, երբ կոնյակն ինձ տաքացրել է ու քո ծնկներն ինձ դուր են գալիս, իսկ ինքը երեխային կուրծք է տվել, երեխան կշտացել է, և հիմա լուռ նայում ու իրար ուսումնասիրում են, մայրը հիմա ասելու է «փըշտ» և երեխան խլրտալու, խրտնելու ու նրանից թաքնվելու է նրա կրծքերի մեջ. քիչ հետո երեխան մի աչքով տակնիվեր նայելու է մորը, և այն, ինչը կաթի չափ կարևոր է, մանանայի պես դարձյալ մի կաթիլ ցողվելու է նրա փոքրիկ էության մեջ: Իսկ ճաշն այնտեղ վառվում է, և քիչ հետո մայրն ասելու է՝ «թաղեն քեզ, ճաշս վառեցիր»:

– Այո,– ասաց նա:

– Նոր դեյրա են կարել, մոր բարձրակրունկները թաքուն հագել ու դուրս է եկել: Կինս՝ երեխա ժամանակ: Իր կարծիքով բարձր, շեկ, գեղեցկուհի, դերասանուհի է, իսկ շապիկի եզրը դեյրայի տակից երևում է, որովհետև մեծ քրոջ շապիկն է, էդ էլ քրոջից է թաքուն հագել: Մայթի

եզրին կքած տղերքն ասում են. «Հորդ գլուխը... էնպես ես գնում երևանի խանի խարջն ասես հորդ տուն է մտնում»: Ունքը կեռած՝ աչքի պոչով նայում է: Չի կարող փախչել, որովհետև առաջին անգամ է բարձրակրունկների վրա, չի կարող արագ անցնել, որովհետև մոր կոշիկները ոտքերին մեծ են: Եղա՞վ: Ես իրեն սիրո՞ւմ եմ թե չեմ սիրում: Իրենք Շիլաչի են ապրում, իրենց հորաքույրը՝ կայարանի ճանապարհին: Հերը բանակից եկել է, բայց հո չի կարող առանց քրոջ ընտանիքին դիպչելու անցնել, համ էլ՝ վատ լուր է հասել, թե կինն էսպես ու էնպես, ու հոր համար ծանր է: Բայց մայրը էսպես ու էսպես չի, ջրգողությունից փորն ուռել է, չի կարողանում վազել, դեմքը՝ միհա՛ր, իսկ փորը ծնկներին է հասնում ու շխշխկում է: Գետնին նստել է, երեխաներին ասում է դուք գնացեք: Հիմա վազում են, մերը ետ է մնացել, քույրը փողոցում կորել է, հորաքրոջ տան ճանապարհն ինքը չգիտի, ասֆալտը ոտիկները վառում է, պորտիկի տակ մի շոր է ու եղ շորն է, փայտե նալիկները բռնած վազում է քրոջ ետևից ու լացը գալիս է:

– Մոսկվա առատ քաղաքում փնտրել ու նրա նմանին եմ գտել – ի՞նչ էիր ասելու, ասա:

Ոչ այնքան բաց՝ որ ինձ վիրավորի, ոչ այնքան թաքցրած՝ որ ես հանկարծ մտածեմ, թե ինքը համաձայն է, որ երևանցի ինչ-որ տնտեսուհի նման է իրեն՝ կինոյի ասպիրանտ Եվա Օգերովային, նկատելի-աննկատելի ինչ-որ շարժումով նա հասկացրեց, որ նմանություն տեսնելը, այնուամենայնիվ, իմ կամայականությունն է:

– Այո՞, – ասացի ես:

Նա ժպտաց:

– Լուսանկարիչը առաջին անգամ երբ գյուղ եկավ, որպեսզի սիրուն լինեմ՝ անթև ներքնաշապիկս հանեցի ու հագա վերնաշապիկս վրայից: Էղ լուսանկարը հիմա կա: Ես՝ ես:

Նա ծիծաղեց:

– Նոր շորը հագել ու իրեն գեղեցկուհի, դերասանուհի, բարձր ու շեկ է տեսնում: Ես՝ Հասմիկը:

Նա սպասեց:

– Քո էղ կաշիներն առնելու համար դու քանի՞ առևտրականի հետ ես ծանոթացել, քանի՞սն են քեզ խոստացել ու չեն տվել. որ հագնում ես ի՞նչ ես զգում, որ չես հագնում՝ մի բոպե մոռանո՞ւմ ես: Ես էլ՝ դու:

– Մեր կյանքն է, – ասաց նա:

– Դու ու Անտոնիոնին գյուղացի չեք:

– Ինձ սիրելով ես դու ինձ հետ սեղան նստել,– ասաց նա: Լավ չասվեց:– Դու ինձ սիրելով ես ինձ հետ նստում:– Լավ չստացվեց:– Դու ինձ հետ կապվածություն զգո՞ւմ ես:– Կոպիտ եղավ:– Սիգարետ տուր,– ասաց նա: Ես խփեցի նրա թափին, և ձեռքը նա ետ քաշեց:– Դու կոնյակը միայն ի՞նձ հետ էիր խմելու,– ասաց նա:

– Ինձ գարեջրի կանչեցին՝ չգնացի:

– Մարդու մենակության մասին արևմտյան ամբողջ արվեստը...

– Քիչ խոսիր, խոսքերը մկան պես...– կրծմործել բառի ռուսերենը ես չգտա:

– Խոսքերը մկան պես, հետո՞:

– Ես քեզ սիրում եմ, իսկ դու՝ ուրիշ կողմ, ուրիշ կողմ:

– Չի երևում:

– Ցո՞ւյց տամ:

Կոնյակը շրթունքին՝ նա ոչ ասաց:

– Շռայլությունդ էդքան է:

– Իսկ դու որտեղի՞ց գիտես ինչքան է իմ շռայլությունը:

– Պողոսջանն ինձ ասել է,– ասացի ես:– Կաշիներդ հագել ու վախեցած մտել ես մեջը:

– Պողոսջան՞ը:– Նա ժպտում էր, բայց կում արեց կոնյակը:– Չվախենա՞մ,– ասաց նա:– Չվախենա՞մ: Իսկապես առատ այս կինոյի տանը չվախենա՞մ: Քսան տարեկաններին արդեն պառավ են համարում, գալիս ու անողոք գեղեցկությամբ նորերը գալիս են, լցվում ու լցվում են՝ բարձրահասակ, ծիգ, թարմ, թեթև, տաղանդավոր...

Կաթնահունց բառի ռուսերենը ես չգտա:– Չե՛շտ,– ասացի ես:– Չեմ սիրում:

– Օսվալդն էլ է ասում, բայց ես նախանձում եմ:

– Ինչի՞ն ես նախանձում, նրանք նախանձելու ի՞նչ ունեն:

– Ես ապրել եմ, նրանք ապրելու են:

– Չեմ փոխի,– ասացի ես:– Չեմ փոխի:

– Գուցե թե իրենք էլ չփոխեին:

– Իրենց գործն է: Քո ամուսինն ինչո՞ւ չի սիրում:

– Ասում է չեմ սիրում: Չգիտեմ: Դու ինչո՞ւ չես սիրում:

– Չգիտեմ: Բայց չեմ սիրում: Ամեն մեկն առանձին՝ տանելի է, բոլորը միասին՝ սարսափելի:

– Լեմն ասում է՝ միանգամից հազար Մոցարտ:

– «Հազար Մոցարտ միանգամից՝ սարսափելի է», ասում է Լեմը և ինքը դառնում հազարմեկերորդ Մոցարտ:

– Կեր, կեր, դու շատ ես նիհարել: Երևանից որ եկար՝ պինդ էիր, հիմա շատ ես նիհարել:

– Խմենք Լեմի կենացը:

– Դու արդեն լավ չես:

– Անցած աշուն Գոշավանք ընկերներով խմեցինք շա՛տ թթի օղի:

– Որ Քրիստոսն ասաց չորացիր՝ չորացավ, թթի ծառը դա՞ է:

– Գուցե դա, գուցե թզենին:

Գառնիի կապույտ որձաքարը աշման պարզ օրվա մեջ, խշխշացող ընկույզը, դիմացի սարերը սարերի վրա, տապալված սյան վրայից մի ուլ ցատկեց, ընկուզենիները խաղա՛ղ, խաղաղ էին, կողոպտված վազերը թռչուններից ու երեխաներից դեռ թաքցնում էին սև խաղողի մի երկու ողկույզ, արևի ալիքներն ու վայրկյանները համրելով քողտիկի դռանը կարմրում էր տաքդեղի շարուկը, ժամանակն այդ հավերժության հետ ապրում էր առանց կռվի, հաշտ ու ջերմ,– ես կոնյակը ծծեցի դանդաղ:

Նա կոնյակը ծծեց դանդաղ ու կուն արեց սուրճը:

– Դու ուրեմն ինձ ինչ խոստացա՞ր:

– Ես քեզ խոստացա... Ես քեզ ռուսական մի օղի խոստացա:

– Խոպան հողերում, որպեսզի իրենց վառարանը պատեն, ռուս կանայք ինձ խոստանում էին տապակած բաղ և օղի:

– Պատեցի՞ր:

– Պատեցի և կարոտով եմ հիշում: Թևները կրծքների տակ կանգնում ու իմ անկարողության վրա ծիծաղում էին, ասում էին «վարպետ», իրար խփում ու ծիծաղում էին: Ժողովուրդ էին:

Մեկի չսափրված փափուկ այտը քսվեց ականջիս:

– Բարև, էլ դար:

– Բարև ձեզ, տիկին: Ի՞նչ եք ուզում խեղճ եղբորիցս, ձեր պատճառով գիշերները չի քնում. մտքում դավաճանում է կնոջը և գիշերները պատմվածք է գրում հավատարմության մասին:– Գրկած, նա գզվեց ուսս.– Իմ լավ, իմ թանկագին, իմ մոզի,– տեղիցս հանեց, հեռացրեց սեղանից: Եվ սիրո ու հեզմանքի ծիծաղով շարեց մատների վրա.– Յորթը տակին է՝ մեկ, ամուսինը ջահել տղա է, կտա ջարդուխուրդ կանի՝ երկու, դու Բերգմանը չես, անգլիական սեկը հագից քեզ համար չի հանի՝ երեք, քսան ռուբլի փող տուր՝ չորս:– Խմած ես:– Խմած չեմ:– Թոշակդ չստացա՞ր:– Պարտքերից հետո մնաց տասնհինգ ռուբլի:– Չորս օր քեզ բավական է:– Հավաքվեց, մի տասը մարդ եկավ:– Իրենց հերն էլ անիծած, ամեն մեկի գրպանում հազար ռուբլի փող կա, թող

խմեն էլ, հաշիվը փակեն էլ:– Հասարակ բաները չես հասկանում, գե-  
նացվալե, հազարը կլոր գումար է, հազարը չի կարելի մանրել, իսկ  
Վրաստանը հարուստ ու հյուրասեր երկիր է, դարագիյե դրուզյա պրի-  
յեժայտե Գրուզիա:– Նորից շշեր ենք ծախելու, էլ դար:– Ձաքարիաձեի  
ծաղրանկարն ամսագիրը գուցե տպի:

Էլ դարը թռավ դեպի խումբը, ես դանդաղ ետ եկա. սա պարպված  
տգեղի մեկն է՝ ժանգոտ պարկուճ, բայց էկրանի վրա գեղեցկանում է և  
Միությամբ մեկ աղջիկները սիրահարվում ու սրսփում են. սա սրտով,  
լեզվով, մեջքով՝ կթվորուհիների դեր է տանում, կթվորուհիների համար  
ասում է «շո՞ – ինչ ա», իսկ այստեղ կթվորուհի չէ, կոմսուհի է. սրանք  
մոտիկ հիմնարկի աղջիկներ են, ճաշելու փողով հիմա և ճաշում են, և  
գտնվում են Մոնմարտրում. սրա աչքերի ձևը այնպիսին է, կարծես լավ  
կան վատ բանի է սպասում, և էկրանի վրա ստացվում են տագնապալի  
աչքեր, իրականում այնինչ մատուցողին է սպասում. չլիճե՞մ Արմեն  
Վառլամովի հետ ու եղեռնի առիթով պահած մորուքի առիթով մի հատ  
թխկացնեն մռութին՝ ես քո. էկրաններից՝ սա ավելին է քան հաղթանակի  
ու մեծահոգության արծանը, իսկ հիմա թևը մինչև արմունկը քշտել ու  
դմբդմբում է կիևյան կոտլետի նման փափուկ ձայնով:– Խառնածի-  
նություն, լեզվի աղտոտում, արյան թարմացում, չգիտեն սարի ուրիշ  
ինչ այծեր ու տափաստանի ինչ ոչխար... Իսկ ուր է իմ մաքուր, իմ  
բյուրեղյա՞, իմ ռուս կեչիակա՞ն...– Ապացուցում է, իսկ ինքը ռուսական  
կեչիային չի – տափաստանային խառնածինային է: Արդեն փափկող  
այդ ծերունու մեջ ես հանկարծ ճանաչեցի պատերազմի ֆոտոտարե-  
գրության այն պատանուն, որ վաշտը գրոհի էր տանում շքանշանակիր  
կուրծքը բաց, ավտոմատը գլխից վեր, երկու/երրորդ դեմքը լու-  
սանկարչին, մեկ/երրորդը թշնամուն պահած: Ես հանկարծ հասկացա,  
որ կանգ եմ առել նրա սեղանի մոտ, բայց արդեն ուշ էր:

– Ինչո՞ւ ես նայում, երիտասարդ, իմ տանը ես քեզ դո՞ւր չեմ գալիս:  
Ներեցե՛ք, ես իմ տանը նրան դուր չեմ գալիս:

– Իմ տանը ես ձեզ այդ հարցը չէի տա:

– Օ, ներեցե՛ք, ինքն իր տանը այդպիսի հարց չէր տա: Իր տա՞նը:  
Ո՞ւր է, մկնիկ, քո տունը:

– Կինոստուդիաների անշնորհք սուտ դերերի միլիոն ռուբլիների  
մեջ է իմ տունը, պա՞րզ է...

– Պո՞րզ է: Պորզ է, շա՞տ պորզ է, երիտասարդ:

– Հայերեն դուք սրա կեսն էլ չգիտեք, պա՞րզ է:

– Ի՞նչ է եղել, ի՞նչ է եղել,– ինձ ետ հրեց էլդարը:

– Յայերի միջից հերոս է դուրս եկել, պո՛րզ է:

Յետո, չգիտեմ ինչպես եղավ, հարբած գինվորի նման ես ձեռքս պատվի էի բռնել ու զեկուցում էի.– Սովետական Միության հարյուր երեք հերոս, չորս մարշալ, ավելի քան հարյուր գեներալ, Մարտական լրիվ փառքի քսանութ ասպետ, անանուն հասարակի մաքուր երեք հարյուր հազար զոհ...– իսկ էլդարն ինձ ետ էր հրում, համբուրում ու խնդրում էր.

– Ախպեր ջան, ոչինչ, ոչինչ, ախպեր ջան...

Յետո, ես նստել ու հեկեկում էի.– Իսկ էրզոունի ճակատում՝ ոչ մի հերոս, ոչ մի կրակոց, ոչ մի խումբ,– և Վիկտոր Իզնատևը տխուր նայում էր ինձ:

Վիկտոր Իզնատևն ու էլդարը մի րոպե մնացին մեր սեղանի մոտ, Վիկտորը հեռանալիս ասաց.

– Աշխարհի լավագույն կոմյակը խնում ու հիմար հաշմանդամներին գեկույց ես տալիս:

Վիկտորի ճանապարհը փակել, նրան մեր սեղանին նստեցրել էր եվան:– Որովհետև,– բացատրեց նա,– շիշը ձեռքին խփելու էր գալիս: Նրա գլխին յոդ կքսեին, իսկ ձեզ երկուսիդ կհեռացնեին այստեղից: Եվ կխափանվեր Վիկտորի ճամփորդությունը ճապոնիա: Կխափանվեր:

– Թող խափանվեր:

– Ինչպե՞ս:

– Էնպես, թող խափանվեր, ի՞նչ կա ճապոնիա:

– Յասկանալի է, բարկացած ես:

– Ծառկտորող ու եղջերապահ էր լինելու՝ դերասան է դարձել բավական չի, դեռ ուզում է տեսաբան էլ լինել: Անասունի մեկը:

– Յամաձայն եմ, լիովին համաձայն եմ:

– Ինչի՞ն ես համաձայն:

– Մարդը նշանավոր է եղել, հետո պատվանդանը տակից հանել են, հիմա ուր կանգնի ուր չկանգնի՝ հայրենասիրության պատվանդանին կանգնի: Եվ ահա. մարդն ատում է խառնածիններին: Ինչ կարող ես անել. մարդը հայրենասեր է, հայրենասիրությունը միշտ է լավ բան: Տողստոյին ես հասկանում եմ, տողստոյականներին՝ ոչ: Մարդն ախր անկրկնելի է, դու պետք է լինես դուական և ոչ թե տողստոյական: Լսիր. ձևակերպումը զուտ իմն է. դատարկ մարդիկ վերցնում են մեծ մարդկանց գաղափարները՝ որպեսզի իրենք նույնպես մեծ լինեն: Ինչ-

պե՞ս է,– ձեռքն այտին՝ հարցրեց նա:

– Յազար անգամ լսել եմ:

– Գիտե՞ս,– ասաց նա,– Ճշգրիտ ձևակերպումները միշտ ծանոթ են թվում:

Կարծես թե այդ էլ էի լսել, կարծես թե հիշում էի նրան, ով այդ այդպես էր ասել: Ձեռքն այտին՝ Եվան ինձ էր նայում: Դա Յասմիկի կեցվածքն էր: Նա ցանկացավ ծխախոտ վերցնել՝ ես չսովեցի տուփը, և նա մտքի մեջ ինձ գուցե թե վերապահեց իրեն ծխել թողնելու կամ ծխել չթողնելու իրավունքը: Լռությու՜ն էր, մենք զգում էինք կոնյակը, և կոնյակը մեզ դուր էր գալիս: Կոնյակի հետ՝ ինձ դուր էր գալիս նաև ինքը՝ կինոգիտության ասպիրանտ Եվա Օզերովան, և գուցե թե ես էլ իրեն էի դուր գալիս: Կողքի սեղանին, պատերազմից հետո ծնված տղաները զրուցում էին միմյանց չխանգարելով: Ես հասկացա, որ նրանք նայել ու խոսում են «Նյուրնբերգյան դատավարություն» կինոնկարի մասին կամ, բեմադրող-ռեժիսորին չվստահելով, իրենք են ծանոթացել դատավարության նյութերին: Ինձ դուր էր գալիս չնախապաշարված այդ սառնասրտությունը, որով նրանք առաջադրում ու պատասխանում էին հարցին: Վերջին խոսքով Կեյտելն ասել էր. գերմանացի լինելուս համար ես ամաչում եմ: Ջաուկելը վերջին խոսքով ասել էր. դա ամոթանքի խարան է մեր ճակատին, մեր զավակների ճակատին, դա ամոթանքի խարան է մեր թոռների ճակատին: Ռուդոլֆ Յեսը վերջին խոսքով ասել էր. ես երջանիկ եմ այն գիտակցությամբ, որ կատարել եմ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամի իմ պարտքը, իմ ֆյուրերի հավատարիմ հետևորդը լինելու իմ պարտքը. և իմ արած ոչնչի համար ես չեմ զղջում. ես եթե նորից սկսեի իմ գործունեությունը՝ ես կգործեի այնպես, ինչպես գործել եմ, և եթե անգամ գիտե՜նայի, որ վերջում խարույկի եմ հանվելու՝ ես դարձյալ կանեի ճիշտ այն, ինչ արդեն արել եմ: Կեյտելի և Ջաուկելի վերջին խոսքը ներման հույս է և զուրկ չէ գավառական դերասանի արտասուքից, իսկ Ռուդոլֆ Յեսի խոսքը տղաներից մեկը նորից թարգմանեց.

– Այն գիտակցությունը, որ ես կատարել եմ նացիոնալ-սոցիալիստի իմ պարտականությունները և որ ես եղել եմ իմ առաջնորդի հավատարիմ հետևորդը, այդ գիտակցությունն ահա ինձ երջանկացնում է նույնիսկ հիմա, երբ այսպես կոչված ռազմամիջազգային դատարանն ինձ դատապարտել է ցմահ բանտարկության: Իմ արարքներից ոչ մեկի համար ես չեմ զղջում: Իմ գործունեությունը եթե ես նորից սկսեի՝ ես կանեի այն, ինչ արել եմ որպես նացիոնալիստ-սոցիալիստ և ֆյուրերի

օգնական: Եվ եթե անգամ գիտենայի, որ իմ գործը ձախողվելու է և ես հանվելու եմ խարույկի՝ ես դարձյալ կվարվեի ճիշտ այնպես, ինչպես վարվել եմ ֆյուրերի տեղակալի և ֆյուրերի կուսակցության անդամի իմ պարտականությունները կատարելիս:

Պատերազմից հետո ծնված տղաները լուռ էին, ասես Նյուրնբերգում իրենք էին լսում մեղադրվող հանցագործին, ապա թեթև ժպիտով գնահատեցին.

– Տղամարդ է:

Եվան ձեռքը մեկնեց ծխախոտին.

– Այնուամենայնիվ, թույլ տուր ծխեմ:

– Քո գործն է, ծխիր:

– Այո,– ինչ-որ տխրությամբ և ինչ-որ ներողամտությամբ ասաց Եվան.– միամիտ, բարի հին ռեալիզմը՝ միամիտ, բարի հին խոսքերով. «քանի որ մարդկային հիշողությունը կարճ է, նյուրնբերգյան մեր այս դատավարությունը ապագա պատմաբանների համար կլինի ճշմարտության որոնումների անկողմնակալ տարեգրություն, և նախազգուշացում՝ ապագա քաղաքագետներին»: Այդպես ասվում ու այդպես էլ հասկացվում էր, և դա կոչվում էր կինոնկար:

– Քո երեխային ո՞վ է պահում:

– Ինչո՞ւ: Երկարօրյա մանկապարտեզից հետո՝ մայրս:

– Քո երեխային ո՞վ է ծնել:

– Դե լավ, «Անտոնինոնին ունի՞ զոքանչ»: Քեզ չի սագում էքսցենտրիկությունը և, ի դեպ, Յունգվալդի հետ վիճելիս քո պարտության պատճառը էքսցենտրիկի քո խաղն էր:

– Էկզիստենցիալի՞զմն է լավ թե երեխան: Իհարկե էկզիստենցիալիզմը, Եվա: Երեխան ի՞նչ է որ էկզիստենցիալիզմի մոտ: Էկզիստենցիալիզմը ոչ լաց է լինում, ոչ կուրծք է ուտում, ոչ էլ մարդու կյանք է մաշում:

– Իսկ դու ինչո՞ւ ես քո երեխաներին թողել ու էկզիստենցիալիզմի ետևից եկել Մոսկվա:

Պինդ նստելով նրա դեմ, ես ասացի.

– Ես տղամարդ եմ:

Նա չպատասխանեց առաջին խոսքով, երկրորդ միտքն էլ չասաց: Տասը պատասխանից նա ընտրեց ամենագեղեցիկը.

– Ձեր այլանդակ հանրակացարանում ով գիտի ինչ ես անում:

– Ինձ համար ապրում եմ:

– Քո սենյակը ո՞րն է:



– Երկու հազար հարյուր վաթսուցյոթը:

– Դուրս գանք:– Էլ չխմե՞նք:– Չէ դուրս գանք:– Ես կարող եմ: Մի տեղ կա, որ հասնում եմ՝ դրանից հետո էլ չեմ հարթում:

Նա ժպտաց Զասմիկի պես:– Այո, դու հերոս ես, դու չես հարթում:– Նա շրթունքները ներկում էր մոխրակարմրավուն շրթներկով: Նրա ձեռքը գեղեցիկ էր: Գեղեցիկ էին նրա անկյունավոր աչքերը: Եվ ուղիղ լայն ճակատը: Եվ կանեփագույն մազերը: Հայ կանայք այդպիսի ճակատ չունեն: Այդպիսի ճակատ ունեն միայն հազվագյուտ կանայք: Բայց ինձ դուր էր գալիս հիմա հատկապես նրա ձեռքը: Մոխրակարմրավունի եզրերով նա քաշեց սև մատիտը: Հավանեց: Շտկեց: Եվ ետ իմ գրպանը խոթեց երեքուրբլիանոցը, որ ես թողնում էի հաշվից ավելի: Մի ծանոթ տազնապ թե ուրախություն՝ մի պահ բռան մեջ վերցրեց իմ սիրտը: Հասմիկը ձիթապտուղ շատ է սիրում, «տան գեյթունը պրծել է, խանութներում էլ՝ չկա», և ապուշի պես նայում է երեսիս: Ոչ, շատ ավելի տազնապ էր: Ոչ, Հասմիկը շրթունքներն այդպես չի ներկում: Ոչ, աղտոտ խամռածիճը ռեստորանից դուրս է եկել:

– Մոտո՞վ փող մնա՞ց:– Ինչքա՞ն ես ուզում:– Քեզ համար եմ հարցնում:– Եթե ուզում ես... Չէ, ինչքա՞ն ես ուզում:– Քեզ համար եմ հարցնում: Ով գիտի ինչպես եք ապրում ձեր այլանդակ հանրակացարանում:

Նա իմ ուսերից է, մի քիչ բարձր, երևի մինչև ծնոտս: Հագած է պինդ – սեկե փեշը, կաշվե լայն գոտին, սեկե բաճկոնը, ճութավոր ընկուզագույն կոշիկները: Կանեփագույն մազերի այդ ծեծքը... Ես այդ պահին շատ ցանկացա բռնել նրա ձեռքը, միայն ձեռքը, պինդ սեղմել նրա ձեռքը...

– Գիտե՞ս ինչ, Եվա...– Ես նրան հիմա շատ բան էի ասելու և ասելու էի շատ որոշակի, պատին սեղմելու պես, բայց նրա դեմքը մի պահ աղավաղվեց ու հայացքը վանեց:– Ես չեի ցանկանա, Եվա, նորից սիրահարվել:

– Ո՞ւմ ես սիրահարվելու:– Քեզ:– Լավ ես անելու, բայց քեզ ո՞վ կթողներ:– Ես:– Սուտ մի խոսիր:– Սուտ չեմ խոսում:– Հիմա արդեն սիրահարվա՞ծ ես:

– Ներողություն:– Ես ետ քաշվեցի:

– Մի նեղացիր, խնդրում եմ: Ուղղակի ես լավ գիտեմ, որ այսքան շատ կհնոնկարների, դերասանուհիների, աղջիկների, ռեստորանի ու սրճարանի մեջ ինչ էլ ասես՝ սուտ կասես, մի նեղացիր, խնդրում եմ: Իսկ ուրիշ մտքով՝ դրան ես պատրաստ չեմ և ինձ թվում է՝ դու ինքդ էլ:

– Ներողություն եմ խնդրում:– Բայց մի նեղացիր, խնդրում եմ:– Չեմ

նեղանում:– Մի անգամ ես հանրակացարան կգամ տեսնելու, թե ինչպես ես ապրում ձեր էդ հանրակացարանում:– Այո, ամուսնուդ էլ կբերես:

– Ախր, իզուր ես նեղանում: Դե թույլ եմ տալիս...– այսը նա դեմ արեց:

– Ամենևին:

– Ժամը ութին գալո՞ւ ես Բերգմանի:

Իմ պատասխանը նա չլսեց, այդ պահին նա դանդաղ, մարմարե սանդուղքով Գեորգի Կարասլավովի վստահ ու հանգիստ վերելքի հետ, խլանում էր: Նրանք միմյանց հագուստների էին նայում – բուլղարը՝ նրա սեկե բաճկոն-փեշիկն, որն աշխարհում բուլղարի տեսածների մեջ լավագույններից չէր և նույնիսկ լավերից էլ չէր, նա՝ բուլղարի տաբատ-բաճկոնին, որի նման սեկ նա միայն բուլղարի հագին էր տեսնում: Նա համաձայն էր որևէ կերպ ունենալ բուլղարի տաբատը և չէր նկատում, որ բուլղարն իր տաբատը նրա համար չի հանի, նրա միտքը տրված էր այդ փոխանակությանը, ես նրա համար չկայի, և ես ինձ հանեցի նրանց այդ փոխուտուրսի արանքից:

## VIII

Անտառից կեչու բներ ու ճյուղեր են բերել, կոճղ են բերել՝ ճեմասրահը դարձրել են պուրակ, էլեկտրական լամպի վրա փռել են կար-միր մետաքս՝ եղել է կրակով քողտիկ: Եվ անտառի անհայտ մի տեղից մագնիտաֆոնը երգում է հայրենիքի ու թշնամու մասին ձայնագրված հին երգեր: Անտառից լավ է, որովհետև անտառ է առանց սարդոստայնի ու ճանճերի: Սա Մանուիս Գլեզոսի լուսանկարն է և իրականությունից լավ է, քանի որ և Գլեզոս է, և չկա ֆաշիզմ: Այս ես եմ, և դա լավ է, որովհետև կարծես թե ես չլինեմ: Բերովի կեչուտում երկու սիրահարված հիմահիմա պիտի համբուրվեն, և դա զգվելի է, որովհետև տղամարդը ճաղատ է և, թվում է, աղջկան չի կախարդել, այլ ստիպում է: Պետք է լինել գնդապետ, տաղանդը տալ հայրենիքին, և ուրիշներն իրենց վրա կվերցնեն քո կոշիկների մաքրության ու խոհանոցային մանրիկ հոգսերի խնդիրը:

– Ողջույն, ծերուկ:– Գյուղում ասում էին հնուկ:– Ողջույն, հնուկ:

– Բարև, հնուկ:

Հարմար են այս գորգերը, ապակիներից դեմը՝ փափուկ ձյունը, մարմարե այս աստիճանները, կոշիկների այս չոր քնքշությունը: Հարմար են Պաուստովսկին, սկանդինավյան թախծը, Անգլիայի Էլիզաբեթ

թագուհին:

Բերովի կեչուտի սիրահարվածներին անհնար է անտեսել, որովհետև աղջկա ծնկները դպրոցականորեն են տռուզ, իսկ տղամարդը ճաղատ է, և այդտեղ չի կարող խոսք լինել սիրո մասին, և դա տգեղ է: Պետք է խիղճ ունենաս ինքդ քեզ ասելու, որ աղջիկը, այո, շատ լավն է, բայց ուրիշ սերունդ է, արդեն ուրիշ սերունդ է և պատկանում է իր սերնդի տղաներին: Սա միակ ճշմարտությունն է, մնացած բոլոր դեպքերում թաքուն գողության կամ լկտի կողոպուտի հոտ է փչում:

– Ինչպե՞ս ես, Արմեն:

– Կարծես վատ չեմ:

– Քո սցենարից ես ու մի շարք մարդիկ գոհ ենք, լավ եղիր:

– Շնորհակալություն:

– Մանրամասն կխոսենք երկուշաբթի: Ողջ եղիր: Իսկ Վաքսբերգը պարտավոր է, պարտավոր է ինչ-ինչ պահանջներ ներկայացնել, ոչինչ, մի մտահոգվիր:

– Եղավ:

– Ցտեսություն, երկուշաբթի տասներկուսին ես այստեղ եմ լինելու, Վաքսբերգի առաջ միասին կկանգնենք: Ցտեսություն:

– Ցտեսություն:

Հարմար է նեոնային լույսի այս խաղաղ ուժը, այս հեռախոսը՝ որ երկու կոպեկանոցի փափուկ չխկոցով քեզ տանում է Մոսկվա խուճուճ քաղաքի միջով մյուս ծայրը, կինոյի տան չափ մաքուր ու տաք մի բնակարան. «Ծերուկ, դու նպատակ չունե՞ս Բերգման նայելու»: Հյուրանոցային առաջին օրվա անկողնի չափ փայլուն է այս գուգարանը, սկսվող սիրահարության պես հաճելի է երիկամներիդ պինդ առողջությունը, հարմար են գոլ ջուրը, հոտավետ օճառը, գունատ ձեռքերդ, նեոնային լույսը, սրբիչը: Նեոնային լույսը, սրբիչը, հայելիները: Եվ տարիքի մի երկու կնճիռը ճակատիդ: Եվ լավ է, որ դու քառասուն տարեկան չես և քսանհինգ տարեկան չես, այլ ուղիղ քո տարիքին ես – երեսուն:

– Վո՞ւնց իս, տո,– ասացի ես ինձ, աչքով արեցի և հայելու վրա կտտացրի իմ քթին:– Լավ ես:

– Մի հատ՝ գնանք բիլիարդ խաղանք,– ասացի ես ինձ:

– Ո՞ւմ հետ ենք խաղում:– Դահլիճի կիսախավար փափկությունը գրկեց ու շոյեց ինձ: Լուսամփոփների կաթնալույսի մեջ, անկյունների սեղանների, շախմատային տախտակների վրա մտածում էին. դահլիճի լռության մեջ օրորվում էին նրանց մտածումների ծայրը ծայրին

չհասնող թելերը: Ֆուտբոլային մարզադաշտի չափ մաքուր խաղասեղանին մարմնում էր սպիտակ գնդերի բուրգը. շերտավոր գունդը լռիկ սպասում էր մի վերստ դեմը. պիտի գլորվեր ու բախվեր հանգիստ, քաղաքավար, փափուկ: Կիյը ծնոտի տակ, լույսի ու ստվերի մեջ, մեկն սպասում էր խաղակցի: Շիտակ կիյերի բանակային շարքը ինքնամատուցվում էր լրջորեն ու քաղաքավար, թաքուն սիրով: Գերանդիի ոչ մի կոթ դեռ ոչ մի անգամ այսպես մերկ պինդ աղջկա նման չի մատուցվել ոչ մի հնձվորի: Այսպես ինքնամատուցվում է այժի տռուզ պտուկը ուլիկին, բայց այդ իրիկուն ծեծ են ուտում և այժը, և ուլը, և երեխան: Այսպես մատուցվել են դեռահաս ստրկուհիները տարեց սենատորներին՝ հռոմեական բաղանիքներում: Այս մեկը կարճ է: Այս մեկի ծայրի կաշին ծուռ է: Այս մեկի կապարը մի երկու գրամ շատ է: Այս մեկը ողորկ է սայթաքելու չափ: Այս հինգը լավն են, իսկ այս մեկը հնգի մեջ ամենալավն է: Շոյելով կիյի ճապուկ կաշին կավճով, ես անցողակի նայեցի շախմատային տախտակին. սևերը շախով զոհում էին ձին, և այլն, մատ կամ մատի նման մի բան: Սենատորներից յուրաքանչյուրը հանճարեղ զորավար էր, բազմածալ դիվանագետ, հստակ օրենսդիր, և սենատորներից յուրաքանչյուրի մարմինը տրորում, ծեծում, շփում, շոյում, կայտառեցնում էր տասնհինգ լողացնող-սրբող-օժող ստրուկ, և քառասուն թարմ ստրկուհի իրենց խլրտուն մարմինների հրճվանքը նվիրաբերում էր նրա ծերացող մարմնին, և նրա մարմինն ուշ էր պառավում, և դիվանագետի նրա խելքը մնում էր միշտ օձի պես ճկուն:

– Կռիվ ենք տալի՞ս, ծերուկ,– ասացի ես հրճվանքի այն դողով և խաղակցի նկատմամբ այն սիրով, որ ունենում էի միայն բիլիարդի սեղան տեսնելիս:– Խաղում ենք մինչև Բերգմանի սկսվելը, ծերուկ, և պարտվողը փակում է հաշիվը, այսինքն դուք փակում եք հաշիվը:– Եվ նոր միայն նայեցի խաղակցի դեմքին և մի քիչ վատ զգացի, որովհետև խաղակիցը նա էր, ում հետ ռեստորանում վիճեցի:

– Կիյը բռնել սովորիր,– քնծիծաղեց «խառնածինը»:

– Շնորհակալություն բարի խորհրդի համար: Նվիրե՞մ քսան միավոր:

– 14-ն ահա քեզ նվեր:

– Ձեր 14-ը դուք կխփեք:

– Ո՛չ, 14-ը:

– Դա ի՛ն գործն է: Ես ձեզ հետ չկարողացա խմել, ըստ երևույթին նաև չափտի խաղամ:

– Ո՛չ, 14-ը: Դու ինձ զայրացնելու համար ես 8-ը խփում, դա անագ-նիվ է:

– Ձեր կինոնկարներով ես դաստիարակվել եմ, ես ինչպե՛ս կարող եմ ձեզ զայրացնել:

– Խա՛ղդ խաղա և խփի՛ր 14-ը:

Կրունկս եռալով քոր եկավ: Եվ ինչպես կարելի է ասել, թե ես չեմ սիրում հաստիկ կանանց, վիթխարի կանանց, կառուցիկ կանանց, դպրոցահասակ աղջիկներին. ինչպես կարելի է կանանց խմբավորել ըստ չափսերի. կյանքն ինքն արդեն մի մեծ հրճվանք է: Ցավեցնելու չափ պինդ սեղմելով կրունկս հատակին, 14-ը ես շրխկոցով ուղարկեցի անցք. նիկելը գրեթե ճաքեց, ետ տվեց գունդը, որ նորից կպավ շերտավորին և ուզեճալով-չուզեճալով ծանրացավ ցանցի մեջ: 3-ի թեքումով մտավ նաև 8-ը, ինքը 3-ը դանդաղ շարժվեց կենտրոնի վրա, իսկ շերտավորը կանգնեց եզրակապին հպված: 8-ի մտնելը առաջնակարգ խաղ էր, 14 թիվը ծանոթ թվաց: Այսօրվա ռեստորանի հաշիվը:

Խաղակիցս շերտավորն ուղարկեց կորցնելու կույտի մեջ՝ շերտավորը 10-ի հետ, գրեթե կպած, կանգնեց դեպի անկյուն մի գծի վրա: Անկյան անցքը – շերտավորը – ես: 10-ը պետք է մտներ երկու հպումով. առաջին գնդի մման է ստացվում, բայց դա մեր մեղքը չէ: Կիյն ուղիղ գծով միացրեց անկյունը – 10-ն ու շերտավորը – իմ գունատ ձեռքը – յոթանասունվեց կիլոգրամանոց իմ մարմինը: 10-ը մտավ իմ ուզած հնարավոր միակ ձևով, շերտավորը կանգնեց ենթադրվող տեղը: Այդպես: Բարձր հասակն առած՝ Վլադիմիր Մայակովսկին հասարակական բիլիարդանոցներում հաղթում էր բոլորին, բոլորին ջախջախում էր և խաղադահլիճից ելնում շփոթ ու կավճոտ: Բեկող հարվածով՝ 6-ը կգլորվի մեջտեղի անցք, շեշտակի բեկումները մեր մենաշնորհն են, – բայց տագնապի պես մի բան իմ մեջ ուռչում էր: 6-ը մտավ, «խառնածինը» գովեց, հիմա՞ ինչ եք խփելու, «խառնածինը» վատ մարդ չէ: 13-ը կարծես թե հարմար է, բայց թող ինքը խփի: Եվ ինչո՞ւ խառնածին, մենք բոլորս էլ խառնածին ենք: 10-ը ու 6-ը նա տարավ զանձարան՝ այնտեղ էին 14-ը ու 8-ը: 14-ը: Տասնչորս ռուբլի քսան կոպեկ: 13-ը «խառնածինը» մտցրեց ճշգրիտ ու կոպտորեն, չխկոցը կարճ էր: Հարվածի ուժից 1-ը մտավ ու ետ եկավ:

– Հաշվվո՛ւմ է:

– Չենք պայմանավորվել:

– Ահա՛ պայմանավորվում ենք:

15-ի դիրքը 1-ից հարմար էր, բայց «խառնածինը» վրիպեց: 15-ին

խփելը հիմա բոլորովին նպատակահարմար չէր, բայց ես նշան բռնեցի 15-ին: 15-ի դիրքը հիմա բարվոք էր, սակայն «խառնածինը» նույնիսկ մոտավորապես չկարողացավ: 15-ը կանգ առավ կողակապի տակ, շերտավորը կենտրոն հասավ: 15-ի մեկ/երկրորդ կողին ես նշան բռնեցի, ճիշտ է, խնամքով,— Բռավո,— գովեց խաղակիցս, բայց այդ մտնելը զուտ պատահականություն էր: Ես կարծեցի ծխախոտ եմ ուզում, հրահանը տաքատիս գրպաններում չէր, այսօր բաճկոն չէի հագել, հագել էի Չասմիկի գործած սվիտերը, ես կարծեցի Չրայրի նվերը կորցրել եմ, այնինչ հրահանը կիյի հետ ձեռքիս էր. վառելիքի հոտը փչացնում է ծխախոտի համը, պետք է լուցկի օգտագործել: Շռայլ-անփուլթ՝ գնաց ու եկավ, ու մտավ, 3-ը:— Քեզ հետ կարելի է գրագով խաղալ,— ասաց խաղակիցը. դա գովեստ էր, բայց, շան հեռավոր ոռնոցի պես, իմ մեջ մի բան նվում էր: Բիլիարդի սեղանների մոտ Նապոլեոններ են օրեր անցըրել, իսկ դու, կարծում եմ, Նապոլեոն չես: 12-ը մտցնելու համար հարկավոր է... հարկավոր է նստուկը հենել սեղանի՝... կիյը բերել ետևով... պարանոցը թեքել և կիյը հարմարեցնել ձախի... ձախի բութ մատին... Ծուխն այրեց աչքս: 12-ը չմտավ, իսկ պատի տակ, ոտքը պատին հենած, կանգնել էր Լիա Օզերովան:

«խառնածինի» հարվածից 12-ը գլորվեց կողակապի վրայով գրեթե ծայրից ծայր և դուրս թռավ: Եվ ապա դրվեց կես/կենտրոնում, կավճաբծին: Չոյակապ է: Ոչ թե Լիա Օզերովա, այլ Եվա Օզերովա:

– Ուրեմն դուք ասում եք խառնածիններին:— Ես գտա հարվածելու հարմար տեղը:— Պատիվ ունեմ զեկուցելու, որ ես,— ամենահարմար տեղը,— ինքս,— ես շտկվեցի,— խառնածին չեմ:— Գունդը գնաց երերալով, կանգ առավ անկման եզրին, մտածեց ու կաթեց ցանց:— Ես մաքուր հայ եմ, կա այդպիսի մի ազգ:

– Ուրախ եմ, երիտասարդ, ուրախ եմ՝ որ կա այդպիսի մի ազգ:

– Ձեր ուրախությունը ես կհաղորդեմ այդ ազգին, և նա իրեն հպարտ կզգա: Ես յոթանասուն եմ, նորի՞ց չսկսեմք:

– Չէ, մի քիչ էլ համբերենք, վերևն աստված կա:

– Աստված, իհարկե, կա. մանավանդ տեղներս նեղ ժամանակ. իհարկե աստված կա...

«խառնածինը» խփեց ոսկերչական ճշգրտությամբ, և 5-ը կանգնեց անցքի բերանին. մենք մի երկու վայրկյան համենայն դեպս սպասում էինք, թե կկաթի ցանց: Չկաթեց, և «խառնածինն» ինձ մի չար հայացք նետեց:

– Ես դա չեմ խփի, հանգիստ եղեք:— Ես ուրիշ բան փնտրեցի:

Շերտավորը չկապվ 7-ին, անցավ 5-ի մոտով, կապվ կողակապին, տուգա՞նք, դանդաղ գլրովելով ետ եկավ դեպի 2-ը: Չհասավ: Տուգանք: Մնաց վաթսուհինգ միավոր: Ես տեսա խաղակցիս քնծիծաղը: Նա հիմնա կմտցներ 2-ը, 2-ը մտնում էր ինքնիրեն, հետո էլ մի քիչ լավ հարվածով կմտցներ 5-ը:

Նորից տուգանք հինգ միավոր: «Խառնածինը» մխիթարեց.

– Պատահում է, ամեն ինչ պատահում է, երիտասարդ:

– Ունեն՞ տուգանվում եմ, հիմա որ դուք տուգանվեք՝ ի՞նչ եք տալու:

«Խառնածինը» նշան բռնեց երկար, խնամքով և այնպե՛ս վրիպեց: Եվ այնպես ասեց ինձ: Երանի քո եռանդին, երանի, իրոք, վաթսուհամյա քո եռանդին: Իմ ուղարկած գունդը մտավ, բայց «խառնածինը» ցածրածայն ու վճռական առարկեց.– Չէիք պատվիրել:– Եվ հանեց գունդը, դրեց կես/կենտրոնի կավճաբծին, իրեն շատ հարմար, ու անկյուն մտցրեց ճշգրտորեն:

– Չէիք պատվիրել,– ասացի ես, հանեցի գունդը, դրեցի կես/կենտրոնի կավճաբծին:

– Եթե կանգնած էր ուղիղ դեպի անկյուն՝ ուրեմն պիտի խփեի անկյան վրա, պարզ է:

– Բայց չէիք պատվիրել:

«Խառնածինը» բանի տեղ չդրեց իմ առարկությունը. վիթխարի հասակով մեկ պառկել էր խաղասեղանին, խփում էր 12-ին:

– Ես՞ տարված, երկու կիյով խաղացեք:– Ես կիյը թողեցի խաղասեղանին, սպասարկողին ռուբլիանոց տվեցի և քայլեցի դեպի դուռը,– պատից անջատվեց ու տրտում ժպիտով ընդառաջ եկավ Եվա Օգեբովան:

## IX

– Դու շո՞ւտ էիր եկել բիլիարդանոց:

– Որ տասնչորսի վրա վիճում էիք:

– Ուրեմն՝ նկարիչ է ու նկարչուհի...

– Ո՞վ:

– Սպասիր, պատմեն:

– Չգնա՞նք սրճարան:

– Կգնանք: Նկարչուհի է, գուցե շատ տաղանդավոր. պինդ աշուն է ու յուղաներկի հոտ: Ամուսինը լավ տղա է, ասենք ինժեներ: Ամուսինը նրան հացուերչիկ է տալիս, սուրճ է եփում, բայց ինժեներ է, այսինքն այլ գործի է: Ինքն էլ պինդ աղջիկ է, ճորտի պես կարող է չարչարվել:

Ընկերները նկարիչներ են, նկարիչները լավ ժողովուրդ են, եվա, ինձ դուր են գալիս:

– Ես նկարչական ուսումնարան եմ վերջացրել:

– Այ թե ինձ ուրեմն ինչու էիր դուր գալիս: Լավ, ուրեմն պատկերացրու, որ դու ես ու ես եմ: Քսում է, քսում է, քսում է՝ չի հավանում: Քերում է: Չվաճված, չսանրված, քաղցած՝ քսում է: Ամուսնու կարծիքով նկարն այդպես էլ լավ է: Յը՞, – մտամոլոր արձագանքում է ամուսնուն: Ավարտված գործ է, ասում է ամուսինը, հաց ուտենք, դուրս գանք, ուզո՞ւմ ես ռեստորան գնանք:– Մի խանգարիիր, – ասում է ամուսնուն, քսում է, քսում է, քսում է... Հիմնականը լավ է ստացվել. ասենք՝ պառկած կին է, անդորր է. պատին լինելու է ցատկող վագր կամ, լուսամուտից դենը, ծառ, կամ, պատին խաչելության նկար, կամ թե չէ գորգի նախշեր՝ եղջերու, թռչուն, միրգ – մեռնելու կամ մեռնելու չափ հանգիստ լինելու ցանկություն: Քսում է, քսում է, քսում է... Այդ ժամանակ գալիս է նկարիչ ընկերներից մեկը: «Ես ի՞նչ բանի ես, ախչի... լավ բանի ես... էդ սևն էդտեղից քերենք տեսնենք. էդ լուսամուտը չփակե՞նք. փակիր՝ նայենք. պատին իսկի ի՞նչ ես դրել. չգիտեմ, վագրն ինձ դուր չի գալիս, քե՞զ: Քրիստո՞ս, եսի՞ն»: Ամուսինը ձանձրանում ու տնից ելնում է, իսկ այդ երկու խելագարը գույն են դնում, գույն են վերցնում, ներկոտվում են, ուժասպառ են լինում: Ամուսինը տուն է գալիս՝ նկարն ավարտված կամ կիսատ է, նրանք նստած են նույն թախտին, նա խաղում է նրա մազերի հետ, իրենց էսպերանտոյով բաներ են ասում ու ծիծաղում և չեն հասկանում ամուսնու շփոթումը և ու կատաղությունը: Ամուսնուն նայում են հեռու մի աշխարհից: Ո՞վ է նա, ի՞նչ է ուզում, ի՞նչ է պատահել:

– Յետո՞՞:

– Վերջացավ: Նրանք չեն հասկանում թե այդ ով ինչու է ուռչում, կարմրում ու զայրանում:

– Լա՞վ է որ:

– Ինձ դուր էր գալիս, հիմա պատմելիս մի բան երևի փչացրի:

– Չգիտեմ, – ասաց նա, – խնդիրը քեզ հուզո՞ւմ է:

– Ինձ դուր էր գալիս, հիմա իզուր պատմեցի: Ինձ դուր եկավ, որ դու բիլիարդանոցում կողքիս էիր, և հիշեցի ու պատմեցի:

– Ինչի համար որ պիտի գրեիր, ինչի դեմ, ինչի կողմ, ինչը որ պիտի առաջադրեիր: Ի՞նչ ես առաջադրում:– Նա պայուսակը դրեց սեղանին, բազկաթռռի մեջ ետ ընկավ, ազդրը բաց՝ ոտը դրեց ոտին, սպասեց, որ իր սիգարետը վառեն և, մի ձեռքով մյուս ձեռքի բազուկը բռնած, ծխեց



ու գլուխը ետ դրեց թիկնակին:– Խնդիրը,– և փակեց աչքերը:

Եվ այդ անցըրած օրը ինձ այնպես դատարկ թվաց – և բիլիարդը, և այդ անվերջ խոսակցությունները, և այդ թառափն ու կոնյակը, և այդ Անտոնիոնին, և այդ տղաների սառը խելացիությունը, և այդ նկարիչները... ամեն ինչ այնքան դատարկ, անարու, անկյանք, փուչ ու հիմար թվաց, ես ինձնից այնպես զզվեցի: Հունձ էի անում, հնձի հեկտարն արժեր տասնչորս ռուբլի փող, թոքերս բերանիցս դուրս էին գալիս, մունջ Մեխակը պրկվում ու ետևիցս հասնում էր, գրեթե տաշում էր ոտքերս և որ քաղաքից եկածին այդպես նեղել է՝ կանգնում էր ու ծիծաղում իր խլթփլթան ծիծաղով: Իսկ երբ տեսնում էին, որ սատկում եմ՝ ուղարկում էին ջուր բերելու սարի մյուս երեսի աղբյուրից. դա իմ հանգիստն էր: Իսկ բոլորիս հանգիստը հացի մատելն էր: Արևը դաբաղում էր մեզ ու մեր հացը, կաշեփոկի պես ջիլ էր դառնում խոտը, և անտաշ Սպանդարը մունջ Մեխակի ծիծաղի տակ օդում, իբր թե նրա համար, ցույց էր տալիս կլոր կոնքեր ու մի գիրկ կուրծք,– և հասկանում էինք, որ ուտելուց անմիջապես հետո մոռացել ենք ելնել, գերանդիները սրել, տնքալ ու կտրել, կտրել, կտրել խոտը:

– Դու քո նկարչուհուն, նկարչին, ամուսնուն սիրո՞ւմ ես,– ողորկ պարանոցը կլոր, ողորկ ազդրը բաց՝ հարցրեց մա:

– Ես ոչ ոքի էլ չեմ սիրում: Ես ի՞նչ եմ որ սիրեմ կամ ատեմ: Ես տառակեր եմ, թղթակեր եմ, դո՞ւրս չես գալիս:

– Դու դո՞ւրս ես գալիս: Գիտե՞ս ինչ. դու կարող ես նրանց սիրել կամ չսիրել, դա կարևոր չէ. ի վերջո՝ կարգին արվեստագետները չեն էլ մատնում իրենց սերը կամ ատելությունը. կարևորը խնդիրն է, էլ չենք խոսում գերխնդրի մասին: Ո՞րն է քո խնդիրը. նկարչուհին չպե՞տք է ինժեներ ամուսին ունենա. նկարիչը ժամանակին պիտի գա օգնելո՞ւ իր արհեստակցին. արվեստագետը չպե՞տք է ընտանիք ունենա. ընտանիքը չպե՞տք է խանգարի արվեստագետին,– սրանք ինչ են: Անհարմար էլ է: Դե աշուն՝ աշուն, մինչև իսկ երևանյան աշուն, հետո՞: Նյութի դեմ հանուն արվեստի կռվելիս մույնանում ու մեկ են դառնում նկարիչն ու նկարչուհին՝ թող մույնանան, հետո՞... դա ինչ խնդիր է...

– Ես դա, այնուամենայնիվ, կգրեմ, Եվա, և դա կլինի լավ պատմվածք:

– Քո գործն է, գրիր, բայց այդպիսի բաներով գրող չես դառնա: Գուցե դառնաս էլ, բայց մեր ժամանակների գրող չես լինի:

Հանդերձարանի դեմ հազմվում էր Վաքսբերգը: Փաթաթվելով թաղիքների, մուշտակների ու ականջակալ սամույրի մեջ, նա սիրալիր ծպտաց:

- Մտածեցի՞ր իմ առաջարկի վրա, Մնացականյան:
- Մտածեցի, Իվան Միխայլովիչ, և ահա թե ինչ եմ գտել ձեզ համար:
- Ապա:
- Ձեր հաջորդ կինոնկարին՝ մի լավ վերնագիր:
- Ապա, ապա:
- «Պայթյուն ֆինանսիստրի սեյֆում»:

Նա ծիծաղեց ամենաանկեղծ ծիծաղով:– Լավ է,– գովեց նա և դարձյալ ծիծաղեց:– Իսկ եթե իսկապես վերցնեն առաջարկդ: Սրիկա: Լավ վերնագիր է, չէ՞, Եվա, չվերցնե՞մ իսկապես: Պայթյուն ֆինանսիստրի սեյֆում: Անցյալ հավաքի հայն ավելի լավ էր խմում, փուչ կինոդերասանների հետ չէր վիճում: Գիշերները մի գրիր, դա թուլացնում է:– Նա կոճկվելը վերջացրեց:– Պատումային ահա թե ինչ գործ եմ գտել քեզ համար, համագործակցության կարգով. բժշկական կամ անասնաբուժական ինստիտուտը վերջացնում ու՝ ջահել, թարմ, լիքը-լիքը, կլորիկ՝ սարերը հովիվների մեջ աշխատանքի է գալիս Անահիտը: Հայերը սիրում են, չէ՞, մարմնեղ փափուկներին: Սեր կամ անցողիկ կապ, ինչը որ տղամարդու քո ազգային ինքնասիրությունը շոյում է, սեր կամ անցողիկ կապ Անահիտի ու ջահել հովիվներից մեկի միջև:

- Չհասկացա ինչ Անահիտ, Իվան Միխայլովիչ:
- Ծեր հովիվներից մեկի աղջիկը կամ ավելի լավ է քաղաքաբնակ հայրենասեր մի գեղեցկուհի. այս դեպքում սիրո կապի համար չեն բորբոքվի ձեր միջտոհմային ցածր կարգի կռիվներն ու մեզ չեն շեղի մեր գլխավոր ուղղությունից՝ մեկ, երկրորդ՝ ահա քաղաքի ծնունդ էր, բայց գյուղ սիրով եկավ՝ ցնդեցնելով քաղաքի և գյուղի տարբերության, առավել ևս հակադրության հնարածին առասպելները: Սովորում էր ուրեմն, բժշկական ինստիտուտում, հովիվներն այնտեղ ինչի՞, ի՞նչ մասնագետի կարիք ունեն, անասնաբուժական կամ...

- Թատերական:
- Թատերական, այո, մի ծաղրիր, ավելի լավ է թատերական կամ բանասիրական, հիմա կասեն ինչու: Կինոնկարի սկզբում վերջացրեց ինստիտուտը և եկավ սարերը հովիվների մեջ աշխատելու՝ կազմակերպելու նրանց գեղարվեստական ինքնագործունեությունը: Այդպիսի հաստիք հովիվներին տրվում է, չէ՞: Տրվում է թե չի տրվում՝ կարևոր չի – նկարին անհրաժեշտ է՝ մենք այդ հաստիքը գտնում ու տեղն իսկույն

գբաղեցնում ենք մեր ուզած աղջկանով՝ բարձր, առողջ, կարճափեշ, պինդ – չէ՞ որ սարերով ու ձորերով քայլելու է: Տես, է, գյուղմինիստրու-թյուններին հաստիքի միտք ենք տալիս ու չենք նկատում, որ տալիս ենք: Գյուղմինիստրությունները նկարը կնայեն ու շտապ կարգով կստեղծեն հովիվների մեջ աշխատող թատերական ինստիտուտի շրջանավարտ աղջկա հաստիքը: Արվեստն ահա թե կյանքին ինչպես է օգնում – գյուղին օգնում ենք ու չենք նկատում, որ օգնում ենք: Ամե-րիկայում նկարի հեղինակները այսպիսի գաղափարի համար գերա-տեսչություններից հազարներ կպոկեին, բայց դրանք մեզ հարկավոր չեն. մեզ բավական է, որ մեր աղջիկը նկարում կա, նկարը գորշ ձան-ձրույթից փրկում է, և իբրև գաղափար՝ նոր է, թխած չի, իբրև անձ՝ աղջիկ է, հովիվներին սարում և հանդիսատեսին դահլիճում իր ոտքե-րից կապել է: Մի գնդակով տեսնո՞ւմ ես քանի նապաստակ ենք խփում: Ոտքերը երկար, տաբատը վրան կիպ կպած, շռայլորեն մարմնեղ՝ մտնում է նկար ու նկարը ետևից տանում է: Բայց զգույշ, հա, հանկարծ այնքան բարձրահասակ չլինի՝ որ քո կաղուկուզ հովիվների դուռը չհասնի համբուրելու: Խա՛նդ, սե՛ր, կնոջ մերկ մարմին, բաց դանակ և հաշտություն: Այդպես և գյուղի՝ համար է լավ, և հանդիսատեսի՝ Մնաց-յալը՝ ինչպես քո սցենարում է, առանց, իհարկե, բախումի լուծման քո այդ տարբերակի:

– Մարդաթո՞ղ, – հարցրի ես, – ամուսնուց բաժանվա՞ծ լինի:

– Ինչո՞ւ:

– Անուսինը քաղքենի խխունջ է եղել՝ բաժանվել ու գալիս է:

– Ճաշակիդ նայիր, – սուր նայեց ու ասաց նա: – Ինչպես որ քո ճա-շակն է ուզում: Բայց անպայման քաղաքից, քաղաքի ծնունդ, քաղաքի բնակիչ, ինչո՞ւ. որպեսզի նրա անսովոր, նրա հիացած աչքերով տես-նենք լեռնային արագահոս գետերի ջրվեժները, սարերի փափուկ կո-րերը, փարախները, ուրթերը, ժողովրդի հյուրընկալությունը, կարմրա-խայտ ձուկը աղբյուրների սառն ակունքներում և թե ինչպես է արվում մածունը:

Վերացած՝ նա մի քիչ ականջ դրեց լեռնային իր գետերի կարկաչին և հառաչանքով ետ եկավ:

– Ահ, սրիկա... նկարն ահա ստեղծեցի տվեցի ձեռդ՝ ասելու ես հե-ղինակ եմ ու բարև էլ չես տալու: Նամակ չե՞ս ստացել, ինչպե՞ս են երե-խաներդ, ընտանիքիդ նյութական վիճակն ինչպե՞ս է:

– Երեխաներս լավ են, Իվան Միխայլովիչ, ընտանիքիս նյութական վիճակը վատ չի, հիմա ավելի լավացավ:

– Հիմա ավելի լավացավ,– ասաց նա,– հիմա ավելի կլավանա:

– Իսկ վերնագի՞րն ինչ դնենք, ի՞նչ վերնագիր եք առաջարկում, Իվան Միխայլովիչ:

– Վերնագի՞րը: Թողնենք նույնը, հը՞, Եվա, մի բան էլ թող իրենից մնա: Բայց ինչո՞ւ երախտամոռ լինենք. աղջիկը նկարը փրկել է, հեղինակի ընտանիքը նյութական նեղ կացությունից համել է, պետությանն այսբան փող է տվել՝ մենք էլ երախտամոռ չլինենք ու նկարին իր անունը տանք՝ Անահիտ: Քաղաքից դուրս է եկել ու ճամպուուկի մոտ կանգնած ձեռքը թափահարում է՝ համընթաց մեքենա է կանգնեցնում: Բարձրահասակ, կիսաբաց, շռայլորեն մարմնեղ՝ մարդու ուժ ու վստահություն է ներշնչում – խոսքը վերջին հաշվով չէ՞ որ գյուղատնտեսության մասին է՝ հորդուն կաթ, առատ միս, մրգերի դեզ, օքեյ:

– Թող Անահիտ չլինի՝ Նադյա լինի, բայց եղ ո՞ւր է ծնկները բաց գնում էն ցուրտ սարերը, Իվան Միխայլովիչ:

– Ես գիտեմ, որ սարերում ցուրտ է, բայց դու նոր եղ ո՞ւմ ես համոզելու, սիրելի Արմենակ Սիմոնովիչ, թե արևավառ Հայաստանն էնքան էլ հարավային երկիր չի: Ինչ պահանջարկը՝ էն էլ առաջարկը: Հետո, ուզում ես եղած պատկերացումը փոխել՝ շալվար հագցրու, դեմ չեմ:

– Շալվար հագցնեմ ո՞ւր ուղարկեմ:

– Ոնց թե: Պայմանավորվեցինք, չէ՞, տանում ենք հովիվների մեջ աշխատելու, հովիվների մասին նկարը ձանձրության փրկելու:

– Հովիվներն արդեն սարում չեն, արդեն քոչեցին, Իվան Միխայլովիչ, սարերում մարդ չկա, եղ խեղճ աղջկան ինչո՞ւ եք էն ամայի սարերն ուղարկում:

– Իսկ հանրային հոտն ո՞վ է արածեցնում:

– Իրենք քոչեցին քաղաք, հանրային հոտն էլ հետները քչեցին քաղաք սպանդանոց, էնտեղ հանրային հոտ չկա:

– Այո,– ասաց նա,– սարերում ոչխար չկա, այո, սարերն ամայի են: Իսկ հետաքրքիր է հարցնել, թե դուք ռեստորանում երկու ժամ ի՞նչ էիք ուտում:

– Թռափ, Իվան Միխայլովիչ, թռափ՝ օսետրինա, իսկ թռափն ինչպես հայտնի է չեն արածեցնում, Վոլգան թափվում է Կասպից ծովը, թռափն ապրում է Կասպից ծովում, թռափը չեն արածեցնում: Հեռացրեք ինձ, Իվան Միխայլովիչ, Տոլյա Տարանին ոնց հեռացրիք, հեռացրեք-ազատվեք ոչխարի-թռափի հարցերից, սարերում մարդ չի մնացել, ես չեմ կարող եղբան պարապ ամայությունը լցնել կինոդե-

րասանուհիների լավատեսական հետույքներով, հեռացրեք ինձ:

– Պայծառ էկրանից խավարասերի պես փախչում ես, հեռացնեմ՝ ո՞ր ես մտնելու, գրականություն, անցնելու ես հայերենիդ ետևը ու քեզ չե՞մ տեսնելու: Տոյա Տարանին հեռացրինք՝ քեզ չենք հեռացնի, խոտանի քանակը մեզ վրա արդեն մեղադրանք կդառնա:

– Խոպան հողերում աշխատել է, Իվան Միխայլովիչ,– միջնորդեց Եվան,– լավ տպավորություններ ունի, թող խոպանի մասին գրի:

– Աշխատե՞լ ես խոպանում:

– Եղել է, աշխատել է:

– Սցենարն արդեն պատրաստ է, կարիք չկա դարձյալ խոպանից սկսելու, չգիտեմ դու սցենարը կարդացե՞լ ես, բայց ծանր է, կարծում եմ աղջիկ է հարկավոր: Աղջիկ եմ տալիս՝ չի վերցնում սրիկան:– Նա իմ ուսին խփեց ու ինձ ճոճեց:– Մոսկվա քաղաքում ինքն առանց աղջկա մի ընկերուհի կանգնում, բայց իր քսան հովվին մի աղջիկ չի տալիս, ափսոսում է սրիկան:

– Զեմ ուզում,– ասացի ես,– ափսոսում եմ:

– Զի տալիս, ափսոսում է: Ամերիկյան կինոգործարարներն օգափոխիչների միջով թարմ թթվածնի հետ հաճելի բույրեր են տալիս և վատ ֆիլմից հանդիսատեսը ելնում է օքեյ տրամադրությամբ – ես կենդանի, առողջ, իր ազգային ճաշակի աղջիկ եմ առաջարկում՝ սրիկան փախչում է:

– Փախչելու եմ,– ասացի ես,– չեմ կանգնելու:

– Քո պաշտպանները,– ասաց նա,– քեզ պաշտպանողները...

– Ես պաշտպաններ չունեմ:

– Ունես,– ասաց նա:

– Ես կարծում էի միայն դուք եք իմ պաշտպանը:

– Դու ինձնից խորամանկ չես, մի խորամանկիր,– ասաց նա,– ես քո պաշտպանը չեմ: Քո պաշտպանները քեզ խաբում են: Իրենց մրցանակների բարձերին մատած՝ նրանք խրախուսում են քո կպածությունը քո կաղուկուզ չոբաններին, իսկ իրենք Սիբիրիադա են գրում: Քիմիադայի համար քիմիայի մինիստրության հարյուրհազարանոց մեծ մրցանակը երեկ ստացան, այսօր Նավթիադա են գրում: Քեզ ասում են քթիդ տակ դու չոբանբայաթի դնդնա, իրենք Եվրոպայից մինչև Արևելյան օվկիանոս համամարդկային, տիեզերական, համաշխարհային էներգիադա են երգում, իրենք բասով են երգում:

– Զգիտեմ,– ասացի ես,– իմ գործը չի թե իրենք ինչ են երգում: Եթե իսկապես պաշտպանում են, եթե ինձ գոնե հանդուրժում են՝ արդեն

շնորհակալ են: Բայց մարդկային թոքեր են, չէ՞, ի վերջո՝ կենդանի թոքեր են, չէ՞, անկենդան օդամուղ չեն, բասով ինչքա՞ն են երգելու: Իրենց համար երևի դուրեկան է շունչառնելիս զգալ, որ պարապ լռություն չի՝ մեկը քթի տակ չորանբայաթի է դնո՞ւմ:

Նա ուսս թփթփացրեց՝ մրցանակակիր իմ պաշտպանը հիմա կարծես մտել էր իր մեջ:– Դե լավ,– ասաց նա,– դնո՞ւմ, եթե ուղտի քամակը՝ ուրեմն ուղտի քամակը, քո մասին մի առակ պատմեն ու գնամ, շոգեցրի՞ք:– Եվայի ներկայությամբ՝ նա մի պահ մտածեց չասել, բայց այդպիսի բաները կհնոյի տնից այնքան էին հեռու, որ կարող էին լինել միայն զուտ հետաքրքիր որպես մրջյունի տառապանք, որպես հեռավոր արաբերեն:– Գիտե՞ս էն առակը՝ որ բեդվինն անապատում ուզում է տղամարդու իր հոգսից ազատվել, ուղտը չի կանգնում: Ավազներում մի աղջիկ է խրած, ասում է ինձ հողից հանիր՝ ու ես քոնն եմ: Ավազներից հանում ասում է ես ուղտի գլուխը պահիր:

Եվայի համար, և իր՝ Վաքսբերգի համար, ես մի քիչ վատ զգացի և ցանկացա փչացնել առակը:– Էդ ամայի անապատում էդ տկլոր աղջիկն ի՞նչ է անում,– ասացի ես:

– Առակ է,– ասաց նա:

– Թե՞ լեհ կինոռեժիսորները խրել նկարել ու մոռացել գնացել են:

– Գուցե,– ասաց նա:– Բայց դու տեսնում ես քո մասին է՝ փչացնում ես հոյակապ առակը:

– Ինչո՞վ է իմ մասին:

– Քեզ աղջիկ են տալիս՝ դու կպել ես քո չորանների պոչից:

– Եղավ,– ասացի ես:– Իսկ էն գիտե՞ք, որ սալդատը պատերի վրայով կացարան է պրծնում, ընկերներն ասում են ո՞նց կնիկ էր, ասում է լավ պինդ կնիկ էր, մանեթս բռից մինչև հանեցի հոգիս դուրս եկավ:

Նա ծիծաղեց, ուզեց գովել՝ դարձյալ ծիծաղեց:

– Չետո՞,– ծիծաղելով ասաց նա:

– Մանեթս ի վերջո հանելո՞ւ են ոմանց բռից:

Նա ծիծաղեց ու թափահարեց ինձ:– Ինչո՞ւ չես կոմեդիա գրում,– ասաց նա:– Առաջարկիս վրա խոստացիր զոնե մտածել՝ ու վեց հազարդ հանիր, մանեթն ի՞նչ է:

## X

– Թույլ տուր գնամ, դու իմ վերջին ժողովրդահեղափոխական, շոգեցրիր: Եվա, դասընթացներից սրան չեն հեռացնում, որովհետև դու շատ կտխրես, բայց դաստիարակել է պետք, հանձնում եմ քո մայրական գիրկը, դաստիարակիր:

Ինձ դուր չեկավ, որ նա, այնուամենայնիվ, յուր չգնաց առանց գրկի մասին ակնարկելու:– Այո,– ասացի ես,– գյուղացի հեղափոխական եմ և միայն գյուղացի հեղափոխական եմ: Թղթակեր չեմ, գյուղացի եմ, ի՞նչ երջանկություն:

– Պալոնսկու երկրորդ ժամից փախել էիր, դա իհարկե երջանկություն է: Մերը դպրոց չի, աշխատավայր է, գործարան, և մեկ ժամի բացակայությունը մեկ ռուբլու տուգանք է, իսկ ռուբլին, ինչպես մենք գիտենք, մարդկանց բռից զոռով են հանում:– Նա ծիծաղեց:– Եվա, սրա լեզվի վրա աշխատիր: Ունի, բավական երկար է, բայց հղկել-սրել է հարկավոր:– Նա ինձ աչքով արեց՝ հասկացնելով, որ ինքը գիտի, թե կանայք Մոսկվայում ինչպես են հղկում կովկասցիների լեզուն: Եվ ասաց արդեն երկուսիս համար.– Եվան խելացի աղջիկ է, գլուխ գլխի տվեք թե ինչ կարելի է անել: Սցենարի վերաբերյալ՝ իհարկե, միայն սցենարի վրա գլուխ գլխի տվեք:– Նա աչքով արեց ու գնաց:

Եվան, քանի որ նա դեռ մոտիկ էր ու կարող էր դեռ շուռ գալ կամ զգալ թիկունքով, թեթևակի զգվեց ու բազուկս սեղմեց, և դա նշանակում էր, որ մեր՝ իմ և իր, գործերը հաջող էին գնում և իր սիրտը խլրտում էր... դա այդպես էր, բայց ինձ դուր չէր գալիս, որ Վաքսբերգն արդեն իր նման գործնականորեն անկողին էր բացել մեզ համար և մեզ այնպես էր տեսնում, ինչպես իրեն ու որոշ մարդաթողների:

Տեր աստված, երբ հարսանիքից հետո նրանց՝ Սեջնունին ու Լեյլուն, Սեյրանին ու Սուսանին, Ռոմեոյին ու Ջուլիետին, պատանի բոլոր սիրահարներին, հարսանիքից հետո երբ հրում էին սենյակ, երբ նրանց փակում էին ու ականջ դնում այդ սենյակի ձայներին, այդ մոզի փեսան ինչպե՞ս էր կարողանում մոտենալ այդ ոչխար հարսին: Հետո ինչպե՞ս էր կարողանում դուրս գալ այդ սենյակից՝ երբ բոլորը նայում էին այդ դռանը: Եվ իրենց ինչ գործն էր՝ հարսն աղջիկ էր թե աղջիկ չէր, փեսան տղամարդ էր թե խեղճ սիրահար: Եվ փեսան ինչո՞ւ չէր կացինն առնում ու քշում նրանց բոլորին այդտեղից, և հարսին էլ, և հարսին էլ:

– Քեզ պատմե՞մ մի նոր պատմվածք:

– Պատմիր:

– Որպեսզի ջարդուխուրդ անես:

Մտերմության նման, կնոջական ընծայաբերման նման, գինովության ալիքի նման, որբանոցի տղային տրված ժպիտի նման՝ իմ ձեռքերում մի պահ քնքշացավ նրա մուշտակը, անկողնի պես՝ մուշտակը նրան իր մեջ առավ, զոհաբերվող ցլիկի արյան համ զգացի, այդ կնոջ հեշտ ու պինդ ու կառուցիկ... կառուցիկ... բայց ինձ սաստիկ դուր եկավ

ցլիկի զոհաբերման պատկերը. որձաքարե տաճար, հարավային աշուն, տրորվող խաղող, ցորնաթուխ տղաներ, ձգված ձիեր աշնան արևի մեջ և դանակի կարծր շեղբ: Հաջորդ վայրկյանին մուշտակը մուշտակ էր, այդ կինը՝ ասպիրանտ Օզերովա, ես հագնում էի իմ կոշտ վերարկուն և գուրգուրում «զոհաբերվող ցլիկի արյան տաք համ» բառախումբը:

– Ողջույն, ծերուկ:– Բարև, հնուկ:– Ունե՞ս Անդրոնիկովի զեկուցման տոմս:– Ինչի՞ մասին է:– «Ո՞վ է, վսյո-ժե, Դիմակահանդեսի իշխան Ջվեգդիչը»:

– Իշխան Ջվեգդիչը ես եմ, շնորհակալություն: Հին հայերն ունեցել են, Եվա, Անահիտ աստվածուհու հեթանոսական տաճար. այնտեղ աղջիկներն ընծայաբերվել են տղաներին:

– Հետո՞:

– Պատկերացրու աշնան արև, խաղող, դանակ, կանգնած ձի, թուխ տղաներ...

– Խնդիրը,– ասաց նա:

Այնուամենայնիվ, լավ է լինել բառերի շինարար, թագավոր, թեկուզ՝ ստրուկ, քան գերանդլի տեր: Իսկ լավագույնն այն է, երբ գերանդին շրխկում է անցըրած կյանքիդ որևէ հովտում և դու նրա հետ կապված ես հուշով և միայն հուշով:

– Խնդիր՞ը. հիմա ասեմ:– Նա լավն էր և իմ կողքին, երկուսս էլ խելացի էինք, ես բարձրացրել էի վերարկուիս օձիքը, հիմա ես պարզելու էի գերխնդիրը, հարկավոր է չմոռանալ և հեռագիր ուղարկել Հասմիկին, կեցցե քաղաքակրթությունը՝ որ իմ տրեխները հանել է իմ հագից և ինձ հագցրել է... բայց մեզնից ներդաշնը, ինձնից շատ ավելի փայլունը, խնամվածը, տաղանդավորը ահա Յունգվալդ-Ձուսեն էր, նկարիչը, բանաստեղծը, դերասանը, արձակագիրը, վաղվա վստահ կինորենադրողը, ում գեղեցիկ ճակատի տակ մտքերն իրար հրմշտում են և այնքան կարևոր մտքեր են հրմշտում իրար նրա գեղեցիկ ճակատի տակ՝ որ գրամեքենան բացել է հանդերձարանի սեղանին, և մտքերի հրաբուխն այնքան հանկարծակի է եղել՝ որ ժամանակ չի ունեցել վերարկուն հանդերձարան հանձնելու, գոնե վառելու սիգարետը – ենթագիտակցության հեղեղի համար թղթի վրա առու է բացում վերարկուն ուսերին, սիգարետը բերանին, աղջիկը գրամեքենայի մոտ նստած. վերարկուն չի ընկնում ուսերից, սիգարետը ծուխ չի տալիս, աղջիկը չի ճոճում երկար ոտքերը՝ որ չխանգարեն նրան, փողկապն ինքը թուլացել է՝ որ չխանգարի նրան: Ես կանգ առա, բայց շատ հետո, երբ մենք



դուրսը ձյան փաթիլների տակ էինք, անդրադարձա, որ կանգ առնելիս նրան հայերեն հայիոյել են.– Թու էգ շանորդի:

Ես կանգ առա, ապա քայլեցի, քայլերի հետ հատ առ հատ դնելով բառերը.– Այսքան գեղեցի՜կ... այսքան մտախո՜հ... այսքան տաղանդավո՜ր... վերարկուս այսքան լա՜վ... այսքան Յունգվա՜ր, համարյա թե Ինգմար... համարյա թե Բերգման... համարյա թե Դոստոևսկի... Չո՛ւսև, միևնույն է, քեզանից բան չի դուրս գա... մի նեղացիր իհարկե, բայց շատ ես գույնզգույն, քեզանից բան չի դուրս գա:

Սիգարետը շրթունքից կախ՝ դարձյալ հակվեց գրամեքենային և ձեռքով ինձ մոտ կանչեց: «Ականջդ տուր ասեմ»: Ժպտալով՝ ես ականջս դեմ արի, բայց նա խուլիզան չէր, վաղուց արդեն խուլիզան չէր՝ չքեց ականջիս մեջ: «Փսեվդոգյուղացի՛, էշո թողած ինչ ես պառավների ետևից...» – շարունակությունը ես լավ չհասկացա, որովհետև նրա տեքստերի մեջ գրամեքենայով տկտկացնում էի պիղը:– «Համլետիդ» մեջ ինձնից քեզ հիշատակ,– ուսիս վրայով ասացի ես:

Հայելու մեջ՝ մենք մեզ ընդառաջ էինք գնում, ես ինձ դուր էի գալիս, Եվայի մանրիկ կմճիռները չէին երևում, այլ երևում էր հաճելի ամբողջ ընդհանուր կերպարանքը, թավշե խորքերում ետ մնալով՝ անցյալ էր դառնում միջադեպը և սկսվում էր թարմ եռանդի վատնման նոր ժամ:

– Ժամի քանի՞սն է,– ասաց նա:– Հինգը:– Երեք ժամ դեռ կա:– Ինչի՞ց:– Բերգմանից:– Ե՛ս եմ լավ թե Բերգմանը:– Դու, բայց Բերգմանը միայն այսօր է:– Եթե չնայես՝ չի՞ լինի:– Չէ, կնայեմ: Դո՞ւ ինչ ես անելու:– Ոչինչ, բայց չմոռանանք Երևան հեռագիր ուղարկել:

Հարմարավետ փափուկ ձմեռ էր. ծյունը նրա համար էր՝ որ մստի մեր թարթիչներին, սառույցը նրա համար էր՝ որ նա ինձ թևանցուկ անի, ավլոդները՝ որ մաքրեն մեր ճանապարհի ծյունը, մեր բերանը՝ որ խոսենք: Սայթաքեց ու ծնկեց ծեր մի մարդ: Կաթի շիշը ջարդվեց, նարինջը գլորվեց մեքենայի տակ: Ծնկած տեղից ելավ շատ դժվար: Հագին մզոտակած տաբատ էր, իրար լավ չէին հանդիպել չոր ծունկն ու չոր սառույցը: Այդքան մեքենայից հետո նարինջը չէր տրորվել: Ծուխ ու գոլորշով հռնդացող ծանրաքարշի առջևից ես ոտքով փախցրի նարինջը, տվեցի նրան: Իսկ կաթի շիշը ջարդվել էր: Մի մխիթարություն էլ այն է, որ մենք ծեր չենք, կաթը մեզ համար արժեք չունի, որ տաքսիների կանաչ լույսերը նվիրվում են արագությամբ ու փափկությամբ, որ մետրոյի մուտքի մոտ նրբերշիկե թարմ միջուկով տաք կարկանդակներ են վաճառում այդ ծմռան մեջ: Կարելի է ասել, որ մենք հիմա քաղցած ենք, բացի այդ՝ կարկանդակը, մի տեսակ, ժողովրդական, նախնական բան

է, երբ կարկանդակ ես ուտում՝ մի հասարակ ժողովրդական թեթևություն է իջնում վրադ, կարկանդակն ինքնամատուցվում է մի պարզամիտ սրտաբացությամբ: Մենք մտանք փոստատուն, որպեսզի, հեռագիրն ուղարկելուց հետո, կարկանդակն ուտենք պարապ մարդու անհոգությամբ:

– Հեռագիրն ո՞ւմ ես ուղարկում:

Պատասխանելուց առաջ ես նայեցի նրա աչքերին:– Կնոջս,– ես ցանկացա նրա աչքերում խանդ կամ տխրություն տեսնել, ես շատ ուզեցի, որ նա այստեղ ինձ սիրահարված լինի, Հասմիկն այնտեղ, Երևանում, սպասելիս լինի ինձ... Ես վերցրի թուղթը, հանեցի մատիտ-գրիչը և մտածեցի հեռագիրը. լավ եմ, հարյուր ռուբլի փող ուղարկիր, համբուրում եմ:

– Վաքսերգը քեզ ի՞նչ պատվիրեց, չհանձնարարե՞ց իմ հեռագրերը կազմել:

– Տուր գրեմ:

Ես թելադրեցի.– Հասմիկ Մնացականյանին, ես շատ լավ եմ...

Նա ծամոն էր ծամում: Ծամոն ծամելով նա հարցրեց՝ Հասմի՞կ, և սպասեց: Եվ նրա բերանը շատ գեղեցիկ էր: Ես բռնեցի նրա ձեռքը և նրա ձեռքով գրեցի. Հ ա ս մ ի կ: Ես թելադրեցի.– Մնացականյանին: Ես շատ լավ եմ: Ուղարկիր հարյուր ռուբլի:– Եվ երբ բռնել էի նրա ձեռքը, այդ պահին, և հաջորդ պահին, ինձ թվում էր թե նա հանձնվում է, և դա տհաճորեն դուրեկան էր:

– «Հասմիկ Մնացականյանին: Ես շատ լավ եմ: Ուղարկիր հարյուր ռուբլի: Համբուրում եմ: Արմեն»: Եղա՞վ:

Հեռագիրը տոգեղ թվաց:

– Ունե՞ս ավելացնելու բան:– Ծա՞տ չի չոր:– «Հասմիկ Մնացականյանին: Ես շատ լավ եմ, ուղարկիր հարյուր ռուբլի, համբուրում եմ, Արմեն»: Հեռագիրն ինչ էր լինելու, հեռագիր է, էլի: Մնացածը նամակում կասես:– Իհարկե: Բայց, դե, մի բան էլ ավելացնենք: Տուր գրեմ: Դու ինքդ ավելացրու:– Ի՞նչ:– «Պատմվածքը ստացվում է, տասնհինգ օրից կուղարկեն կկարդաս, համբուրիր երեխաներին»:

– Էդ ի՞նչ պատմվածք է:– Ծամոն ծամելով նա նայեց ինձ:

Մենք հանձնեցինք հեռագիրը.

*Հասմիկ Մնացականյանին: Պատմվածքը շատ լավ է ստացվում, մի երկու շաբաթից կուղարկեն կկարդաս, ես շատ լավ եմ, հարյուր ռուբլի փող ուղարկիր, համբուրում եմ,*

*համբուրիոր երեխաներին, Արմենակ Մնացականյան:*

Մենք վճարեցինք հեռագրի համար, բարձրացրինք օձիքներս և դուրս եկանք փոստատնից:

– Էդ ի՞նչ պատմվածք է:

Մի երկու խոսքով ես պատմեցի, և նա ծամոն ծամելով նայում էր ինձ: Եվ նրա պոչուկավոր աչքերը գեղեցիկ էին, նրա հայացքը լի էր ուշադրությամբ: Ես նրան թևանցուկ արեցի:

– Պատահած դեպք է, քեզ գուցե թե դուր գա: Ծերունու կինը մեռել էր, մտքով ու մարմնով լիովին առողջ ծերունին գերեզմանոցում, ժողովրդի մեջ, կնոջը խոսք տվեց, իսկական հավատացյալի խոսք տվեց պառավին, թե ինքը նրան մենակ չի թողնի այդ ցուրտ ու մենակ աշխարհում, ինքը մի քանի օրից կգա նրա մոտ, թող նա մի քանի օր համբերող ու ներող լինի: Եվ ծերունին հաց չկերավ, պատասխանեց թե «եզը որ եզ է, եզան ընկերոջը երբ մի բան է պատահում, եզը բառաչում է, դեսուդեն է նայում, տխրում է, մզզացնում է...»:

Բառաչել և մզզալ բառերի ռուսերենը ես չգտա, ինքը չհուշեց ինձ, և ստիպված՝ ես ցույց տվեցի բառաչել ու մզզալ: Նրա հայացքը լցվեց ինչ-որ խաղացկուն ջերմությամբ, ծամելուց անաղմուկ շարժվող նրա շրթունքները ինչ-որ գրգռիչ մի բան ունեին իրենց մեջ...

– «Բա մենք մարդ եմք, չէ, մենք բա մի եզան չափ էլ չկա՞նք»: Ծերունին հյուժվեց, հանգիստ պառկեց ու մեռավ: Պառկեց ու մեռավ... Գեղեցիկ այգի ունի, պտտվում է խնձորենիների, արևածաղիկների, մեղվանոցի մեջ և հաց չի ուտում, իբր թե խռովել է տնեցիներից, սուտ խռովել է, որպեսզի չստիպեն հաց ուտել... Չստիպեն հաց ուտել...

Նրա թևի տակ հաճելիորեն ջերմանում էր իմ ձեռքը, մեր գլուխները շատ մոտիկ էին և, նրա մազերը երբեմն քսվում էին իմ ծնոտին, նրա հայացքում սիրո և՛ իսկական, և՛ միաժամանակ կարծես թե ծաղրական ջերմություն կար:– Հասմիկ Մնացականյանն ո՞վ է,– ասաց նա:

– Դե, կինս... Լավ աղջիկ է... երեխաներիս մայրը... Էնքան էլ զարգացած չի, բայց լավ մայր է, կարծում էր ժակլին Քենեդին չի ամուսնանա, կարծում էր սզաշորը հագին միշտ էղպես կմնա: Ծերունու պատմությունը վայ թե հիմարություն է, իր՞, Եվա...

Տրորված ձյունը դոփոփելով, մենք սկսեցինք ուտել նրբերչիկե միջուկով տաք կարկանդակներ: Կոնյակից, թառափից ու ռեստորանի շքեղությունից հետո մենք այդ կարկանդակներն ուտում էինք ներողամտորեն, մի տեսակ՝ ներելով այդ կարկանդակներին:

– Դու ֆուտբոլ խաղացե՞լ ես:

– Մի քիչ: Ինչո՞ւ ես հարցնում:

– Հիշեցի, որ նարինջը մեքենայի առջևից ոտքով փախցրիր: Ինչ էի ասում. քո նկարիչը, նկարչուհին և ամուսինը լավ մարդիկ են, կարելի է նրանց սիրել,– շրթունքների անկյունը սրբեց նա,– բայց խնդիրը. գտիր խնդիրը և առաջադիր խնդիրը այդ մարդկանցով ու երևանյան աշու- նով:

Իմ շունը կտրվեց շատ ուտելուց: Սիրտս կանգ առավ: Ես նրան չպատասխանեցի, գլուխս պտտվում էր:

– Ժամանակակից արվեստագետի գործը դժվարացել է,– ասաց նա,– եթե նկարիչ-նկարչուհի-ամուսին-աշուն նյութով Բունինը պատ- մվածք գրեր՝ դա կլիներ լավ պատմվածք: Ժամանակակից արվես- տագետը չի կարող բավարարվել այդքանով: Ժամանակների բովան- դակությունը փոխվում է՝ պետք է փոխվի նաև ժամանակների ար- վեստների բովանդակությունը: Մեզանում ձևերը քննադատում են, բայց իզուր են քննադատում, քանի որ նոր ժամանակների նոր բովան- դակությունն ընդունելով՝ չի կարելի դեմ լինել ձևերին. ձևերն ախր,– աշխուժորեն ասաց նա,– բովանդակության ընդգրկման միջոց են. նոր բովանդակությանը՝ նոր ձև: Ձևը նոր բովանդակության ընդգրկման հայտ է: Ձևն առարկողներն իրենց ներկայացնում են բովանդակության պաշտպաններ, բայց նրանք ըստ էության խոսում են բովանդակության դեմ, քանի որ ձևը բովանդակության ընդգրկման միջոց է: Այս չի նշանակում,– հոգոցով ասաց նա,– որ ձևը նաև ինքնուրույն միավոր չէ. ըստ երևույթին արդեն պետք է բացահայտորեն խոսել ձևի ձևի՝ մասին – ձևը որպես բովանդակություն և այս բովանդակության ձևն արդեն որպես ձև: Կարծես թե ծիծաղելի է, բայց կարելի է խոսել ձևի ձևի ձևի՝ մասին, որովհետև ձևն անկախ բովանդակությունից ունի իր բովան- դակությունը: Կարելի է նկարահանել էկզիստենցիալիզմի բովանդա- կության կինոնկար, բայց այնպիսի ձևերով, որ դա լինի հակակե- զիստենցիալիստական – ուրեմն էկզիստենցի ձևը չգտնվեց, ուրեմն էկ- զիստենցը չկայացավ, ուրեմն ձևը շուռ եկավ ու կերավ բովանդա- կությունը: Շուրիսովը գյուղ նյութով . . . . . սակայն . . . . . բայց չէ՞ որ . . . . . լսիր, դա քեզ է վերաբերում. գյուղն այն խաչմերուկը չէ, որտեղ խճճված լինեին քսաներորդ դարի նորագույն գծերը: Գյուղ նյութով անհնար է քսաներորդ դարի գրականություն անել, քո ծերունին միամտություն է:

– Իմ ծերունին չի ուզում քսաներորդ դար մտնել:

– Ուզում է, – ասաց նա, – կյանքը քաղցր է, ուզում է:

– Իր կյանքն ապրել վերջացրել է, նոր ժամանակներից ոչինչ չի հասկանում, իմ ծերունին ուզում է մեռնել:

– Օ՛յ, – ասաց նա, – բայց ջահել կանանց ետևից թաքուն նայում է:

– Նայում է, բայց չի թքում ու չի անիծում – օրհնում է այդ նոր կանանց էլ, նրանց նոր տերերին էլ, բայց չի գնում նրանց ետևից:

– Օ՛յ-օ՛յ-օ՛յ: Սելինջերինն էլ ծերունի է, բայց երիտասարդի գլխին խփել ու խլել է կնոջը:

– Իմ ծերունին գիտի, որ այդպիսի բաներ կան, դրա համար էլ թքել է քո քսաներորդ դարի անբարոյական մշուփն:

– Օ՛յ, հեռվից է թքում՝ չի հասնի, միջնադարից, տասնիններորդ դարից: Սելինջերի պատմվածքը դու չես կարդացել, լսիր, կամ կարդացել ու չես նկատել, այլապես չէիր գրի ինչ-որ ծերունու մասին, որ հաց չի ուտում: Պատմվածքը կոչվում է «Եվ այդ շուրթերը, աչքերը կանաչ»։ Երիտասարդի կինը տարեցի մոտ հյուրանոցում է, երիտասարդն ու տարեցը խոսում են հեռախոսով, ամբողջ պատմվածքը այդ խոսակցությունն է. երիտասարդը տարեցին հարցնում է իր կնոջ տեղը, բայց երիտասարդը գիտի, որ կինը տարեցի մոտ է. հետո՝ տարեցը գիտի, որ երիտասարդը գիտի, որ կինը հյուրանոցում իր մոտ է. հետո՝ երիտասարդը գիտի, որ տարեցը գիտի, որ ինքը գիտի, որ իր կինը տարեցի մոտ է, և այդ պատճառով է տարեցը զայրանում ու այդ կնոջն ասում, թե լավ կլինի, որ նա տեղը հանգիստ վերընկած մնա. կինը կռացել էր տարեցի սիգարը հատակից վերցնելու: Սա ահա քսաներորդ դար է՝ նուրբ, խորամանկ ու միաժամանակ կոպտորեն բաց: Հեռախոսելը կարծես թե զուտ արտաքին կեղև է, բայց դրա հետ ինչպիսի վիթխարի բովանդակություն է կապվում. նախ՝ պատմվածքի դիալոգային ձևը և այդ ձևի ինքնուրույն բովանդակությունը, ապա՝ այդ նոր բովանդակության ձևը, և ստացվում է ձևի մեջ ձև, ուրեմն՝ ձևի ձև: Կարելի է գտնել նաև ձևի ձևի ձևի՝ ձև...

Տաքսի մեքենա էր գալիս:

– Կորչի ձևի ձևի ձևի ձևը:

– Այո, գնանք սուրճ խմենք:

– Չեր տունը որտե՞ղ է:

– Տանը սուրճ չենք սարքում: Ինձ թվում է լավ կանես, եթե հանգիստ թողնես քո այդ նկարիչներին ու պապին, չնայած որ նկարիչների մասին պատմության մեջ կարծես թե լավ մի բան կա:

- Ես գնում եմ հանրակացարան:
- Չե՞ս գալու Բերգմանի:
- Ոչ մի դեպքում: Քո տունը որտե՞ղ է:
- Ինձ տար կինոյի տուն, դու հետո կշարունակես:

Ես դեռ կարողացա անել ու ասել մի քանի բան, բայց ես արեցի ու ասացի ինձ վրա բռնանալով: Ես ձեռքս դրեցի նրա ծնկին, սեղմեցի նրա ծունկը: Կապրոնե գուլպայի անկենդանությունը տհաճ էր, բայց ձեռքս ետ չքաշեցի, ավելի ուժեղ սեղմեցի նրա ծունկը:– Լսիր,– ասացի ես,– մի վերջին պատմություն:– Նա լսել սկսեց ամենաքաղաքավար ուշադրությամբ և ամենաքաղաքավար թերահավատությամբ: Նա իմ ձեռքը ետ չհրեց:– Ուրեմն՝ քննիչ և քննվող: Քննիչ և քննվող: Քննիչը կին է, համազգեստ է հագել, նայում է սառը հանգստությամբ, մեջը կին չկա: Գեղեցկուհի է և կին չէ: Քննվողը տղամարդ է, մինչև հարցաքննության վերջը այդ քննիչի մեջ նա կին է արթնացնելու:

Վարորդն ուսի վրայով ժպտաց ինձ, իսկ նա ձեռքս ետ դրեց և ասաց.

– Սովորական գռեհկաբանություն է, խորք չունի: Քեզ թվում է էկզիստենցիալիզմի հետ առնչություն ունի, բայց սովորական գռեհկաբանություն է:

– Ամենահին: Ամենահին էլ գռեհկաբանություն չի, հուզիչ պատմություն է ցամաքող մայրության և արթնացող մայրության մասին, նույնիսկ շատ հուզիչ:

– Իջնեիր, հանրակացարանում ի՞նչ ես անելու:

– Քննելու ե՛մ:

– Օ՛ր, ալարկոտ,– քնքշանքով նայեց նա:

– Մի՛ նեղացիր: Ուզո՞ւմ ես գնանք հանրակացարան. թրքական սուրճ կխմենք ու կամաց-կամաց կխոսենք ձևի ձևի մասին:

– Օ՛ր, հիմար,– ծիծաղեց նա, բայց միայն բերանով. աչքերը ծիծաղից կնճռոտվում են, իսկ կինոյում նկարահանվելու հույսը նա դեռ չի կորցրել:– Մի խոսքով, Վաքսբերգի հետ ես էլ չեմ ընդունում քո սցենարը, բայց բոլորովին այլ պատճառով, ուրիշ պատճառով չեմ ընդունում:

– Դա ինձ այնքան էլ չի տխրեցնում: Ցտեսություն:

– Երեսդ տուր համբուրեմ և մի տխրիր: Ցտեսություն:

Մի քիչ, այնուամենայնիվ, ես նայեցի նրա ետևից, և նրա մուշտակը, նրա ոտքերը, նրա քայլվածքը սրտամոտ էին ինձ: Նա և ամուսինը, անկասկած, լավ չեն ապրում. ասպիրանտի թոշակ և երիտասարդ

պաշտոնյայի աշխատավարձ. բնակարանները, երևի, ընդհանուր միջանցքով շենքի մեջ է, մի սենյակ է, ընդամենը. միջանցքում եփվում են հարևանների ճաշերը: Կարգին հագնվում է, երևի, ճիգով: Մուշտակին եթե մի բան պատահի՝ կհազնի աշնան թեթև վերարկուն: Երբ կանայք մի շորից ունենում են միայն մեկ հատ՝ դա արդեն սրտաճմլիկ է:

– Լավ կին էր,– ասաց վարորդը:

– Եթե վրան փող էիր ծախսել՝ իզուր բաց թողեցիր,– ասաց վարորդը և ապա հառաչեց.– այո՛, կյանքը: Քննիչի էդ պատմությունը,– հազալուց հետո հարցրեց վարորդը,– որ դու պատմեցիր, իսկակա՞ն եղելություն է թե, էնպես, դուք ինքներդ:

– Իսկական եղելություն է:

– Դուք ինքներդ վրացի՞ եք:

– Համարյա թե:

– Իսկ, ներեցեք, էդ քննվող տղամարդը վրացի ու քննող կինը ռո՞ւս են եղել:

– Ինչո՞ւ, երկուսն էլ նույն ազգության են:

– Ձեր կանայք, հապա ասում են, խիստ են, քացի են տալիս, մարդու մոտ չեն թողնում:

– Մոտ չեն թողնում, բայց թե որտեղից են մեր երեխաները...

– Հիմա էդ պատմածդ կինո՞ ես դարձնելու:

– Տեսնենք, չգիտեմ:

– Եթե չես դարձրել՝ մի դարձրու, բանի պետք չի:

– Ինչո՞ւ:

– Մեզն օրինակելի բան չկա, չեն թողնի: Ես քեզ մի դեպք պատմեմ...

## XI

Վերելակը չկար: Ես սեղմեցի կոճակը և սպասեցի: Ես ալարում եմ ուտքով բարձրանալ, «օ՛յ, ալարկոտ»: Փափուկ խզզոցով վերելակն իջնում էր, ես սպասում էի, և ինձ շատ մոտիկ թե իմ ներսում ջերմանում էր թաքուն մի կրակ: Երբ աղջկաս հետ տապկնոցի ենք խաղում և նա իր շա՛տ գաղտնի թաքստոցից՝ մոր ոտքի ետևից բաց բերանով նայում է ինձ ու չի շնչում: Վերելակն իջնում էր, դռնապան կինը թերթ էր կարդում, պատի մեծ ժամացույցը... Նամակների սեղանը: Հարյուր նամակի միջից ինքնիրեն գատվեց Հասմիկի ձեռագիրը: «Մեր շունիկը, աստվա՛ծ, շատ լավ շունիկ է, ախար դու չգիտես ինչքան լավ շունիկ է մեր շունիկը»: Նամակները կբացեմ իմ սենյակում, դուռը ներսից կողպելուց հետո: Սարքին խզզոցով վերելակը դեռ իջնում էր, սակայն նամակների

սեղանն ինձ համար դեռ թաքուն մի բան էր պահում: Ես ինձ ասացի թե այդ զգացողության պատճառը Հասմիկի նամակն է և շուտով կջքանա սեղանի այդ հոսանուտը: Ռուբիկը երկու շաբաթով Եգիպտոս է գնացել, Հրայրը նամակ չի գրում, կինոստուդիայի մեքենագիր հիշեցումներն առ այն թե սցենարի հանձնումը ձգձգում են՝ հոսանուտ չունեն: Միրբաբան, Մակյարսկի, Յունգվալդ, Ջոն Օքուբա, Գուրամիշվիլի, Էլմանովիչ, Իվանով, Իվանով, Ռասուլով, Մնացականյան, Վասյուկով, Սաակյանց, Գերման, Սակա Սերաֆիմ, Սակա... տասնհինգ օր է Սական Քիշինյով իր լեդիի գրկում է, իսկ լեդիի նամակները դեռ գալիս են... Բոնդարենկո, Մակարով, «Մեր որդի Վիկտոր Մակարովին. քեզ ցանկանում ենք, քո հարազատ մոր հետ միասին...», Ալյոշա Ալեքսեև, Ստրակապիտով, Բելոկուրով, Բեզրուչկո Տոլյա, Բեզրուչկո Անատոլի: Մնացականյան Ա. Ս.: Ես դու ես: Ս՝ այսինքն Սիմոն: Գնում է գայթուն քայլերով. հոգնած է, մեռնում է, բայց կքնի գործից հետո. իսկ գործին վերջ չկա և գործ անելուց՝ էդ ո՞վ է մեռել որ, ոչ ոք էլ չի մեռել: Միշտ՝ սափրվել է մի շաբաթ առաջ. կարճ ժպտում է, և դու քրտնելով հասկանում ես, որ այս մի խոստումդ էլ միայն խոսք է: Մնացականյան Ա. Ս.: Դու քեզ դժվար ճանաչեցիր, որովհետև դու ծածկված էիր փոստային աշխատողի ձեռագրի տակ: Փոստային աշխատողի ձեռագիրը տեղեկացնում է «տասը ռուբլի գնահատված ծանրոց»: Ես դուրս եկա ու վազեցի փոստատուն:

գորող Մասկվա U-345 ուլիցա  
Դոբրոյուբովա 9/11 կոմնատա 167  
Արմենակ Մնացականյանու Սիմոն.

Արմեն. ՍՍՌ գորող Կիրովական  
սելո Ցմակուտ Սիմոն Մնացակա.

Քիմիական մատիտը լեզվի վրա թացացրել, մտածել, նորից է թացացրել և գրել է: Մատիտի գծերը դեռ լեզվին են: Ես բացեցի արկղի անկյունը, բույրը խփեց դեմքիս, ես փակեցի ճեղքը: Գրել է, թևատակել և գայթուն քայլերով ճանապարհ ընկել Հովիտ, փոստ, որովհետև փոստատարը միթևանի տղա է, էդ բեռը ո՞նց տանի, հարկավոր է, համ էլ, հիվանդանոցից տեղեկանք վերցնել առ այն մասին, որ հոկտեմբեր ամսի հնգից մինչև ամսի քսանյոթը մեջքի ցավով պառկած ենք եղել Հովիտ գյուղի հիվանդանոցում:



– Օո՛ւ, անանաս,– վերելակի մեջ պսպղաց Ջոն Օքուբան:

Եվայի հագուստով, Եվայի մազերով, Եվայից մի քիչ բարձր հասակով աղջիկը վերելակի մեջ կանգնած էր թիկունքը մեզ արած: Նեգրի ձեռքը նրա ուսին էր: Աղջիկն անտարբեր նայեց ինձ: Կարելի էր հնարել, թե նա նեգրից լիովին գոհ է և ինձանից երբեք գոհ չէր լինի: Նեգրի կիսամարզական հագուստը նախանձելի էր: Կարելի էր հնարել, թե սեկե դարչնագույն բաճկոնն աղջկան նեգրն է նվիրել:

– Դա, անանաս,– ասացի ես:

– Ջա՛պահ: Արոմատ: Հարո՛շի,– ծիծաղեց նեգրը:

– Խո՞չեչ:

– Հոչո՛ւ:

– Օ՞չեն խոչեչ:

– Հոչո՛ւ:

– Ա յա նե դա՛մ:

– Տի օչեն լուբեզնի,– ծիծաղեց նեգրը:

Խոտհնձի հեկտարն արժեր տասնչորս ռուբլի քսան կոպեկ փող: Գիշերը եթե ցող չէր դնում՝ կտրում էինք օրական երեք հազար երեք հարյուր մետր գետին, եթե ցող էր դնում՝ կտրում էինք չորս հազար մետր: Օրահացի գինը հանած՝ մնում էր երկու ռուբլի յոթանասուն կոպեկ: Օրահացը պակասեցրած՝ ստացվում էր երեք ռուբլի հիսուն կոպեկ: Մի երկու անգամ միս եղավ, միսը լավ էր, մսաջուրը չտեսնված էր, բայց գործատերերը միսը քաղաքի գներով էին գնահատել: Ամենալավը չուտելով հնձելը կլիներ, բայց ո՞րն էր դրա լավությունը: Քեզանից միս ուզող չկա,– ասացինք գործատերերի մթերապետին.– հա՛ց, պանիր: Այդ դեպքում լինում էր երեք ռուբլի հիսուն կոպեկ, այսինքն հարյուր հինգ ռուբլի մաքուր փող: Խելոք մի բան մտածեցինք. հնձել գիշերը, ցողի հետ: Քնել ցերեկը: Այդպես խոտը հեշտ էր կտրվում, գիշերվա անժամ քնատ հավերժության մեջ մենք հնձում էինք, մի տեսակ, Շամփուր-Կշեռք, Կաթնծիր, Հարդագող: Հեքիաթի մեջ էր հնչում, մի տեսակ, մեր ծիծաղը, հեքիաթի մեջ էր բուրում մեր հացը, քրտնում ու ցամաքում էր կարծես ուրիշը: Գիշերվա մեջ ձայները խուլ էին, և իմ փոքր հորեղբայր Հովիկը կանգ էր առնում իմ մոտ, սպասում ու բարկանում.– Վուեյ... գերանդիդ սրիր... դե՛սը տուր,– և ինքն էր սրում: Ամա, ամա, ամա,– իմ թիկունքում ծիծաղում ու պահանջում էր մունջ Մեխակը. այսինքն թե՛ մենք էլ մարդ ենք, մենք էլ քո հնձվորն ենք, մեր գերանդին էլ լավ չի կտրում,– և հիմա էլ նրա գերանդվի պողպատն էր

խզգուն հորեղբորս ասիերի ու կոշտ հեսանի նեղվածքում: Խեղճ անասուն, կարեկցում էր հորեղբայրս: Բուռուռուռու-ուռու, այդ թավ գիշերվա ու խոնավ խոտի մեջ խոտհարքի գլխին իսկական ցլականչ էր տալիս անտաշ Սպանդարը: Աստծու կրակ, խոտհարքի ներքևում ետ էի դառնում ես, և իմ դանդաղ վերելքի հետ օրորվում էին վիթխարի լուսինը, աստղերի կապերը, կաթնալույսի մեջ զարմանալիորեն անկշիռ նրանց շարքավոր ճոճքը: Բացվող ու ծանրացող լույսի հետ մեր սերը դառնում էր խոտ՝ գործատերերի տավարի համար, տասնչորս ռուբլի քսան կոպեկ փող, կաշվե հաց ու ջիլ պանիր: «Վուեյ,- լույսի հետ ամեն անգամ զարմանում էր իմ փոքր հորեղբայր Յովիկը,- դու դեռ Սպանդարն ե՞ս»: Յետո ձին քշած եկավ մեր գյուղի նախագահը. «Խոտը հասել է, վաղը չէ մյուս օրը մեր սարերում լինեք»: Մենք ստացանք մեր հարյուր ռուբլիները, ծալեցինք դրեցինք մեր տակի գրպաններում, շալակեցինք զնդանն ու գերանդիները, կացինը, մզդակած մեր բաճկոնները և սարերի արահետով շարք տված, ելնելով ու իջնելով, գնացինք:

Արմեն. ՍՍՌ գորող Կիրովական  
սելո Ցմակուտ Սիմոն Մնացակա.

Ես պոկեցի արկղի երեսը: Խնձորի բույրը դանդաղ ելավ արկղից, փարվեց իմ դեմքին, բարձրացավ, կախվեց առաստաղից և ապա մանրամասնորեն լցվեց սենյակի բոլոր անկյուններն ու անցքերը: Սենյակը դարձավ գյուղի մեր տունը: Միկոլա Տարանի բաժակը ես վերցրի սեղանի վրայից, թաքցնելու տեղ փնտրեցի, ցանկացա շարտել լուսամուտից և դրեցի ջեռուցման մարտկոցի ետևը: Ես տախտակի եզրերից մեկիկ-մեկիկ հանեցի հորս խփած մեխերը, և հորս տաշած տախտակը, հասցեով, սեղանի վրա հենեցի պատին: Յետո ես չգիտեի խնձորները հանե՞մ արկղից թե այդպես թողնեմ արկղի մեջ: Այնտեղ, մեր արևոտ քիվի բնում, օգոստոսի մեջ խլվլում են ծիծառիկները և բույր է առնում խնձորենին: Խնձորենին բույրով զատվում է համակ կանաչից: Բույրը լցվում է տերևների արանքը, խնձորենին դառնում է բույրի ծառ: Բույրը կախկախվում է ճյուղերից, իջնում է, շոյում սամիթի ածուկ, խճճվում լոբուտի մեջ: Շունը մի աչքը բացում է և երեք անգամ հոտոտում՝ հոտ, հոտ, հոտ, և փակում է աչքն ու միրհի մեջ հաճույքով մոռացնում թե, իբր, էս ինչ լավ է, ես քնած եմ խնձորենու ճոճում: Էն ցանկապատն է, էն՝ լոբուտը, էն՝ զույգ կաղնիները, էն՝ լորի ծառը, էն՝ կարտոլի ծաղիկները. նրանք բոլորն ապրում են խնձորենու բուրուտի մեջ: Մեկ էլ, շան մի բերան հաչից թե մի ծվեն՝ քամուց՝ բույրն այգուց

դուրս է նետվում – դեպի շեկ ճանապարհը: Ծիծառիկները սուս են կե-  
նում: Ներքևի շեկ ճանապարհին կանգ է առնում սարի հովիվը, ու  
գամփռը: Սարի հովիվը աչքը կկոցում է և այդ արևի միջով ուզում է  
ասել դեպի մեր տուն թե... իսկ գամփռը հոտոտում է արևը, և սարի  
հովիվը կանչում է դեպի մեր տուն՝ Սիմոնոն... Սիմոն, եղ ծառիդ ասա  
փեշերն իրեն հավաքի, թե չէ գիշեր կա, մրգի կարոտ ոչխարած կա,  
գողություն կա՛սա: «Սուտ ես խոսում», ասում է հայրս, այսինքն թե՛  
սուտ ես ասում, բուրմունքը չի հասնում քո շեկ ճանապարհ, հիշում ես  
որ լավ խնձոր ունեմ՝ կանգնում ես ու հնարում թե բուրմունքի համար  
ես կանգնել:– Իմ ա՛րևը,– երդվում է հովիվը,– ուզում ես արի կանգնիր  
իմ կանգնած տեղը ու հո՛տ քաշիր:– Տո անբա՛ն...– ծիծաղում է հայրս և  
այդ խոսքը կիսատ է թողնում, որովհետև հովիվը հեռու է և չարժե  
այդքան երկար խոսքը գոռալով ասել:– Արի, համեցեք, արի՛,– կանչում  
է հայրս և քրթմնջում.– բռի շան որդի:

Թե՛ այդ խնձորենին իմ տարիքին է: Ես չեմ հիշում: Թե՛ ես երեք տա-  
րեկան էի, երբ հայրս պատվաստ դրեց այդ խնձորենուն: Իրիկունը  
հանդից եկավ, աղջամուղջի մեջ նստեց՝ խնձորենին ոտքերի արան-  
քում, բաճկոնի գրպանից հանեց խոնավ շորի փաթեթը և իրիկվա խուլ  
ձայնով ասաց դեպի տուն. «Արմո՛... սղոցը բեր, արի ծառ շինենք»,– ես  
տարա ձեռնասղոցը, նա ինձ պաչեց ու դրեց ծնկին, մենք երկուսով  
կտրեցինք վայրի ջահել ծառը, նա ինձ ասաց՝ ապրես, և ես շատ հա-  
վատացի, թե ծառը ես եմ կտրել, և խոնավ շորի փաթեթից հանեց  
պատվաստի շիվերը: Եվ բնի ու կեղևի նրբին արանք խրեց պատ-  
վաստի մատները – չորս հատ:

Ասում է՝ խնձորենին պառավում է, արմատն այլևս չի գորում: Ասում  
է՝ որպեսզի խեղճ արմատից էլ օգնություն չուզեն, հայրիկը հին չորս  
ճյուղից երկուսը հատել է: Հայրիկը եկել է հանդից, աղջամուղջի մեջ՝  
կանգնել է ծառի տակ և պառաված ձենով ասել դեպի տուն, ուր,  
բուխարուն, չխկչխկում է թեյամանը.– Արմո՛... սղոցը բեր, արի ծառ  
շինենք...– և ապա աղջամուղջի մեջ ինքն է գնացել հանել հին սղոցը և  
գայթուն քայլերով գնացել կտրել է ճյուղերի կեսը: Եվ ճյուղերը քարշ է  
տվել դեպի ցանկապատ:

Սրճամանն ու սրճի բաժակը ես վերցրի սեղանից, և սեղանին մնա-  
ցին խնձորներն ու ծանրոցի արկղը: Բույրը լցվել էր սենյակի բլրոր  
անկյունները: Ասում են՝ թռչունները թռչում են, որովհետև նրանց թեթև  
ոսկորները ծակոտկեն են, լցվում են թեթև օդով: Լցվում են թեթև օդով,  
և թռչունները հրճվանքով թևին են անում:

Նո՞ւռ:

Նուռ: Չորս հատ նուռ: Մեր գյուղում նուռ չկա: Սիբիր՝ կա, Լենին-գրադ՝ կա, ամեն տեղ՝ կա, Ծմակուտ՝ չկա: Կովկասցի առևտրականը արկղը դնում է թևի տակ, գնում է Մագադան, ասում է. սա նուռ է, հարյուր ռուբլի, աշխարհի են ծերից ձեզ համար էստեղ են հասցրել: Բայց նռան երկրում դեռ ապրում են մի երկու այգեգործ, որ անկապ են տեսնում նուռը և Մագադանը: Ղազախ նռան երկրի թուրքը էլը բերել կանգնեցրել է դռանը: Էլը դռանը կանգնեցրել է ուղիղ, ոչ՝ էսպես, ոչ էլ՝ էսպես, այլ՝ էսպես, ուղիղ դեպի հայի Ծմակուտ: Հետո երկու հատ միամիտ կողով է դրել ավանակի վրա, ավանակին ասել է՝ դե հիմա սպասիր, և ավանակն աչքերը թարթել ու սպասել է: Ղազախի թուրքը միամիտ նռներ է դարսել ուռենու ուռերից հյուսած կողովների մեջ ավանակի վրա. երկու հատ էս կողմ – երկու հատ էս կողմ. չորս հատ էս կողմ – չորս հատ էս կողմ. վեց հատ էս կողմ – վեց հատ էս կողմ: Սպասիր, ասել է ավանակին, հաշիվս մի խառնիր: Ութ հատ էս կողմ – ութ հատ էս կողմ. տասը հատ էս կողմ – տասը հատ էս կողմ: Պառավը թռներին ասել է. պապը հաշիվ է ամում, սուս, պապի հաշիվը մի խառնեք: Տասներկու հատ նուռ էս կողմ – տասներկու հատ նուռ էս կողմ: Հարյուր հատ նուռ էս կողմ – հարյուր հատ նուռ էս կողմ: 100–100: Թոչ, ասել է ավանակին, Ծմակուտի ճամփեն հիշում ե՞ս, ես լավ չեմ հիշում: Եվ աշնան մեղմ արևի մեջ, ուր դդումները դեղնում են գոմերի կտուրներին, շները լսում են արևը և աքաղաղի կատարն ամենակարմիրն է, բայց կարմիր է նաև տաքդեղի շարուկը, Ղազախի թուրքը կանչում է Ծմակուտ գյուղում.– Նուռ բաժանեն, նո՛ւռ... բան չեմ ուզում, կարտոլից-բանից, նո՛ւռ...– Եվ նայում են ու ցանկապատի մոտ չեն տեսնում նրան, որովհետև աշնան հողագույն են ցանկապատը, ավանակը, կողովը, ճանապարհը, թուրքը: Շատ կարմիր մի կետ է այրվում-մարում, եթե աքաղաղի կատարը չէ, ուրեմն նուռն է թուրքի ձեռին:

Բրդե սպիտակ մի զույգ գուլպա:

Այդ կինը չի ուզում հավատալ, թե պետությունը կարող է գործել այնպիսի բան, որը լիներ մայրաքար տաք և քաղաքավար կոկ: Պետությունը գործում է կամ կոպիտ տաք, կամ նուրբ սառը: Որդու խնամքի մեջ կան պռատ տեղեր, որոնք պետության հոգսը չեն: Այդ կինը չի ուզում որդու խնամքը հանձնել ուրիշի: Արմիկ հաքնի ցուրտ ա բուկը ցավի ռուսաստան սառն: Հողի, փայտի, հացի, մասրենու, արաղ քաշելու գործը մատները կոշտացրել են: Մատները ոստակալել են, լավ չեն ծալվում, հյուսելու շյուղերն ընկնում են մատների միջից: Նա հորս

հագցնում է խանութի գուլպա, իսկ ինձ համար հյուսել է ինքը: Եվ՝ որ ոտքիս չափսն այս տասնհինգ տարվա հոգսերի մեջ որևէ տեղ չի կորցրել:

Մի գլուխ պանիր:

Որ ի՞նչ: Ոչխարի պանիր: Բայց՝ որ ի՞նչ: Քաղաք Մոսկվա հասած Անաստաս Միկոյանը, իբր, ավելուկի ճաշը չի մոռացել և նրա համար ազգականները գյուղից ավելուկ են ուղարկում: «Ամոթ կլինի՞, այ մարդ, ոչխարի մի գլուխ պանիր դնենք»: «Ինչո՞ւ է ամոթ լինում»: «Եսի՞մ, Մասկվան, շրջապատի ընկերները...»: «Միկոյանից մեծ մարդ չի, բեր, բեր»:

Քու այդ բազմազան քաղաք Մոսկվայում մի նեղացիր մեր ծանրոցի անշնորհությունից, քանի որ մայրդ այստեղ չի և ինչ որ կա ես եմ իբր թե դասավորել շտապ քանի որ Վալոդդ ավտոյով գնում է Հովիտ և նրա հետ ուղարկելու են փոստ, ես ինքս չկարողանալու պատճառով, քանի որ անասունը զոնում չեմ կարող թողնել առանց հսկողության, իսկ մայրդ գնացել է հորանց մահ մի քիչ հիվանդ է այս մի ամիս է կենտրոնի հիվանդանոցում և մի կարգին լուր չունեն: Եվ չեմ կարող մեր անասունը զոնում թողնել առանց հսկողության, իսկ տնտեսության տավարը Գիքորի հետ մի կերպ յուր են տանում մինչև մայրդ գա: Ես գուլպան մայրդ է եկողի հետ ուղարկել հիվանդանոցից: Խմողների հետ գործ չունես, ամոթ է որ քո այդ հասակիդ կռվի-վեճի մեջ ընկնես: Մեր թոշակը կամ աշխատավարձը դեռ չի եկել, ուզում էի քեզ համար մի քիչ փող ուղարկեմ, փողդ տուր ուտելիքի: Կանչում են, շտապում են, քեզ մրսեցնես ոչ: Սիմոն: Որ փող ուղարկեմ ինձ համար մի հատ ականջավոր գլխարկ ուղարկիր, ականջներս սառչում են: Հաջողություն: Քու դեկավարության հետ լավ կաց: Սիմ.

Նա հիմա գայթելով, ճանապարհը տակնուվրա անելով գալիս է տնտեսության ձմեռանոցներից տուն՝ թևի տակ մի խորոմ խոտ. եթե տեսնեն՝ մի խորոմի համար չեն խոսի, մահ՝ էլ չի կարողանում էս վերջերս շալակ շալակել, իսկ ձին սարերից աշնանը կորավ, ավելի ճիշտ՝ դազախեցիք գողացան Մեսրոպի թռռան միջոցով: Հրայրը խոստացավ լուծել անասնակերի հարցը, Արմենը խոստացավ օգնել, բայց դե շատ անհարմար կլիներ, եթե Հրայրն ու Արմենը զբաղվեին անասնակերի պես անշնորհք բաներով, նրանց անունների համար վատ կլիներ:

– Քնիր, քնիր,– ասացի ես ինձ,– գյուղ գնալիս իր համար մի լավ ժամացույց կառնես, քնիր, ականջակալ գլխարկ էլ կառնես:– Ես փաթաթվեցի ու շուռ եկա դեպի պատը:– Աջբերդ փակի՛ր, շնչի՛ր, հան-

գիստ, գեղեցիկ, փափուկ... ամեն ինչ լավ է, քնիր:

Սակայն գրասեղանը, սպիտակ բաց թուղթը, լիցքավորված ինքնահոս գրիչը կանչում էին, աթոռի սառնությունը քաշում էր:

– Քնիր, հետո կելնես սուրճ կխմես և հնձվորի պես լավ կաշխատես: «Եթե մեղուն լեզու ունի և կարողանում են իրենց բաների մասին իրար իմաց տալ ու հասկանալ... Կապուտլեռ սարի մերկ լամջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում...»: Դե կորիր, հիմար,— ես դեմ նետեցի վերմակը, ցատկեցի անկողնից և նստեցի գրասեղանի մոտ:— Ձևի ձևի ձևի... Կոնյակ 15 ռուբլի + Տավարի սուկի սնկով 5 ռուբլի + Թառափ 3 ռուբլի + Աշորա հաց 1.000 ռուբլի + Քամալ ծխախոտ 3 ռուբլի + Տաքսի 1,50...

Դուռը ծեծեցին: Ներս նայեց Տիմուր Պուլատովի ժպտուն դեմքը:

– Յեմ, աշխատո՞ւմ ես, Յեմ: Ես ինչ լավ հոտեր եմ:

– Աշխատում եմ, Հասանգադե Հաջի Մուրադ Քյոփաք Իթոլի:

– Ամերիկացիների Յեմը շալվարը հագին էր աշխատում,— ներս մտավ նա խնամված, արդուկված, գոհ,— իսկ դու ուրեմն տկլոր ես աշխատում: Պահ, հայերի Յեմը նատյուրմորտ է սարքել. խնձոր ու պանիր, ու հասցե, Ցմակուտ: Դու ինչո՞ւ չես գրականությունը թողնում, զբաղվում նկարչությամբ, Յեմ, հայ գրականությունն ահագին կշահեր, հր՞:

– Ձեռ չտաս, խնդրում եմ:

– Գյուղական առաքյալի սուրբ սրբո՞ցդ է:

– Յեռու կաց, խնդրում եմ:

– Հայ ժողովուրդը պանիր դեռ շինո՞ւմ է, ես կարծում էի միայն գրողներ է շինում հայ ժողովուրդը:

– Մի հատ վերցրու ու ռադ եղիր:

– Չե՞ս գալիս Բերզմանի:

Ես նրան դուրս հրեցի, նրանից օժանելիքի սուր հոտ էր գալիս, դուռը կողպեցի և մտա անկողին:

– Եվա Օգերովան լավ տա՞ք էր,— դուրս գալիս ասել էր նա:

– Դե գնա՛, ես քեզ էլ, քո Օգերովային էլ:— Եվ ինձ հրամայեցի.— Կյանքը լի օրերի և փուչ օրերի շարան է. փուչ օրեր անցընելու իրավունք դու դեռ ունես, քնիր: Բայ-բայ, անասուն, բայ-բայ...

Տղայիս խնորե անատամ ժպիտը բացվեց օրորոցում, աղջիկս թաթերի վրա դուրս գնաց.— Որպեսզի ախպերիկը քնի, դառնա մեծ ախպերիկ, միասին տապկնոցի խաղանք,— արդուկի սեղանին հակված՝ ընտանիքի այդ դաշինքը ժպիտով գուրգուրեց Հասմիկը, խոհանոցի

տաքության մեջ թեյամանը չխկչխկուն էր, և ինձ պարուրեց կաթի մանկահոտը:

Այնուամենայնիվ... այնուամենայնիվ հացն ինչպե՞ս են ստեղծում. հաս-կը հավաքում են հատիկ առ հատիկ. յուրաքանչյուր հասկի մեջ կա քսան հատ ցորեն՝ երկու գրամ. հասկը ծեծում են, քամհարում են, ցորենը չորացնում են արևի տակ. ցորենը ջաղացում աղում են. այլուրը հունցում են. ցաքուտներից թոնրի համար մամխի են բերում հագուստներն ու մարմինները ծվատելով,– դո՛ւ, մինչև հիմա՛, մի լավաշի չափ օգուտ, քո երկրի՛ն, տվե՛լ ես:

## XII

Իբր թե այսօրվա Արմենն էի և խանձարուրի մեջ տղայիս տանում էի պապոնց արևոտ դռներով մեր տուն: Յետո՛ պապոնց դուռն ու պատուհանները մութ էին, տունը լքված էր, և սարսափն ինձ կալավ: Եվ իբր թե փոքր էի, չափարների բանջարկուտը բարձր էր և արահետը՝ նեղ, և իմ դեմն ու գլխավերևը կախված գալիս էր մի ահռելի անասուն: Աչքերս իբր փակում ու մնում էի, և նրա ծանր ոտնաձայնը գալիս իմ մոտ կանգ էր առնում: Եվ նա չէր շնչում, և իմ ու նրա արանքում իմ բարակ կոպերն էին: «Մի արթնացիր,– ասացի ես,– ծաթերեցոնց դաթիրն է, հիմա կանցնի՝ ոտնաձայնը կհեռանա»: Դոփ, դոփ, դոփ... Բայց ոչ թե հեռանում էր, այլ ահագնանալով մոտենում: Չիկագոյի հրդեհից սպանդանոցի տավարը փախս էր ընկել ու փողոցը հեղեղած գալիս էր: Դա կինոնկարից էր, բայց ես իբր այդտեղ էի և սեղմվում էի պատին և բետոնն ինձ տեղ չէր տալիս, իսկ խուճապահար նախիրը գալիս էր: Յետո՛ իբր ինձ սպանել ու փախչում էին, ու նախիր չէր – ցրիվ եկած փախչող ժողովուրդ էր, փողոցի պղտոր աղջամուղջում ինձ խփել սպանել էր ու հեռանում էր:

Արթնացա այդ կանաչ սենյակում, հանրակացարանում, Մոսկվայում: Դաթիրը՝ ջորի՞ն որտեղից հիշեցիր: Նախիրը դեռ դղրդում էր: Ես կարծում էի հիմա կհորանջեմ և կինոնկարների այդ քառատրոփը կանցնի մարելու իմ հիշողության փափուկ ծալքերում, բայց հանկարծ հասկացա, որ մարդ են սպանել ու փախչում են: Ես նայեցի լուսամուտին՝ այնտեղ խոյանում էր հեռուստատեսային աշտարակը: Ես նետվեցի դեպի լուսամուտը:

Մարդ էին սպանել և ցրվում էին, բայց դա փախուստ չէր, արյան հոտը նրանց չէր խելագարեցրել – դա խելացիորեն կազմակերպված սառնասիրտ նահանջ էր: Կռացած գալիս ու գազոնի վրայով ցատկում

էին և փողքները թափ տալիս, մտնում էին շքամուտքերն ու ետ նայում, շքամուտքերից օձիքներն ուղղելով ելնում ու հանգիստ քայլում էին, ապա ուսների վրայով ետ նայում ու վազում, նստարանների ետևից դուրս էին գալիս ու ցատկում-անցնում գազոնը, հանգիստ կանգնած՝ անմասնակից կողմնակի էին թվում, բայց մեկ էլ ետ նայելով փախչում էին,– իրենց հասկանալի մի նշանով ամեն թույլ կարող էին նորից հավաքվել ու եռալ, բայց միլիցիայի ձեռքը մարդ չէին տալու: Ինչպես կրկեսային շրջանի հեռավոր հատակներին՝ լապտերի դեղին լույսի մեջ դատարկ վերարկուի նման մեկն ընկած էր:

Դուռը հրեցին ու ծեծեցին: Հրելով՝ նորից ծեծեցին:

– Բացիր,– ասացին,– ես եմ:

Նա ներս մտավ շան պես կատաղած, անցնելիս ասաց «քնած էիր» և գնաց դեպի լուսամուտը:

– Տեսա՞ր ոնց էին եռում:

– Կարծեցի շենք են մտել ու դուռն իրենք են ջարդում:

Լապտերի հեռավոր դեղին շրջանում դատարկ վերարկուն շարժվեց:

– Էդ ինչո՞ւ էին բոլորը սև հագուստով:

– Երևի որոշել են, որ իրենց հագուստը սև է լինելու:

– Իրենց՝ ո՞ւմ:

– Չգիտեմ,– ասաց նա:

Դոբրոլյուբովի լայն փողոցն ամայի էր: Վերարկուն շարժվեց, ծալվեց ու չորեքթաթվեց: Չէին սպանել: Ուրեմն պատանիներ էին և սրտի տեղը դեռ լավ չգիտեին:– Այդքան եռանդ ու այդքան փոքր կապեղե:– Չորեքթաթվածի ճիզի հետ՝ ես դավայ-դավայ արեցի:– Դավայ, դավայ, դավայ,– այսինքն թե բան չի եղել, կարողացիր, կանգնիր, տղա: Նա կանգնեց, ճոճվեց ու ընկավ:– Բանը փուստ է:

Վերարկուի պես այդպես ընկած էր, հետո շարժվեց:

– Արդյունքը իսկապես փոքր է, բայց բանը կապեղեն չի, լսիր: Անգլիացի լակոտները դպրոցական նստարանից պոկվել ու ցույցի են դուրս եկել՝ թե մեր առաջնորդը Հեսն է, Հեսին մեզ տվեք: Քառատելու համար չեն ուզում – գլուխների վրա պատգարակին պահած տանելու ու հայլ են գռռալու, ու չեն թքելու, ու թարս՝ իշի վրա չեն կապելու: Մեր թուքունուրը բամբակներով մաքրելու են, տանելու են գլուխների վրա: Իսկ նա բանտում ժպտում է, ինքը ճիշտ էր, Հիտլերը ճիշտ էր – մարդկության էգ մարմինը որձի կարիք է զգում:

Միլիցիան եկավ: Դոբրոլյուբովի լայն փողոցն ամայի էր, մթերային



խանութի դեմ հարբեցողների եռյակը քայքայվում էր, բայց այդպես էլ չէր մասնատվում, հեռացող երրորդը դարձյալ մոտենում էր երկուսին, երկի լավ չէր համոզել, գնում էր համոզելու:

– Ո՞ւր կորավ, ինչո՞ւ թաքնվեց:

– Ինքը նրանցից էր, իրեն իրենք էին ծեծել: Լսիր, տարել երկաթուղու գծին կապել են՝ որ գնացքը վրայով անցնի: Մեքենավարն արգելակել է, կարողացել է գնացքը պահի: Մեքենավարին խփել ու փախել է, իրեն ազատողին: Գծի պողպատին ահա տղայի գլուխ է կապած ու էր է: Բայց էդ չի: Մեծ խուճբ է, անհայտ է ինչ է ուզում, բայց ուզում է: Սա պիտի սրա ձեռքով սպանվի, թե ինչու՝ իրենք էլ չգիտեն, բայց չսպանելու համար կապել են երկաթգծի պողպատին: Արանքում «Մայն կամպֆ» է լավել, թարգմանիչ ունեն, ութերորդ դասարանցի է, կարդում ու թարգմանում է, լսում են: Ասում են դայլշե: Չի գտնվել, չեն գտել, գիրքն արանքից կորել է, վախեցել են գտնել, չի հաստատվել, չեն հաստատել, անունը լսել ու չեն լսել: Այդպես ավելի հարմար է – խուլի-գաններից մի երկուսին մի երկու տարով փակել են: Փակել ու նրանց մասին շշուկով են խոսում, հարգանքով են խոսում – մեքենագրուհին հանկարծ նրանց լրբերի՞ց չլինի, դատախազության ցրիչը հանկարծ նրանց խմբի՞ց չլինի: Իսկ քո Անտոնիոնին...

– Իսկ մեր Անտոնիոնին...– Նա գնաց նստեց գրասեղանի ետևը:– Գնացել Չինաստանի մասին կինո է նկարում, լսիր: Քո Անտոնիոնին նստել է Մաոյի եղեգնի ծայրին ու ժպտում է, իրեն դուր է գալիս, մարդկությանը հրավիրում է նստելու չինական եղեգնի վրա: Պատմության սեմին Մոնիկայի տակ չի, ես գտել եմ՝ Մաոյի եղեգն է պատմության սեմին, համեցեք:

– Տեսնենք, Էլդար, տեսնենք ինչ լուրեր կհանի Չինաստանից:

– Ցուպի մեջ մետաքսի բոժոժ է հանելու կաթոլիկ առաքյալը:

Գրասեղանի ետևը վերընկած՝ նա գրիչը բացել ու թղթերը ճանկռում էր: Ես հազա տաքատս և տնային փափուկ կոշիկներս: Նա անցողակի ասաց.

– Էն լրբին բերեցիր էստեղ:

– Ի՞նչ լիրբ:

– Եվա է ինչ աղբ է: Տիկին Եվրոպայի համար մետաքս է հանելու Չինաստանից:

– Ինչո՞ւ է աղբ, կարգին կին է իր համար:

– Բերել ես:

– Չէ, Էլդար, չեմ բերել:

– Ապրես,– ասաց նա: Թղթերից մեկի վրա նա կենտրոնացավ, նայեց շեկ ունքերը հավաքած և ծիծաղից առաջ հարցրեց մի տեսակ նենգորեն.

– Դու էս ի՞նչ ես արել, լսիր:

– Ի՞նչը:

Նա ծիծաղեց ու նստած տեղից վեր նետվեց միանգամից: Հետո քրքիջը փոխվեց մանրիկ ծիծաղի, և նա թուղթը ուշադրությամբ դիտում էր:

Կոնյակ 15 ռուբլի + Սնկով սուկի 5 ռուբլի + Թառափ 3 ռուբլի + Աշորա հաց 1.000 ռուբլի + Քամալ 3 ռուբլի + Տաքսի 1,50 ռուբլի + Նրբերշիկով կարկանդակ 4 ռուբլի + Գիշատիչ հեռագիր 3 ռուբլի + Մանանեխ 0,0001 ռուբլի + Սպիտակ հաց 0,15 ռուբլի + Չտեսնված սպիտակ աղ 100 ռուբլի = 000 000

– Էդտեղ հայերեն է, ինչպե՞ս հասկացար:

Նա դեռ ծիծաղում էր:– Կոնյակի գնից,– ասաց նա:– Սև հացի գնից:– Նա փնտրեց ու գտավ.– Լոբու գնից: Տաքսու գնից: Քո էդ ամերիկյան ծխախոտի գնից:– Թուղթը ձեռքին նա հռհռոցով դուրս գնաց.– Զրո զրո զրո զրո զրո՛ոոո կոպեկ...

– Զևի ձևի ձևի ձևի,– երկար միջանցքով ես գնացի լվացվելու: Գիշերվա ժամի երկուսը անց էր երեսուն րոպե: Ես թարմ ու երիտասարդ եմ: Երևանում հիմա չորսի կեսն է: Տղաս հիմա արթնացավ սուտ լացով, «աստված, էս ինչ լավ շունիկ է իմ շունիկը», ճնկոտաց ու մեծացավ անցըրած հինգժամյա քնի չափով և կուրծք ուզեց նոր հինգ ժամի համար, քանի որ էն հին վաղուցվա կաթը թափվել չորացել պը՛ր-ծել էր, «աստված, էս ինչ հերոս տղա է՛»:

Վրացական սածիլիի հոտ եկավ, նրա հոտը, որ Էլդարի մայրը երբեմն, հենց որ իրենց Քութախից նույն օրը Թիֆլիս ու Թիֆլիսից Մոսկվա եկող է լինում, ուղարկում է՝ ուղեկցելով երևի այդ բանբերին մինչև ինքնաթիռի սանդուղքները և վերջում հազար անգամ խնդրելով ու պատվիրելով ամանն ուղիղ բռնել: Բերող վրացին այդ ճաշը մի անգամ ինձ մոտ թողեց, Էլդարն ու ես մի անգամ խոհանոցում միասին կանգնեցինք այդ ճաշը տաքացնելու, մյուս անգամներն Էլդարն ինձ արդեն պատրաստ սեղանի մոտ է տարել և ասել կատակային ինչ-որ թախիծով ու ատելության հեռավոր ինչ-որ երանգով՝ «Սիրելի հայ, ես ու դու հիմա ճաշելու եմք», բայց միշտ, մինչև ճաշի նստելն ու մինչև խոհանոցում միասին կանգնելը, ինձ թվացել է դուռը նա ներսից փա-

կուն ու Քութախի իրենց տան վրացերենով խոստանում, զրուցում, լացում ու ծիծաղում է կապոցի մոտ: Եվ այդ վրացերենը չի հասկանա ոչ մի վրացի, որովհետև դա զուտ 1905 թ. ապստամբության փողոցի 42-րդ տան իրենց ընտանիքի լեզուն է: Ոչ հեռավորությունն է մի տարածություն, ոչ սահմաններն են փակ, ոչ ժամանակներն են դժվար... Բայց թե ինչու է խեղդուկը բռնում մեր կոկորդը՝ աստված գիտի: Պինչս հորթի պես կնճռոտելով՝ ես հոտոտեցի,– և խոհանոցի դռան մեջ թևերը խաչած կինը, շալն ուսերին, ժպտում ու կապույտ աչքերով նայում էր: Նա դասընթացների հին շրջանավարտներից էր, ժամանակին այս հանրակացարանում ապրել էր և իրենց անցյալի օրինակով ամեն ինչ գիտեր իմ մասին: Իր ընկերների ճաշը նա տաքացնում էր արդեն քույրաբար, արդեն մայրաբար:

Իվան Վաքսբերգի առաջնեկները՝ արդեն տարիքոտ, արդեն չափավոր, արդեն հանգիստ՝ բաց դռան դեմ միջանցքում կանգնած սպասում էին իրենց Հային, ներսում, բացված սեղանի մոտ աթոռին նստած, մի կին էր ծխում: Վաքսբերգը եկող շաբաթ մեզ հանդիպեցնելու է նրանց՝ հներին – ինչ հաջողություններ ու ինչ անհաջողություններ են ունեցել նրանք, այդ հաջողություններից ինչն են նրանք համարում դասընթացներում սովորելու արդյունք և ինչը՝ զուտ իրենց շնորհքի, հրապարակից այդ ձախողումների որ մասը դուրս կմղվեր՝ եթե Վաքսբերգը շրջահայաց լիներ և դասընթացների կրթության համալիրը ձգտեր կլոր կատարելության: Անուշադիր ինձ նայելով, նրանք իրենց մեջ չգիտեն ինչի մասին ասացին նետ, չեստնը, բայց նրանց սեղանն իրոք արդարորեն ձեռ-տված չէր, մաքուր սպիտակ սփռոցին օղու շիշը փակ, հավն ու կարմիր երեք-չորս լուլիկը կլոր և ափսեներն ու բաժակները մաքուր էին,– նրանք՝ Անդրեյ Բիտովը, Ռեզո Գաբրիաձեն, Ռուստամ Իբրահիմբեկովը և սենյակի կինը՝ Տանյա Պիտկևիչը, սպասում էին իրենց Հային: Ուրիշ բառ նրանց խմբից ես չլսեցի, միայն՝ նրանք այդպես խաղաղ կանգնած էին, բայց ինձ թվում էր, թե արդեն գիտեն, որ նրանք շփոթված են ու խղճում են միմյանց, իրար ասել են, արդեն գիտեն ու խղճում են Վաքսբերգի ծերությունը, և՛ որ ամուսինը երեխային իրենց Տանյայից խլել է, և՛ որ խեղճ Վոլոդյա Մականինի մեջքը ավտովթարից ջարդվել է, և՛ որ Դավիթ Մարկիշը քոչել է Իսրայել, իսկ օդն այնտեղ անապատային ու չոր է և նա թոքից խեղճ էր, և՛ որ Անատոլի Էռեռա-Սոբկոյին կինոստուդիայի սցենարական բաժնից հեռացրել են, քանի որ նա բարձրագույն կրթության վկայական, ճիշտ է, ունեցել էր, բայց միջնակարգ կրթություն չէր ունեցել, այլ փողոցի ճարպիկ տղա էր եղել, և խեղճը

հիմա, երեք երեխայի տեր, նորից էր բարձրանում գիշերային դպրոցի աստիճաններով դեպի տասներորդ դասարան:

Իմոնք թափով,– ես ո՞ւր մտավ,– միջանցքը դորդացնելով եկան, խմբվեցին լվացարանի դռան մեջ ու հռռացին: Իմ հաշվետվությունը նրանց ձեռքին էր, և նրանք զբաղվելու բան էին գտել:– Մարդը մենակ է, շան որդիներ, թողեք գոնե զուգարանում մենակ լինի:– Ես լի ափերով ջուր շարտեցի նրանց երեսին, և ծիծաղի միջից նրանք դարձյալ հռռացին: Նրանք իմ ընկերներն են, ես նրանց սիրում եմ. նրանց ներկայությամբ՝ ինձ համար հյուսվում է ապահովության տաքուկ մի մթնոլորտ. հաճելի է նրանց գոյությունն զգալ Երևանից Մոլդավիա, Թիֆլիս, Լեհինգրադ: Նրանք ծիծաղում ու սպասում էին իմ սրբվելուն: Նրանց հետ մի աղջիկ կար փափուկ այտերով, նրանցից ոչ մեկի կինը չէր, դարչնաթուխ էր, խոշորաչ և արտևանումքը ներկած պոչավոր աչքերի ձևով: Տղաներից մեկի ձեռքը չգիտեմ ում ուսի վրայով այդ աղջկա կրծքին էր: Վիկտոր Իգնատևի ձեռքը: Իմ դուրս գալու հետ խումբն ինձանից առաջ շտապ-շտապ գնաց միջանցքով. տղաների թիկունքներն էին, աղջկա մերկ ծնկածալերը, նրանց ետևից՝ ես, և մեր այդ գնալը շատ էր նման քաղաքային շների թափառախմբի: Նախկին շրջանավարտները անուշադիր, բայց մահ կարծես ժպտալով մայում էին մեր ետևից: Մենք մեզ դուր էինք գալիս և կարծում էինք նրանց էլ դուր ենք գալիս:

Նրանք ինձանից առաջ մտան իմ սենյակը, և ես էլ մտա:– Ինչ լավ բուրմունք է,– ասաց աղջիկը և նստեց իմ անկողնին: Վիկտոր Իգնատևը զրոների իմ շարքին ավելացրեց մի տող իր շարքը:

– Տարօրինակ թվաբանություն է,– ծիծաղեց նա.– գումարվում են գերազանց Ամտոնիոնին, չեխական լավագույն գարեջուրը, ռուսական հացը և միսը, և ստացվում է զրո:– Նա զգվանքով քսվեց ինձ և ասաց շշուռոջով.– Եվ՝ Եվա Օզերովան:

– Ոչ,– ասացի ես:

– Հասկանալի է:

– Ի՞նչն է հասկանալի:

– Էդ ի՞նչ է,– հետաքրքրվեց Մաքսուդը:– Ի՞նչ է,– հարցրեց ինձ ունքերով:

– Ոչինչ, էնպես հարցնում է:

Դրվեց Էլդար Գուրամիշվիլու ծուռուծուռ զրոների ջղային շարքը:

– Ես Ղազախի՞ նուռ է:

– Արմենը Ղազախստանից ինչպե՞ս էր նուռ ստանալու,– հետա-

քրքրվեց Վիկտոր Մակարովը,— հայերն արդեն նվաճեցի՞ն Ղազախստանը,— բայց միտքը նուռ վերցնելն էր:

– Այո, խեղճ էլդարի օրն իրոք վատ դասավորվեց,— իմ անկողնի վրայից տխուր ասաց անծանոթ կինը: Էլդարը նայեց նրան ու գունատվեց, հիմա անհամություն էր լինելու:

– Ղազախը անդրկովկասյան հովիտ է,— ասաց Մաքսուդը և գրիչը վերցնելով իմ ականջին փսփսաց.— Կաղի պատճառով Յունգվալդին ու աղջկան ծեծեց, երկարասրունքին:

– Ի՞նչ կաղ:

– Ես դնում եմ իմ զրոները,— ժպտաց նա,— որովհետև իմ աղջիկը կաղ էր: Նաղյա, ընկերուհուդ բան չասես, նույնիսկ ընդհակառակը, քանի որ կաղության շնորհիվ անվերապահ ու լրիվ կապիտուլացիայի եկավ, և ես իրոք գոհ եմ: Իմ աղջիկը կաղ էր, ես դնում եմ իմ զրոները և չեմ հասկանում, թե Արմեն Մնացականովն ինչու է Եվա Օգերովային զրո նշանակում: Եվ իմ զրոներն էլ դնում եմ համուն միայն ընկերասիրության, որովհետև չկա զրո օր: Ես իմ օրից գոհ եմ:

– Արմենն Օգերովային զրո է նշանակում, որովհետև, երևի, չի բերել հանրակացարան: Ճի՞շտ է, Արմեն:— Վիկտոր Մակարովը, այո, համաձայն էր, որ օրը եղել է զրո. նա վերցրեց գրիչը և մի տուփ ծխախոտ խնդրեց. դրեց զրոների իր շարքը, հավանեց խնձորների կույտը,— Ես այդպես էլ լավ չհասկացա, թե Ղազախստանն ինչպե՞ս է Անդրկովկասում: Կարելի՞ է մեկ հատ նուռ վերցնել, շնորհակալություն,— բարի գիշեր մաղթեց, հորանջեց և գնաց:

– Բեր, Արմեն, խնդրեմ, գրիչն ու թուղթը,— անկողնի վրայից ասաց դարչնաթուխ կինը:

– Դուք դեռ ծանոթ չեք, ծանոթացեք Նաղյայի հետ:

– Նա գլուխն իր Եվայից բարձրացնո՞ւմ է՝ որ ուրիշ կին տեսնի,— ասաց այդ Նաղյան: Նրա խոնավ սառը ափն ինձ դուր չեկավ, նրա թուխ փափկությունը վանող էր և որ ոտքերն անտարբերորեն շատ էին բաց... Բայց ես նրան դուր եկա, և դա նույնպես տհաճ էր:— Իսկ ինչո՞ւ Արմենին չէիք բերել,— ասաց նա:

– Արմենը Երևանում հավատարիմ է կնոջը, Մոսկվայում Եվային:

Դարչնաթուխ մաշկով անծանոթ կինը խոր հոգոց քաշեց: Նա դրել էր զրոների իր շարքը, երկրորդ շարքը, երրորդը թողել էր կիսատ: Նա լուցկի խնդրեց, մի քիչ թարթիչամերկ արտասվեց և ժպտաց.

– Քո տղան ինչպե՞ս է, փորի գազերից ազատվո՞ւմ է:

– Դուք որտեղի՞ց եք լսել:

– Կնոջը նամակի մասին տղաներն ասացին:

– Դե, գազեր՝ գազեր:

– Բաքվի իմ բուրո ընկերները հայեր էին:

– Յայոց թաղո՞ւմ ես ծնվել:

– Գուցե դու ինքդ է՞լ հայ ես:

– Ինչո՞ւ:

– Ես ավելի շատ քեզ էի հայ կարծում, Էլդար:

– Ես ինքս, պարոնայք, վրացական գտարյուն հրեա եմ:

– Վեր կացեք,– ասաց Իգնատևը,– ինձ մոտ երկու գինի կա, Արմեն, գնանք:

– Ոչ մի դեպքում, աշխատելու եմ,– ասացի ես:

– Ուրեմն բերեմ, խնձոր՝ կա, պանիր՝ կա, մուռ՝ կա: Ես գուլպա եմ ուտելու:

– Քեզ գուլպա տվող չկա՝ որ ուտես կամ չուտես: Ես աշխատելու եմ, դուք զնացեք,– ասացի ես:

– Բերեիր, հա, Վիտյա, մեկ էլ չգնայինք,– իմ անկողնի վրայից ասաց դարչնաթուխ այդ կինը:

– Թեթև գինի է, գնանք,– տեղից ելավ Էլդարը,– էսօր քեզ հետ բան չենք խմել, գնանք:

– Իմ աշտարակը բարձրանում ու բարձրանում է,– հեռուստատեսա-յին աշտարակի դեմ պատուհանի մոտ շուռ եկավ Վիկտոր Իգնատևը:– Վինո... գարմանակի բառ է, վինո...

– Գնանք, բայց ես չեմ խմելու:

– Ասա, խնդրեմ, Արմեն, վինո ինչպե՞ս կլինի հայերեն:

– Կարծեմ՝ գինի:

– Այո, գինի: Գի-նի: Գինի:

– Գինի: Գի-նի,– կրկնեց նա և ականջ դրեց,– գեղեցիկ բառ է: Գի-նի: Եվ ձեր տառերն են մի տեսակ հանդիսավոր ու անգործնական: Ձեր տառերով կարելի է գրել «հեծելաբանակները տրորեցին կանաչ արտերը, և արաբացվոց մորեխը լրիվացրեց մնացյալը», ձեր տառերով չի կարելի գրել «միացյալ հրամանատարությունը պահանջում է ութ ժամ-վա ընթացքում անհապաղ կապիտուլյացիա» կամ այսպիսի մի հիմարություն: Չեմ սիրում մեր նպատակասլաց շրիֆտը: Էդ ուր է քշում, ուր է տանում, ուր կորան Դոստոևսկու պոչերը: Շրիֆտ:

Շարժվեցին դեպի նրա սենյակ: Իմ անկողնին՝ անժանոթ կինը ոտքն անջատեց ոտքից և թաթը մեկնեց ինձ: Եվ կրծքերով, ելնելիս, խփեց կրծքիս: Նրա խոնավ փափուկ թաթն ու լայն ծունկը տհաճորեն դու-

րեկան էին: Օդանցքը բացելու, բաց թողնելու համար ես ետ ընկա և ինձ ստիպելով ասացի՝ թու: Դռան մեջ կանգնած՝ Մաքսուդն սպասում էր ինձ:

– Ո՞վ է, – այդ կնոջ մասին հարցրի ես:

– Քեզ համար բերեցինք: Գիտեինք, որ դու եվային չես բերել՝ քեզ համար բերեցինք: Դու եվային իսկապե՞ս չես բերել:

– Այ քեզ բա՛ն...

– Ինչ է, – ծիծաղեց նա: – Զրաժարվում ես՝ որ սրա՞ն քեզ տանք:

– Այ քեզ բա՛ն: Զենք բերել եմ, լսիր, քե՛զ ինչ, ախր քե՛զ ինչ, ինչ եք խցկվում ու խցկվում:

Նա ծիծաղեց ու ասաց, և դա նրա ներողությունն էր: – Այո, քսաներորդ դարի ջղային հիմնական արատը:

– Զաստանում ու դարի ջղայնությունից է խոսում իշի գլուխը:

– Սպորտը թողնելուց է, մի տարի հետո հարյուր կիլո կլինեմ:

– Կեր ու չաղացիր, այո, էդ է մնալու:

– Զետմահու անմահության հետ մենք գործ չունենք՝ նա՛ղը, – ծիծաղեց նա, – կանխիկ: Նաղդ օլսուն, սողան օլսուն:

– Այո, հետմահու անմահությունդ էլ հիմա կեր, հետո ով գիտի տա՞ն, չտա՞ն, տակով անեն:

– Մեկին կտան, մեկին չեն տա, – ծիծաղեց նա, – փորձը փորձանք չի, մենք էլ էսպես փորձենք:

– Կնքեցի՞ր պայմանագիր, պայմանավորվեցի՞ք:

– Էդքան միանգամից չի լինում, – ասաց նա, – յավաշ-յավաշ:

Մենք վիկտոր Իգնատևի սենյակ էինք մտնում, դռան մոտից նա ինձ մի կողմ տարավ, ետ նայեց ու մի քիչ էլ հեռացրեց և հիացմունքով շշնջաց.

– Բայց կեցցե, գիտե՞ս, բուլղարը: Գեորգի Կարասլավովը, – բացատրեց նա: – Ջուզվում-գարդարվում էր՝ կարծում էի տղամարդ չի, բայց դանակը քաշեց ու՝ դուրս գնա – Էլդարին: Զանգիստ, գիտե՞ս, ցածրաձայն, բառ չծախսելով... բայց սփրթնել էր ու կխփեր:

Ես չհասկացա:

– «Բելոռուսիա», – ասաց նա, – երկուսենյականոց համար է վարձել: Արդուկը, ամեն ինչը, մաքրությունը հավաքարարուհիներն են անում, ճաշերը մատուցողներն են բերում – ինքը միայն ապրելու տերն է: Աղջիկները վրա են տալիս, իսկ ինքը պինդ է, գիտե՞ս, ջոկում է: Ընկերները մի տակառ, տակառիկ, մի տասնհինգ-քսան լիտր գինի էին

ուղարկել, «գնացի՞նք, տղերք»։ Նվագ կա, իսկ համարը երկսենյակ է, էստեղ պարուն ենք, իսկ եթե ուզում ես՝ քաշվում եք մյուս սենյակ։ Ամեն ինչ տեղը տեղին գնում է, ինչպես էստեղ են ասում՝ յուրած ու փափուկ, ոչ մեկը ոչ ոքի չի խանգարում. նույնիսկ, պատկերացնո՞ւմ ես, ընդհակառակը՝ բոլորը բոլորին տրամադրում են։ Մեջքիդ ողերի հետ մատների ծայրով կամաց խաղում են՝ և մագնիսանում ես, գիտե՞ս, մաշկդ ձգվում ու կոշտանում է։ Բայց թե էլ դարին ինչ պատահեց՝ լավ չհասկացա, երևի գինին էր աշխատել, չնայած թունդ չէր թվում, կամաց տաքացնում էր։ Մինչև եկա՝ Տոլիկ Ջուսևը սեղանի տակ նստած էր, նրա մատղաշ երկարասրունքը բազկաթռռի ետևն էր կքել դեմքը ձեռքերով ծածկած, կարծում էր նորից կխփի. պատկերացնո՞ւմ ես։ Իսկ էլ դարը՝ ոչ, որպես տղամարդու Տոլիկին բռնցքել, աղջկան էլ վրացի իշխանի պես միայն ապտակել ու իր համար գինի է լցնում։ Տոլիկի վիճակն է ծիծաղելի. ասում է քեզ կսպանեն, բայց ձեռքին մատղաշի կրծկալն է։ Էլը վրացերեն բաներ է ասում, նայում ծիծաղում ու վրացերեն դարձյալ բաներ է ասում, իսկ գինին շարտել է Տոլիկի երեսին։ Ասում ենք կհանգստանա, բայց՝ ոչ, քացով սեղանի ոտները կոտրում է՝ որ սեղանի վրա ընկնի ու տակին Տոլյային ճգմի։ Պատկերացնո՞ւմ ես իր մասին ինչ կարծիքի է – Տոլիկը հավի ճուտ է, ինքը՝ ամբողջ Վրաստանը, տակին ճխելու է։ Ինչի՞ համար, խեղճ Յունգվալդն ի՞նչ է արել – ձեռի կրծկալը շարտել է էլի երեսին։ Նա էլ կրծկալի վրա փսխուքի պես գոռալով սեղանի ոտները խփում դուրս է գցում՝ որ հիմա տակին խեղդելու է։ Ու՛ վրացերեն, վրացերեն... ռուսերեն մի բառ չի ասում։ Անցած գնացած վրացի գորքերին օգնության է կանչել – վրացերեն, վրացերեն։ Կարասլավը դանակը քաշեց ու՝ դուրս արի էստեղից։ Առանց ավելորդ բառերի՝ դուրս գնա։

– Դո՞ւ ինչ բանի էիր։

– Ես կաղի հետ մյուս սենյակում էի։ Արանքում վարագույր է։ Մինչև եկա՝ կրծկալը ձեռին Յունգը սեղանի տակ նստած էր։ Ես նվագը բարձրացրի։ Լուրը եթե դեսպանություն հասնի՝ գիտե՞ս ինչ կլինի։ Տեղ տանելու բան չի, – ձեռքը թափ տվեց նա, – հենց սկզբից էլ ջղայնանում ու սրան-նրան կծում էր։ Ասացի կաղի պատճառով է, կաղին վերցրի ինձ, իմն իրեն տվեցի, չնայած իրենը հենց կաղն էր լինելու, որովհետև ինքն աղջիկ չէր բերել։ Բայց ի՞նչ ասի Իռկային որ լավ լինի – անկուշտ ես, մադամ, մինչև չծեծեմ՝ քո ախորժակը չի փակվի։ Խեղճ աղջիկը անկյունում սիրտը կոտրած վեր ընկավ, ոչ կերավ, ոչ խմեց։ Գեորգին նվագն անջատեց ու հանգիստ՝ դուրս գնա։



Դարչնաթուխ մաշկով կինը, Վիկտորի սենյակում, հենվել էր լուսամուտի գոգին: Նրա ոտքերի մոտ ծալապատիկ նստել էր Վիկտոր Իգնատևը: Երկու շիշ կարմիր թեթև գինի կար: Էլդարը նստած էր քանդված աթոռի եզրին: Մաքսը կիսանստեց փոքր պահարանին: Բաժակը ձեռքիս՝ ես հենվեցի դռանը: Սա ընկերների մեր խաղաղիկ միասնությունն է: Նա նրան փրկել է մի տգեղ հիվանդությունից: Նա նրա համար մի փափուկ վզնոց է գտել չգիտես որ խանութում: Մի ժամվա մեջ նրանք բոլորն ինձ համար հավաքեցին նարինջ, անանաս, թխվածք, ինքնաթիռի տոմս գտան և ուղարկեցին երեխաներիս տեսնելու: Նրանք երկուսը ֆուտբոլի դաշտում միասին են ծեծ կերել՝ չնայած կողմնակից են տարբեր թիմերի: Գիշերվա ժամի երեքն է: Աշխարհի բնակչությունը 4.000.000.000 է: Չորս միլիարդ: Այդքան կամք ու թուլություն, այդքան հայրենիք ու ցանկություն: Օնասիսը միջերկրածովյան իր արևոտ կղզում ժակլիմին է նվիրել քառասուն կարատնոց ադամանդ: Ի՞նչ է նշանակում կարատ: Գրա՞մ: Խորեն հորեղբայրն ասել է՝ եղ որ ասում եք գրամ, եղ ինչքա՞մն է, կիլոն է՞: Տիկին ժակլիմն ադամանդը կախելու է պորտից, և արեգակի տակ աշխարհում լինելու են, այդպիսով, մի պորտ ու դեղին սովահարների դոփյունը դեպի այդ ադամանդը: Եվ աստծուն փառք, փառք աստծուն, որ դեռ կան գիշեր ու ցերեկ, արև և անձրև, կանաչ և կարմիր, տղամարդ և կին, հայրենիք և կարոտ:

– Խմենք, պարոնայք, և ասենք, որ վաղվա օրը կիրակի է:

Հատ-հատ դրվող քայլերի սուր ձայներ եկան, ես հիշեցի պուշկինյան Կոմանդորին, մոտեցան, դատարկ միջանցքը ղողանջում էր, և վճռականորեն անցան: Դարչնաթուխ կինը իջավ լուսամուտի գոգից, և ծնկներն իրարից հեռու այդ ցատկը տգեղ էր, և շրթունքը կրծելով սպասեց:

– Դժվար թե նա լինի,– ծալապատիկ տեղից վեր՝ կնոջը նայելով ասաց Վիկտորը:– Դու, ախր, իզուր զանգահարեցիր:

Կինը թոթվեց ուսը և ոտքը ոտքին դրեց: Էլդարը գինին կում էր անում, Մաքսն ինձ աչքով արեց: Էլդարը բաժակը պահել էր բերանի մոտ, սուլելու պես մի բան էր անում և զույգ աչքով նայում էր թե չէր նայում բաժակի գինուն: Նա հայացքը կտրեց բաժակից, մի տեսակ չտեսնելով նայեց ինձ, նայեց Մաքսի կողմը, դեպի Վիկտորն ու կնոջ ծնկները: Եվ կանգնեց:

Կտրուկ դրվող քայլերի սուր ձայները միջանցքում կենդանացան,

մոտենալով ուժեղացան:

– Քո տղան ինչպե՞ս է, փոքրի գազերից ազատվո՞ւմ է,– ասաց այդ կինը:

– Ի՞նչ:

Նա անուշադիր ասաց՝ այո:

– Դե, գազեր՝ գազեր: «Իմ լույս տղայի մասին այս շփոթված լիրբը»... Խփելով մեջքիս ու ծոծրակիս՝ մեկն ինձ շարտեց դեպի պատը, գլուխս պատին դիպավ ու մթնեց. մոտիկ մի տեղ, կարծես ուրիշի մարմնում, ցուլաց ու հանգավ ինչ-որ սուր ցավ. շատ կեղտոտ հատակը մոտեցավ ու կորավ. հիմա դեմքս կտրորեն, փոխս-ընկած նախիրը հիմա ինձ կտրորի. ես պինդ սեղմեցի և հասկացա, որ բռնած եմ, չեմ ընկնելու. մի սուր ծանրություն բախվեց ճակատիս, զեհավոր երկաթ, ուղեղս հիմա կթափվի շատ կեղտոտ հատակին. երեխաներ ունենալ և ոտքի տակ տրորվել վերջին լակոտի պես: Բաժակը ջարդվել էր: Մեկը խփեց կնոջ դեմքին և ասաց՝ կանգնիր: Դանակով չէր խփել: Այդ բաժկոնը ես մի տեղ տեսել էի: Նա ոտքով հրեց Վիկտորին և ասաց՝ վեր կաց: Բաժակը ջարդվել էր, ճակատիս դիպչողը դուռն էր եղել: Նա դարձյալ ապտակեց կնոջը և կինը դարձյալ ասաց՝ պետք չի, Սաշա, պետք չի, սիրելիս: Նա ապտակ քաշեց, և կինը դեմքը չէր ծածկում:

– Էյ, էյ, էյ, էյ, չի կարելի,– Էլդարը մտավ նրանց արանքն ու նրան ետ հրեց: Եվայի անուսիճը չէր: Եվ բռիս մեջ սեղմածը բաժակի կտորտանքն էր: Գինին թափվել էր, աչքերս գինոտ էին, ծոցս գինի էր լցվել: Կոպիս վրայով գինու կաթիլ սահեց: Մաքսի ակնոցի ոսկեգույն շրջանակը, ժպիտի հետ, պսպղում էր: Նա ինձ աչքով արեց, և չգիտես ինչի համար էր այդ աչքով անելը: Սիրահարվել Եվա Օզերովային և ծեծվել դպրոցական լակոտի պես: Բաժակը ձեռքս կտրտել էր: Մաքսն ինձ բռնեց:

– Ինչո՞ւ ես ծիծաղում, թող: Թող, բան չեմ անի, թող:

Ես դանդաղ մոտեցա նրանց, և որ Մաքսը բռնելու պատրաստ հետևում էր ինձ՝ իմ մեջ հյուսվեց հանկարծ և ուժեղ խփելու ցանկություն, և ես երբեք այդպես ծամածռված ու այդքան տգեղ չէի եղել: Իմ ձեռքի թափը բեկվեց օդում, ջարդված բաժակը կպավ ինչ-որ բանի, փշրվեց ինչ-որ տեղ, իմ ոտքի ծայրը հագիվ քսվեց բաժկոնավորի քամակին: Նա շուռ եկավ.

– Դո՞ւ էդ ով ես:

– Ես ես եմ, դո՞ւ ով ես: Մաքս, թող:

– Ես քեզ չեմ ճանաչում, դու ո՞վ ես:

– Մաքսուդ, թող, խնդրում եմ, ես սրան ասեմ թե ով եմ:

– Սաշա, սիրելիս, պետք չի, Սաշա:

– Դու տականք ես, ահա թե դու ով ես,– նա ինձ լավ ապտակեց, ոտքով ես գուցե թե կարողացա խփել նրան, Մաքսը մտավ մեր արանքը, հետո ջարդված աթոռն իմ ձեռքին էր, իմ զայրույթը պոռթկում էր և ահա-ահա աթոռն իջեցնելու էի խառը երկուսի վրա: Աթոռն իմ ձեռքից առավ էլդարը: Շշնջաց՝ ախպեր ջան, ախպեր ջան,– հասցրեց համբուրել երեսս թե աչքս և իմ ձեռքից առավ աթոռը: Եվ մի վայրկյանում պարզ դարձավ, որ հիմարությանը հիմարություն էր ավելանում: Նա ինձ նստեցրեց աթոռին և շշնջաց՝ շնորհակալություն:

– Ոչինչ,– ասացի ես,– շատ բարի:

Իմ ձեռքն արյան մեջ կորել էր, պատը թաց էր, բաժակի փշրանքներն անկողնի ծածկոցին էին, դարչնաթուխ մաշկով կինը լուռ արտասվում էր լուսամուտի գոգին հենված, Վիկտոր Իգնատևը սենյակում չէր, ես ետ նայեցի՝ իմ ետևը կանգնած չէր: Մաքսն ուզում էր լուրջ լինել, բայց ժպտում էր, և ես նրանից շատ էի վիրավորված: Համարյա թե ատում էի:

– Էստեղ նստածը Վիկտոր Իգնատևն էր,– ասաց բաճկոնավորը:

Էլդարը գլուխը դանդաղ բարձրացրեց.

– Հետո՞ ինչ:

– Նրան դու թաքցրիր:

Էլդարն սկսեց գինի լցնել:

– Վերջին վախկոտի պես փախավ ձեր ընկերը, ձեր Վիկտոր Իգնատևը:

– Այո՞:– Էլդարը շիշը դրեց սեղանին:– Մնար ի՞նչ աներ:

– Բանաստեղծ: Գնաց քաջության մասին պոեմ գրի ձեր ընկերը:

Մաքսը ցածր պահարանին կիսանստած ժպտում էր, սփրթնած էլդարն ասաց բաճկոնավորին, որ ձեռքերը գրպանած ետուառաջ էր անում.

– Գինի չե՞ս խմի:

– Ո՞ւր գնաց ձեր ընկերը:

– Հիմա տեղը կասեմ՝ գնա մորթիր:

Մաքսը թաշկինակը հանեց, ասաց՝ ձեռքդ կապիր, և ժպտալով ինքը եկավ, բացեց բուռս: Արյան մեջ՝ կտրվածքը չէր երևում: Ինքը մաքրում ու փաթաթում էր ձեռքս, բայց ես նրանից վիրավորված էի, ես նրան չէի նայում:

– Տուն գնանք, Նադյա,– ասաց բաճկոնավորը:

Պաղած հայացքով՝ կինը նայում էր հատակին:

– Քո բանաստեղծը փախել է, տուն գնանք, Նադյա:

Կինն ուսը թոթվեց և չշարժվեց տեղից:

– Մորթելու հարց չկա, տղամարդու պես կխոսեինք դեմ առ դեմ,–  
Էլդարին դարձավ բաճկոնավորը:

– Իսկ գինի չե՞ս խմի:

– Գինու փող ես ունեմ, շնորհակալություն: Տուն գնանք, Նադյա:

Կինը հատակին էր նայում, ինչ-որ բան շնջաց: Նա կանգնեց կնոջ  
դեմ և ասաց.

– Գնանք տուն, Նադենկա: Նադյուշա, տուն գնանք: Նադյա, գնանք  
տուն:

– Սաշա... ես քո տուն չեմ գա:

– Իսկ ինչո՞ւ զանգահարեցիր:

Կինը թոթվեց ուսը:

– Քո բանաստեղծը տղամարդու պես փախել է, տուն գնանք, Նա-  
դյա:

– Պարուն էինք, մի րոպե ուրախ էի՝ զանգահարեցի:

– Քեզ համար ես երեխա՞ եմ:

– Ներողություն եմ խնդրում, էլ չեմ զանգի:

– Քո բանաստեղծներն ուսանողական թոշակներն ստացել էին և  
պարուն էիք և ուրախ էիք և զանգահարեցի՞ր:

– Այո:

– Որ առանց ինձ երջանի՞կ ես:

Կինը հայացքը բարձրացրեց և շփոթ վարանանքով նայեց նրան.  
զանգահարելու վայրկենական իմաստը նա դիտմամբ էր աղավաղում,  
որպեսզի ապտակելու առիթ ունենա:

– Չը: Որ առանց ինձ երջանի՞կ ես:

Կինը անթարթ նայում էր նրան և ասաց.

– Այո՛:

Նա ապտակեց ու բեմական զբոսանքի քայլերով գնաց դեպի դուռը:  
Նա ապտակեց մասնագետ ծեծողի պես միանգամից: Մաքսի դեմքը  
հիմա մի թեթև աղավաղվել էր, էլդարը շատ մոտիկից նայում էր  
բաժակի գինուն և անձայն սուլում էր: Անցնելիս բաճկոնավորը, երևի  
ինձ, ասաց.– Դու է՞լ պոեմներ ես հնարում,– դառնալիս դանդաղեց ինձ  
մոտ և ասաց.– կհնարես, թե օդաչու Լոկտեղ ճակատիս թխկացրել է:–  
Ես՝ դռանն է կպել,– ասացի ես,– դու չես խփել, դու ինձ չես կարող  
խփել, դու ընդամենը կին ծեծող ես,– սակայն նա, ինձ ուշադրություն

չդարձնելով, կանգնել էր կնոջ դեմ և ոտքի վրա խաղում էր:– Հը,–  
ասաց նա կնոջը,– որ երջանի՞կ ես առանց ինձ:

Կինը թեթևակի քամահրեց և ասաց՝ այո: Նա, հանկարծ, ապ-  
տակեց.– Նույնիսկ գիշերնե՞րը,– մատների ծայրը կաշվե բաճկոնից  
ներքև տաքատի գրպանը դրեց և շարունակեց խաղալ մի ոտքի վրա:  
Գրպանում էին մյուս ձեռքի դարձյալ մատները: Կինը անքթիք նայում էր  
նրան: Ես վեր կացա այդտեղից դուրս գալու, հասա դռան մոտ՝ ապ-  
տակը նորից չխկաց: Ես ետ նայեցի՝ նա շուռ էր եկել և զբոսանքի  
քայլերով գալիս էր դեպի դուռը: Հասավ ինձ, կարծես թե բարեկամա-  
բար աչքով արեց, կտրուկ հարվածի շարժումով շոյեց-խփեց արմուն-  
կիս և կեղծ ժպիտով հանձնարարեց.– Դու երիտասարդ լավ բանաս-  
տեղծ ես երևում, գտիր բեր Վիկտոր Իգնատևին: Շնորհակալ կլինեմ:–  
Եվ ես տեսա, որ չեմ կարողանում բարկանալ և չեմ ցանկանում խփել,  
խփելու ցանկություն իմ մեջ չի առաջանում:

– Էսօր չի լինի,– ասացի ես,– գուցե պայմանավորվենք վաղը, մյուս  
օրը:

– Հիմա՛,– քայլելով դեպի կինը, ուսի վրայով հանձնարարեց նա:  
Ես ետ եկա, նստեցի ջարդված աթոռին և ասացի.

– Վիկտոր Իգնատևը ես եմ:

Նա այդ ժամանակ ծնկի էր եկել կնոջ ոտքերի դեմ, ուսի վրայով  
ասաց չափազանց դերասանական զարմանքով. մի՞թե: Եվ, ծնկած,  
աղերսեց կնոջ հասակն ի վեր:– Նաղյա, Նաղյուշա, Նաղենկա, խնդրում  
եմ, գնանք տուն:

Կինը շրթունքները շարժեց՝ չեմ գա:

– Նաղյա, խնդրում եմ:

Կինը գլուխն օրորեց և շրթունքները շարժեց՝ ոչ:

– Օ՛յ,– իբր թե հուսահատվեց նա, գլուխը, թույլ, հակեց կրծքին, մի  
քիչ մնաց այդպես և ապա կանգնեց առանց ճիգի: Գլուխը հակած  
կանգնեց կնոջ դեմ և ապտակեց միանգամից: Ապա՝ մյուս ձեռքով: Կար-  
ծես թե սկսվում էր մարդկայնորեն կատաղի ծեծը: Ես գնացի և կանգ-  
նեցի նրանց մոտ: Մաքսը եկավ կանգնեց մեզ մոտ: Էլդար Գուրա-  
միշվիլին մտել էր ինքն իր մեջ և նայում էր բաժակի գինուն. Էլդարը  
չգիտես մի անգամ մի երկու ամսով բանտ է նստել թե հեռացվել է աշ-  
խատանքից. թիֆլիսյան հին փողոցների պես ծուռումուռ ինչ-որ դեպք  
կա նրա կովկասյան կյանքի մեջ. ոչ այն է հեզմելով, ոչ այն է ուրախ՝ նա  
երբեմն ասում է թե շատ լավ է, որ իր ընկերը ես եմ, մենք ենք, սցենար  
ենք գրում, կաթ ենք խմում, կինոնկար ենք նայում:

Բաճկոնավորը հիմա նորից էր խփելու:– Լսիր,– նրա թևը բռնելով ասացի ես,– քո էս աղբը հավաքիր ու ռադ եղիր էստեղից փողոց:

– Ուրեմն դու Վիկտոր Իգնատևն ես,– ասաց նա ինձ և ապտակեց կնոջը: Ես նրան ետ քաշեցի, և նա ֆուտբոլային գնդակի պես պինդ տղա էր:– Նաոյա, գնանք տուն,– և նորից ապտակեց: Ո՛չ ինձ: Կի՞նը տխուր քնժիծաղով շշմջաց:

– Ինչքան զզվելի ես:

– Ճիշտ է, Նաոյա, Նաոյուշա, ճիշտ է,– նա բարձրացրեց հայացքը, և աչքերում արտասուք կար: Եվ քիթը վերխմեց ու ապտակեց: Ես մտա նրանց արանքը: Նա չտեսնելով նայեց ինձ, նրա աչքերում արտասուք կար, ես ուզեցի նրան խնդրել թե պետք չէ, նա ինձ հրեց, ես մեջքով ընկա այդ կնոջ շատ փափուկ կրծքերին թե փորին: Մաքսն ինձ դուրս էր քաշում նրանց արանքից, ես ինձ թափահարեցի, և այդ պահին նա ապտակեց ծնոտիս: Եվ ոտքով սրունքիս:

Ապա՝ նա քաշվում էր դեպի դուռը, Էլզարը բռնել ու պահում էր նրան, և Մաքսը ժպտում էր: Կի՞նը չկար: Էլզարը դուռը կողպեց, բանալին գրպանը դրեց և նրան ասաց:

– Մի բաժակ գինի խմենք:

– Տուր բանալին, խնդրում եմ:

– Եթե դուռը քաշքշես, Սաշա, ես Արմենին կթողնեմ քեզ ծեծի:

– Բանալին տուր, աղաչում եմ,– մի ձեռքը գրպանում՝ վիզը ծեց նա:

– Վիկտորին գնա՞մ բերեմ, միասին գինի խմեք:

Մաքսը հանկարծ քրքջաց: Նա նայեց նրան, ծիծաղում էր ինձ նախելով:

– Ինչո՞ւ ես ծիծաղում:

– Սաշա,– ծիծաղելով ասաց նա,– գինին Արմենի հետ խմեք:

– Բանալին տվեք, խնդրում եմ:– Նա լաց էր լինում: Մաքսը նրան սեղանի մոտ բերեց, բաժակը տվեց նրա ձեռքը և ասաց:

– Վերջացած պատմությունն է, Սաշա, անտեղի ես հիմարություններ անում: Արմենի հետ մի բաժակ գինի խմեք, ես էլ եմ խմում:– Եվ դարձյալ ժպտում էր:

– Էդ ի՞նձ ես ծաղրում,– ասացի:

– Քեզ վրա, բայց չեմ ծաղրում, ծիծաղում եմ:

– Ինչո՞ւ ես ծիծաղում:

– Երեք անգամ ծեծ կերար:

– Դու իրեն օգնում էիր: Արի քո ձեռքերը բռնեմ՝ քեզ էլ ծեծի:

– Ես իրեն չէի օգնում, ինքնիրեն էր լինում:

– Հիմա էլ ինքնիրեն գինի՞ ես խմեցնում իր հետ:

– Վատ չէր լինի:– Նա բաճկոնավորին ասաց.– Արմենի բաժակին խփիր:

Նա լուռ լաց էր լինում, գլխի շարժումով հարցրեց՝ ի՞նչ:

– Արմենին ծեծել ես, Արմենի հետ մի բաժակ գինի խմիր:

Բաճկոնավորը գլուխը դանդաղ ինձ դարձրեց. կապույտ մանր աչքերը թաց էին. կապույտ մանր աչքերը կկոցեց, փակեց, շրթունքները կիպ սեղմած՝ ցնցեց գլուխն ու շնչաց աչքերը բանալով.

– Ինչ որ է:

– Արմեն, չե՞ս ուզում բաժակդ Սաշայի հետ չխկացնել:

Էլ դարը պայթեց.– Հանգիստ թող Արմենին, լսիր: Թե՞ ուզում ես իրար սպանեն: Ծիծաղում է, ծեծն ինքը չի կերել, իր կինը չի եղել, ուրախ է:

Մաքսը դարձյալ ժպտաց.– Ոչինչ, ոչինչ:

– Արմենը դու ես, հայրենակից,– ասաց բաճկոնավորը,– ես քեզ խփել եմ:

– Ոչինչ,– ասացի ես,– եղել է:

– Դե:

Մենք խմեցինք, մինչև վերջ դատարկեցինք այդ կոպիտ բաժակները: Եվ բաժակները ձեռքներիս սպասեցինք ինչ-որ բանի, ինչ-որ լինելիքի: Ծանոթ-անծանոթ մի համ էր կպել շրթունքիս: Լեզվով՝ չէր մաքրվում, և տհաճ էր:

– Գնան,– ասաց նա,– խնդրում եմ ներեք:

Ես բաժակը վար էի դնում և նկատեցի ձեռքիս փաթաթված թաշկինակը: Բաժակի պոնկին կպածը կարմիր գինի չէր, արյուն չէր, խազխազուտ շրթներկ էր: Նաղյա կոչվածի բաժակն էր, ներկը նրա մուտ շրթունքներից էր կպել բաժակի եզրին: Երբ ինձ հրեցին՝ ես մեջքով ընկա նրա խոշոր կրծքերին թե փորին: Նրա խոնավ փափուկ թաթը տհաճ էր:

Մենք ելանք Վիկտոր Իգնատևի սենյակից: Միջանցքում, մի քանի տեղից, գրամեքենաների ձայն էր գալիս: Լսվում էր, թե ինչպես են, բանաստեղծները, անցնում նոր տողի – թըխկ: Միջանցք ելավ, դուռը ետևից քաշեց, շտկվեց ու եկավ, վերելակի չսպասեց, բարձրահասակ ու առողջ՝ անցավ, մեզ չնայեց, իջավ Ջոն Օքուբայի ծանոթուհին: Չորացած ռեզինի պես՝ նեզրը հիմա անկողնին ընկած է, քայքայված ռեզինի պես՝ չի կարողանում հավաքվել, իսկ ծանոթուհուն ոչինչ էլ չի

եղել, փափուկ թակթակով ու խշշուճով իջնում է աստիճանները: Մենք բոլորս մի պահ խեղճացանք և ամաչեցինք միմյանցից: Ես կծկեցի ուսերս:

– Իմ սևուլիկ,– ասաց Մաքսը,– կմրսես, իմ հարավցի, գնա տուն, մենք հիմա կգանք:

Ուսերը կծկած, մատների ծայրերը տաբատի գրպաններում՝ օդաչուն իր մեջ դարանել ու ինձ զննում էր կապույտ մանրիկ աչքերով: Վերելակի փակ խուցը դանդաղ իջնում էր, ես ոտքից ոտքի փոխվեցի և զգացի մեր տակի դատարկությունը: Օդաչուն ինձ պատահաբար, միայն պատահաբար էր խփել, և հիմա զննում էր հասկանալու թե արժե՞ թյուրիմացության համար գղջալ: Մաքսը նայում էր ինձ և թաքուն ժպտում էր, ես նրա համար փորձարկվող ճագար էի, նայում էր տեսնի ինչ եմ զգում օդաչուի հայացքի տակ և ինչքան եմ դիմանում:

Գիշերվա ժամի չորսն էր: Հերթապահ կնոջից փաստաթուղթը վերցնում էր Ջոն Օքուբային հաղթողը: Նրա սեկե դարչնագույն բաճկոնը... նա փաստաթուղթը դրեց պայուսակի մեջ, ձեռնոցավոր ձեռքերը մտցրեց մեկը մյուսի մորթավոր թևք և եկավ ու սպասեց, որ մենք իր համար բացենք ելքի դուռը: Դա լուռ հրաման էր: Իր ցուրտ անկյունի կիսախավարից հերթապահ կինը մեզ նայում էր կծու ատելությամբ: Մի վայրկյան մենք չէինք բացում դուռը, հետո ձեռքներս մեկնեցինք բոլորս միասին: Նա դուրս անցավ: Ես ձեռքս կտրուկ ետ քաշեցի, խոր ու պինդ մտցրի գրպանս, Եվա Օգերովայի հուշը ծակեց իմ սիրտը: Եվ դավաճանությունն էր՝ բավարարված ինչ-որ կնոջ առջև ծառայամտորեն... Մենք դուրս եկանք, սառը մառախուղը միանգամից փաթաթվեց ու կպավ ոտից գլուխ իմ մարմնին, կարծես թե մերկ էի, հագուստը իմ մարմնից կարծես թե պոկվել էր թողնում գաղջ սառնությունը:

– Վիկտոր Իզմատևը տեսնես վերարկուով՝ փախավ թե էնպես:– Նրանք առաջ էին անցել, ես չհասկացա ում ձայնն էր, բայց էլ դարձն ու Մաքսը իրենց ընկերոջ մասին անուն-ազգանունով Վիկտոր Իզմատև չէին ասի: Կուլ-գալով՝ օդաչուն կաշվե կիսասպորտային բաճկոնի օձիքն ականջներին էր քաշում: «Տաքսու վարորդների մոտ լինում է, կարելի է գտնել», լսեցի ես: Դա օղու մասին էր: Ես ետ դարձա, շենք մտնելուց առաջ նայեցի – կծկվելով օդաչուն ուզում էր ականջները թաքցնել օձիքի տակ, բայց բաճկոնը փոքր էր, նրան դպրոցական տղայի էր նմանեցնում:

Հերթապահ կնոջ մի կարճ հայացքից ես հասկացա, թե ինչ է մտածում նա մեր մասին. նա մեր մասին, լրագրային հաղորդումների պես



անաքող ու կոպիտ, մտածում էր, թե պետությունը մեզ իզուր է հաց տալիս և իրեն էլ անտեղի է աշխատավարձ տալիս. այդ պահին այդ կինը հոգու խորքում համոզված էր, թե դպրոցական օրերի ոտանավորները հիմարություն են եղել և դպրոցում իրենց խաբել ու սովորեցրել են այդ ոտանավորները: Նամակների սեղանը դատարկ էր: Հասմիկի նամակն այդպես էլ չկարդացի: Վերելակի դուռը կողպած էր կախովի կոպիտ կողպեքով: Ես, սովորույթով, նայեցի հերթապահ կնոջը, և նա դրան էր սպասում՝ որ կոպտի: Բայց կոպտեց սխալ բառերով.

– Ժամի չորսն է, վերելակն ուզում է հանգստանա:

Ես ոտքով բարձրացա իմ հարկ՝ ինձ հետ տանելով այն բառը, որ նա չէր ասել՝ ձրիակեր: Միջանցքի լռության մեջ եթե կանգնեիր ու ականջ դնեիր՝ բանաստեղծները, մկնիկի պես յուրաքանչյուրն իր բնում, ասես թաքուն, կրծում էին բանաստեղծության չոր հացը:

Կրծում էին մի տող բանաստեղծություն  
Եվ գլանը ճռռալով քարշ տալիս մյուս տող  
Կրծելու մյուս տողը առ այն  
Թե բառերը մեզնից զգացմունքի գույնզգույն տարազ  
Եվ բռնակալ մտքի սաղավարտ չեն ուզում  
Քանի որ ուզում են մերկ ու հերարձակ լինել  
Մինչև անգամ առանց կրծկալի ու գիսակալի  
Եվ ազատվել քառատողի ֆեոդալական վանդակից  
Եվ բոբիկ անցնել սպիտակ թղթի վրայով  
Եվ գնալ այնտեղ ուր իրենց խելքին կփչի  
Իրենց միհար – կամ տռուզ, ճմռթված – կամ ողորկ  
– Կարևոր չէ, բայց անվերապահ սեփական –  
Կոնքերն օրորելով լիբերալ հեղինակի քթի տակ  
Եվ չարաճծիորեն լեզու հանելով խիստ կարճատես հեղինակի  
ակնոցի առաջ:

Իմ սենյակի դուռը փակ էր: Մոտս բանալի չկար: Սենյակն իմ սենյակն էր՝ 167: Բանալին մոտս չէր: Վիկտոր Իզմատևի սենյակում, սեղանին-գրասեղանին-պահարանին-լուսամուտագոգին-անկողնին-աթոռին-հատակին բանալի չկար: Մահճակալի տակը աղբ էր, ես չէի ցանկանա այնտեղ բանալի լիներ: Ես ետ եկա, կանգնեցի իմ 167 դռան մոտ: Իմ գրպաններում բանալի չկար: Ներսը, վերարկուիս գրպանում, Հասմիկի նամակն է, նամակում՝ տղայիս աննկատելի ժպիտը, սուտ լացը, մորը, իբր, քույրիկին, իբր, ճանաչելը, հորը, իբր, կարոտելը, «աստված, շատ լավ շունիկ է մեր շունիկը»: Ես դուռը հրեցի: Փակ էր, փակել էի: Ես դուռը ցնցեցի: 167: Կողպեքի տեղը դուռը կարկատած էր:

Կարկատանի վրա՝ դարձյալ կարկատած էր: Ես ետ քաշվեցի մի քիչ ամաչելով: Վիրավորական էր, որ նախկին բնակիչները ճիշտ այսպես դուրսն էին մնացել, հրել ու կոտրել էին դուռը: Պետք է կռամալ, Վիկտոր Իգնատևի մահճակալի տակ աղբի մեջ գտնել բանալին: Պետք է խնդրել 160, 161, 162, 163, 164, 165, 166, 181 արթուն բանաստեղծների բանալիները և մեկառմեկ փորձել նրանցով, նրանցից մեկն անպայման կկրկնի իմ բանալուն:

Թղթի չորությամբ վրա տկտկալով Չերմեսից հազարապատիկ արագ և սլացող Պեգասին ետ թողնելով ինչպես հովտում արածող ավանակի գնում են մինչև բռնակալ թղթի սահմանն ու հիասթափված ետ գալիս քանգի թղթի սահմանն արգելափակոցի նման ընկել ու կտրել էր նրանց ճանապարհը և խանգարել ցատկելու էյնշտեյնի հարաբերակա – ահա դարձյալ կտրեց – հարաբերականության տեսության գնացքին և ետ ուղարկել հովտի Պեգաս կոչված ավանակի մոտ:

Չետո, ես նստած էի Վիկտոր Իգնատևի սենյակում, նրա գրասեղանի ետևը, ու մի ծոցատետր էի թերթում: Ծոցատետրը ես գրասեղանի դարակից չէի հանել, գետնից էի վերցրել, բայց թերթում էի ինձնից հեռու պահած ու մի ձեռքով, այնպես՝ իմիջիայլոց, և աթոռին նույնպես հիմնավոր չէի նստել: Դա ուրիշի սենյակ և ուրիշի ծոցատետր էր: Իմ ականջներից դեռ չէր անցել, երբեմն մարում, բայց մեկ էլ ամբողջ ուժով բռնկվում էր խուճապահար նախրի դղրդյունը, և այդ պահերին սև բաճկոնավորների փախուստը Դոբրոլյուբովի աղոտ փողոցով մեկ ես տեսնում էի այնպես, ինչպես հասցրել էի տեսնել: Ամեն վայրկյան ես պատրաստ էի ծոցատետրը փակելով վեր թռչել աթոռի եզրից ու կանգնել: Ինչ-որ օձի ու անտառի մասին Ձաբուլոցկու քառյակը ես չկարդացի: Չետո՝ հեռախոսահամարներ էին, հետո՝ օդանավերի թռչելու ժամերը, հետո՝ դարձյալ հեռախոսներ: Այդ համարների ետևում, անվան սկզբնատառերի տակ, ինչ-որ կանայք ու հապճեպ խաբեություններ էին երևում – կարծես մի երրորդի մոտենալուց առաջ հասցնում էին կարգի գալ այգու նստարանի վրա, կարծես շտապում, գրեթե վազում ու շրթներկ էին քսում: Ե. Պ.-ին պետք էր կանչել Մարինա Լվովնայի միջոցով («տյոտյա Մաշա») ասելով նրան, թե Ձինան է հարցնում: Եթե Մարինա Լվովնային կարելի է Մաշա մորաքույր ասել, ուրեմն կարիք չկա մտնելու Ձինայի շորերի մեջ ու խոսել Ձինայի միջից, քանի որ Մարինա Լվովնան զգում է քո գոյությունը և անառակի քո հաճելի գոյությունն իր միջով է անցկացնում դեպի Ե. Պ. – իր բա-

Ժինը նա էլ այդպես է ստանում և այդքանն իրեն բավական է: Երկու էջը եզրերով սոսնձած էին իրար, երրորդ կողմը սոսնձած չէր, այդ փոքրիկ տոպրակում արդեն ժակլին Օմասիսի հեռախոսահամարն էր կամ հենց ինքը ժակլինը – ես իրենց գաղտնիքները թողեցի իրենց, բայց տոպրակի մյուս երեսին իմ հայերենի այբուբենն էր՝ հնարավորին չափ տպագրատեսք, չորս շարքով վերից վար, երկաթագիր և փոքրագիր – Աա Բբ Գգ Դդ Եե Զզ: Ինձ թվաց դա Վաքսբերգի ծոցատետրն է, հայերեն գիրն օր-ծերության սովորում է, որպեսզի տեսնի, թե իր մասին ինչ է ասվում այդ երկաթագիր դռան ետևում: Ես դանակս հանեցի, բացեցի և հիմքից զգուշորեն կտրեցի ծոցատետրի այդ թերթը, հետո, դարձյալ դանակով, սոսնձած եզրերն անջատեցի իրարից: «Կներես,– ասացի ես ծոցատետրի տիրոջը,– իմ դուռը, կներես, ծածկում եմ, քիթը քեզ քաշիր»: Այբուբենի թերթը ես ճնշեցի ու, որպեսզի չթողնեմ այդ սենյակում, դրեցի գրպանս, իսկ ծոցատետրի տիրոջն ասացի. «Ահա թե ինչով ես զբաղված»: Ծոցատետրի գաղտնարանում, ինչպես եթե վարագույրը հանկարծ ետ քաշես, կանգնել էր մերկ Ե. Պ.-ն: Ես թքեցի նկարին ու ծոցատետրին և հայիոյելով դուրս եկա Վիկտոր Իգնատևի սենյակից:

#### XIV

Ես ոտքով խփեցի իմ 167 դռանը և ուսով նույնպես բախվեցի:– Նու կտո՞ւ տամ,– ասացին ներսից: Բանալու անցքից ոչինչ չէր երևում. լուռ մութ էր. տաքուկ մթության միջից, բանալու անցքով, խաղաղ դուրս էր սահում շատ մտերմիկ մի բույր. հորս ուղարկած խնձորները. դազախի նուռը, մորս կոշտ մատները:– Կտո՞ւ տուտ... ասկրոյտե դվեր...– Ոտքով՝ ես նորից խփեցի:

– Ո՞վ է.– հարցրեց ջահել կնոջ մի վախեցած ձայն. կարծես գիշերանոցով էր և ջղային մատներով վրա էր բերում շապիկի օձիքները: Մի-ջանցքի լուռ հեռվում մի ուրու երերաց: Երկար՝ գալիս էր ու չէր գալիս: Ուսով դռանը հենված, ուրուհին նայելով, ներսի կնոջը ես ասացի. «Շորերդ հավաքիր ու լուսամուտից թռիր լակոտիդ պահելու... հիմա ներս մտա՝ մորթելու եմ»: Ուրուն գալիս էր: Կալխան Մուխտարովն էր, իր սենյակը դարձյալ կորցրել էր: Սցենարը նա ընդհատել է, Վաքսբերգին ասում է վերջացրել եմ, բայց մեզ ասում է Տոլստոյը երբեք սցենար չէր գրի,– Կոմսը չէր գրի,– ասում է: Եկավ, տխուր նայեց, ճանաչեց թե չճանաչեց, բայց ինչ տեսավ էն ասավ. «Ծխում ես»: Ես գլխով արեցի: «Աշխատել ես՝ ծխում ես», կապակցեց նա: Ես գլխով արեցի: «Լավ ես

անում», գովեց նա: Դարձյալ ասելիք փնտրելով և ականա ունկնդրելով գրամեքենաների չխկխկոցը, նա ծամածռվեց: «Ծեծում ե՛մ,— խեղդվեց նա,— ծեծում եմ... Գլխիս մեջ եմ ծեծում», ծալած մատներով նա ծեծեց իր գլուխը և ձեռքը թափ տալով այդ ամբողջի՝ իր խնածության, իմ ծխելու, դատարկ միջանցքի ու ամբողջ աշխարհի վրա, գնաց: Դուռը ես ուսով հրեցի, կնոջ խուլ մի ձայն հենց ականջիս մոտ դռան ետևն ասաց «ո՞վ է», բայց Կալխանը ետ էր գալիս: Եկավ, անցնում էր՝ կանգնեց, հիշեց թե չհիշեց, բայց կենդանի մարդ էի, ծամածռվեց ու բողբոջեց:

– Լրբեր ենք բերում, դավաճանո՞ւմ ենք,— խեղդվեց նա,— գողանում ենք, խմում ենք, շնանում ենք, սենյակում ուրիշի կնիկ ենք պահում – պատիժ չկա, խեղճ թեղին է մեռնում... մեռնում է:

– Խեղճ թեղին է մեռնում,— ասացի ես:

– Ո՛չ,— ուսիցս կախվեց նա,— դու կհասկանաս, թեղին խռովել մեռնում է: Վերանում է, էլ չի՛ լինելու,— ուսս թափահարեց նա:

Նրա ձեռքը ես հեռացրի ու կրկնեցի.

– էլ չի լինելու:

– Չհասկացար,— ձեռքը ծամածռանքով շարտեց նա,— չհասկացար:

– Չհասկացա,— ասացի ես:

– Թեղին մեռնում է, ամբողջ աշխարհում թեղին մեռնում է, Ամերիկայում էլ, Իտալիայում էլ, Ռուսաստանում էլ... փոքր՝ ո...– նա բարձրացավ տիեզերք ու այնտեղից ցույց տվեց երկիրը,— փոքրը... մրջյուններն իրարից ձու են գողանում, լրբանում են, խմում են, խժռելով գնում են – խռովել թեղին է չորանում: Հապա ձեր մեջ մարդ չկա՞, ի՞նչ եք արել, ինչո՞ւ է չորանում,— տիեզերքից հարցրեց նա:

– Չգիտեմ,— ասացի ես:– Երևի չի ուզում իրենից թուղթ սարքեն:

Ձեռքը բարձրացնելով՝ նա ծամածռվեց, նայեց ու ասելիքը չգտավ, ձեռքը թափ տվեց ու գնաց: Նա տասը հատոր Տոլստոյ է թարգմանել: Նա մոռացել է իր առաջին գիրքը: Բարի դազախները վերցրել ու նրան Մոսկվա են քշել, որպեսզի նա հիշի իրեն: Ասում է չեմ թարգմանել, ասում է նույնը նորից եմ թարգմանելու, առանց վարձի, ինձ համար, թարգմանելու, տպելու, գոմեշի կաշվով ու ոսկով կազմելու, բոլոր օրինակները բերելու եմ տուն, բոլոր օրինակները ես եմ կարդալու, «և խիղճ անվանյալ աստծու լույսը», դա ծալելու դնելու եմ դարակին, մյուս օրինակն եմ սկսելու՝ «և խիղճ անվանյալ աստծու լույսը»:

– Բացիր,— ասացի ես:

– Դու ո՞վ ես:

– Ես՝ իմ 167 սենյակի տերը, դուռը բացեք էս թուփիս:– Ես քացով խփեցի այդ 167 դռանը:– Չեմ ուզում ջարդել,– Ես նորից խփեցի,– բացեք:– Բանալին անցք մտավ, պտտվեց, բայց դուռը չէր բացվում: Նորից՝ չէր բացվում:

– Չի բացվում:

– Ի՞նչ թե չի բացվում,– գազազեցի ես,– ոնց փակել եք էնպես էլ բացեք:

Ես բռնակը սեղմեցի և ուսով խփեցի՝ դուռը փախավ, կիսախավարի մեջ ես կպա խոզի ճարպի նման պինդ ու փափուկ ինչ-որ մարմնի, քիթս կնոջ դեմքի քսվեց, և ես անմաքուր անկողնի հոտ առա: Ես վառեցի լույսը – դարչնաթուխ կինն էր, դուռը ներսից կողպում էր: Միայն նա էր:

– Գոնե լույսը վառեիր,– ասացի ես:

– Քիթդ ցավե՞ց:

Ես մատներս ռունգերիս վրայից հեռացրի:

– Ինքն ի՞նչ է անում,– ասաց նա:

– Եսի՞մ ինչ է անում: Ինքը՝ ո՞վ:

– Դե... Սաշան:

– Սաշան ամուսի՞նդ է:

– Էր: Մի ամիս է բաժանվել ենք:

– Ահագին ժամանակ է,– ասացի ես:– Սաշան գնաց:

– Շենքի՞ց գնաց:

– Գնաց,– ասացի ես:

– Դու տեսա՞ր գնալը:

Ես չպատասխանեցի:

– Քիթդ ցավո՞ւմ է:

Ձեռքս ես հեռացրի ռունգերիս վրայից:

– Շա՞տ էր տխուր:

– Ինչի՞դ է պետք,– ասացի ես:

– Խեղճ տղա:

– Ոչինչ,– ասացի ես,– կմեծանա՝ նորից կամուսնանա:

Նա զիստով հենվել էր սեղանին, որի վրա խնձորներն էին, ոտը դրել էր ոտին, մի ձեռքով բռնել էր մյուս արմունկը, լայն ծունկը դրել էր փափուկ ծնկին և հատակին էր նայում ծնոտը մատների մեջ: Եվ շշնջում էր: Շշնջում էր, երևի, «խեղճ տղա»: Երկարաճիտ կոշիկները կիպ գրկել էին տռուզ ոտները:

– Եթե գնաս՝ երևի դեռ փողոցում լինի, Ես ժամին մեքենա դժվար է ճարվում, գնա,– ասացի ես:

Եվ՝ որ հենվել էր սեղանին՝ փեշը դրանից վերև էր քաշվել, ազդրերը բացվել էին, և մի պահ բոլորովին ուրիշ իմաստ առավ նրան տուն քշելու այդ Սաշա կոչվածի մոլուցքը: Ես փակեցի օդանցքը, հենեցի գլուխս ապակուն և մրթմրթացի:

– Հիմա մեքենա չի լինի, հիմա չես կարող գնալ:

Իմ թիկունքում լռություն էր, նա զիստով հենված էր սեղանին, նա շշուշաց և ապա ասաց լսելի:

– Ինչ լավ բուրմունք է: Ես ի՞նչ բուրմունք է:

Գլուխս ապակուն հենած,– Խնձորների,– շշուշացի ես,– հորս ուղարկած խնձորների:

– Խնձոր կեր,– ասացի ես:

– Դու քանի՞ երեխա ունես,– ծնոտը մատների մեջ, սեղանին հենված՝ մտամոլոր հարցրեց նա:

– Երկու,– մեքենաբար ասացի ես,– երկու,– կրկնեցի մեքենաբար:– Մի աղջիկ, մի տղա:

– Երկու,– շշուշաց նա,– գյուղից խնձոր են ուղարկել:– Նա տրտմուն էր ծնոտը մատների մեջ, իսկ ազդրերի միասնական լայնքը ներքևում՝ մի տեսակ իրենը չէր: Նա հոգոց հանեց: Ամոթ էր նրա ազդրերից հետո նրա աչքերին նայել, հասկանալի էր նրա հոգոցը, և ամբողջ ցերեկվա ու ամբողջ գիշերվա այդ ցեխը:– Գյուղում ո՞վ ունես,– լսեցի ես: Նա տրտմուն էր ձեռքերը կրծքերի տակ խաչած. շշուշու կարծես իրենը չէր և կարծես ինքը չէր հարցրել:

– Ով որ ունեն՝ գյուղում է,– ես լուսամուտին դարձա, ծանր կարծրությամբ բարձրանում ու վնգալով բարձրանում էր ցուրտ մշուշի մեջ դեպի համաեվրոպական ռեկորդակիրություն աշտարակը՝ հեռուստատեսային աշտարակը,– հենց գյուղից դուրս են գալիս՝ էլ ինը չեն,– ասացի ես:– Ինչ որ ունեն՝ գյուղում է,– շշուշացի ես:– Իսկ դո՞ւ:

– Մի երկու ամառ դաշտերով վազել է,– շշուշաց նա:

Ես շուռ եկա՝ նա աչքերը պաղած նայում էր:

– Ո՞վ է վազել,– ասացի ես:

– Դե՛ ես,– հոգոց քաշեց նա:– Մի երկու ամառ կանաչ դաշտերում վազվզել է:– Աչքերը պաղած՝ նա նայում էր, կարծես տեսնում էր գյուղի հեռավոր տատիկին, կանաչ մարգերը և հյուսերը կապած աղջնակին:

– Օշինդրի բույրը հիշո՞ւմ ես,– ասացի ես,– որ շոգ է լինում՝ ու դառը դուրեկան բույր է տալիս: Կովը որ ուտում է՝ կաթը դառն է լինում, հը՞, տատիկդ քեզ իսկի չի՞ ծծե՞լ:

Նա խոր հոգոց քաշեց ու անջատվեց սեղանից:– Այո, ես գնամ:–

խնձորների կույտը շարժվեց: Խնձորների կույտը փուլ եկավ ու թափվեց, շաղ անցավ հատակով մեկ: Նա սեղանի մոտ էր, կարող էր գոնե մի երկուսը բռնել, չբռնեց, չանհամզստացավ: Նուռը սեղանի եզրին մի պահ մնաց, ընկավ ու ճաքեց:

– Դու եղ ինչ է,– բայց հաջորդ պահին ես ծնկել էի, կատաղությունս անցել էր,– ոչինչ, հիմա կհավաքենք,– և ծնկասող հավաքում էի խնձորները: Կքած՝ նա հավաքում էր խնձորները, նրա ծնկները լայնացել ու շողում էին, ես հավաքում էի խնձորները: Ծնկասող, ծնկներս ցավելով ես հավաքեցի խնձորները, հասա սեղանի ոտի և նրա մոտ, գիրկս լցվեց խնձորներով:– Հիմա կհավաքենք,– ասաց նա: Նա, կքած, հավաքում էր խնձորները, հայացքը կախ՝ նայում էր հատակի խնձորներին, գրկի խնձորներին: Իմ ձեռքի խնձորները ես սեղանին լցրի, կքած՝ նա հավաքում էր խնձորները, գլխի շարժումով նա մազերը ետ՝ թիկունքին շարտեց ու տակնիվեր նայեց ինձ: Նրա մազերը խշշացին: Նա այդ գիտեր և մատների ծայրով թիկնիկ-միկնիկ շոյեց մազերը: Նա գիտեր նաև, որ կիսաբաց շրթունքներով ու հնազանդ հայացքով տակնիվեր նայելը ինչ-որ մի ուրիշ տպավորություն է անում: Ապա՝ ես լուսամուտից դուրս էի նայում, և նա ասաց.– Ինչպես էիր շարել՝ արի շարիր:– Մեկ է,– ասացի ես,– արդեն մեկ է:

Բարձրահարկերի ու սառը մշուշի վրայով ես ինձ գյուղ էի քշում, գյուղի, մեր դռան ու այգու պատկերը տեսնում էի, բայց չէի կարողանում մտնել ու մնալ այդ պատկերի մեջ: Ես մանրամասներ էի փնտրում՝ որպեսզի կառչեմ ու մնամ գյուղում: Հասմիկն արդուկ էր անում, թեյամանը երգում էր, իմ կամ տղայիս մասին մտածելով Հասմիկը ժպտում էր արդուկի սեղանի վրա – աղոտ՝ դա երևաց ու անցավ, իսկ ես այստեղ էի և իմ թիկունքում սրա լայն ծնկներն էին: Ես ինձ ասացի՝ ես ահա հերդ է,– և ես տեսա հորս, մատիտն ականջին՝ նա ֆուգան էր քաշում, ես լսեցի ֆուգանի խշշոցը,– ես ահա շունն է, ֆուգանի խշշոցի ու խուշուրի մեջ միրհում է, իրիկունն իրեն թափ է տալու և հայրիկից առաջ ճամփա ընկնի մեր ոչխարը բերելու և ետ՝ հայրիկին է նայելու, թե արդյոք ինքը չի՞ սխալվել, ոչխարը բերելու ժա՞մը չի: Ես փորձեցի ինձ տեղավորել հայրիկի, շան, խուշուրի, խնձորենու մեջ. սղոցով ուղիղ կտրած կոճղին, որ ինքն ու հայրն էին կտրել, գրքի վրա մի պատանի էր հակված, հոր ֆուգանի խշշոցը լսելով կարդում էր, ասենք, «Կայծերը» – դա այդպես եղել էր, այդպես՝ դա կար ու լինելու էր, բայց դա այլևս հեռու էր: Մոտիկն ու իրականը այդ կինն էր, որ իմ թիկունքում կար որպես դանակի շեղբ, որպես դարանակալ ճահիճ:

Ես շուռ եկա՝ նա փափուկ ու լայն հորանջում էր: Նայելով՝ նա հորանջեց վերջացրեց և շարունակեց նայել:

– Ուզում ես քնել՝ էստեղ քնիր,– ես ցույց տվի անկողինը,– սպիտակեղենը երեկ եմ փոխել:

– Իսկ դո՞ւ,– և նա միանգամից կռացավ սապոգի ճիտքն իջեցնելու:

– Ցերեկը ես քնել եմ,– ասացի ես:

Նա փեշը քշտեց, սրունքը դրեց ծնկին և կոնքը սեղանին հենած՝ զույգ ձեռքով քաշեց սապոգի թաթը:

– Դու Ե. Օ՞.-ն ես,– հարցրի ես,– քո սկզբնատառերը Ե. Օ՞. է:

– Ե. Օ.-ն,– տնքալով ասաց նա,– քո Եվա Օզերովան է: Անիծվածը դուրս չի գալիս: Դու նրան շա՞տ ես սիրում,– տնքաց նա:

Սեղանը տեղից շարժվեց ու խնձորները թափվեցին:– Թափվեցին,– ասաց նա: Սեղանը տեղից մինչև պատը փախավ, ու խնձորները նորից թափվեցին, սապոգը սակայն դուրս չէր գալիս: Կաղալով՝ նա գնաց նստեց ու մահճակալին ետ ընկավ և զույգ ձեռքով պահեց ու մեկնեց ոտքը: Ոտքն այդպես պահած՝ նա ինձ էր նայում, հետո ասաց.

– Անշնորհք, պիտի օգնե՞ս, թե՞ իսկապես անտաշ գյուղացի ես:

– Գյուղացիները, ինչո՞ւ,– ասացի ես,– չե՞մ օգնում:

Ես պինդ բռնեցի, քաշեցի՝ կիպ գրկած սապոգի միջից ոտը խշշալով դուրս եկավ: Ոտն այդպես մերկ ու ձիգ մեկնած՝ նա գովեց.

– Դու տղամարդ ես եղել:

– Ոչինչ,– ասացի ես,– ինձանից դժգոհ չեմ: Ինչ է,– ասացի ես,– կարծում ես գուլպադ է՞լ ես եմ հանելու – ոտդ ինչո՞ւ ես մեկնել:

Իմ ձեռքը ծնկներով նա բռնեց, սաստեց՝ սուս, և սեղմած պահեց սրունքների մեջ: Ես վերև նայեցի՝ նրա համարձակ, խոշոր, փորձող աչքերի հայացքը կախված էր ինձ վրա: Միջանցքից ոտնաձայն էր գալիս: Սեղմած՝ ձեռքս նա պահեց ծնկների արանքում և ասաց սուս: Քայլողը կշիռ չուներ, քայլում էին ասես դատարկ կոշիկներ և ոտքերին մեծ էին, քարշ էր տալիս: Եկավ կանգնեց դռան ետևն ու լռեց: Ես վեր՝ այդ կնոջը նայեցի – նրա ծանր, ձիգ, հանդուզն գոյությունը կենդանի ծաղր էր նրա՝ դեմ, ով կանգնել էր ու չէր համարձակվում դուռը ծեծել և չէր նայում բանալու անցքից, քանի որ բանալին անցքում էր, և չէր էլ շնչում: Ձեռքերով ետևը մահճակալի տակից բռնած՝ նա մազերը ետ շարտեց ու ոտքով խփեց դնչիս՝ քաշիր սապոգս: Ես դռանը նայեցի, և շրթունքը կծելով նա ոտքով նորից հրեց: Դուռը ծեծեցին. կարծես մուրացկան էր, կարծես դուռը փուչ էր կամ մատներն էին փուչ: Ես չպատասխանեցի – տեսնենք կհամարձակվի՞ նորից ծեծել: Ունեցավ



այդքան համարձակություն՝ ծեծեց, առաջինից ավելի վախվխելով:

– Ի՛նչ է,– ժպտալով գոռացի ես:

– Ներեցեք,– ասացին. հերթապահ պառավի ձայնն էր.– ներեցեք,– ասաց,– լուսանում է, հյուրերին ուղարկելու ժամն է, դուք հյուր չունե՞ք:

– Ունե՛մ,– գոռացի ես,– մերկ կանայք են, ժամանակ տվեք հագցնեն: Տկլոր են, տկլոր,– գոռացի ես:

– Ներեցեք,– ասաց,– Նադյա, Նադեժդա, Կեդրինա, եկել է 175, բայց էնտեղ չի:

Ես վեր՝ այդ աղջկան նայեցի – մուտ շրթունքը կծելով նա ժպտում ու ոտքի ծայրով սեղմում էր ոտքս:

– 175-ը ես չեմ,– գոռացի ես,– 175-ի պահարաններն ու դարակները լա՛վ նայեք:

Այդ կինը կռացավ ու իմ մազերը կծեց: Դատարկ կոշիկների քայլերը հեռացան: Պարետից վախենում է, պարետը ժամանակին բանտապետ է եղել, եթե ուրիշ բան չանի՝ կկանչի, կկանգնեցնի ու բան չի ասի, չի էլ նայի, դե հիմի դու կանգնիր ու մտածիր, որ աշխատավարձից հինգ ռուբլի պահելու է կամ կարծում է էդ լրբություններից դու շահ ունես: Տե՛ր աստված, ուզում էին քոչել Կիրովական, եթե հանկարծ քոչած լինեին՝ մերս ի՞նչ էր անելու – հանրակացարաններում-հյուրանոցներում մի տեղ հավաքարար...

– Դու նրան շա՛տ ես սիրում:

– Ո՛ւմ:– Պինդ քաշելով՝ սապոզը ես դուրս քաշեցի, ոտը խշշալով ելավ սապոզի միջից:

– Քո եվային:– Ոտքերը նա ծալեց, քաշեց տակը:

– Այո,– ասացի ես,– թող գա իր կոշիկներն էլ հանեն:– Սապոզը բռնած՝ ես ձեռքս բարձրացրի, իբր թե սապոզը խփում եմ գլխին, և նա մի պահ հավատաց, որ խփելու եմ: Ես սապոզը զցեցի, գնացի վառելու գրասեղանի լամպը և ասացի.

– Հանվիր, ցերեկը ես քնել եմ:

– Նեղացար,– ասաց նա,– նեղանում ես:

Ես հանգցրի սենյակի լույսը և գնացի նստեցի գրասեղանի մոտ:

– Բայց խնձորները հավաքել է պետք,– ասաց նա: Գրասեղանի լույսի միջից նա լավ չէր երևում, ես գլուխս դարձյալ թղթերին հակեցի: «Կապուտլեռ սարի մերկ լանջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում ձորի անտառին: Է՛, կկանչի, կկանչի ու կչորանա, քանի որ մարդն ու անասունը շատացել են, տրորում, արածում, կտրում փակում են անտառի վերելքը: Ամեն շունչ-արարած իր կյանքով ապրում է, իսկ բոլոր

կյանքերը միասին աստծու կյանքն են, դրա համար էլ աստծու հոգսը չի, որ էստեղ՝ ձորի ես երկրիս վրա մեկս մյուսիս կյանքն ուտում ենք: Գոմեշը հուռթի մի ձորակ է գտել ու պոզահարելով է արածում՝ թեկուզ հարևան անասուն չկա – բայց իրե՛նն է, գտե՛լ է, ինքն է արածելու: Իր ձագն էլ գա՛ ագահությունից կուրացած դարձյալ հարու կտա: Յետո էլ լաց ենք լինում ու ասում «ես մեռնեի»: Բայց որ ձին կրակոցի վրա խրտնեց ու ձիուց ընկանք՝ առաջ մեզ, մեր կուռն ու մեր փորն ու մեր ոտը տնտղեցինք, հետո միայն հիշեցինք, որ ձիու վրա հետներս նստած երեխա կար»:

Ես հայացքս կտրեցի թղթերից՝ խնձորները սեղանին կիտած էին: Լույսը խանգարում էր, ես նայեցի լուսամփոփի վրայով՝ նա անկողին էր մտել ու, մինչև վիզը փաթաթված, ինձ նայելով աչքերը թարթում էր: Ոչինչ չէր ասում, միայն աչքերը թարթում էր: Թեկուզև ծածկոցի տակ՝ նրա մեջքի փոսը շատ խորն ու կոնքը շատ բարձր էր: Նա աչքերով բան ասաց: Դարձյալ ասաց, և ես հասկացա, որ դուռը հրում են:

Նրան ես հասկացրի երեսը պատին դարձնել և գնացի դուռը բացելու: Իմ քայլի մեջ կռվարար ինչ-որ թափ մտավ, այդ տան տերը ես էի և այդ տանը նա էր կին, ես նրան պաշտպանելու էի գնում, բայց եկողը Սաշա կոչվածը չէր, Էլդարն էր, Էլդար Գուրամիշվիլին, ձեռքին՝ մի թուղթ:

– Չես քնել,– ասաց նա,– աշխատում ես, խանգարեցի: Քեզ համար տես ինչ եմ նկարել:– Նա վառեց սենյակի լույսը և գնաց նստեց գրասեղանի մոտ: Եվ նենգ ու հրճվախառն քռքռոցով նա կանչում էր ինձ՝ երբ տեսավ անկողինը:– Ուա՛,– վրացավարի զարմացավ նա և նայեց ինձ, նայեց անկողնին և անխոս հարցրեց ով է կամ ինչ է:

– Կամաց խոսիր,– ասացի ես,– եկա տեսա քնած է: Չեզանից բաժանվեցի, եկա տեսա քնած է:

Ուսերի ու դեմքի շարժումով նա ասաց՝ աստված գիտի:

– Եկա տեսա քնել է իմ անկողնում, հո չէի՞ հանելու՝ թե վեր կաց գնա իմ սենյակից:

Երեսը պատին՝ այդ կինը հանգիստ շնչում էր, նրա սպառնալի կորերը ծածկոցի տակ հանգիստ վերուվարում էին: Ես ուսով խփեցի Էլդարի ուսին, և դա իմ շնորհակալությունն էր նրա գալու համար:

– Նայիր,– ասաց նա:– Տես քեզ համար ինչ եմ նկարել: Նայիր:

Կինն անկողնում շարժվեց, ինձ թվաց նա ուզում է տեսնել նկարը:

– Նայիր: Ուրեմն՝ էս Ռիոնի գետն է: Արևմտյան Վրաստան կա այդ անունով մի գետ, Փասիս, Փասիս, հին Փասիսը: Հա, Վրաստանն ուրեմն մեծ

է, կա Արևմտյան Վրաստան, Արևելյան, Հարավային և Հյուսիսային Վրաստան: Ուրեմն՝ էս Ռիոնի գետն է: Ամենավարար ջուրը ամբողջ աշխարհում: Էսպես գալիս է, էսպես գնում: Շատ վարար ջուր է, և անհնար է անցնել մյուս ափ ոչ նավակով, ոչ կամրջով, ոչ ինքնաթիռով, ոչ էլ ճոպանուղով: Սրանք ուրեմն տուրիստներն են, արհմիությունների ուղեգրով ոտնատակ են տվել ամբողջ աշխարհն ու Հայաստանը, եկել հասել են էստեղ և շատ են ցանկանում անցնել մյուս ափ, բայց դա հնարավոր չէ ոչ նավակով, ոչ էլ պարաշյուտով: Իսկ էս, ուրեմն, մյուս ափն է, էս իմ տունն է, էս են սարքել, տեղը էս են գտել, Արմո, էս տեղը միայն էս գիտեն: Իսկապես մնան մի տեղ կա, հենց որ փող ունեցա... Տունս շինել են գետաքարով, էսպես՝ հատ-հատ: Մի սենյակ է, մի դուռ ունի, երեք լուսամուտ՝ արևելք, արևմուտք, հարավ: Դուռը սա է, բաց է ուրեմն: Շոգ է: Պատշգամբում էս են նստած: Էս իմ ցանկապատն է, ճաղերը հատիկ-հատիկ էս են մեխել: Էս էլ՝ սիմինո են ցանել, շարքերով աճել են, հասնում ու դեղնում են: Արահետը սիմինոների միջով ուր է գնում, գնում է արտաքնոց: Էս էլ արտաքնոցն է ցանկապատի անկյունում, էս են սարքել երեխեքի համար: Երեխեքը տանը չեն, գնացել են գետը: Շոգ է, տապը կանգնած է, ճի՞շտ է: Էս էլ՝ շան բունն է, շան անունը Պերի է, էս Պերին է կլոր աչերով նայում տուրիստներին: Էս՝ խնձորի ծառն է: Երեխա չեն, սատանի ճուտ են, լակոտները չեն թողնում խնձորը մի կարգին հասնի, ճյուղը հրես կտորել են, խակ պտուղը կերել, էս մի խնձորը կտորած ճյուղին նվազ է մնացել: Մառանում, ուրեմն, գինի կա, կարասի մեջ կամա՛ց եռում է:

– Եղավ,– ասացի էս:

– Գնա՞մ եղպես մի տեղ էլ քեզ համար գտնեն:

– Ես ունեն,– ասացի էս:– Իռկա Օբոլխովան տափանելով անցել է, բայց արդեն իրեն ուղղած կլիմի:

– Տափանված չի լիմի, չվախենաս, ձերոնք պինդ են,– ասաց նա:– Ի՞նչ էս գրում:

– Ձիու վրա սարից երեխայի հետ գալիս է եղել՝ թուրքերը տվել փորը պատռտել են, ու մինչև հիմա իրեն չի ներում, որ ձիուց ընկնելիս երեխային տակն է գցել:

– Այո,– ասաց նա,– այո: Երեխան հիմա չկա,– հանկարծ վճռեց նա,– երեխան մեռել է:

– Տարել են պատերազմ՝ չի եկել, «ով գիտի որ թփի տակ խեղդեցին խեղճ երեխային»:

Նրա աչքերը լցվեցին:– Այո, միայն խեղճ զոհվածների ետևից են այդ-

պէս հիշում:

– Ի վերջո՝ բոլորս ենք զոհվում: Խեղճ կանք էն ձորում, մեծացել այլանդակվել ենք, իսկ էն խեղճը ձորում էդպէս էլ կա:

– Որդու առաջ ուրիշ ի՞նչ հանցանք ունի հալևորդ:

– Մի անգամ խփել պռոշը ճղել է:

Նա կուչ եկավ:– Թող չխփի,— ասաց նա,— մեղք է խեղճ բիծեն, թող չխփի: Ինչո՞ւ է խփել:

– Ներքևի չափարի եզրին բարակ, մատաղ, մրսկան մի խնձորենի է եղել, երեխան ծվան է սարքել, եկել է հոր դեմ կանգնած ծվծվացնում է, կտրել, ծվանը խնձորենուց է սարքել: Դու ծվան իսկի սարքե՞լ ես: Աչքերը խոշոր, նվազ աչքերի տակ հիվանդոտ կապույտ, միամիտ՝ հոր դեմ կանգնել ու փչում է – հու, հու, հու...

– Խփել է՝ ծվանը շրթունքը ճղել է,— կնճռոտվեց նա:– Թող չխփի,— ձեռքը թղթին դրեց նա:– Քառասունմեկին ու քառասուներկուսին Կուխիդայով ինչքան տղա գնաց՝ ոչ մեկը ետ չեկավ, թող չխփի, ծերունին մեղք է...

Երեսն ինչպէս պատին էր արել՝ այդպէս անշարժ այդ կինը կար, բայց հազիվ թե քնած լիներ: Ծածկոցի տակ նա հավանորեն լսում էր մեր շշուկները և, ինչպէս որ թնդանոթի փողի միջով հեռավոր հովտում աղվեսն է երևում կամ ծառը կամ գլխին թաշկինակ կապած մշակը, մեր շշուկներով նրա համար բացվում էր փոքրիկ, տաք, լուսավոր մի այգի: